


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ**  
**2016թ.**  
**ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ**  
**ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ՝**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՅԹՆԵՐԻ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ**  
**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**2016 թ. ԸՆԴՈՒՆԱԾ**  
**ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Գունվար - 2017., ք. Երևան

ՀՏԴ 34.25 (479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ) 01  
Հ-189

Հաստատվել է ՀՀ սահմանադրական դատարանի  
24 հունվարի 2017թ. ՄԴԱՌ- 4 աշխատակարգային որոշմամբ

Հ -189

«Հաղորդում ՀՀ ՄԴ 2016թ. ընդունած որոշումների  
կատարման վիճակի վերաբերյալ»  
Եր.: «ՀՀ ՄԴ աշխատակազմ», 2017, 328 էջ:

ԳՄԴ 6799 (2Հ) 01

ISBN 978.99930.66-48-4

©«ՀՀ ՄԴ աշխատակազմ», 2017

**ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ**

2016 թվականին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրվել է սահմանադրաիրավական խնդիր բովանդակող 263 դիմում, ինչպես նաև ներկայացվել են 935 էլեկտրոնային /այդ թվում՝ 792 խորհրդատվություն հայցող/ դիմում և տարբեր հարցերի առնչվող 200 նամակ: Պատասխանվել է խորհրդատվություն ակնկալող 163 հարցման:

Սահմանադրաիրավական խնդիր բովանդակող դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 54 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ – 1 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 177 դիմում,
7. իրավաբանական անձինք – 20 դիմում,
8. դատարաններ – 7 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ – 2 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – 2 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) և պատգամավորության թեկնածուներ – 0 դիմում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց թվով 197 դիմումներից 116-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 18, 32, 33 և 34-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 81 անհատական դիմում: Դրանցից քննության է ընդունվել 35-ը, մերժվել է 42-ը, 4-ը փոխադրվել է Սահմանադրական դատարանի լիազումար նիստ: Նշված 35 դիմումներից մեկ դիմումի հիման վրա գործի վարույթը սահմանադրական դատարանի 08.11.2016թ. ՄԴԱՈ-105 աշխատակարգային որոշմամբ կարճվել է:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստերում քննարկվել է 4 անհատական դիմումի ընդունելիության հարց, որի արդյունքում մեկ դիմումով գործն ընդունվել է քննության, երկու դիմումներով գործերի քննության ընդունումը

մերժվել է, իսկ չորրորդ անհատական դիմումի ընդունելիության հարցն ընթացքի մեջ է:

2016 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է 84 որոշում, որից 37-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում, 47-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում: 2016 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը քննության է առել 14 իրավական ակտերի՝ 14 օրենքների (որոնցից 6-ը՝ օրենսգիրք) սահմանադրականության հարցեր:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող ակտերի 62 հոդվածների կամ դրանց առանձին դրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 2 դրույթի) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում.

- վիճարկվող ակտերի 1 հոդված և 15 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող.
- վիճարկվող ակտերի 2 հոդվածներ և 27 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական կոնկրետ բովանդակությամբ.
- վիճարկվող ակտերի 1 հոդված և 9 հոդվածների առանձին դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր.
- վիճարկվող ակտերի 1 հոդվածի և 4 հոդվածների առանձին դրույթների մասով կայացրել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ, իսկ երկու դեպքում վիճարկվող ակտերի 2 հոդվածների առանձին դրույթների մասով՝ գործի վարույթը մասնակի կարճելու վերաբերյալ որոշումներ.
- 4 որոշմամբ՝ 23.02.2016թ. ՍԴՈ-1256, 10.05.2016թ. ՍԴՈ-1271, 23.06.2016թ. ՍԴՈ-1289, 29.11.2016թ. ՍԴՈ-1325, սահմանել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու կոնկրետ վերջնաժամկետ:

## **ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

### **ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը**

2016 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2016թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության են ընդունվել թվով 53 միջազգային պայմանագրերով

ստանձնված պարտավորությունների սահմանադրականության որոշման վերաբերյալ գործեր, որոնցից 6-ով որոշումները կայացվելու են 2017 թվականին: Քննության առնված 47 միջազգային պայմանագրերից 15-ը բազմակողմ է (6 համընդգրկուն և 9 տարածաշրջանային) և 32-ը՝ երկկողմ (16-ը՝ օտարերկրյա պետությունների և 16-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ): ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 47 միջազգային պայմանագրերից 36-ն արդեն վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

ՀՀ Նախագահի մեկ դիմում վերադարձվել է՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի հասցեականության պատշաճ մակարդակի ապահովման հիմնախնդիրը: Անցած տարիների ընթացքում քննության առնված ֆինանսավարկային պայմանագրերում ներկայացված ֆինանսավորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով հստակեցված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերի ուղղությունները: Սահմանադրական դատարանն ինչպես իր նախկին, այնպես էլ 2016 թվականին ընդունած որոշումներում (օր.՝ ՄԴՈ-1273, ՄԴՈ-1283, ՄԴՈ-1284, ՄԴՈ-1328) բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին, նշելով, որ նման համաձայնագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր բնույթը պահանջում է համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը հիմք կհանդիսանա խուսափելու վարկային նախորդ համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից եւ բացթողումներից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից:

Այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 21.06.2016թ. ՄԴՈ-1283 որոշման մեջ անդրադառնալով նշված հիմնախնդրին՝ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը վարկային պարտավորությունների վերաբերյալ նախկին որոշումներում և դրանց կատարման մասին տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Մույն գործով քննության առարկա Համաձայնագիրը ևս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի կառավարման ու թափանցիկ հաշվեքննության կազմակերպման առումով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ասվածի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային

օգտագործման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի կառավարության կողմից կազմակերպվի և կոնկրետ պատասխանատու պետական մարմնի միջոցով իրականացվի մշտադիտարկում՝ արդյունքները հասանելի դարձնելով հանրությանը»:

Իր մեկ այլ՝ ՄԴՈ-1328 որոշմամբ, անդրադառնալով Ասիական զարգացման բանկի հետ նախկինում կնքված վարկային համաձայնագրերում /հատուկ գործառնություններ/ փոփոխություններ կատարելու հիմնախնդրին, ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է. «7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ԱԶԲ Տնօրենների խորհրդի 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշման ընդունումից հետո ընկած ժամանակահատվածում, երբ արդեն իսկ հաստատվել էր, որ պաշտոնապես ավարտվել է արտոնյալ պայմաններով Հայաստանի Հանրապետությանը վարկային միջոցների տրամադրումը, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրվել են թվով 3 վարկային համաձայնագրեր (3.10.2014թ., 5.09.2014թ. և 19.10.2015թ.), որոնցով նախատեսված վարկի տոկոսադրույքների չափերը ևս ենթակա են ավելացման: Սույն համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը քննարկելիս այս հանգամանքը պետք է ուշադրության արժանանա:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորություններին:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն Համաձայնագրի առնչությամբ կարևորվում է այն հանգամանքը, թե ինչպես է կառավարության կողմից հիմնավորվում տարբերակների ընտրության նպատակահարմարությունը»:

2016 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ սահմանադրական դատարանը քննության է առել «2013 թվականի հոկտեմբերի 2-ին ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 16-րդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, որի առնչությամբ ընդունված իր ՄԴՈ-1299 որոշման մեջ արձանագրել է հետևյալը.

«4. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա.

քննության առարկա Արձանագրությունն ստորագրելիս ի գիտություն է ընդունվել Կոնվենցիայի 16-րդ արձանագրության Բացատրական զեկույցը /Ex-

planatory Report/:

Բացատրական զեկույցում ներկայացվում է Արձանագրության ընդունման նախապատմությունը և տրվում են առանձին հոդվածների մեկնաբանություններ: Մասնավորապես, ի թիվս այլնի, դրանում նշվում է, որ խորհրդատվական կարծիքի համար Դատարան կարող է դիմել այն ներպետական մարմինը, որը հանդիսանում է «Բարձր դատարան կամ տրիբունալ... որը նշված է /Բարձր պայմանավորվող կողմից/ 10-րդ հոդվածի համաձայն»: Այս ձևակերպումը կոչված է խուսափելու հնարավոր բարդությունից՝ տալով ընտրության որոշակի ազատություն: «Բարձր դատարան կամ տրիբունալ» արտահայտությունը վերաբերում է ազգային դատական համակարգի գագաթին գտնվող դատարաններին և տրիբունալներին: «Բարձր» եզրույթի կիրառումը՝ ի հակադրություն «բարձրագույն» եզրույթի, հնարավորություն է տալիս ընդգրկել այնպիսի դատարանների կամ տրիբունալների, որոնք, չնայած նրան, որ զիջում են սահմանադրական կամ գերագույն դատարաններին, այնուամենայնիվ, հանդիսանում են «բարձր» տվյալ կատեգորիայի գործերի համար: Մա, այն պահանջի հետ մեկտեղ, համաձայն որի՝ Բարձր պայմանավորվող կողմն է նշում այն դատարանները կամ տրիբունալները, որոնք կարող են հայցել խորհրդատվական կարծիք, թույլ է տալիս ցուցաբերել անհրաժեշտ ճկունություն՝ ելնելով ազգային դատական համակարգերի առանձնահատկություններից:... /կետ 8/:

5. ՀՀ սահմանադրական դատարանը, նշված Բացատրական զեկույցի և Արձանագրության 10-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության համեմատական վերլուծության արդյունքում, միաժամանակ նկատի ունենալով, որ Արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանության տեքստում, ինչպես նաև դրան կից պաշտոնական փաստաթղթերում օգտագործվում է «Բարձրագույն դատարաններ կամ տրիբունալներ» ձևակերպումը, արձանագրում է հետևյալը. որպեսզի Արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանության տեքստում և դրան կից պաշտոնական փաստաթղթերում օգտագործվող՝ «Բարձրագույն դատարաններ կամ տրիբունալներ» ձևակերպումը չվտանգի Արձանագրության 10-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների ազգային օրենսդրական իմպլեմենտացիայի բարեխիղճ իրականացումը, պետք է նկատի ունենալ, որ չնայած ՀՀ դատական համակարգի առանձին ատյաններ իրենց սահմանադրաիրավական կարգավիճակից ելնելով չեն կրում «բարձր» կամ «բարձրագույն» անվանումը, սակայն օրենսդրությամբ նախատեսված կոնկրետ գործերով իրավունք ունեն կայացնել վերջնական որոշում: Այլ կերպ ասած՝ դրանք հանդես են գալիս որպես տվյալ կոնկրետ գործով վերջնական որոշում կայացնող «բարձր» դատարան»:

## **ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը**

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից Սահմանադրական դատարան ներկայացված միակ

դիմումը մուտքագրվել է 17.11.2016թ., ընդունվել է քննության և դատաքննությունը նշանակվել է 07.03.2017 թվականին: Նշված դիմումով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները վիճարկում են ՀՀ ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունը:

### **Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարան մուտքագրված անհատական դիմումների մոտ 56 տոկոսը Սահմանադրական դատարանի կողմից չի ընդունվել, քանի որ դրանք կամ չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով ել/կամ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 32 և 33-րդ հոդվածներով սահմանված՝ անհատական դիմումին ներկայացվող պահանջներին, կամ ճանաչվել են որպես ակնհայտ անհիմն, կամ վիճարկվող նորմը դատարանի կողմից դիմողի նկատմամբ չի կիրառվել: Հիմնականում նման անհատական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից 2016թ. քննության ընդունված 6 գործերով որոշումները կայացվելու են 2017թ. հունվար-ապրիլ ամիսներին:

2016 թվականի ընթացքում քննության առնված քսանյոթ անհատական դիմումների հիման վրա /դրանք ներառում են նաև 13 անհատական դիմումները, որոնք Սահմանադրական դատարանում մուտքագրվել են 2015 թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսներին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են առնվել 2016 թվականին/ օրենքների վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:** Դրանք են.

1. «Կարեն Հարությունյանի, Արտակ Գևորգյանի, Դավիթ Հարությունյանի, Վարտգեզ Գասպարիի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 09.02.2016 թվականի ՄԴՈ-1254 որոշմամբ որոշել է. «2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ դատական ակտի հասցեատերն ուշ է ստանում դատական ակտը և, մասնա-



վորապես, դատական ակտը պարունակող նամակը: Արդյունքում, դատական ակտի հասցեատերն իրենից անկախ պատճառներով բաց է թողնում բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետը, իսկ համապատասխան իրավակարգավորումը դատարանի հայեցողությանն էր թողնում բաց թողնված ժամկետի վերականգնումը՝ հաշվի չառնելով բողոք բերողի կողմից բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալու վերաբերյալ ապացույց ներկայացնելու հնարավորությունը: Այդպիսի իրավակարգավորման հետևանքով վճռաբեկ դատարանը նույնիսկ բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալու վերաբերյալ ապացույցի առկայության պայմաններում կոնկրետ գործով կայացրել էր «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում: Միաժամանակ, վիճարկվող նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ էին գտել տարակերպ մոտեցումներ և երաշխավորված չէր օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը հարկ է համարել վկայակոչել իր ՍԴՈ-1249 որոշման մեջ ամրագրված հետևյալ իրավական դիրքորոշումը. «... երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure) համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը հարկ է համարել նաև վկայակոչել ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված բացատրության շրջանակներում պատասխանող կողմի պաշտոնական ներկայացուցչի այն պնդումը, որ «... ոչ միասնական կամ հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բաց թողնման հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս»:

**Սահմանադրական դատարանի՝ 09.02.2016 թվականի ՍԴՈ-1254 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:**

2. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ղիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 23.02.2016 թվականի ՄԴՈ-1256 որոշմամբ որոշել է.

«1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34, 51, 78, 79 և 80-րդ հոդվածներին հակասող, այնքանով, որ տարբերակված մոտեցում չեն սահմանում, երբ տեղեկատվությունը վերաբերում է անձի՝ իր մասին հայցվող տեղեկությանը, ինչպես նաև տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների իրացմանը:

2. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի նոյեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով իրավունքների սահմանափակման առնչությամբ 2015թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր հստակեցումները»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածն իմպերատիվ կարգով սահմանում էր անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար վճարելու պարտականություն՝ չնախատեսելով որևէ բացառություն: Նույն տրամաբանությունն էր որդեգրված նաև օրենքի 73-րդ հոդվածում, որում նախատեսված են տեղեկություններ տրամադրելու համար վճարների չափերը: Իսկ օրենքի 75-րդ հոդվածով նախատեսվում են տեղեկատվության տրամադրման համար վճարի մասով արտոնություններ, որից ակնհայտ է, որ մի դեպքում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ արտոնյալ պայմաններով տեղեկությունների տրամադրումը պայմանավորված չէ հայցող սուբյեկտի կարգավիճակով՝ յուրաքանչյուր անձ, ով հայցում է ստանալ նման տեղեկություններ, օգտվում է տեղեկատվության համար վճարի 50 տոկոսի զեղչից: Մյուս դեպքում՝ տեղեկության ստացման համար վճարելու պարտականությունից ազատվում են պետական համակարգի մի շարք մարմիններ, այսինքն՝ արտոնության կիրառումն ուղղակի կապվում է հայցող սուբյեկտի

կարգավիճակի հետ: Տեղեկատվության համար վճարից ազատելու այլ դեպքեր օրենքը չի նախատեսում:

Այս կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կոնկրետ ոլորտին վերաբերող իրավական ակտով անտեսվել է տեղեկատվության ազատության՝ օրենքով նախատեսված երաշխիքների իրացումը: Նման իրավիճակը չի բխում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքից, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ տեղեկատվության մատչելիությանն առնչվող տեղեկատվության վճարովիությունը, եթե խոսքը չի վերաբերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցված ծառայությունների կամ տեղեկությունների տրամադրման համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կատարված փաստացի և ողջամիտ ծախսերին, կարող է խոչընդոտ հանդիսանալ տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Այդ է պատճառը, որ տվյալ գործով Սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդձեռնել, որ տեղեկատվության վճարի սահմանման չափը թեև գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, այնուամենայնիվ, այն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը տվյալ գործով ուղղորդել է օրենսդրին ապահովելու անվճարունակ անձանց համար իրենց մասին տեղեկատվություն ստանալու վճարովիության սկզբունքից արտոնությունները՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների, տվյալ պարագայում՝ տեղեկություններ ստանալու իրավունքի էության անխախտելիությունը:

**Սահմանադրական դատարանի՝ 23.02.2016թ. ՄԴՈ-1256 որոշումն ընդունելուց հետո ի կատարումն այդ որոշման՝ ՀՀ Ազգային ժողովը 20.10.16թ. ՀՕ-166-Ն ՀՀ օրենքով փոփոխություն է կատարել դիտարկվող օրենքի 71-րդ հոդվածում: Նույն օրենքով փոփոխություն է կատարվել նաև օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում (համակարգային առումով փոխկապակցված):**

**3.** «Լալա Ասլիյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատաս-

խանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 26.04.2016 թվականի ՄԴՈ-1268 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (*ex jure*) չի ճանաչվում հարգելի»:

Ինչպես ՄԴՈ-1254 որոշման առնչությամբ արդեն նշվել է, պրակտիկայում առկա են դեպքեր, երբ դատական ակտի հասցեատերը ուշ է ստանում դատական ակտը և, մասնավորապես, դատական ակտը պարունակող նամակը: Արդյունքում, դատական ակտի հասցեատերն իրենից անկախ պատճառներով բաց է թողնում բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետը, իսկ համապատասխան իրավակարգավորումը դատարանի հայեցողությանն էր թողնում բաց թողնված ժամկետի վերականգնումը: Վիճարկվող նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ էին գտել նաև տարակերպ մոտեցումներ և երաշխավորված չէր օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը հարկ է համարել կրկին անգամ վկայակոչել իր ՄԴՈ-1249 որոշման մեջ ամրագրված և ՄԴՈ-1254 որոշմամբ կրկին արձանագրված այն իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց՝ «... երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին **միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է**, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: ... երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (*ex jure*)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև հետևյալը. «... **բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության պատճառաբանվածության այլ պայման Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով չի ամրագրել**: Տվյալ իրավակար-

զավորման սահմանադրաիրավական բովանդակությունից բխող պայմանն այն է, որ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտն ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետից հետո, ապա պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները:

Վերոհիշյալ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ դատական պրակտիկայում ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները դեռևս լիարժեքորեն հաշվի չեն առնվում՝ դրանով իսկ ստեղծելով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման արգելափակման վտանգ»:

**Սահմանադրական դատարանի՝ 26.04.2016 թվականի ՄԴՈ-1268 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:**

4. «Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.05.2016թ. ՄԴՈ-1271 որոշմամբ որոշել է.

«1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող:

2. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանքների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի հոկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը իրենց իրավասության շրջանակներում «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությանը համապատասխան՝ նոտարը գույքային պատասխանատվություն էր կրում միայն իր կողմից **դիտավորությամբ**

թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար, ինչը բացառում էր նոտարի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում անձին անզգուշությամբ, մասնավորապես, անփութության հետևանքով պատճառված վնասի համար գույքային պատասխանատվություն կրելու հնարավորությունը: Մյուս կողմից, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության ուժով Հայաստանի Հանրապետությունը պատասխանատվություն չէր կրում նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար: Այսինքն՝ համապատասխան օրենսդրական ընթացակարգերը **չէին երաշխավորում** նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի **իրավաչափ հատուցումը և անձի սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:**

Տվյալ գործով, անդրադառնալով նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից ոչ պակաս չափով իր պատասխանատվության ռիսկն ապահովագրելու նոտարի պարտականությանը, սահմանված «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով, Սահմանադրական դատարանը հարկ է համարել նշել, որ ապահովագրվող պատասխանատվության ռիսկի նշված նվազագույն չափը միշտ չէ, որ կարող է բավարար համարվել նոտարի մեղքով պատճառված վնասի իրավաչափ հատուցման համար:

**Սահմանադրական դատարանի՝ 10.05.2016 թվականի ՄԴՈ-1271 որոշումն ընդունելուց հետո ի կատարումն այդ որոշման՝ ՀՀ Ազգային ժողովը 19.10.16թ. ՀՕ-180-Ն ՀՀ օրենքով փոփոխություն է կատարել դիտարկվող օրենքի 27-րդ հոդվածում:**

5. «Գևորգ Սաֆարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 23.06.2016թ. ՄԴՈ-1289 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը՝ «մինչև գործով դատաքննություն նշանակելը» դրույթի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասերին հակասող:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի դեկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն

որոշման պահանջներին»:

Խնդիրն այն է, որ վիճարկվող դրույթը թույլ էր տալիս պատասխանողին հակընդդեմ հայց ներկայացնել մինչև գործով դատաքննություն նշանակելը: Այսինքն հակընդդեմ հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը բավարար չափով որոշակի չէր, որպեսզի պատասխանողն ի վիճակի լիներ դրսևորել համապատասխան վարքագիծ և իրականացնել արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իր սահմանադրական իրավունքները՝ հատկապես դատարանի մատչելիության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասեր): Ավելին, իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ վիճարկվող իրավակարգավորումը տվյալ գործով դիմողի համար նաև ստեղծել է իրավաչափ վարքագծի դրսևորման իրավական անորոշություն:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով հակընդդեմ հայցի ինստիտուտն իմաստագրկվում է, եթե անհրաժեշտ ու բավարար դատավարական ընթացակարգեր նախատեսված չեն այն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար, որ համապատասխան օրենսդրական կանոնակարգումը դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքի իրացումն ուղղակի կախվածության մեջ է դնում նախնական դատական նիստ հրավիրելու և գործը դատաքննության նշանակելու՝ դատավորի հայեցողությունից:

**Սահմանադրական դատարանի՝ 23.06.2016 թվականի ՄԴՈ-1289 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:**

6. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.06.2016թ. ՄԴՈ-1290 որոշմամբ որոշել է.

«3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները, սակայն վերջիններիս շարքում ներառված չէ բողոք ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության բացակայության դեպքը: Այսինքն՝

օրենսգրքի 213-րդ հոդվածի վիճարկվող դրույթը չէր նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորություն: Դրա հետևանքով վերաքննիչ բողոքը վերադարձվում էր առանց թույլ տրված խախտումը վերացնելու համար ժամկետ տրամադրելու, ինչն ինքնաբերաբար հանգեցնում էր բողոքի ընդունման փաստացի մերժման, հետևաբար՝ անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտման:

**Սահմանադրական դատարանի՝ 28.06.2016 թվականի ՄԴՈ-1290 որոշման կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում մշակվել է և շրջանառության մեջ է դրվել Կ-1041-21.07.2016-ՊԻ-010/0 օրենսդրական նախաձեռնությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրք ընդունելու վերաբերյալ: Նախագիծը 13.09.2016թ. ընդգրկվել է չորսօրյա նիստերի օրակարգ: Սակայն, հարկ է նկատել, որ նշված նախագծով բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորությունն նախատեսված է միայն վերաքննիչ բողոքի համար, իսկ վճարել բողոքի համար այդպիսի հնարավորությունն նախատեսված չէ:**

7. «Երֆրեզ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 12.07.2016թ. ՄԴՈ-1293 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝ վճարել բողոքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, 78-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը պարտավորեցնում էր վճարել բողոք բերողին վճարել բողոքին կցելու դրանում վկայակոչված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը, ինչը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում էր բողոքաբերին: Ավելին, նման պահանջը ոչ միայն ոչ համարժեք սահմանափակում էր դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը, այլև ՀՀ վճարել դատարանի կողմից իրավունքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրաիրավական գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման առումով խոչընդոտ էր հանդիսանում՝ հնարավորություն չտալով ՀՀ վճարել դատարանին օրենքով սահմանված այլ հիմքերի բավարարման պարագայում վճարել բողոքն ընդունել վարույթ և իրականացնել արդարադատություն:



Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջ նախատեսելն այն պարագայում, երբ դրանք հասանելի են դատավարության կողմերին և ՀՀ վճռաբեկ դատարանին (այդ թվում՝ համացանցի համապատասխան պաշտոնական կայքէջերից օգտվելու միջոցով), հիմնավոր չէ: Պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների, Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև ստորադաս դատարանի դատական ակտերի հասանելիությունը: Ընդ որում, դա պետք է ապահովվի հավաստի և իրավաբանական առումով համարժեք թարգմանված և կոնկրետ պետական մարմնի կողմից հաստատված տեքստերի միջոցով: Օրենքի պահանջը՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը վկայակոչող բոլոր ակտերը բողոքին կցելու վերաբերյալ, երբ, մի կողմից՝ դրանք մի քանի տասնյակ էջեր են կազմում ու համաձայն իրավակիրառ պրակտիկայի՝ պետք է թարգմանաբար ներկայացվեն (նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերենով), մյուս կողմից՝ սահմանափակ է բողոք ներկայացնելու ժամկետը կամ դրա ձգձգումը կարող է դիմողի համար ունենալ անշրջելի բացասական հետևանքներ, իրական վտանգ է ստեղծում արգելափակելու անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը (մասնավորապես, տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. ապրիլի 27-ի քաղաքացիական գործով թիվ ԵԱՔԴ/0229/02/16 որոշումը)»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրելով, որ տվյալ գործով վեճի առարկա իրավադրույթին համանման իրավակարգավորումներ են առկա նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 3-րդ կետում, **ուղղորդել է ՀՀ Ազգային ժողովին կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ:**

Սահմանադրական դատարանի՝ 12.07.2016 թվականի ՄԴՈ-1293 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:

Ավելին, ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող Կ-1041-21.07.2016-ՊԻ-010/0 օրենսդրական նախաձեռնությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրք ընդունելու վերաբերյալ, ևս բողոքաբերի համար նախատեսում է վճռաբեկ բողոքում վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը կցելու պարտականություն:

8. «Մարետա Առաքելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19.07.2016թ. ՄԴՈ-1294 որոշմամբ որոշել է.

«4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ

հողվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավատուի հնարավոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը դատարանին իրավունք էր վերապահում կասեցնելու գրավի առարկայի բնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավատուի հնարավոր վնասները հատուցելու համար՝ անհամաչափ ծանրաբեռնելով գրավատուի արտադատական կարգով բնագանձումը կասեցնելու հնարավորությունը, քանի որ կասեցնելու համար պահանջվում էր տրամադրել ապահովում ոչ թե գրավատուի հնարավոր վնասների, այլ գրավ դրված առարկայի արժեքի չափով: Ընդ որում, մի շարք դեպքերում գրավադրված գույքի արժեքը մի քանի անգամ կարող է գերազանցել ոչ միայն գրավով ապահովված հիմնական պարտավորության, այլ՝ նաև գրավատուի հնարավոր վնասների չափը: Նման իրավակարգավորման պարագայում գրավատուի համար հիմնականում անիրագործելի էր դառնում գրավի առարկայի բնագանձման ընթացքը կասեցնելու վերաբերյալ օրենքով նախատեսված իրավունքի իրացումը:

**Սահմանադրական դատարանի՝ 19.07.2016 թվականի ՄԴՈ-1294 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնությունն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:**

9. «Հայկ Մաշուրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.10.2016թ. ՄԴՈ-1315 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով չի ապահովվում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորություն»:

Բանն այն է, որ վիճարկվող դրույթը թույլ չէր տալիս հակընդդեմ հայց ներկայացնել գործի նոր քննության ժամանակ: Այսինքն՝ չէր ապահովում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու և այն ամբողջ ծավալով քննության առարկա դարձնելու հնարավորություն: Ընդ որում, անձի կամքից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացնելու դեպք կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ դատական ակտը բեկանվում է նիստի

Ժամանակի և վայրի մասին պատասխանողի՝ պատշաճ ծանուցված չլինելու արդյունքում դատավարությանը չմասնակցելու պատճառով, ինչի հետևանքով նա փաստացի գրկված է լինում արդյունավետ դատական պաշտպանության իր իրավունքների իրականացման, այդ թվում՝ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու հնարավորություններից:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը վերահաստատել է ՄԴՈ-1289 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց՝ ա/ սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով հակընդդեմ հայցի ինստիտուտն իմաստագրկվում է, եթե անհրաժեշտ ու բավարար դատավարական ընթացակարգեր նախատեսված չեն այն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար, բ/ հակընդդեմ հայցը՝ հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց, նպատակ ունի նպաստել արդյունավետ դատական պաշտպանության՝ նրա իրավունքի իրացմանը և ապահովել արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրականացումը:

**Սահմանադրական դատարանի՝ 18.10.2016 թվականի ՄԴՈ-1315 որոշումն ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել:**

10. «Մարիամ Լալայանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 29.11.2016թ. ՄԴՈ-1325 որոշմամբ որոշել է.

«1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված իրավական բովանդակության շրջանակներում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 60, 61, 78, 79 և 83-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

2. Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթը համակարգային առումով փոխկապակցված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 36-րդ, 41-րդ և մի շարք այլ հոդվածների դրույթների հետ, և հաշվի առնելով սույն որոշման հրապարակման պահին տվյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությամբ պայմանավորված հնարավոր հետևանքները, ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 102-րդ հոդվածի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի մասով սույն որոշման ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ սահմանել 2017 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանն իրենց իրավասությունների շրջանակներում քայլեր ձեռնարկել համակարգային ամբողջականության մեջ

վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը երաշխավորելու ուղղությամբ»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ աշխատանքային և զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելը կարող է ունենալ տարբեր պատճառներ և ինքնին չի կարող ենթադրել, որ առկա է կենսաթոշակի իրավունքի **դադարման** հանգամանքը: Բացի դրանից, խախտվում է նաև պատճառահետևանքային կապը: Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝ ... կենսաթոշակ չվճարելու դեպքում», իսկ նույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Կենսաթոշակ վճարելը **դադարեցվում է՝ ... կենսաթոշակ ստանալու իրավունքը **դադարելու** դեպքում**»: Նման իրավակարգավորումը հանգեցնում էր նրան, որ անձն ունենում էր միայն մեկ հնարավորություն՝ վերականգնել **կենսաթոշակի իրավունքը** /ինչն իրականում նա չէր կորցրել/ և կրկին ձեռք բերել կենսաթոշակ ստանալու նոր իրավունք:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն **ուղղորդել է ՀՀ Ազգային ժողովին կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ**, մասնավորապես, արձանագրելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի միջև ներքին տրամաբանական կապի առավել հստակեցման անհրաժեշտություն գոյություն ունի: Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Կենսաթոշակ ստանալու իրավունքը» բխում է «կենսաթոշակի իրավունքից»: Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերը: Նույն հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես, նախատեսում է, որ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է **կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում**: Իսկ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ չվճարելն է դառնում կենսաթոշակ ստանալու իրավունքի **դադարեցման** հիմք: Օրենքի 41-րդ հոդվածում հետևողական ու տարբերակված մոտեցում չի դրսևորվում **«դադարում»** և **«դադարեցում»** եզրույթների նկատմամբ: Եթե **«դադարումը»** ենթադրում է իրավունքի ուժով առաջացող իրավական հետևանք, ապա **«դադարեցումը» որոշակի իրավական գործընթացի հետևանք է, պետաիշխանական լիազորությամբ օժտված մարմնի կամաարտահայտման հետևանք**: Նման պարագայում կարող է առաջանալ նաև ընդհուպ դատական կարգով անձի իրավունքների պաշտպանության խնդիր: Բացի դրանից, նույն հոդվածի 1-ին մասի իրավապայմաններից հետևում է, որ, բացառությամբ 12-րդ կետի, մնացած բոլոր դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը բխում են կենսաթոշակի իրավունքի **դադարման** հանգամանքից:

Միաժամանակ, օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ **կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման պարագայում**: Սակայն համակարգային կապն առկա չէ նույն հոդվածի 4-րդ

մասի /կենսաթոշակ վճարելը վերսկսելու/ և 1-ին մասի 12-րդ կետի հիմքով կենսաթոշակ ստանալու **իրավունքի դադարեցման** իրավակարգավորումների միջև: Եթե տվյալ դրույթի առնչությամբ օրենսդիրը նկատի է ունեցել, որ կենսաթոշակի իրավունքը դադարում է, և որպես հետևանք՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, երբ անձը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակը չի ստացել, ապա այդպես էլ պետք է հստակ շարադրվեր տվյալ դրույթը: Հակառակ պարագայում հարցեր են առաջանում, թե, մասնավորապես, ինչու՝ չի վճարվել, ի՞նչ հնարավորություն է ունեցել անձը պաշտպանելու իր իրավունքները, ի՞նչ կարգով և ո՞վ պետք է **դադարեցնի** կենսաթոշակ վճարելը և այլն»:

**Սահմանադրական դատարանի 29.11.2016 թվականի ՄԴՈ-1325 որոշումն** ընդունելուց հետո հիշյալ հարցի առնչությամբ օրենսդրական նախաձեռնություն դեռևս չի ներկայացվել, և ՀՀ Ազգային ժողովը նշյալ օրենսգրքում փոփոխություն չի կատարել հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի մասով որոշման ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ է սահմանվել 2017 թվականի հոկտեմբերի 1-ը:

Մյուս անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթը կամ օրենքի վիճարկվող նորմը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ տվյալ որոշմամբ արձանագրելով իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ: Նշված դիմումներից ներկայացվում են հետևյալները.

ա/ «Կարեն Հարությունյանի, Արտակ Գևորգյանի, Դավիթ Հարությունյանի, Վարսգեզ Գասպարիի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 09.02.2016թ. ՄԴՈ-1254 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճարել բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 և ՄԴՈ-1062 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով

այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

...

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը».

բ/ «Լալա Ասլիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 26.04.2016թ. ՄԴՈ-1268 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

...

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը».

գ/ «Վարտգեգ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի,

213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.06.2016թ. ՄԴՈ-1290 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն».

դ/ «Վաչիկ Կարապետյանի, Լուսինե Ամիրբեկյանի, Գեղամ Մելիքսեթյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 06.09.2016թ. ՄԴՈ-1296 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում նույնաբնույթ հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը»:

Վերը նշված իրավական դիրքորոշումներով Սահմանադրական դատարանը դրեց միասնական իրավակիրառական պրակտիկայի ձևավորման հիմք՝ թե՛ վարչական, թե՛ քաղաքացիական դատավարություններում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների վերաբերյալ: Խնդիրը վերաբերում էր նրան, որ, ինչպես արդեն նշվել է, պրակտիկայում առկա են դեպքեր, երբ դատական ակտի հասցեատերը ուշ է ստանում դատական ակտը և, մասնավորապես, դատական ակտը պարունակող նամակը: Արդյունքում, դատական ակտի հասցեատերն իրենից անկախ

պատճառներով բաց է թողնում բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետը, իսկ համապատասխան իրավակարգավորումը դատարանի հայեցողությանն էր թողնում բաց թողնված ժամկետի վերականգնումը՝ հաշվի չառնելով բողոք բերողի կողմից բողոքարկվող դատական ակտն ու՛շ ստանալու վերաբերյալ ասպացույց ներկայացնելու հնարավորությունը: Այսինքն՝ վիճարկվող նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ էին գտել տարակերպ մոտեցումներ և երաշխավորված չէր օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը.

ե/ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 12.04.2016թ. ՄԴՈ-1264 որոշմամբ որոշել է գործի վարույթը կարճել, սակայն նույն որոշմամբ, նկատի ունենալով նաև, որ ՀՀ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից վեճի առարկա նորմը միևնույն փաստական հանգամանքների պարագայում տարակերպ է ընկալվել և կիրառվել, **անհրաժեշտ է համարել տվյալ հարցում համարժեք միասնական նախադեպի ստեղծումը:**

Խնդիրը վերաբերում է նրան, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը **միայն պատասխանողին, այլ ոչ թե երրորդ անձին է** վերապահել հայց հարուցել նույն դատարան ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, մինչդեռ ՀՀ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից վեճի առարկա նորմը միևնույն փաստական հանգամանքների պարագայում տարակերպ է ընկալվել և կիրառվել. առաջին ատյանի դատարանը հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջ ներկայացնելու համար իրավասու սուբյեկտ է ճանաչել երրորդ անձին, իսկ վերաքննիչ դատարանը գտել է, որ նման հայց ներկայացնելու իրավունքը վերապահված է միայն պատասխանողին.

զ/ «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 31.05.2016թ. ՄԴՈ-1275 որոշմամբ որոշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը տվյալ գործով կայացված որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում: Իսկ տվյալ գործով Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ



այն շահագրգիռ անձանց համար իրավական հետևանք է առաջացնում «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելուց հետո», երբ տվյալ որոշումը նոր հանգամանքների հիմք է հանդիսանում:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի ուժով նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումը կարող է ներկայացվել համապատասխան հիմքն ի հայտ գալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, և շահագրգիռ անձանց համար պարզ չէր, թե համապատասխան հիմքը, այն է՝ Սահմանադրական դատարանի որոշումը երբ կարող է ի հայտ գալ՝ հրապարակման պահից, թե այն շահագրգիռ անձին հասանելի լինելու պահից, և երբ է Սահմանադրական դատարանի որոշումը համարվում շահագրգիռ անձին հասանելի:

Տվյալ գործով կայացված որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ այն շահագրգիռ անձանց համար իրավական հետևանք է առաջացնում «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելուց հետո», երբ տվյալ որոշումը նոր հանգամանքների հիմք է հանդիսանում:

Է/ «Պավել Մանուկյանի և Վարուժան Ավետիսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի, 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 02.09.2016թ. ՄԴՈ-1295 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործով կայացված որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, և դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը որևէ արգելող դրույթ չի բովանդակում որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը դատական ստուգման կարգով բողոքարկված անձի մասնակցության մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասում «պաշտպան» եզրույթը պետք է մեկնաբանել ու կիրառել պաշտպանության կողմի լիարժեք մասնակցության երաշխավորման տեսանկյունից՝ բացառելով նաև պաշտպան չունենալու դեպքում անձի իրավունքների ոտնահարման հնարավորությունը:

**Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ուղղորդել է իրավակիրառողին որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ**

**որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման համար նշանակված դատական նիստին մասնակցելու ցանկության դեպքում կասկածյալին կամ մեղադրյալին չգրկել լավելու իրենց իրավունքից:**

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման համար նշանակված դատական նիստին մասնակցելու իրավունք է վերապահում միայն դատախազին և պաշտպանին՝ չնախատեսելով նաև կասկածյալին կամ մեղադրյալին:

ը/ «Վարտգեզ Գասպարիի և Վարդուհի Մկրտչյանի դիմումների հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 20.09.2016թ. ՄԴՈ-1304 որոշմամբ որոշել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ գործով կայացված որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում, և դիրքորոշում է արտահայտել առ այն, որ տվյալ արարքի համար հիմնական պատասխանատվության միջոցին զուգահեռ նաև այլընտրանքային պատասխանատվության միջոց նախատեսելը ևս գտնվում է օրենսդրի հայեցողության տիրույթում: Այդ տիրույթում է գտնվում նաև վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքի չափի և նվազագույն ամսական աշխատավարձի փոխկապակցվածության ընտրությունը:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն **ուղղորդել է ՀՀ Ազգային ժողովին ընդունել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգիրք, որը հաշվի կառնի տվյալ ոլորտում նաև միջազգային փորձը և որով կերաշխավորվի իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականությունը:**

Մասնավորապես, տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ միջազգային պրակտիկայում, հաշվի առնելով վարչական տարբեր իրավախախտումների բնույթի ու դրանց նկատմամբ պատասխանատվության սահմանման առանձնահատկությունները, իրավակիրառողների համար նախատեսվում են նաև հայեցողության ավելի լայն շրջանակներ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ որպես ընդհանուր կանոն սահմանելով վարչական տուգանքի ընդհանուր նվազագույն չափ (ինչը, օրինակ, առկա է Ռուսաստանի Դաշնությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, Լիտվայի Հանրապետությունում, Լատվիայի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Մոլդովայի Հանրապետությունում և այլն):

թ/ «Վարուժան Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 11.10.2016թ. ՄԴՈ-1314 որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործով կայացված որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, և դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հատուկ վարույթի շրջանակներում վարչաարդարադատական ընդհանուր կանոններից տարբեր առանձնահատուկ իրավակարգավորումներ նախատեսելը, այդ թվում՝ հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված (61-րդ հոդվածի 1-ին մաս, 75-րդ հոդված)՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման կազմակերպական և ընթացակարգային ընդհանուր սկզբունքների իրացումը, միտված է արագ, արդյունավետ արդարադատության իրականացմանը, հանրային իրավական նշանակության հրատապ հարցերի լուծմանն ու անձանց Սահմանադրությամբ ու օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես, հավաքի անցկացման գործերով օրենսդիրը վարչական դատարանին առաջադրել է արագ (դատաքննության սեղմ ժամկետներում), մինչև իրազեկմամբ նախատեսվող միջոցառման իրականացումը կուլեգիալ կազմով իրականացնել գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու սահմանադրահիրավական խնդիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից լինի անշրջելի:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը կարեւորել է **անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների կատարումը՝ կապված դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշման հնարավոր բողոքարկման ընթացակարգերի ամրագրման հետ:** Ընդգծվել է **Սահմանադրական դատարանի արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը հաշվի առնելու անհրաժեշտությունը.** «... հատուկ վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների շրջանակներում հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական համապատասխան երաշխիքներ նախատեսելով՝ օրենսդիրն ապահովել է նյութական իրավունքի նորմերի արդյունավետ իրացումը: Մինչդեռ դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ դատական ակտ կայացնելու հավանականությունը բացառելու համար (օրենսգրքի 152-րդ հոդվածում թվարկված կամ համանման ակնհայտ որոշ այլ դեպքերում) օրենսդիրը գործով ըստ էության ակտի բողոքարկման հնարավորություն նախատեսելով լրացուցիչ երաշխիքներ կապահովելը հավաքների անցկացման ազատության իրավունքի

դատական պաշտպանության նկատմամբ հանրային առավել բարձր վստահությունն ապահովելու և ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների իրացման առավել ամբողջական նախադրյալներ նախատեսելու ուղղությամբ»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը վերջնական է, վերանայման ենթակա չէ և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից.

ժ/ «Կարինե Տիտանյանի դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.10.2016թ. ՄԴՈ-1316 որոշմամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը կարեւորել է **համապատասխան ոլորտի աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորելիս օրենքով լրացուցիչ ընթացակարգային երաշխիքներ նախատեսելու հանգամանքը՝ համապատասխան իրավահարաբերություններում հայտնված անձանց իրավունքների պաշտպանության համար:**

Խնդիրն այն է, որ թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, թե՛ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չեն նախատեսում որևէ հատուկ կարգավիճակ որևէ աշխատակցի համար, սակայն տնօրենի աշխատանքից ազատման առնչությամբ առկա է հատուկ կարգավիճակի ինստիտուտ, այն է՝ ընկերության ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ միանձնյա լուծել գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների, կառավարիչկազմակերպության կամ կառավարչի հետ կնքված պայմանագրերն առանց ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքերի կիրառման.

ժա/ «Աղասի Տեր-Եսայանի և Նշան Իսախրյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 27.12.2016թ. ՄԴՈ-1334 որոշմամբ որոշել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «դատարանի վճռով» եզրույթն այն մասով, որով չի ներառում «վեճը ենթակա չէ դատարանում քննության» հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը, ճանաչել Հայաստանի Հանրապետության

պետության Սահմանադրությանը համապատասխանող:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «... գործի վարույթը կարճելու մասին վճիռը չի կարող միանշանակ համարվել գործն ըստ էության լուծող դատական ակտ»,

- «... վեճը ենթակա չէ տվյալ դատարանում քննության հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին վճիռն ուղղված չէ որոշակի հանգամանքներ հաստատելուն, հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «դատարանի վճռով» եզրույթը չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը կարճում է գործի վարույթն այն հիմքով, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետ)»:

Տվյալ գործով սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտի տեսակն արդեն իսկ հատակեցված է ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով, որի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ կայացվում է որոշում:

Խնդիրը վերաբերում է նրան, որ վարչական գործով գործի վարույթը կարճելու մասին կայացվել էր վճիռ, որով հաստատվել էր որոշակի փաստական հանգամանքներ: Ընդ որում, գործի վարույթը կարճվել էր «վեճը ենթակա չէ դատարանում քննության» հիմնավորմամբ: Քանի որ տվյալ անձը հետագայում արդեն քաղաքացիական դատավարության կարգով հայց է հարուցում դատարան, ապա, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում» դրույթից, պահանջել էր հաստատված համարել վարչական գործի վարույթը կարճելու մասին վճռով արդեն իսկ հաստատված հանգամանքները: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, Սահմանադրական դատարանը հստակեցրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «դատարանի վճռով» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, և գտել, որ գործի վարույթը կարճելու մասին վճիռը չի կարող միանշանակ համարվել գործն ըստ էության լուծող դատական ակտ և այն չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը կարճում է գործի վարույթն այն հիմքով, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության:

### **ՀՀ դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը**

2016 թվականի ընթացքում ՀՀ դատարանների յոթ դիմումներից 3-ով գործերի վարույթները կարճվել են Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով, 2-ով գործերի դատաքննությունը նշանակված է համապատասխանաբար 14.02.2017թ. և 21.03.2017թ., իսկ մնացած 2 դիմումների հիման վրա

գործերով Սահմանադրական դատարանը վիճարկվող մեկ նորմ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, վիճարկվող երեք նորմ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ գործերով կայացված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում: Մասնավորապես.

1. «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 16.09.2016թ. ՄԴՈ-1302 որոշմամբ որոշել է.

«1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը՝ երկրորդ և երրորդ պարբերություններում «մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը» ձևակերպումների մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Վիճարկվող նորմը 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձանց կենսաթոշակի հաշվարկման համար ելակետ է ընդունում մինչև դիտարկվող օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձն այն դեպքում, երբ տվյալ անձը շարունակել է պաշտոնավարել նաև դիտարկվող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո և ստացել ավելի բարձր աշխատավարձ: Նման իրավիճակը խաթարում էր դատավորների անկախության սահմանադրական սկզբունքը, չէր համապատասխանում դատավորների անկախության սոցիալական երաշխիքների վերաբերյալ միջազգային չափորոշիչներին: Այդ կապակցությամբ տվյալ գործով **Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որը միաժամանակ ուղենիշ պետք է հանդիսանա իրավակիրառողի համար.** «Նման իրավիճակը պետք է հաղթահարվի, մասնավորապես՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում՝ նկատի ունենալով, որ այն անձանց համար, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում, կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվարկային հիմք է ընդունվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը՝ եթե այն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը: Ընդ որում, ակնհայտ է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «սույն օրենքի» արտահայտությունը վերաբերում է հենց այդ օրենքին»:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանը կարելուրել է **անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների կատարումը**, մասնավորապես, արձանագրե-

լով հետևյալը. «Դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց սոցիալական երաշխիքների իրավական ինստիտուտը կատարում է երկու սահմանադրաիրավական գործառույթ՝ այն, մի կողմից, հանդիսանում է հիշյալ անձանց սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք, մյուս կողմից՝ ապահովում է դատավորների և դատարանների անկախության սահմանադրաիրավական սկզբունքի իրացումը: Ուստի իրավակարգավորման հետագա զարգացումները, դատարանի գործառույթային, կառուցակարգային ու նյութական անկախության երաշխիքների ապահովման հետ մեկտեղ, պետք է միտված լինեն դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ամրապնդմանը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-647, ՄԴՈ-723, ՄԴՈ-881 որոշումների մեջ հանգամանալից անդրադարձել է դատավորների աշխատավարձի և կենսաթոշակի ողջամիտ հարաբերակցության վերաբերյալ միջազգային սկզբունքին: Սահմանադրական դատարանը կենսաթոշակի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքի պահպանման խնդիրներին անդրադառնալով, մասնավորապես շեշտել է, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի առաջին մասի /2005թ. խմբագրությամբ/ պահանջներից ու դատավորների անկախության սոցիալական երաշխիքների միջազգային չափորոշիչներից չի բխում այն հանգամանքը, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով համարժեք երաշխիքներ չեն նախատեսվում 2014 թվականի հուլիսի մեկից հետո կենսաթոշակի իրավունք ձեռք բերող դատավորների անկախության սոցիալական երաշխիքների ապահովման ուղղությամբ, և այս հանգամանքը պահանջում է իրավակարգավորման մոտեցումների վերանայում: Բացի դրանից, հիմնախնդրի առնչությամբ 2014թ. իրականացված նոր իրավակարգավորումների փաթեթում անտեսվել է նաև դատավորի անկախության սոցիալական երաշխիքի կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ սոցիալական ապահովության վերաբերյալ նրա իրավաչափ սպասելիքների իրացման երաշխավորումը, ինչը նույնպես օրենսդրի կողմից սկզբունքային և համակարգային վերանայման անհրաժեշտություն ունի»:

2. «ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 20.12.2016թ. ՄԴՈ-1333 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածը՝ վեճի առարկայի և սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ ՀՀ գործող օրենսդրության ընդհանուր տրամաբանությունն իրավակիրառ պրակտիկայի կողմից ընկալվել և իրացվում է այնպես, որ համաձայն քաղաքացիական, քրեական, վարչական պատասխանատվության համար տարիք սահմանող նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ և 1067-րդ հոդվածներ, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդված)՝ տասնչորս տարին չլրացած անչափահասները և հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված անձինք դիտարկվում են միևնույն կատեգորիայում: Քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում ամրագրված նորմով արգելվել է անգործունակ տուժողի օրինական ներկայացուցչին հաշտվել կասկածյալի, մեղադրյալի հետ՝ հետևություն է արվում, որ տասնչորս տարին չլրացած անձի տարիքը և հասունության մակարդակը չեն համապատասխանում կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը: Միաժամանակ, չի բացառվում այնպիսի հնարավոր իրավիճակներ, ինչպիսիք են, մասնավորապես, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հենց **փոքրահասակի** ծնողի հայտնվելը, որպիսի պարագայում **փոքրահասակի** մյուս ծնողն է հանդես գալիս որպես օրինական ներկայացուցիչ: Նման իրավիճակում ծնողների միջև հնարավոր հաշտությունը՝ կախված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից, կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից: Այդ կապակցությամբ տվյալ գործով **Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որը միաժամանակ ուղենիշ պետք է հանդիսանա իրավակիրառողի համար. «... իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, ինչն ուղղակիորեն առկա չէ վեճի առարկա հոդվածներում և չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել»:**

**ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը**

2016 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից սահմանադրական դատարան ներկայացված երկու դիմումներից մեկով Սահմանադրական դատարանի՝ 01.11.2016թ. ՄԴՈ-1319 որոշմամբ գործի վարույթը կարճվել է՝ հաշվի առնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. նոյեմ-



բերի 17-ի ՄԴՈ-1236 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում մինչդատական վարույթում **գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու** մասին քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի կամ քննիչի) որոշումը ՀՀ գլխավոր դատախազի կողմից կարող է վերացվել մեկ անգամ և միայն այդպիսի որոշման կայացումից հետո՝ վեց ամսվա ժամկետում՝ անկախ քրեական հետապնդման մարմնի վերոհիշյալ որևէ որոշման առնչությամբ ստորադաս հսկող դատախազի դատավարական լիազորության իրականացումից: ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու սահմանադրաիրավական պարտականությունն է **հսկող դատախազի՝ օրենքով սահմանված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի (7-օրյա) ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում (6 ամիս) ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ կայացնելով վերջնական որոշում:

**Տվյալ գործով Սահմանադրական դատարանն ուղղորդել է դատարաններին վերանայել դատական պրակտիկան, քանի որ վիճարկվող նորմը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, դատական պրակտիկայում շարունակում է կիրառվել այլ մեկնաբանությամբ:**

2016 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից սահմանադրական դատարան ներկայացված մյուս դիմումով գործի դատաքննությունը նշանակվել է 28.03.2017 թվականին:

2015 թվականի սեպտեմբերի 28-ին Սահմանադրական դատարանում մուտքագրվել են երկու տարբեր քրեական գործերի առնչությամբ, սակայն նույն հարցի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի երկու դիմումներ, որոնց հիման վրա միավորված գործով Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 2016 թվականին:

Մասնավորապես, «ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 02.02.2016թ. ՄԴՈ-1253 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝

«Հետաքննության մարմինը՝ ... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից ելնելով այն իրավակիրառ պրակտիկայում չի կարող մեկնաբանվել որպես «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» եզրույթների՝ «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա անհրաժեշտ պայմանների ամրագրում՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իրավակարգավորումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «Հետաքննության մարմինը՝ ... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին» դրույթն իրավակիրառական պրակտիկայում մեկնաբանվում էր այնպես, որ «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» եզրույթները «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա անհրաժեշտ պայմաններ են, և տվյալ դեպքում կիրառում էին «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իրավակարգավորումը: Դրանով իսկ իրավակիրառական պրակտիկայում դատախազին տեղյակ չէր պահվում հայտնաբերված հանցագործության մասին, քանի որ առկա չէր մյուս պայմանը գործով սկսված հետաքննությունը, և դատախազը չէր կարողանում արդյունավետորեն իրականացնել իր գործառնությունները: Այդ կապակցությամբ տվյալ գործով Սահմանադրական դատարանն արտահայտել է վերը նշված իրավական դիրքորոշումը, որը միաժամանակ ուղենիշ պետք է հանդիսանա իրավակիրառողի համար:

#### **Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԴ որոշումները և դրանց կատարումը**

2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված երկու դիմումներից մեկով գործի դատաքննությունը նշանակվել է 24.01.2017 թվականին, մյուս դիմումով՝ 04.04.2017 թվականին:

2015 թվականի սեպտեմբերի 17-ին Սահմանադրական դատարանում մուտքագրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մեկ դիմում, որի հիման վրա գործով Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 2016 թվականին: Մասնավորապես, «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 26.01.2016թ. ՄԴՈ-1252 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական

դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կարևորվում է նրանով, որ առկա էր կարծիք, որ տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու արարքի քրեականացմամբ օրենսդիրը հետապնդել է ոչ թե պատահարից տուժած անձանց պաշտպանության և/կամ վերջինիս օգնություն ցույց տալու նպատակ, այլ ճանապարհատրանսպորտային դեպքը քննելու հարցում իրավապահ մարմիններին օժանդակելու նպատակ, որի դեպքում տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձը գործում է իր սեփական մեղավորության կանխավարկածից ելնելով, ստիպված է լինում ցուցմունք տալ իր դեմ: Այդ կապակցությամբ տվյալ գործով **Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.** «ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի համար կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելու պարտականություն և այն չկատարելու համար պատասխանատվություն օրենքով սահմանված չեն: ... Հետևաբար, իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ բացառի օրենսդրական կանոնակարգումից դուրս անձի վրա պարտականություն և որպես հետևանք՝ այն չկատարելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը»:

Տվյալ գործով Սահմանադրական դատարանն **անհրաժեշտ է համարել կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ**, մասնավորապես, արձանագրելով հետևյալը. «Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից, հետագա օրենսդրական զարգացումների ընթացքում, սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի քրեականացման քաղաքականության պահպանման դեպքում, տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու համար անհրաժեշտ կլինի էլ ավելի բարձրացնել իրավակարգավորման իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության մակարդակը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները»:

## **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

2016 թվականին Սահմանադրական դատարանի տվյալ և նախորդ տարիներին ընդունած որոշումների և իրավական դիրքորոշումների իրացումը շարունակում է հրատապ խնդիր մնալ: Այդուհանդերձ, ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, նախապատրաստվել են առանձին օրինագծեր: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ են գտնվում հետևյալ օրինագծերը.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության

օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին **Պ-234-03.04.2013-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշման կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին **Պ-2341-03.04.2013-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշման կապակցությամբ,

- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին **Պ-295-03.07.2013-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշման եւ 2013 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1102 որոշման կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին **Պ-314-15.08.2013-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի ՍԴՈ-1082 որոշման կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին **Պ-315-15.08.2013-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման կապակցությամբ,

- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին **Պ-562-03.07.2014,05.09.2014-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի ՍԴՈ-1137 որոշման կապակցությամբ,

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին **Պ-563-09.07.2014,05.09.2014-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984 եւ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշումների կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին **Պ-5631-05.09.2014-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984 եւ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշումների կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին **Պ-633-09.10.2014, 03.04.2015-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 եւ 2015թ. մարտի 3-ի ՍԴՈ-1192 որոշումների կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին **Պ-6331-09.10.2014,03.04.2015-ՊԻ-010/0** օրինագիծը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 եւ 2015թ. մարտի 3-ի ՍԴՈ-1192 որոշումների կապակցությամբ,

- «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություն եւ լրացում կատարելու մասին **Պ-714-05.02.2015-ՊԻ-010/0** օրինագիծը ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի հունվարի 27-ի ՄԴՈ-1189 որոշման կապակցությամբ,

- «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին **Պ-715-06.02.2015-ՊԻ-010/0** օրինագիծը ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. ապրիլի 2-ի ՄԴՈ-872 որոշման կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին **Պ-942-04.02.2016,01.04.2016-ՊԻ-010/0** օրինագիծը ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 26-ի ՄԴՈ-1222 որոշման կապակցությամբ,

- Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին **Կ-10411-21.07.2016-ՊԻ-010/0** օրինագիծը ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. հուլիսի 18-ի ՄԴՈ-1037 որոշման կապակցությամբ:

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Սահմանադրական դատարանի 2015թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել էր հետևյալը. «...արմատապես վերանայման անհրաժեշտություն ունի սահմանադրական դատարանի որոշումների և իրավական դիրքորոշումների իրացման գոյություն ունեցող պրակտիկան: Նշված խնդրի հրատապությունը պայմանավորված է հատկապես նրանով, որ 2015 թվականին նույնիսկ այն պարագայում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը 26.06.2015թ. ՄԴՈ-1222 որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել էր 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ հաշվի առնելով նաև հիմնախնդրի առնչությամբ միջազգային իրավական պրակտիկան, վեճի առարկա վերոհիշյալ իրավակարգավորումը համապատասխանեցնելու ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին, շուրջ հինգ ամսվա ընթացքում այս հարցին լուծում չի տրվել»:

Սույն հաղորդման մեջ Սահմանադրական դատարանը կրկին անգամ արձանագրում է, որ թեև ՄԴՈ-1222 որոշման առնչությամբ իրավիճակը չի շտկվել /արդեն շուրջ 1 տարի 7 ամիս է, ինչ Ազգային ժողովը ՄԴՈ-1222 որոշմանը չի համապատասխանեցրել վեճի առարկա իրավակարգավորումը/, սակայն մինչև 23.02.2016թ. ՄԴՈ-1256 և 10.05.2016թ. ՄԴՈ-1271 որոշումներով սահմանված վերջնաժամկետների ավարտը, ի կատարումն այդ որոշումների, ՀՀ Ազգային ժողովը կատարել է անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ:

Սահմանադրական դատարանը կրկին անգամ արձանագրում է, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխա-

վորելու, հետեւաբար՝ նաեւ իրավական պետության սահմանադրական սկզբունքը գործնականում իրացնելու համար շարունակում է հրատապ մնալ համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու խնդիրը: Անհրաժեշտ է հարցն օրենսդրորեն կանոնակարգել, որպէսզի Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնարավորինս սեղմ ժամանակահատվածում կամ մինչեւ Սահմանադրական դատարանի կողմից տվյալ նորմի՝ ուժը կորցնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտը հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունած պետական մարմինը հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտը՝ փոխկապակցված դրույթներով հանդերձ, Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը եւ ապահովի, որպէսզի իրավական բաց չառաջանա:

**2.** Լրջագույն խնդիրներից մեկը շարունակում է մնալ Սահմանադրության գերակայության երաշխավորման առնչությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ոչ արդյունավետ իրացումը: Սույն հաղորդման մեջ բերված վիճակագրական տվյալներն ավելի քան խոսույն են: Մեկ տարվա ընթացքում պետական մարմինների կողմից օրենքների նորմերի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան ներկայացվել է ընդամենը 12 դիմում: Քաղաքացիների կողմից ներկայացվել է այդ բնույթի 195 դիմում: Հետեւությունը միանշանակ է Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անբավարար են իրականացնում Սահմանադրության գերակայության երաշխավորման իրենց լիազորությունը: ՀՀ սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելն իրավական պետությունում ոչ միայն պետք է ընկալվի որպէս հայեցողական իրավասություն, այլեւ՝ որպէս սահմանադրական պարտականություն: Այս մոտեցումն է ամրագրված նաեւ բարեփոխված Սահմանադրության 169-րդ հոդվածում:

**3.** Սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը վկայում է, որ շարունակվում են այն դեպքերը, երբ դատական մարմինների կողմից խախտվում են մարդկանց՝ հատկապէս ՀՀ Սահմանադրության 61 եւ 63-րդ հոդվածներում ամրագրված իրավունքները: Այս վիճակը հիմնականում պայմանավորված է ոչ թէ օրենքների նորմերի սահմանադրականության խնդրով, այլ օրենսդրական բացերով ու իրավական նորմի հայեցողական կիրառման հետ կապված խնդիրներով: Այդ մասին են վկայում նաեւ Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած վճիռները:

**4.** Սահմանադրական դատարանը, ելնելով դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու անհրաժեշտությունից, ինչպէս նաեւ երկրում կայուն սահմանադրականություն հաստատելու եւ վերջինիս դիմամիկ զարգա-

ցումն ապահովելու հրամայականից, հանրային իշխանության, հատկապես՝ պետական իշխանության մարմինների եւ պաշտոնատար անձանց ուշադրությունը կրկին հրավիրում է այն հանգամանքի վրա, որ առավել եւս նոր սահմանադրահրավական լուծումների պայմաններում **Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորելու հարցում որոշիչ դեր պետք է ստանձնեն պետական իշխանության հետեւյալ ինստիտուտները.**

**առաջին՝** օրենսդիր մարմինը: Օրենսդրի դերը երկակի է, նախ՝ համակարգված հաղթահարել հնարավոր հետեւանքները, որոնք կարող են առաջանալ օրենքի հակասահմանադրական ճանաչված նորմի իրավական շրջանառությունից դուրս բերվելու հետեւանքով: Երկրորդ՝ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ իրականացնել օրենսդրության զարգացման նպատակային քաղաքականություն: Երրորդ՝ «Միաժամանակ, սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարման կարևոր երաշխիքներից է օրենսդիր մարմնի կողմից օրենսդրական նախաձեռնության իրավունքի մյուս սուբյեկտների մասնակցությամբ օրենսդրական այնպիսի քաղաքականության մշակումը, որը սեղմ ժամկետներում հնարավորություն կտա օրենքները համապատասխանեցնել Սահմանադրության փոփոխություններին»: Այս խնդիրներն իրականացնելի են միայն մեկ դեպքում, երբ օրենսդիր մարմնում հատուկ ուսումնասիրվում է Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր որոշում եւ դրա արդյունքում ձեւավորվում համարժեք օրենսդրական նախաձեռնություն: Միայն այս ճանապարհով կայուն երաշխիքներ կստեղծվեն Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը եւ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու համար: Այս հարցում կարևոր դերակատարություն կարող է ունենալ նաեւ սահմանադրական փոփոխություններով խորհրդարանական խմբակցություններին օրենսդրական նախաձեռնությամբ օժտելը:

**Երկրորդ՝** Կառավարությունը: Կառավարության դերակատարությունը Սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու գործում եռակի է. ա/ ուսումնասիրելով այդ որոշումները՝ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ հատկապես բոլոր այն օրենքների վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, որոնք օրենսդիրն ընդունել է Կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ, բ/ համապատասխան փոփոխություններ կատարել Կառավարության որոշումներում, որոնք ընդունվել են հակասահմանադրական ճանաչված օրենսդրական նորմերի կատարումը երաշխավորելու համար, գ/ Սահմանադրական դատարանի որոշումները դնել Կառավարության նորմաստեղծ քաղաքականության հիմքում: Այս հարցերի լուծումը մեզանում որեւէ իրավական կարգավորում չի ստացել:

**Երրորդ՝** դատարանները: Այս մակարդակում ամեն ինչ պայմանավորված է անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնույթով եւ լիարժեքության աստիճանով: Հիմնական խնդիրը նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության երաշխավորումն է, ինչը մեզանում դեռեւս չի հաջողվել: Դատարաններն ամեն կերպ խոչընդոտում են այդ ինստիտուտի արդյունավետ

գործադրմանը: Նման պայմաններում երկրում արդյունավետ արդարադատական համակարգի ձեւավորումը վտանգվում է: Այս հարցում արմատական փոփոխություններ են ակնկալվում 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելուց հետո:

5. 2016 թվականը Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացումների առումով առաջին հերթին առանձնանում է բարեփոխված Սահմանադրության առանձին բաժինների ուժի մեջ մտնելով: Մասնավորապես, Սահմանադրության 1-3-րդ գլուխների ուժի մեջ մտնելը Սահմանադրական դատարանից պահանջեցին հստակեցնել մոտեցումները սահմանադրական նոր լուծումների տրամաբանության շրջանակներում, զարգացնել իր նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ իրավունքի գերակայության երաշխավորման, իրավական որոշակիության, իրավունքների սահմանափակման համաչափության, հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության եւ մի շարք այլ հիմնարար սկզբունքների առնչությամբ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ արձանագրել, որ, մասնավորապես, մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին առնչվող սահմանադրական փոփոխությունները համահունչ են Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Հաշվի առնելով, որ սահմանադրական փոփոխությունները նոր խնդիրներ են առաջադրում նաեւ սահմանադրական արդարադատության ու սահմանադրական վերահսկողության ողջ համակարգի հետագա զարգացումներին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին մանրամասն անդրադառնալ այն հիմնահարցերին, որոնք շոշափվել են նախորդ տարիների տարեկան հաղորդումներում, եւ դրանց մի մասը դեռեւս համապատասխան լուծումներ չի ստացել: Նկատի ունենալով, որ առաջիկայում ընդունվելու է «Սահմանադրական դատարանի մասին» նոր սահմանադրական օրենք, որի նախագիծը քննարկման առարկա պետք է դառնա նաեւ Սահմանադրական դատարանի աշխատակազմում, շատ հարցերի հետագա լուծումներն օրենսդրական երաշխիքներ կստանան:

Սահմանադրական դատարանն առավել կարելու է համարում սահմանադրական զարգացումների ընդհանուր տրամաբանությանը համարժեք Սահմանադրության գերակայության երաշխավորման անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը: Իսկ դա պահանջում է նոր իրավաբանական մոտեցումների որոշակի վերանայում՝ թե՛ պետական կառավարման եւ թե՛ օրենսդրական քաղաքականության մակարդակներում:

Նոր ժողովրդավարության երկրներում վերջին տասնամյակների հանրային զարգացումների ընդհանուր տրամաբանությունն էր անձնիշխանությունից, տոտալիտարիզմից ձերբազատվելը, անցումն ազատական սահմանադրական ժողովրդավարության՝ պետական իշխանության այնպիսի համակարգի, որը հիմնված է սահմանադրական սկզբունքների վրա: Դա հնարավոր էր առաջին հերթին համարժեք սահմանադրական բարեփոխումների ճանապարհով, ինչին



ձեռնամուխ եղան բոլոր նորանկախ երկրները: Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական զարգացումների երեք փուլ անցավ՝ 1995-ին ընդունելով Մահմանադրությունը եւ այն փոփոխելով 2005 եւ 2015 թվականներին:

Բոլոր երկրների համար սահմանադրական զարգացումների առաջնային խնդիրը սահմանադրականության երաշխավորումն է՝ Մահմանադրության գերակայության ապահովման ճանապարհով: Այս խնդրի լուծումը նույնպես նոր մոտեցումներ է պահանջում: Նախորդ դարավերջի հետպատերազմյան սահմանադրական զարգացումների բնորոշ գծերից էր, որ անհրաժեշտություն առաջացավ **առավել հստակ հակակշռել ու զսպել օրենսդիր ու գործադիր իշխանությունները՝ դատական իշխանության համարժեք դերակատարությամբ:** Դա սահմանադրական ժողովրդավարության հաստատման հրամայականն էր, և այդ իրավասությունը դրվեց սահմանադրական և համարժեք դատարանների վրա: Գերմանիայում, Իտալիայում ֆաշիզմի հաստատումը եւ տարբեր եվրոպական երկրներում դիկտատուրայի տարատեսակ արմատավորումը պատճառաբանվեց հենց նման հակակշման անբավարար մակարդակով: 1948թ.՝ Իտալիայի, 1949թ.՝ Գերմանիայի, 1958թ.՝ Ֆրանսիայի, 70-ականներին՝ Հունաստանի, Պորտուգալիայի, Իսպանիայի սահմանադրական զարգացումների համար առանցքային էին դատական իշխանության հակակշռող դերի մեծացումը՝ որպես տոտալիտարիզմի հաղթահարման ճանապարհ: Նույն բանը տեղի ունեցավ 1990-ական թվականներին Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ տարածքի երկրներում: Մահմանադրության գերակայության երաշխավորման համակարգային զարգացումների հետագա միտումները գնացին սահմանադրական դատարաններ դիմող սուբյեկտների ու քննության օբյեկտների ընդլայնման եւ հիմնական իրավունքների սահմանադրական պաշտպանության ամրապնդման ուղղությամբ: Տիպական են 1969թ. սահմանադրական զարգացումները Գերմանիայում, 1972թ. սահմանադրական բարեփոխումները Ֆրանսիայում, 2005 եւ 2015թթ. սահմանադրական փոփոխությունները Հայաստանում:

Եվրոպայում հետպատերազմյան ժամանակաշրջանի զարգացումները սահմանադրական իրավունքում ներկայումս բնորոշվում են որպես անցում իրավունքի գերակայության սկզբունքից Մահմանադրության գերակայության սկզբունքին, իրավական պետությունից /Rechtsstaat/ սահմանադրական պետության /Verfassungs-rechtsstaat/ սկզբունքին, օրինականության /légalité/ սկզբունքից սահմանադրական լեգիտիմության /légitimité constitutionnelle/ սկզբունքին: Այս գործընթացով է հիմնականում բնութագրվում մեր ժամանակների եվրոպական սահմանադրականության զարգացման ընդհանուր տրամաբանությունը:

Մահմանադրական արդարադատության եվրոպական զարգացումների նոր տրամաբանությունը փոխեց նաեւ պատկերացումները դատավորի ու նրա դերի մասին: Դատավորը դադարեց ընկալվել միայն որպես օրենքը կիսող, նա հանդես եկավ նաեւ որպես օրենքը «դատող», օրենքը մեկնաբանող, օրենքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող: Մահմանադրական պետությունում արդարադատությունն է գնահատում իշխանության մյուս ճյուղերի գործառույթների իրականացման իրավաչափությունը՝ դրանց սահմանադրականու-

թյան բացահայտման ճանապարհով: Սահմանադրական դատարանն այդ առաքելությունն իրականացնում է մյուս դատարանների աջակցությամբ, որոնք նաև Սահմանադրական դատարանի հիմնող սուբյեկտ են ու Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման կարեւորագույն դերակատար:

Եվրոպական սահմանադրական զարգացումների հիմնական տրամաբանությունն է եւ այն, որ որպէս իրավունքի աղբյուր նոր որակ են ստանում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանն է ուղղորդում օրինաստեղծին առաջնորդվել սահմանադրականության ճանապարհով, գործել սահմանադրորեն: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները դառնում են սահմանադրական իրավունքի կարեւորագույն աղբյուր եւ գերակա տեղ են զբաղեցնում իրավունքի աղբյուրների համակարգում: Միաժամանակ, պետական քաղաքականության առանցքային խնդիր է դառնում Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի իրացման երաշխավորումն իրավաստեղծ գործունեության մեջ ու իրավակիրառ պրակտիկայում:

Նման պայմաններում, իր հերթին, ինքնասահմանափակման սկզբունքը բացառիկ կարեւորվում է սահմանադրական արդարադատության պրակտիկայում:

Եվրոպական սահմանադրական զարգացումների այս միտումները եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական վերջին փոփոխությունները պահանջում են **դատական իշխանության անկախության նոր մշակույթի ձեւավորում, անկախություն, որը կոչված է երաշխավորելու Սահմանադրության գերակայությունը՝ իրական կյանքում իշխանությունների գործակցության սահմանադրական հավասարակշռության երաշխավորման եւ ինքնասահմանափակման սկզբունքով առաջնորդվելու շրջանակներում:** Այս խնդրի լուծումն առաջին պլան է մղում Սահմանադրական դատարանի որոշումների կատարման երաշխավորված իրավական համակարգ ունենալու անհրաժեշտությունը: Այնպիսի համակարգ, որը կապահովի.

ա/ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի գործողության դադարման հետեւանքների արագ հաղթահարումն ու Սահմանադրությանը համարժեք իրավակարգավորման երաշխավորումը,

բ/ իրավական անորոշության ու իրավակարգավորման բացի արագ հաղթահարումը,

գ/ իրավակիրառական պրակտիկայում եւ իրավաստեղծ քաղաքականության մեջ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լիարժեք իրացումը,

դ/ խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման անընդհատության երաշխավորումը սահմանադրական մշտադիտարկման ճանապարհով:

Այդ նպատակով պահանջվում է համարժեք իրավակարգավորումներ նախատեսել ոչ միայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, այլեւ «ՀՀ կառավարության մասին» օրենքում, դատավարական օրենսգրքերում ու իրավական այլ ակտերում:



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒԹՅԱՆ 244-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

26 հունվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի,  
Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-  
բանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ  
Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ  
օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների  
պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական  
օրենսգրքի 244-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-  
թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2015  
թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված  
դիմումն է:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը վերոհիշյալ  
դիմումով սույն գործով վիճարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի

սահմանադրականության վերաբերյալ իր դիրքորոշումները ներկայացրել էր ՀՀ Սահմանադրության 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով 2-րդ գլխի դրույթների շրջանակներում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի հունվարի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացրել լրամշակված դիմում՝ հստակեցնելով սույն գործով վիճարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ իր դիրքորոշումները՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության գործող (2015 թվականի դեկտեմբերի 22-ից ուժի մեջ մտած) 2-րդ գլխի դրույթներին համապատասխան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական օրենսգրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ Պ Ա Ր Ջ Ե Ց 8.

1. ՀՀ քրեական օրենսգրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2003 թվականի ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը» վերտառությամբ 244-րդ հոդվածը սահմանում է.

«Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից՝ սույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Վիճարկվող հոդվածը փոփոխության է ենթարկվել 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-119-Ն ՀՀ օրենքով:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածն առաջացնում է սահմանադրականության խնդիր և խնդրում է որոշել հիշյալ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 65-րդ և 66-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ «վիճարկվող նորմի ձևակերպումից և տառացի մեկնաբանությունից հետևում է, որ դրա իրական նպատակը ոչ թե պատահարից տուժած անձանց պաշտպանությունը և/կամ վերջինիս օգնություն ցույց տալն է, այլ՝ իրավապահ մարմիններին օժանդակելը ճանապարհատրանսպորտային դեպքը քննելու հարցում»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող հոդվածը ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ մեղավոր անձին պարտադրում է, նախևառաջ, հենց դեպքի վայրում գիտակցել և ընդունել իր մեղավորությունը, այնուհետև՝ չհեռանալ դեպքի վայրից: Այսինքն՝ վիճարկվող նորմը ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցներին պարտադրում է գործել իրենց սեփական մեղավորության կանխավարկածից ելնելով, քանի որ պատահարի պահին ու անմիջապես դրանից հետո (հատկապես՝ վիճահարույց դեպքերում) ոչ ոք չի կարող վստահ լինել, թե, ի վերջո, ով կարող է այդ պատահարի մեղավոր կողմ ճանաչվել:

Ի հիմնավորումն իր դիրքորոշումների, դիմողը վկայակոչում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի, անմեղության կանխավարկածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներ, ինչպես նաև խնդրո առարկա հարցի վերաբերյալ մի շարք օտարերկրյա պետությունների սահմանադրական արդարադատության մարմինների արտահայտած իրավական դիրքորոշումներ: Դիմողը վկայակոչում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի (ԵԱՆԴ/0122/01/12) որոշմամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը պայմանավորված է տուժողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ և, մասնավորապես, հետապնդում է պատժի սպառնալիքով հարկադրել ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցներին չհեռանալ և անհրաժեշտ օգնություն ցուցաբերել պատահարի արդյունքում տուժած անձանց:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի իրավական բովանդակությունն ամբողջապես ընկալելու համար հարկ է անդրադառնալ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքին (մասնավորապես՝ 24-րդ հոդված), որով սահմանվում են տրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարորդների պարտականությունները:

Անդրադառնալով ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները խախտած անձանց ցուցմունք տալու պարտականությանը և քրեական հետապնդման սպառնալիքի ներքո հայտնվելու վտանգին՝ պատասխանող կողմը նշում է, որ օրենքը չի պարտադրում երթևեկության կանոնները խախտած անձին ցուցմունքներ տալ: Ավելին, ինչպես ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ոչ միայն կասկածյալին, այլև վկային իրավունք է վերապահում հրաժարվել իր դեմ ցուցմունք տալուց, եթե դրա հետևանքով անձը կարող է հայտնվել քրեական հետապնդման սպառնալիքի ներքո: Իսկ վկայություն տալուց հրաժարվելու իրավունքը գործում է նաև այն դեպքում, երբ այդպիսի վկայությունը ոչ միայն ուղղակիորեն, այլև անուղղակիորեն կարող է անձին վկայի կարգավիճակից վերածել կասկածյալի:

Պատասխանող կողմի կարծիքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի

դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

4. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները և ելնելով սույն գործով դիմողի փաստարկներից և եզրահանգումներից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ա) վիճարկվող իրավակարգավորման իրավական նպատակները և հիմքերը,

բ) ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների շրջանակը,

գ) վիճարկվող իրավակարգավորման պարագայում ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխավորվածությունը և ապահովումը:

5. ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներն են հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Այդ խնդիրների իրականացման համար ՀՀ քրեական օրենսգրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդված): ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասով սահմանվում է նաև պատժի նպատակը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենսդիրը, արարքի հանրային վտանգավորության գնահատման և դրա քրեականացման իր իրավասության շրջանակներում, ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ խնդիրներից և նպատակներից, սույն գործով վիճարկվող հոդվածն ամրագրել է ՀՀ քրեական օրենսգրքի «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 23-րդ գլխում: Հիշյալ կանոնակարգմամբ տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը համարելով հանցագործություն՝ օրենսդիրն այդ արարքը որպես այդպիսին որակելը պայմանավորում է ՀՀ քրեական օրենսգրքի «Ճանապարհա-

յին երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը» վերտառությամբ 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների պարտադիր վրա հասնելու հանգամանքով: Այդ հետևանքներն են՝ մարդու առողջությանն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, անզգուշությամբ մարդու մահ առաջացնելը, անզգուշությամբ երկու կամ ավելի մարդու մահ առաջացնելը:

Վիճարկվող իրավակարգավորմամբ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չթողնելու իրավական պահանջ սահմանելը, ինչպես փաստում է սույն գործով պատասխանող կողմը, նպատակաուղղված է տուժողների իրավունքների պաշտպանությանը և պայմանավորված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ:

Վերոշարադրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ դիմողի այն փաստարկը, որ «... օրենսդիրը ճանապարհատրանսպորտային վայրը թողնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելիս նպատակ է հետապնդել տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձանց քրեական պատժի սպառնալիքի տակ պարտավորեցնել մնալ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում՝ բացառապես իրավապահ մարմիններին օժանդակություն ցուցաբերելու նպատակով»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես, «Տրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարորդների հիմնական պարտականությունները» վերտառությամբ 24-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է.

«դ) ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում՝

1) անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված կարգով միացնել վթարային լուսային ազդանշանը և չտեղաշարժել ինչպես տրանսպորտային միջոցը, այնպես էլ վթարի հետ կապված առարկաները (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում հետվթարային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է միացված լինեն նաև օգնության համար դեպքի վայրին անմիջապես մոտ կանգնեցված տրանսպորտային միջոցների վթարային լուսային ազդանշանները):

2) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու, «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն կանչելու համար, իսկ ծայրահեղ դեպքերում՝ համընթաց շարժվող կամ իր տրանսպորտային միջոցով տուժածներին մոտակա բուժ-հիմնարկ տեղափոխել, այնտեղ հայտնել իր ազգանունը, տրանսպորտային

միջոցի գրանցման համարանիշը (ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական իրավունքի վկայական և տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր), որից հետո վերադառնալ պատահարի վայր.

3) սույն հոդվածի չորրորդ մասով սահմանված կարգով ազատել երթևեկելի մասը, եթե մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությունը խոչընդոտված է.

4) պատահարի մասին հայտնել ոստիկանություն և սպասել ոստիկանության ծառայողների ներկայանալուն»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժողներ չկան, ապա վարորդները, պատահարի իրավիճակի գնահատման փոխհամաձայնությամբ, կարող են նախօրոք կազմել ու ստորագրել վթարի սխեման, ներկայանալ մոտակա ճանապարհապարեկային ծառայության պահակետ կամ ոստիկանության տարածքային մարմին՝ պատահարը սահմանված կարգով ձևակերպելու համար»:

Վերոհիշյալ իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների մեջ, ի թիվս այլնի, ընդգրկել է ոչ միայն իրավապահ մարմինների հետ փոխհարաբերություններով պայմանավորված պարտականությունները, այլ նաև տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենսդրությունը խախտող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով»:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1246-րդ հոդվածով սահմանվում է վարչական պատասխանատվություն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելու, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն կամ ճանապարհատրանսպորտային պատահար, պատահարի մասնակից վարորդի կողմից պարտականությունները չկատարելու համար: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 3-րդ մասով վարչական պատասխանատվություն է սահմանվում ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պարտականությունները չկատարելու համար, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ:

Ճանապարհային երթևեկության վերաբերյալ ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, հիշյալ օրենքով սահմանվող համանման իրավակարգավորումներով գործել է նաև ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները հաստատելու մասին» N 924-Ն որոշումը:



ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի (ԵԱՆԴ/0122/01/12) որոշմամբ: Հիշյալ որոշման, մասնավորապես, 18-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանը նշում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը նպատակ է հետապնդում պատժել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում թույլ տված այն անձանց, ովքեր, թողնելով դեպքի վայրը, խուսափել են ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժած անձանց օգնություն ցուցաբերելուց, չեն ցանկացել ճանապարհատրանսպորտային պատահարի մասին տեղեկացնել իրավապահ մարմիններին և աջակցել կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանը»: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի համար կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելու պարտականություն և այն չկատարելու համար պատասխանատվություն օրենքով սահմանված չեն: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հանցագործության բացահայտմանն աջակցելը համարվում է որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:** Հետևաբար, իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ բացառի օրենսդրական կանոնակարգումից դուրս անձի վրա պարտականություն և որպես հետևանք՝ այն չկատարելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը:

Վերոհիշյալի վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելը պայմանավորված է ճանապարհային երթևեկության մասնակիցների, մասնավորապես, տուժած անձանց շահերի պաշտպանության, ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն սահմանելով՝ պետությունն իրացնում է, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության իր սահմանադրական պարտականությունը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից, հետագա օրենսդրական զարգացումների ընթացքում, սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի քրեականացման քաղաքականության պահպանման դեպքում, տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու համար անհրաժեշտ կլինի է՛լ ավելի բարձրացնել իրավակարգավորման իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության մակարդակը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայ-

տած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 65-րդ և 66-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության «Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը» վերտառությամբ 65-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»:

ՀՀ Սահմանադրության՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 66-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքները համանման կարգավորմամբ ամրագրված էին նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 21-րդ և 22-րդ հոդվածներով:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքներն ուղղակի կամ անուղղակի ամրագրված են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում են անմեղության կանխավարկածի իրավունքը: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Saunders v. The United Kingdom* (Application no. 19187/91) գործով իր 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճռում արտահայտել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ թեև լռելու իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածում հիշատակված չեն, այնուամենայնիվ, դրանք հանդիսանում են հանրաճանաչ միջազգային չափորոշիչներ, որոնք ընկած են արդար դատական ընթացակարգի հիմքում: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև եզրահանգել է, որ լռելու իրավունքը սերտ փոխկապակցված է անմեղության կանխավարկածի հետ:

ՀՀ սահմանադրական դատարանը ևս իր որոշումներում անդրադարձել է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման խնդիրներին: Սույն գործի շրջանակներում սահմանա-

դրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ 2010 թվականի մարտի 30-ի ՄԴՈ-871 որոշման մեջ արտահայտած, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը.

«... անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքներն օրենսդիրն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 18-րդ հոդվածով և «Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը» վերտառությամբ 20-րդ հոդվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում են վերոհիշյալ իրավունքների իրացման ապահովման այլ երաշխիքներ ևս: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ցուցմունքներ տալը կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելը, բացատրություններ տալը կամ բացատրություններ տալուց հրաժարվելն ամրագրվել են որպես կասկածյալի (63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետեր) և մեղադրյալի (65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետեր) իրավունքներ: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է կասկածյալին (211-րդ հոդվածի 3-րդ մաս) և մեղադրյալին (212-րդ հոդվածի 8-րդ մաս) նրանց իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչի կողմից բացատրելու, ինչպես նաև վկային իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների դեմ չվկայելու իր իրավունքի մասին առերեսման սկզբում քննիչի կողմից նախազգուշացնելու (216-րդ հոդվածի 2-րդ մաս) և իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը հարցաքննությունից առաջ նախագահողի կողմից պարզաբանելու (339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) իրավական պահանջները:

Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ցուցմունք տալուց հրաժարվելը» վերտառությամբ 339-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ՝ «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»:

Համադրելով վերոգրյալը սույն գործով դիմողի այն եզրահանգման հետ, համաձայն որի՝ ՀՀ քրեական օրենսգրքի սույն գործով վիճարկվող 244-րդ հոդվածն «առաջացնում է սահմանադրականության խնդիր, այնքանով որքանով այն հակասում է անձի՝ իր դեմ ցուցմունք չտալու սկզբունքին, ինչպես նաև անմեղության կանխավարկածին», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրաց-

ման իրավական երաշխավորվածության և ապահովման անմիջական կարգավորումը դուրս է ՀՀ քրեական օրենսդրության և, բնականաբար, նաև սույն գործով վիճարկվող իրավակարգավորման առարկայի շրջանակից: Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքները համակարգային ամբողջականության մեջ ապահովվում են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

26 հունվարի 2016 թվականի  
ՍԴՈ-1252



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 53-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 և 71-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որո-

շելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 2015թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 20.10.2015թ. ՄԴԱՌ-61 աշխատակարգային որոշմամբ որոշել է ՀՀ գլխավոր դատախազի՝ վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում ամկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում» վերտառությամբ 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ ... հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ»:

Նույն հոդվածի նույն մասի 3-րդ կետը սահմանում է. «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ ... հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետն ամրագրում է. «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ... ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից»:

Նույն մասի 2-րդ կետը նախատեսում է. «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ... ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում»:

Օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է. «Հետաքննության մար-

մինը՝ ... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին»:

Վիճարկվող դրույթներից 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 20-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 8-ին: Նշված օրենքով ՀՀ Ազգային ժողովն օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը լրացրել է «ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ» բառերով:

Վիճարկվող մյուս դրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից ի վեր փոփոխությունների կամ լրացումների չեն ենթարկվել:

2. Թիվ 61202415 քրեական գործի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. որպես քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթ 2015 թվականի ապրիլի 13-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ն. Միսակյանի 2015 թվականի ապրիլի 9-ի 36/15-15 թվակիր զեկուցագիրը:

Հիշյալ զեկուցագրով ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետն ըստ էության հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության՝ հետաքննության մարմնի լիազորությամբ օժտված պաշտոնատար անձինք չեն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված պարտականությունը, այն է՝ հայտնաբերված հանցագործության մասին անհապաղ տեղյակ չեն պահել դատախազին, ինչի արդյունքում դատախազը զրկվել է կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումները հետաքննության մարմնի կողմից ընդունելու, գրանցելու և լուծելու մասին օրենքի պահանջների կատարումը ստուգելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված բացառիկ լիազորությունն իրացնելու հնարավորությունից:

Մասնավորապես, ըստ զեկուցագրի՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունից ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել է «Հով-Գրիգ Շին» ՍՊ ընկերության վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2015 թվականի փետրվարի 25-ի որոշման պատճենը՝ օրինականությունն ստուգելու համար:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայու-

թյան վարչության պետի տեղակալի կողմից 2015 թվականի ապրիլի 18-ին կայացվել է հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2015 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2015 թվականի ապրիլի 18-ին կայացված որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ պաշտոնեական անփութության դեպքի առիթով հարուցվել է թիվ 61202415 քրեական գործը:

2015 թվականի հուլիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202415 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի հուլիսի 31-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ին կայացրած որոշումը:

2015 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202415 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի օգոստոսի 27-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը:

Թիվ 61202715 քրեական գործի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. որպես քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթ 2014 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Բ. Պետրոսյանի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի 36/15-14 թվակիր զեկուցագիրը:

Հիշյալ զեկուցագրով ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալն ըստ էության հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության՝ հետաքննության մարմնի լիազորությամբ օժտված պաշտոնատար անձինք չեն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի



2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված պարտականությունը, այն է՝ հայտնաբերված հանցագործության մասին անհապաղ տեղյակ չեն պահել դատախազին, ինչի արդյունքում դատախազը զրկվել է կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումները հետաքննության մարմնի կողմից ընդունելու, գրանցելու և լուծելու մասին օրենքի պահանջների կատարումը ստուգելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված բացառիկ լիազորությունն իրացնելու հնարավորությունից:

Մասնավորապես, ըստ զեկուցագրի՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության պետի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 10903/13-14 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն է ուղարկվել մաքսային միջնորդ Մարտին Հակոբի Ավետիսյանի վերաբերյալ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման պատճենը՝ օրինականությունն ստուգելու համար:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2014 թվականի նոյեմբերի 10-ին կայացվել է հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից կայացված 2015 թվականի մայիսի 11-ի որոշմամբ վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2014 թվականի նոյեմբերի 10-ին կայացված որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ պաշտոնեական անփութության դեպքի առիթով հարուցվել է թիվ 61202715 քրեական գործը:

2015 թվականի հուլիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202715 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի հուլիսի 31-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ին կայացրած որոշումը:

2015 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202715 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի

19-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի օգոստոսի 27-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 5-րդ մասին, 103-րդ հոդվածին:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված՝ «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» դրույթները պայմաններ ամրագրող նորմեր չեն, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունը վերաբերում է պայմաններ ամրագրող նորմերին: Հետևաբար՝ հետաքննության մարմինը պարտավոր է դատախազին տեղյակ պահել ոչ միայն գործով սկսված հետաքննության մասին, այլ նաև՝ հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության մասին: Մինչդեռ իրավակիրառական պրակտիկայում օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված՝ «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» դրույթներն ընկալվում են որպես «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա պայմաններ ամրագրող նորմեր, դրանք մեկնաբանվում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոններով, ինչի արդյունքում օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված դրույթներն ստանում են այլ իմաստ: Արդյունքում, ըստ իրավակիրառական պրակտիկայի՝ հետաքննության մարմինը պարտավոր է դատախազին անհապաղ տեղյակ պահել հայտնաբերված հանցագործության մասին **միայն գործով հետաքննություն սկսելու պարագայում:**

Դիմողն արձանագրում է, որ օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ հայտնաբերված հանցագործության մասին դատախազին տեղյակ պահելու պարտականությունը սահմանող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, դատախազին հնարավորություն չի տալիս մինչև հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելը /հետաքննություն սկսելը/ իրացնելու հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության դեպքի վերաբերյալ նախապատրաստված նյութերի հիման վրա ինքնուրույնաբար քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը, հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության դեպքի վերաբերյալ նյութերի նախապատրաստումը քննիչին հանձնարարելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված լիազորությունը, կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումները հետաքննության

մարմնի կողմից ընդունելու, գրանցելու և լուծելու մասին օրենքի պահանջների կատարումը ստուգելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը, ինչպես նաև հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության դեպքի վերաբերյալ նյութերը ստուգման համար պահանջելու կամ դրանց ծանոթանալու կամ դրանք ստուգելու իրենց գտնվելու վայրում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը:

Վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 5-րդ մասին և 103-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ իր դիրքորոշումները հիմնավորելու համար դիմողը մեջ է բերում Տ. Քամայանի վերաբերյալ գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ Եվրոպական դատարանի պրակտիկայի վերլուծությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածները, Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով և Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1985 թվականի նոյեմբերի 29-ի «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքները» A/RES/40/34 հռչակագրում և Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11 հանձնարարականում տուժողների իրավունքների պաշտպանության համար ազգային մակարդակներով միջոցներ ձեռնարկելու առաջարկվող մոտեցումները:

4. Պատասխանող կողմը պնդում է, որ դատախազության լիազորությունների օրենսդրական ամրագրումն ու կարգավորումն առաջին հերթին իրականացվել է այն հաշվով, որ երաշխավորվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նպատակների իրականացումը: Այդ պատճառով օրենսդիրը դատախազությանը վերապահել է այնպիսի լիազորություններ, որոնք թեև դուրս են գալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ նախնական քննություն կոչվող փուլի շրջանակներից, բայց անհրաժեշտաբար ապահովում են դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակից բխող սոցիալիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ դատախազական հսկողությունն սկսվում է քրեական գործի հարուցման փուլից, այս փուլի օրինականությունից է կախված քրեական դատավարության խնդիրների իրականացումը՝ անձի, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Քրեական գործի հարուցման օրինականության նկատմամբ դատախազության հսկողական լիազորություններից է կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հետաքննության մարմնի կողմից հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարման ստուգումը:

Հղում կատարելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» 2000թ. դեկտեմբերի 6-ի թիվ Rec(2000)19 հանձնարարականին, ՄԱԿ-ի կողմից 1990թ. ընդունված «Դատախազների դերի վերաբերյալ ղեկավար սկզբունքներին», Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 1993թ. ապրիլի 23-ին ընդունված «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափորոշիչների, հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» փաստաթղթին պատասխանողը գտնում է, որ դրանք ելակետային նշանակություն ունեն ներպետական օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի ձևավորման համար:

Պատասխանող կողմը նաև նշում է, որ դիմողի կողմից առաջ քաշված խնդիրն իրավական լուծում է ստացել ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումներում: Նոր օրենսգրքի նախագծում նախատեսվում է վերացնել քրեական գործի հարուցման փուլը՝ այն ներառելով նախաքննության փուլի մեջ: Քրեական վարույթն սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից և ավարտվում քրեական վարույթը դատարան ուղարկելով կամ այն կարճելով:

Ամփոփելով՝ պատասխանողը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, քանի որ դրանք կոչված են ապահովելու հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողական լիազորությունների իրականացումը, հանցավոր ոտնձգություններից անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

5. Սահմանադրական դատարանը նշում է, որ դիմողի ներկայացրած երկու դիմումների հիման վրա գործերը քննության ընդունելու պահին գործել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, և դիմողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները վիճահարույց է համարում այդ խմբագրությամբ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 103-րդ հոդվածի տեսանկյունից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության

ա/ 18-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը տեղ է գտել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահ-

մանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում,

բ/ 103-րդ հոդվածը շարունակում է գործել՝ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 209-րդ հոդվածի 6-րդ մասի:

6. Մույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ անդրադառնալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ նկատի ունենալով, որ դրանց կատարվող հղումներն են հիմք ծառայել վեճի առարկա նորմերն իրավակիրառ պրակտիկայում տարակերպ մեկնաբանելու հարցում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ «Իրավական ակտի մեկնաբանումը» վերտառությամբ 86-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Նույն օրենքի՝ «Օրենսդրական տեխնիկայի այլ կանոններ» վերտառությամբ 45-րդ հոդվածի 10-րդ կետի 1-3-րդ պարբերությունների համաձայն. «Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմանների առկայությունը պարտադիր է, չի կարող կիրառվել «կամ» շաղկապը: Այս դեպքում պետք է կիրառվեն «և» կամ «ու» շաղկապները:

Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով: Այս դեպքում պետք է կիրառվի «կամ» շաղկապը:

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի 1-3-րդ պարբերությունների դրույթների վերլուծությունից բխում է, որ դրանք վերաբերում են բացառապես պայմաններ ամրագրող նորմերին: Այսինքն՝ այն դեպքերին, երբ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է լինում «և» կամ «ու» շաղկապով բաժանված միաժամանակյա դերակատարություն ունեցող և իրավակարգավորման նպատակի իրացումը երաշխավորող պայմաններին:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդրության մեջ, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, առկա են «և» շաղկապով տարանջատված տարաբնույթ իրավական նորմեր, որոնցից ոչ բոլորն են ամրագրում տվյալ նորմի կիրառման միաժամանակյա անհրաժեշտ պայմանները: Դրանք կարող են, ի թիվս այլնի, լինել նորմակրոնքներ, նորմնպատակներ, նորմխնդիրներ, ինչպես նաև կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող այնպիսի նորմեր, որոնք չեն ամրագրում որևէ պայման, կամ որ նույնն է՝ տվյալ նորմի կիրառումը չեն պայմանավորում պայմանների համակցությամբ: Այդպիսի կոնկրետ կարգավորիչ նշանակություն

ունեցող նորմերից է, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի նորմը, որը, ի թիվս այլնի, պարունակում է հետևյալ դրույթները. «հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ», «բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները»:

Վերը նշված առաջին դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կոնկրետ հանցագործության դեպքի առիթով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը հնարավոր չի համարում միաժամանակ իրականացնել հետաքննություն և նախաքննություն, քանի որ, որպես կանոն, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության՝ հետաքննությունը նախորդում է նախաքննությանը:

Վերը նշված երկրորդ դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը պարտադիր չի համարում, որ կոնկրետ քրեական գործով առաջին ատյանի դատարանը միաժամանակ կայացնի և՛ դատավճիռ, և՛ այլ վերջնական որոշում: Ընդհանուր կանոնն այն է, որ կոնկրետ քրեական գործով առաջին ատյանի դատարանը կայացնում է դատավճիռ, իսկ վերադաս դատարանները՝ որոշում /միաժամանակ և՛ դատավճիռ, և՛ այլ վերջնական որոշում կայացնելու դեպքը նախատեսված է օրենսգրքի 360.1 հոդվածով և վերաբերում է դատարանի լրացուցիչ որոշմանը, որը կայացվում է դատավճռի կամ որոշման հետ միաժամանակ/:

Վերը նշված առաջին և երկրորդ դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դրանք սահմանում են համապատասխանաբար դատախազական հսկողության և դատախազի այլ գործառույթների բնագավառները և դատախազի լիազորությունների իրականացումը պայմանավորում են համապատասխան դեպքի, փաստի կամ իրադարձության առկայությամբ: Այդ դրույթներից յուրաքանչյուրում «և» շաղկապից առաջ և հետո ամրագրված են երկու համազոր, սակայն միմյանցից անկախ հասկացություններ, որոնք ենթադրում են դատախազի լիազորությունների իրականացման երկու ինքնուրույն, միմյանցից անջատ նախադրյալներ, երբ դիտարկվող դրույթների կիրառման համար բավական է «և» շաղկապից առաջ և հետո ամրագրված դեպքերից առնվազն մեկի առկայությունը: Այսինքն՝ վերը նշված օրինակում, եթե տվյալ կոնկրետ գործով ընթանում է հետաքննություն, ապա դատախազը հսկողություն է իրականացնում հետաքննության նկատմամբ, եթե ընթանում է նախաքննություն, ապա դատախազը հսկողություն է իրականացնում նախաքննության նկատմամբ, եթե տվյալ կոնկրետ գործով առկա է միայն դատավճիռ, այլ ոչ թե բողոքարկման ենթակա այլ վերջնական դատական ակտ, ապա դատախազն իրավասու է բողոքարկել դատավճիռը, անկախ նրանից, թե տվյալ գործով առկա է, արդյոք, բողոքարկման ենթակա այլ վերջնական դատական ակտ, թե՛ ոչ:

Իրավական նորմի մեկնաբանությունը պետք է շաղկապել ինքնուրույն գործառույթի առկայության և դրա իրացման պայմանների հետ, այլ ոչ թե դրսևորել մեխանիկական մոտեցում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ «... դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ... ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից»: Ինքնուրույն լիազորության իրականացումը չի կարող պայմանավորվել այլ լիազորությամբ պայմանավորված իրավակարգավորման օբյեկտի միաժամանակյա առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոնները կիրառելի չեն ինքնուրույն իրավակարգավորման օբյեկտների թվարկումների նկատմամբ և վեճի առարկա դրույթում ներկայացված չէ կոնկրետ իրավահարաբերությանը վերաբերող երկու միաժամանակյա անհրաժեշտ պայմանների առկայության պահանջ: Նույնը վերաբերում է նաև օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրույթին /վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին/: Որպես օրինակ կարող է ծառայել նաև օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը /քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ/: Այս դեպքում, ըստ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ քննիչը չի կարող հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր, քանի դեռ տվյալ հանցագործության առիթով առկա չէ հարուցված քրեական գործ, կամ քննիչը պարտավոր է հանցագործության դեպքով նախապատրաստված նյութերի հիման վրա անպայման հարուցել քրեական գործ՝ անկախ նրանից, որ առկա են քրեական գործի հարուցումը մերժելու հիմքեր:

Բացի դրանից, օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համար պետք է այն ներկայացնել իր իրավական բովանդակության ամբողջականության մեջ, դիտարկել օրենսգրքի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համատեքստում: Խոսքը վերաբերում է օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին: Դրանցով սահմանված լիազորությունները ենթադրում են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների և այլ դեպքերի մասին անհապաղ դատախազին տեղյակ պահելու՝ հետաքննության մարմնի պարտականության կատարում՝ անկախ տվյալ գործով հետաքննություն սկսելու կամ չսկսելու հանգամանքից: Դիտարկվող պարտականությունը չկատարելը կամ այդ պարտականությունը գործով հետաքննություն սկսելու հանգամանքով պայմանավորելը կլիաթարի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դատախազական հսկողության էությունը, կխոչընդոտի դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթներն

իրավակիրառական պրակտիկայում սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա մեկնաբանելու և կիրառելու պայմաններում կարող են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածին համահունչ լիարժեք երաշխավորել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին հետաքննության մարմնի կողմից օրենքի պահանջների կատարման ստուգման՝ դատախազի լիազորությունների բնականոն և արդյունավետ իրականացումը, և նման պարագայում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «Հետաքննության մարմինը՝ ... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից ելնելով այն իրավակիրառ պրակտիկայում չի կարող մեկնաբանվել որպես «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» եզրույթների՝ «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա անհրաժեշտ պայմանների ամրագրում՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իրավակարգավորումը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 փետրվարի 2016 թվականի  
ՍԴՈ-1253





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 156-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 160-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

9 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողներ Կ. Հարությունյանի, Ա. Գևորգյանի, Դ. Հարությունյանի, Վ. Գասպարիի և նրանց ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Տ. Սաֆարյանի և Տ. Եզրոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կարեն Հարությունյանի, Արտակ Գևորգյանի, Դավիթ Հարությունյանի, Վարտգեգ Գասպարիի դիմումների

հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կարեն Հարությունյանի, Արտակ Գևորգյանի և Դավիթ Հարությունյանի, Վարդգեզ Գասպարիի՝ համապատասխանաբար 2015 թվականի օգոստոսի 19-ին, նոյեմբերի 9-ին և դեկտեմբերի 24-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի ՄԴԱՌ-55, 2015 թվականի դեկտեմբերի 4-ի ՄԴԱՌ-74 և 2016 թվականի հունվարի 19-ի ՄԴԱՌ-3 աշխատակարգային որոշումներով դիմումներն ընդունվել են քննության, և, սահմանադրական դատարանը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, որոշել է մինչև դատաքննությունն սկսվելը նշված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին (այսուհետ՝ օրենսգրքը) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը սահմանում են.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճարել բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի,

...

5. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո բերված վճարել բողոքը վճարել դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է»:

Օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Վճարել բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճարել բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է. ... »:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2.1. Կարեն Հարությունյանի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Կարեն Հարությունյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի՝ 25.07.2014թ. որոշմամբ հայցը բավարարվել է: ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ Կարեն Հարությունյանի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինս 18.12.2014թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով ՀՀ վարչական դատարանի՝ 25.07.2014թ. որոշումը: Նշված որոշման դեմ Կարեն Հարությունյանի ներկայացուցիչը վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պահանջելով բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ գործի վարույթը կարճել: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 11.02.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ նշելով, որ. «Տվյալ դեպքում բողոք բերած անձին վերաքննիչ դատարանի՝ 18.12.2014 թվականի որոշումն ուղարկվել է 19.12.2014 թվականին, այն ստացվել է 20.12.2014 թվականին, վերաքննիչ դատարանի 18.12.2014 թվականի որոշման դեմ սույն վճռաբեկ բողոքը փոստին է հանձնվել 20.01.2014 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը լրանալուց 1 օր հետո, և չի ներկայացվել միջնորդություն վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին»:

2.2. Արտակ Գևորգյանի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Արտակ Գևորգյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանի 10.02.2015թ. որոշմամբ հայցը բավարարվել է: ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ Արտակ Գևորգյանի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինս 10.06.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, և ՀՀ վարչական դատարանի 10.02.2015թ. որոշումը թողել անփոփոխ: Նշված որոշման դեմ Արտակ Գևորգյանի ներկայացուցիչը կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 26.08.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը «... վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարան է ներկայացրել 22.07.2015 թվականին (հիմք՝ փոստային ծրար), այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո և չի ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդություն»:

2.3. Դավիթ Հարությունյանի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Դավիթ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանի 05.11.2014թ. վճռով հայցը բավարարվել է: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.06.2015թ. որոշմամբ Դավիթ Հարությունյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 05.11.2014թ. վճիռը թողնվել է անփոփոխ: Նշված որոշման դեմ Դավիթ Հարությունյանի ներկայացուցիչը կողմից վճռաբեկ

բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 26.08.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը «... վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարան է ներկայացրել 27.07.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո և չի ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդություն»:

2.4. Վարտգեզ Գասպարիի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Վարտգեզ Գասպարիին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանի 02.10.2014թ. վճռով հայցը բավարարվել է: Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.04.2015թ. որոշմամբ մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 02.10.2014թ. վճիռը թողնվել է անփոփոխ: Նշված որոշման դեմ Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 03.06.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքը «...ներկայացրել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո: Միաժամանակ, բողոք բերած անձը միջնորդություն է ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին ...: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ... ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագրի համաձայն՝ վերջինս Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 10.04.2014 թվականին, մինչդեռ վճռաբեկ բողոքը ներկայացվել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված վճռաբեկ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո: ... : Այսինքն, բողոք բերած անձի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու վերաբերյալ Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի փաստարկը հիմնավոր չէ, մասնավորապես՝ 10.04.2014 թվականից մինչև 11.05.2015 թվականը ժամանակահատվածի համար որևէ պատճառաբանություն չպարունակելու պատճառով»:

3. Դիմողները՝ վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում են, որ վերջիններիս բովանդակությունը հանգում է նրան, որ նույնիսկ բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (օրինակ՝ դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալու պատճառով) վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված մեկամսյա ժամկետը «բաց թողնելու», այն հարգելի համարելու, վճռաբեկ բողոքը դատական ակտն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնելու իրավունքն իրացնելու համար բողոքաբերը պետք է առանձին միջնորդությամբ խնդրի վճռաբեկ դատարանին թույլ տալ իրացնելու իր իրավունքը, իսկ վերջինիս հայեցողության սահմաններն ու շրջանակները որևէ կերպ սահմանված չեն օրենքով: Դիմողները գտնում են նաև, որ

դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը նշանակում է, որ բողոքաբերը կարող է իր բողոքը ներկայացնել այդ ժամկետում՝ ցանկացած օր, այդ թվում՝ ժամկետի վերջին օրը: Տվյալ դեպքում բողոքաբերը, բացի բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու, բողոքի հիմնական թեզերը վստահորդի հետ քննարկելու, մշակելու, համաձայնեցնելու գործողություններից, կախված իր աշխատանքային ծանրաբեռնվածությունից, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներից, ինքն է որոշում այդ հանգամանքների հաշվառմամբ բողոքարկման մեկամսյա ժամկետում բողոքը ներկայացնելու հնարավոր օրը, որը որոշակի դեպքերում կարող է լինել նաև սահմանված ժամկետի վերջին օրը: Մինչդեռ բողոքաբերի կամքից անկախ պատճառով, ինչպիսին է փոստային առաքմամբ բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալը, իր բողոքը ներկայացնելու համար սահմանված ժամկետը կարճանում է, եթե բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկվի ակտի հրապարակման, այլ ոչ թե դրա ստացման օրվանից: Ընդ որում, այս դեպքում որևէ նշանակություն չունի, թե քանի օր ուշացումով է բողոքաբերն ստանում դատական ակտը:

ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների վրա հիմնվելով՝ դիմողները կարծում են, որ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետի փոխարեն ավելի կարճ ժամկետում այդ գործողությունը կատարելու պարտականություն սահմանելը և դա բողոքաբերի վրա դնելը դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է:

Համադրված կարգով վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողները եզրահանգել են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու՝ դատարանների պարտականությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18-րդ, 19-րդ հոդվածներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթները և 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18 և 19-րդ հոդվածներին:

Պատասխանողի կարծիքով, թեև գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկվում է դրանց հրապարակման պահից, այդուհանդերձ, օրենսդիրն իրավական երաշխիքների ամրագրմամբ ապահովել է անձանց բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման

հնարավորությունը: Օրենսդիրը սահմանել է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու իրավական հնարավորություն: Այն իրենից ներկայացնում է որոշակի իրավական ընթացակարգ, որի շրջանակներում դատարանը գնահատում է դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը:

Անդրադառնալով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 և ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՄԴՈ-1052 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ պատասխանողը գտնում է, որ բաց թողնված ժամկետի վերականգնումն այն հարցերից է, որտեղ դատարանը հայեցողությունն դրսևորելու իրավասություն ունի, սակայն դատական հայեցողությունը պետք է իրականացվի ոչ թե կամայական, այլ օրենքի շրջանակներում: Բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում վճռորոշը պատճառների հարգելիությունն է, որը ելակետային է համարվում դատարանի կողմից որոշում կայացնելիս:

Ըստ պատասխանողի՝ միջազգային պրակտիկայում բաց թողնված ժամկետի վերականգնման հարցում իրավական կարգավորումներն էապես տարբերվում են: Սակայն պատասխանողը նույնպես փաստում է, որ, որպես կանոն, հարգելի են համարվում այն դեպքերը, երբ անձն օբյեկտիվորեն, իրենից անկախ պատճառներով հնարավորություն չի ունեցել օրենքով սահմանված ժամկետում բողոք ներկայացնել:

Անդրադառնալով դատարանների հայեցողական լիազորությունների իրավաչափ իրականացման հարցին՝ պատասխանողը կարծում է, որ ոչ միասնական կամ հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս:

Վերջում պատասխանողը գտնում է, որ դիմողները դատական ակտերն ստացել են ժամանակին, չեն պահպանել բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ օրենքով սահմանված ընթացակարգը, ուստի դատարանն ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել ժամկետի բացթողման պատճառների հարգելիության հարցը: Պատասխանողի կարծիքով՝ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ օրենքի նորմի սահմանադրականությամբ, այլ կապված է նրանց կողմից օրենքի պահանջները չպահպանելու հանգամանքի հետ: Հետևաբար՝ առկա է սույն գործի վարույթը կարճելու հիմք:

5. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային

պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3 և 81-րդ հոդվածներ),

- ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ա) դիմումների և դրանցում ներկայացված հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք, ըստ էության, վերաբերում են ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասին՝ ամբողջությամբ, այլ միայն այդ մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը» դրույթին,

բ) դիմումների մուտքագրման պահին գործել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2005 թվականի փոփոխություններով, և դիմողները վիճարկվող իրավադրույթները վիճահարույց են համարել Սահմանադրության այդ խմբագրությամբ 18 և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, ուստի սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համատեքստում:

6. ՀՀ սահմանադրական դատարանը նույն հարցի առնչությամբ իր ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1249 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով և դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմնախնդրին առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու առանձին երկրների իրավական պրակտիկայի վերլուծության արդյունքներով՝ սույն գործի քննության շրջանակներում վերահաստատում է նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ **օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար:**

Սահմանադրական դատարանը սույն գործի քննության առարկայի շրջանակներում կարևորում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ(2004)20 հանձնարարականը, որով սահմանվել են վարչական

ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առանձին իրավական չափորոշիչներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝ ա) վարչական ակտի բողոքարկման համար ողջամիտ ժամկետի տրամադրմանը (կետ 46), բ) վարչական ակտի օրինականության վիճարկման համար ողջամիտ ժամկետի սահմանմանը (կետ 47), գ) վարչական ակտի մասին անձին ծանուցելու պահի՝ որպես բողոքարկման ժամկետի հաշվարկման մեկնարկին (կետ 48):

Այսպես, հիշատակված հանձնարարականի 46-րդ կետով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մասնակից պետություններին առաջարկվում է «... երաշխավորել ողջամիտ ժամկետի տրամադրում կողմերին դատարանում գործեր հարուցելու համար», ընդ որում, պարտադիր հաշվի առնելով այն հանգամանքը, որ «եթե հայցադիմումներ ներկայացնելու ժամկետը շատ կարճ լինի, ապա կողմերը զրկված կլինեն վարչական ակտը բողոքարկելու հնարավորությունից»: Նույն հանձնարարականի 47-րդ կետով մասնակից պետություններին պարտավորեցվում է սահմանել ողջամիտ ժամկետ դատարանում վարչական ակտի օրինականության վիճարկման համար՝ դատական վերանայման մատչելիության արդյունավետությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ազգային օրենսդրությամբ հստակեցնելով «ողջամիտ ժամկետ» եզրույթը:

Միաժամանակ, նույն հանձնարարականի 48-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն առաջարկում է մասնակից պետություններին հաշվի առնել այն, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքի սկիզբն ուղղակիորեն չպետք է կապել այն պահի հետ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իմացել է կամ պետք է իմանար համապատասխան ակտի մասին, **ակնհայտ է համարում, որ այդ ժամկետի հաշվարկն սկսվում է այդ ակտի մասին անձին ծանուցելու պահից**, և, այդ հանգամանքով պայմանավորված, մասնակից պետություններին առաջարկում է նաև համապատասխան ակտի մասին անձին ծանուցելու պահը սահմանել որպես բողոքարկման ժամկետի հաշվարկի սկիզբ:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է՝ չնայած այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, անհրաժեշտ են օրենսդրական բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

7. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ.

ա) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՄԴՈ-1052 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՄԴՈ-1062 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ,



բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՄԴՈ-1052 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի իրավակարգավորումների տրամաբանության հետ,

գ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՄԴՈ-1249 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իրավակարգավորման տրամաբանության հետ:

Վերոնշյալ եզրահանգումների հիման վրա, հաշվի առնելով ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1249 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների և սույն գործով վիճարկվող դրույթների բովանդակային համարժեքությունը, փաստելով, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա դրույթների առնչությամբ, սահմանադրական դատարանը հիմք է ընդունում հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես, իր ՄԴՈ-1249 որոշման մեջ սահմանադրական դատարանը նշել է. «...երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան էր երելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դիմողներից Վարտգեզ Գասպարին վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է նաև բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույց (համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագիրը), որով հավաստվել է, որ Վարտգեզ Գասպարին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումն ստացել է 2015 թվականի ապրիլի 10-ին: Դա փաստվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի հունիսի 3-ին թիվ ՎԴ/0277/05/14 վարչական գործով կայացրել է որոշում «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին»՝ նշելով, որ «... բողոք բերած անձի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու վերաբերյալ Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի փաստարկեր

հիմնավոր չէ, մասնավորապես՝ 10.04.2014 թվականից մինչև 11.05.2015 թվականը ժամանակահատվածի համար որևէ պատճառաբանություն չպարունակելու պատճառով»։ Անհասկանալի է նման եզրահանգումը, եթե նկատի ունենանք, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումն ընդունվել է 07.04.2015 թվականին։

Հիշատակված որոշման կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել՝ չնայած այն հանգամանքին, որ նշված որոշման մեջ թվով 6 դեպքերում «2015 թվականի» փոխարեն թվագրվել է «2014 թվականը», այդուհանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես հավաստում է, որ ներկայացվել է դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հատու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույցը՝ համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագիր։ Միաժամանակ արձանագրվել է, որ այդ հավաստագրի համաձայն՝ դիմողը «Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 10.04.2014 թվականին, մինչդեռ վճռաբեկ բողոքը ներկայացվել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված վճռաբեկ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո»։ Սակայն հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ 2015 թվականի մայիսի 10-ը եղել է ոչ աշխատանքային օր, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտման օրը դրան հաջորդող աշխատանքային օրն է»։

Գործի նյութերը վկայում են, որ այս նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ են գտել տարակերպ մոտեցումներ և չի երաշխավորված օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը։

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ տվյալ գործի քննության շրջանակներում հետևողականորեն հաշվի չեն առնվել նաև հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՄԴՈ-1052 և ՄԴՈ-1062 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները։

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1249 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումների չի ենթարկվել՝ դրանով իսկ չեն իրացվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները։

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով։

Այս հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ «Իրավական ակտերի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», ինչը ենթադրում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով նույն որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև սույն գործի շրջանակում 2015 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված բացատրության շրջանակներում պատասխանող կողմի պաշտոնական ներկայացուցչի այն պնդումը, որ «... ոչ միասնական կամ հակասական իրավակիրական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բաց թողնման հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 և ՄԴՈ-1062 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում

իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1249 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից ելնելով՝ դիմող Վարտգեզ Գասպարիի գործով ընդունված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

9 փետրվարի 2016 թվականի  
ՍԴՈ-1254



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՈՂՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՍՄԱՍԲ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 71-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Գ. Հայրապետյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարա-

կական կազմակերպության՝ 19.10.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի ապրիլի 30-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ից:

Օրենքի՝ «Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարովիությունը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 71-րդ հոդվածը սահմանում է.

«1.Սույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների՝ դրանց ծագման, դադարման, փոխանցման կամ փոփոխման պետական գրանցման, ինչպես նաև անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար մատուցվող ծառայությունների համար պետական բյուջե գանձվում է վճար սույն օրենքով սահմանված չափերով՝ գանձապետարանում բացված համապատասխան հաշվին:

2. Դիմողները պարտավոր են վճարել սույն օրենքով սահմանված վճարները»:

Վերը նշված հոդվածը նախատեսվել է 2011թ. հունիսի 23-ից ընդունված ՀՕ-247-Ն օրենքով, որից հետո որևէ փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը Երևան քաղաքի փակ շուկայի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով 2013 թվականի մայիսի 7-ին գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին:

Կոմիտեն 18.05.2013թ. թիվ ԿԽ-1/1813 գրությամբ մերժել է դիմումը՝ դիմողին չտրամադրելով հայցվող տեղեկությունը: Մերժումը պայմանավորված է եղել տեղեկատվության տրամադրման համար օրենքով սահմանված վճարը վճարված չլինելու փաստով, ինչպես նաև պահանջվող տեղեկությունների ծավալում ընդգրկված որոշակի տեղեկությունների տրամադրումը օրենքի ուժով սահմանափակված լինելու հանգամանքով:

Դիմողը 23.08.2013թ. ընդդեմ Կոմիտեի ՀՀ վարչական դատարան է ներկայացրել «Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին» հայցադիմում: Վարչական դատարանը 06.06.2014թ. N ՎԴ/7503/05/13 վարչական գործով վճիռ է կայացրել հայցադիմումը մերժելու մասին՝ պատճառաբանելով նաև, որ հայցվորը չի վճարել փնտրվող տեղեկության համար «Գույքի նկատմամբ

իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարը: Դիմողը 30.06.2014թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որն իր՝ 18.12.2014թ. կայացրած որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը և բողոքարկվող դատական ակտը թողել անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշումը դիմողի կողմից 18.01.2015թ. բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը 01.04.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 8, 18, 23, 27 և 27.1-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով սահմանում են անձի՝ ինքն իր մասին կամ անձի իրավունքների պաշտպանության համար կարևոր կամ հանրային նշանակություն ունեցող (հանրային շահի պաշտպանության համար կարևոր) տեղեկության մատչելիության իրավունքի սահմանափակում:

Դիմողի համոզմամբ՝ սահմանադիրը պետական մարմիններից տեղեկություն կամ փաստաթղթեր ստանալու իրավունքն անմիջականորեն կապել է հասարակական շահերի պաշտպանության հետ: Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 27-րդ և 27.1-րդ հոդվածներում նկարագրված իրավունքի կարևորությունն առարկայացել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում և նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որոնց՝ տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը, ընդ որում՝ մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված նման տեղեկություն տրամադրելիս գանձում չի կատարվում:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, վկայակոչելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի փակ շուկայի նկատմամբ սեփականության կամ վարձակալության հիմքերի մասին տեղեկություն ստանալու իր հարցումն ունի հանրային նշանակություն, գտնում է, որ հանրային նշանակության որևէ տեղեկություն պետք է անձին հասու լինի անառարկելիորեն, առանց որևէ վճարի կամ այլ պայմանի կամ նախապայմանի, անկախ նրանից, թե գաղտնիության որևէ աստիճան ունի տվյալ տեղեկությունը, թե՛ ոչ, և եթե ունի, ապա՝

ինչպիսի, տեղեկության գաղտնագրված լինելը չպետք է անձին հանրային նշանակության տեղեկության տրամադրումը մերժելու հիմք լինի:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու անսահմանափակ իրավունքը՝ առանց որևէ միջամտության: Պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում կամ որևէ այլ պետական հիմնարկում անձի վերա-

բերյալ առկա տեղեկությունը պետք է հասու լինի նրան՝ առանց ծանրաբեռնելու որևէ, այդ թվում՝ վճարելու, պարտականությամբ: Այդ իրավունքը բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրահայտ փաստաթղթերի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և այլն, պահանջներից:

Եզրափակելով՝ դիմողը շեշտում է, որ չի վիճարկում առհասարակ որևէ տեղեկություն ստանալու համար վճարելու սահմանադրականությունը, չի վիճարկում ծառայությունների մատուցման համար վճարելու սահմանադրականությունը, այլ վիճարկում է այն իրավակարգավորումը, որի շրջանակում պետությունը հանրային կարևորության տեղեկության տրամադրման համար գումար վճարելու պայման է առաջադրում:

Դիմողը հայտնել է նաև, որ ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 8-րդ հոդվածին համադրելի է ՀՀ Սահմանադրության (2015թ. խմբագրությամբ) 10-րդ հոդվածը, 18-րդ հոդվածին՝ 50-րդ և 61-րդ հոդվածները, 23-րդ հոդվածին՝ 34-րդ հոդվածը, 27-րդ հոդվածին՝ 42-րդ և 51-րդ հոդվածները, 27.1-րդ հոդվածին՝ 53-րդ հոդվածը: Միաժամանակ, դիմողը հայտնել է, որ ՀՀ Սահմանադրության հոդվածների թվագրումը փոխվել է, սակայն դրանցում նշված իրավունքների բովանդակությունը մնացել է նույնը, ինչի կապակցությամբ, ըստ դիմողի, դիմումում նշված մեկնաբանությունները, դիրքորոշումները և փաստարկները փոփոխության ենթարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ տեղեկատվական հասարակության ներկա պայմաններում տեղեկատվության իրավունքը հանդես է գալիս որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը: Սերտորեն առնչվելով հասարակական կյանքի ոլորտներին՝ այս իրավունքի իրականացումը նախադրյալներ է ստեղծում մարդու այլ հիմնական իրավունքների իրականացման համար:

Տեղեկատվության ազատության իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովել այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական պայմաններ:

Պատասխանողը նշում է, որ տեղեկատվություն ստանալու իրավունքն իրականացվում է երկու եղանակով՝ ակտիվ և պասիվ: Եթե տեղեկատվություն ստանալու ակտիվ իրավունքն անձից պահանջում է անհրաժեշտ տեղեկություններն ստանալու համար դիմել համապատասխան տեղեկատվությունը տնօրինող մարմիններին, ապա տեղեկատվություն ստանալու պասիվ իրավունքին համապատասխանում է տեղեկատվությունը տնօրինող մարմինների պարտականությունը՝ իրենց նախաձեռնությամբ հրապարակել հանրամատչելի համարվող տեղեկատվությունը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն արդեն իսկ նախանշել է հանրային նշանակություն ունեցող այն տեղեկատվությունը, որը հրապարակելու կամ անհատույց տրամադրելու պարտականությունը դրվել է համապատասխան տեղեկատվությունը տնօրինող մարմինների վրա: Այդպիսի դրույթները երաշխիք են հանդիսանում քաղաքացիական հասա-



րակության կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական քաղաքական կազմակերպությունների գործունեության, հասարակական կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնելու համար:

Ըստ պատասխանողի՝ ի տարբերություն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, որը սահմանում է տեղեկատվության տրամադրման ընդհանուր կանոնները, առանձին օրենքներով, այդ թվում՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են առանձին ոլորտներում տեղեկատվության տրամադրման հետ կապված հարաբերությունները: Հաշվի առնելով տեղեկատվություն ստանալու իրավունքի կարևորությունը՝ տեղեկատվության տրամադրման դիմաց գանձվող վճարները չպետք է լինեն այնքան բարձր, որ խոչընդոտ հանդիսանան իրավունքի իրականացման համար: Տեղեկատվություն ստանալու վճարովիությունն ունի փոխհատուցող բնույթ, ինչպես նաև զսպող նշանակություն:

Պատասխանողը նշում է, որ անվճար սկզբունքով տեղեկատվության տրամադրումն ընդունված է միայն որոշ բովանդակությամբ տեղեկատվության դեպքում, որն ունի հանրային նշանակություն, հետաքրքրություն է ներկայացնում հասարակության լայն զանգվածների համար կամ դրա մասին հանրությանն անհապաղ իրազեկելը պայմանավորված է խիստ անհրաժեշտությամբ: Անվճար հիմունքներով տեղեկատվության տրամադրումը պայմանավորվում է ոչ թե տեղեկատվությունը հայցող սուբյեկտների կարգավիճակով, այլ տեղեկատվության բնույթով:

Պատասխանողն անդրադառնում է նաև միջազգային փորձին՝ վկայակոչելով մի շարք երկրների օրենսդրությունները, որոնցում նույնպես նախատեսվում է տեղեկատվության ստացման վճարովիություն: Պատասխանողը նշում է, որ անգամ սկզբունքորեն անվճար հիմունքներով տեղեկատվություն ստանալու իրավունք նախատեսող երկրների օրենսդրությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին օրենքներով նախատեսվում են համապատասխան ծառայությունների տրամադրման համար գանձվող վճարների չափերը:

Ամփոփելով՝ պատասխանողը եզրակացնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Մահմանադրությանը, սահմանվել են՝ հաշվի առնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները, իսկ հայցվող տեղեկատվության տրամադրման դիմաց նախատեսվող վճարները ոչ թե նպատակաուղղված են տեղեկատվության մատչելիության իրավունքի սահմանափակմանը, այլ հանդես են գալիս որպես նշված իրավունքի իրականացման ընթացակարգի բաղկացուցիչ հանդիսացող պայմաններ:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում դիմողը մատնանշում է երկու խնդիր, այն է՝

1. անձի՝ իր մասին տեղեկություն ստանալու վճարովիությունը,

2. անձի իրավունքների պաշտպանության համար կարևոր կամ հանրային նշանակություն ունեցող (հանրային շահի պաշտպանության համար կարևոր) տեղեկություն ստանալու վճարովիությունը:

Ուստի սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք հանրային շահերից բխող տեղեկություն ստանալու վճարովիությունը չի խախտում ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը,

- արդյոք անձի իր մասին տեղեկություններ ստանալու իրավունքի իրականացման վճարովիությունը համահունչ է ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի պահանջներին,

- արդյոք տեղեկություն տրամադրելու համար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված վճարման կարգն ու վճարի չափը չեն հանգեցնում տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների հնարավոր արգելափակման:

6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու՝ անձի իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 51-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»: Սահմանադրական այս իրավունքն օրենքով կարող է սահմանափակվել երկու դեպքում՝

1) երբ անհրաժեշտ է պաշտպանել հանրային շահերը,

2) երբ անհրաժեշտ է պաշտպանել այլոց հիմնական իրավունքները և ազատությունները:

Բացի դրանից, տեղեկատվություն ստանալու իրավունքին են առնչվում ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածներ, մասնավորապես՝ 34-րդ (Սննդանական տվյալների պաշտպանությունը), 42-րդ (Կարծիքի արտահայտման ազատությունը) և 53-րդ (Հանրագիր ներկայացնելու իրավունքը) հոդվածները:

Տեղեկություններ ստանալու իրավունքի իրագործման հիմնական օրենսդրական երաշխիքները սահմանվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Այն ունի ընդհանուր բնույթ, սահմանում է տեղեկատվության ոլորտում հիմնական սկզբունքները, տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակումները, տեղեկություններ ստանալու հայտի ներկայացման կարգը և այլն: Ըստ այդ օրենքի՝ տեղեկատվության տրամադրումն օրենքով սահմանված դեպքերում իրականացվում է անվճար սկզբունքով: Մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկու-

թյան տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում՝

«1) բանավոր հարցումներին պատասխանելիս.

2) մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.

3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.

4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.

5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով և 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.

6) տեղեկության տրամադրումը մերժելիս»:

Հիմք ընդունելով վերոհիշյալ օրենքի դրույթները՝ ՀՀ կառավարությունը 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշմամբ սահմանել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը (այսուհետ՝ տեղեկության տրամադրման կարգ): Ըստ այդ կարգի՝ որոշակիացվել է տեղեկությունների տրամադրման գործընթացը, այդ թվում՝ հստակ սահմանվել են տեղեկության տրամադրման համար գանձվող վճարների որոշման հետ կապված դրույթներն այն դեպքերի համար, երբ ըստ օրենքի տեղեկատվությունն իրականացվում է վճարովիության սկզբունքին համապատասխան:

Միաժամանակ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու գործընթացը, համաձայն որի՝ այդ օրենքով նախատեսված տեղեկությունների տրամադրումը վճարովի է: Մասնավորապես, օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվություն հայցելու «դիմումին կից ներկայացվում է տեղեկատվության տրամադրման վճարի մուծման անդորրագիրը»: Բացի դրանից, օրենքի 71-րդ հոդվածն իմպերատիվ կարգով սահմանում է անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար վճարելու պարտականություն՝ չնախատեսելով որևէ բացառություն: Նույն տրամաբանությունն է որդեգրված նաև օրենքի 73-րդ հոդվածում, որում նախատեսված են տեղեկություններ տրամադրելու համար վճարների չափերը:

Օրենքի 75-րդ հոդվածով նախատեսվում են տեղեկատվության տրամադրման համար վճարի մասով արտոնություններ: Դիտարկելով տեղեկությունների ստացման համար արտոնությունների համակարգը՝ ակնհայտ է, որ մի դեպքում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ արտոնյալ պայմաններով տեղեկությունների տրամադրումը պայմանավորված չէ հայցող սուբյեկտի կարգավիճակով՝ յուրաքանչյուր անձ, ով հայցում է ստանալ նման տեղեկություններ, օգտվում է տեղեկատվության համար վճարի 50 տոկոսի զեղչից: Մյուս դեպքում՝ տեղեկության ստացման համար

վճարելու պարտականությունից ազատվում են պետական համակարգի մի շարք մարմիններ, այսինքն՝ արտոնության կիրառումն ուղղակի կապվում է հայցող սուբյեկտի կարգավիճակի հետ: Տեղեկատվության համար վճարից ազատելու այլ դեպքեր օրենքը չի նախատեսում:

Համադրելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 71-րդ հոդվածների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կոնկրետ ոլորտին վերաբերող իրավական ակտով անտեսվել է տեղեկատվության ազատության՝ օրենքով նախատեսված երաշխիքների իրացումը: Նման իրավիճակը չի բխում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքից, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

7. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Պետական մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվության հասանելիության մասին» NR(81)19 հանձնարարականի պահանջներին, համաձայն որոնց՝

«I. Անդամ պետության իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ պետական մարմինների տրամադրության տակ գտնվող հայցվող տեղեկատվությունը, բացառությամբ օրենսդիր և դատական իշխանության մարմինների:

II. Տեղեկատվության հասանելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան արդյունավետ միջոցներ:

III. Տեղեկատվության հասանելիությունը չի կարող մերժվել՝ պատրվակով, որ տեղեկատվություն հայցողը չունի հատուկ հետաքրքրություն տվյալ ոլորտում:

IV. Տեղեկատվության հասանելիությունը պետք է ապահովվի իրավահավասարության հիման վրա:

V. Վերոհիշյալ սկզբունքները ենթակա են սահմանափակման միայն այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հասարակության օրինական շահերի պաշտպանության համար (ինչպես, օրինակ, ազգային անվտանգությունը, հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, երկրի տնտեսական բարեկեցությունը, հանցագործությունների կանխումը և կոնֆիդենցիալ տեղեկության բացահայտումը կանխելը), ինչպես նաև մասնավոր կյանքի և մասնավոր այլ իրավաչափ շահերի պաշտպանության համար, հաշվի առնելով յուրաքանչյուր անձի հատուկ հետաքրքրությունը պետական մարմիններում առկա այն տեղեկության առնչությամբ, որը վերաբերում է անձամբ իրեն:

VI. Տեղեկություն հայցելու դիմումները պետք է քննարկվեն ողջամիտ ժամկետներում:

VII. Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում համապատասխան պետական գերատեսչությունը օրենքի կամ պրակտիկայի համաձայն պետք է հիմնավորի մերժման պատճառները:

VIII. Տեղեկատվության մերժման յուրաքանչյուր դեպք պետք է բողոքարկելի լինի»:

Բացի դրանից, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է տեղեկատվության ազատության խնդիրներին, մասնավորապես. 2009թ. ապրիլի 14-ի Társaság a Szabadságjogokért v. Hungary (գանգատ թիվ 37374/05) գործով դատարանը եզրահանգել է, որ հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկության տրամադրման խոչընդոտները կարող են բացասաբար ազդել ՁԼՄ-ներում և հարակից ոլորտներում գործունեություն ծավալող անձանց վրա: Իսկ 2013թ. նոյեմբերի 28-ի Österreichische Vereinigung zur Erhaltung, Stärkung und Schaffung eines wirtschaftlich gesunden land und forstwirtschaftlichen Grundbesitzes v. Austria (գանգատ թիվ 39534/07) վճռով դատարանը վերահաստատել է նախկին դիրքորոշումները, այն է՝ կողմնակից է «տեղեկություններ ստանալու ազատության» հասկացության ավելի լայն մեկնաբանմանը, որը ներառում է տեղեկությունների մատչելիության սկզբունքը:

Ամփոփելով վերոհիշյալ պահանջները և համադրելով վեճի առարկա օրենքի իրավակարգավորումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը: Օրենսդիրը՝ կարգավորելով անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար վճար վճարելու հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է տեղեկատվության մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է իրականացվել տարբեր եղանակներով:

Մասնավորապես՝ կախված տեղեկության բովանդակությունից և նշանակությունից, այն կարող է հասու լինել կամ որպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվություն, կամ որպես օրենքով նախատեսված կարգով տրամադրվող տեղեկություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են տեղեկատվություն տնօրինողի կողմից իր գործունեությանն առնչվող ու տարին առնվազն մեկ անգամ հրապարակվող այն տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները, որոնց առնչությամբ ՀՀ Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ: Վերջինս, ըստ օրենսդրի, այն նվազագույն տեղեկատվությունն է, որը պետք է հասու լինի յուրաքանչյուրին որպես հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ:

Սակայն դրանով չի սահմանափակվում հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության շրջանակը: Յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ կազմակերպություն, պետք է հնարավորություն ունենա իրավահավասարության պայմաններում պահանջելու կամ ծանոթանալու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող տեղեկությանը, եթե նման տեղեկության տրամադրումը չի խախտում հանրային շահերի կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Ընդ որում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ նախանշված է տեղեկությունների այն շրջանակը, որը ցանկացած պայմաններում չի կարող հիմք հանդիսանալ հանրային շահի խախտման հիմքով տեղեկությունների տրամադրման սահմանափակման համար:

Ինչ վերաբերում է անձի՝ իր մասին տեղեկություններին ծանոթանալու մատչելիությանը, ապա այդ իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներում, մասնավորապես՝ «Անձնական տվյալների պաշտպանությունը» վերտառությամբ 34-րդ հոդվածով, որի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին ...»: Այս իրավունքը պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով կարող է սահմանափակվել օրենքով:

Տեղեկատվության մատչելիությանն առնչվող տեղեկատվության վճարովիությունը, եթե խոսքը չի վերաբերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցված ծառայությունների կամ տեղեկությունների տրամադրման համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կատարված փաստացի և ողջամիտ ծախսերին, կարող է խոչընդոտ հանդիսանալ տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տեղեկատվության վճարի սահմանման չափը թեև գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, այնուամենայնիվ, այն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Բացի դրանից, օրենսդրի խնդիրն է ապահովել անվճարունակ անձանց համար իրենց մասին տեղեկատվություն ստանալու վճարովիության սկզբունքից արտոնություններ ապահովելով ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների, տվյալ պարագայում՝ տեղեկություններ ստանալու իրավունքի էության անխախտելիությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34, 51, 78, 79 և 80-րդ հոդվածներին հակասող, այնքանով, որ տարբերակված մոտեցում չեն սահմանում, երբ տեղեկատվությունը վերաբերում է անձի՝ իր մասին հայցվող տեղեկությանը, ինչպես նաև տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների իրացմանը:

2. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանդորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի նոյեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով իրավունքների սահմանափակման առնչությամբ 2015թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր հստակեցումները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

23 փետրվարի 2016 թվականի  
ՍԴՈ-1256



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 102-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Հ. Հովհաննիսյանի, Գ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ 26.11.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ



պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետագոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (ՀՕ-247, այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցումը» վերտառությամբ 102-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Պատասխանողն իրավունք ունի հայց հարուցել նույն դատարան ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով»:

Օրենսգրքում հիշյալ հոդվածը լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-101 ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2000 թվականի հոկտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի նոյեմբերի 15-ին եւ ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 10-ից:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին.

Թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում 10.04.2013թ. ներկայացված հայցադիմումի եւ 18.04.2013թ. ներկայացված հակընդդեմ հայցի հիման վրա Երեւան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում /այսուհետ՝ դատարան/ քննվել է քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության տնօրեն Մ. Բաղիրյանի ընդդեմ Վ. Համբարձումյանի, դատարանի 22.04.2013թ. որոշմամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի միջնորդության բավարարման արդյունքում որպես երրորդ անձ ներգրավված՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության՝ թիվ ԵՄԴ/0761/02/12 քաղաքացիական գործով կայացված վճռի հիմքով պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու պահանջի մասին եւ ըստ հակընդդեմ հայցի Վ. Համբարձումյանի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Դանհիս» ՍՊԸ-ի եւ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ «Արտադրատպագրական» ՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Դատարանը թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործով վճիռ է կայացրել 05.02.2014թ., որով հայցը եւ հակընդդեմ հայցը մերժել է, վճռել է դատարանի 09.10.2013թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 22.05.2014թ. որոշմամբ մերժել է Վ. Համբարձումյանի վերաքննիչ բողոքը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 16.07.2014թ. որոշմամբ վերադարձրել է վերջինիս վճռաբեկ բողոքը:

Մինչև վճռի կայացումը դատարանն իր՝ 12.04.2013թ. որոշմամբ Վ. Համբարձումյանի միջնորդությունը բավարարել է՝ ի թիվս այլնի, հայցագնի՝ 350.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Երևան քաղաքի Իսակովի պողոտա, թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Հետագայում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի միջնորդության բավարարման արդյունքում 10.01.2014թ. կայացված որոշմամբ փոփոխվել է դատարանի՝ վերը նշված որոշումը՝ ի թիվս այլնի, 350.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դրամական միջոցների վրա:

Դատարանի 09.10.2013թ. որոշմամբ սկզբնական հայցով հայցվոր «Արտադրատպագրական» ՓԲԸ-ի միջնորդության բավարարման արդյունքում արգելվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությանը կատարել որևէ գործողություն Երևան քաղաքի Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա, արգելվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությանը եւ նրա կողմից լիազորված անձանց խոչընդոտելու «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության եւ նրա աշխատակիցների մուտքը Երևան քաղաքի Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցե, արգելվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությանը եւ ընկերության համար ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպություններին խոչընդոտել «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության աշխատանքներին:

Հետագայում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի միջնորդության բավարարման արդյունքում 10.01.2014թ. կայացված որոշմամբ վերացվել է վերը նշված հայցի ապահովման միջոցը:

Սակայն մինչև վերը նշված հայցի ապահովման միջոցը վերացնելը, 27.11.2013թ. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն դիմել է դատարան՝ պահանջելով «Արտադրատպագրական» ՓԲԸ-ից բռնագանձել 12.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 690.783,94 ՀՀ դրամ եւ 1.048.320 ՀՀ դրամ, ընդամենը 13.739.103,94 ՀՀ դրամ՝ որպես պատճառված իրական վնասի հատուցում այն բանի համար, որ «Արտադրատպագրական» ՓԲԸ-ն թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում միջնորդել է հայցի ապահովման միջոց կիրառել, եւ այդ միջնորդությունը բավարարվել է:

Դատարանի 31.07.2014 թվականի թիվ ԵՄԴ/1613/02/13 վճռով հայցը բավարարվել է, ի թիվս այլնի, հետեւյալ պատճառաբանությամբ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող անձինք օգտվում են կողմի իրավունքներից եւ կրում են նրա պարտականությունները...»:

Սույն գործով հայցվոր «ՎՏԲ-Հայաստան» բանկ ՓԲ ընկերությունն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հայց հարուցել նույն դատարան ընդդեմ թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործով հայցվոր «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

Հիշյալ վճռի դեմ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2015 թվականի թիվ ԵՄԴ/1613/02/13 որոշմամբ բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Երևան քաղաքի Սալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 31.07.2014 թվականի վճիռը եւ այն փոփոխվել՝ հայցը մերժվել է, ի թիվս այլնի, հետեւյալ պատճառաբանությամբ. «Ինքնին միջնորդություն /հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ/ ներկայացնելը չի կարող հիմք հանդիսանալ 102-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով վնասներ բնագանձելու համար եւ այդ առումով հայցի ապահովման միջնորդությունը պետք է կապված լինի հայցի հիմնավորվածության եւ օրինականության հետ: Բացի այդ, հայցի ապահովման էությունից բխում է, որ այն կիրառվում է պատասխանողի նկատմամբ, մինչդեռ վիճարկվող պարագայում հայցի ապահովման միջոցը կիրառվել է երրորդ անձի նկատմամբ: Ամեն դեպքում, ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածը պատասխանողին է իրավունք վերապահում հայց հարուցել նույն Դատարան, ընդդեմ հայցվորի հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման պահանջով...»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիշյալ որոշման դեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2015 թվականի թիվ ԵՄԴ/1613/02/13 որոշմամբ մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ.

- վիճարկվող դրույթի՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից թիվ ԵՄԴ/1613/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ տրված մեկնաբանությամբ կիրառումը /դատական պրակտիկան/ հակասում է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 61-րդ հոդվածի 1-ին մասի եւ 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին,

- կամ վիճարկվող դրույթում առկա օրենքի բացը հակասում է ՀՀ Սահմանադրության հիշյալ դրույթներին այնքանով, որքանով այդ բացը իրավակիրառ պրակտիկայում հստակ հնարավորություն չի տալիս երրորդ անձին դատական կարգով պահանջել հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասի հատուցում:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողն օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 27-րդ հոդվածի 1-ին կետի նորմերի համակարգային վերլուծության արդյունքում գտնում է, որ վիճարկվող նորմը տվյալ դեպքում պետք է մեկնաբանել ընդարձակ մեկնաբանման կանոններով եւ եզրակացնում է, որ ընդարձակ մեկնաբանման դեպքում վիճարկվող դրույթի բովանդակությունը ներառում է նաեւ տվյալ դրույթով նախատեսված իրավունքն ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին վերապահելը:

Որպես փաստարկ՝ դիմողը վկայակոչում է օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որը դատարանին իրավունք է վերապահում կիրառել նաեւ հայցի ապահովման այնպիսի միջոց, որն արգելում է կողմերից տարբերվող այլ

անձանց եւս իրականացնելու որոշակի գործողություններ վեճի առարկայի նկատմամբ: Ըստ դիմողի՝ տվյալ դեպքում այդ անձը կարող է կրել գույքային վնաս, իսկ հայցի ապահովմամբ պատասխանողին եւ երրորդ անձին պատճառված վնասի հատուցման դեպքը դասվում է օրինաչափ վարքագծի եւ մեղքի բացակայության պայմաններում պատճառված վնասի հատուցման՝ օրենքով սահմանված դեպքերի շարքին:

Դիմողը վկայակոչում է նաեւ սեփականատիրոջ կողմից իր գույքն օգտագործելու եւ տիրապետելու իրավագործությունների սահմանափակման հետեւանքով գույքային վնասի առաջացման հնարավորության եւ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի վերաբերյալ համապատասխանաբար՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներ, ինչպէս նաեւ օրենքի բացի քննության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումներ:

4. Պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին, սակայն տվյալ դրույթի մեկնաբանությունն իրավակիրառ պրակտիկայում /Վերաքննիչ դատարանի թիվ ԵՄԴ/1613/02/13 որոշում/ այնքանով, որքանով ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց համար չի երաշխավորում հայցի ապահովմամբ իրենց պատճառված վնասների հատուցում ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքը, հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողն օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի եւ 45-րդ հոդվածի 2-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում գտնում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված իրավունքը վերապահված է նաեւ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց, իսկ օրենսդիրն ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց՝ պատասխանողի իրավունքների հետ նույնական բոլոր իրավունքներն ամեն անգամ թվարկելու փոխարեն սահմանել է պատասխանողի բոլոր իրավունքներն ունենալու վերաբերյալ ընդհանուր կանոն՝ այդ կանոնից հստակ թվարկված բացառություններով:

Անդրադառնալով օրենքի բացի վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքում գործող իրավական դրույթները ներկա խմբագրությամբ ամբողջովին հնարավորություն են տալիս ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց արդյունավետորեն իրականացնել իրենց օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ հայցի ապահովմամբ իրենց պատճառված վնասների հատուցման պահանջով հայց հարուցելը եւ հատուցում ստանալը:

5. Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի

1-ին մասի դրույթները՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասում «Պատասխանող» բառի օգտագործմամբ օրենսդիրն ըստ էության նկատի է ունեցել պատասխանողին: Մյուս կողմից, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է դատավարական պաշտպանության համապատասխան միջոցներ եւ եղանակներ, որոնց օգտագործմամբ հայցի ապահովմամբ վնաս կրած անձը հնարավորություն է ստանում ձեռք բերելու պատճառված վնասի հատուցման իրավունք: Ընդ որում, դատավարական պաշտպանության համապատասխան միջոցները եւ եղանակները, ի թիվս այլնի, ներառում են դատավարական կարգավիճակը փոխելու կամ համապատասխան դատավարական կարգավիճակ ձեռք բերելու իրավական հնարավորությունները: Պատասխանողը եւս իր գրավոր բացատրությունում արձանագրել է վերը նշված փաստը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաեւ, որ սույն գործով դիմողը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությունը, թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործում որպես երրորդ անձ է ներգրավվել իր իսկ միջնորդությամբ, որը բավարարվել է դատարանի կողմից: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական պաշտպանության միջոցների եւ եղանակների շրջանակներից սույն գործով դիմողն ինքն է ընտրել համապատասխան դատավարական պաշտպանության միջոցը եւ եղանակը:

Նման պայմաններում օրենսգրքի վիճարկվող դրույթով նախատեսված իրավունքը վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց չտրամադրելը վկայում է ոչ թե դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի սահմանափակման, այլ դիմողի կողմից դատական պաշտպանության համապատասխան միջոցը եւ եղանակը չընտրելու մասին:

Միաժամանակ, հաշվի առնելով դիմողի փաստարկները, հատկապես այն, որ, ըստ դիմողի, Վերաքննիչ դատարանը պետք է կիրառեր օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 27-րդ հոդվածի 1-ին կետի նորմերը եւ դրանց համադրված վերլուծության արդյունքում վիճարկվող նորմին տար ընդարձակ մեկնաբանություն, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ձեւականորեն բարձրացնելով սահմանադրականության խնդիր, իրականում դիմողը բարձրացնում է օրենքի նորմի կիրառման եւ դատական ակտի իրավաչափության խնդիրներ: Նկատի ունենալով նաեւ, որ ՀՀ առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանների կողմից վեճի առարկա նորմը միեւնույն փաստական հանգամանքների պարագայում տարակերպ է ընկալվել եւ կիրառվել, վճարել բողոքի շրջանակներում քաղաքացիաիրավական վեճի քննությունը եւ օրենքի միատեսակ կիրառության ապահովման արդյունքում տվյալ հարցում համարժեք նախադեպի ստեղծումը ՀՀ վճարել դատարանի իրավասությանն են վերաբերում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի

Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

12 ապրիլի 2016 թվականի  
ՍԴՈ-1264



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԼԱԼԱ ԱՍԼԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 132-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ  
ՄԱՍԵՐԻ, 136-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

26 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Լ. Ասլիկյանի և նրա ներկայացուցիչ Տ. Սաֆարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լալա Ասլիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լալա Ասլիկյանի՝ 2015 թվականի դեկտեմբերի

15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը սահմանում են.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

...

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

...

3) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին»:

Սույն գործով վիճարկվող հոդվածներում փոփոխություն և (կամ) լրացում չի կատարվել:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժինը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Լալա Ասլիկյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լալա Ասլիկյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել ոստիկանների՝ 05.03.2014թ. գործողությունները: Դատարանի 27.04.2015թ. որոշմամբ վարչական գործի վարույթն ըստ հայցի ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի ընդդեմ Լալա Ասլիկյանի՝ վարչական



պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, կարճվել է՝ հայցից հրաժարվելու հիմքով, իսկ ՀՀ վարչական դատարանի 16.07.2015թ. վճռով հալընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի նշված վճռի դեմ Լալա Ասլիկյանի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինս 04.09.2015թ. որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ «... բաց է թողնվել բողոքարկման 1-ամսյա ժամկետը և չկա միջնորդություն այն վերականգնելու մասին: ... Նման պայմաններում, նկատի ունենալով, որ վճիռը կայացվել է 2015թ. հուլիսի 16-ին, իսկ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 2015թ. օգոստոսի 18-ին և ... չի ներկայացվել միջնորդություն՝ բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ... բողոքը ենթակա է վերադարձման»:

Նշված որոշման դեմ Լալա Ասլիկյանի ներկայացուցիչ կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 28.10.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու՝ դատարանների պարտականությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18-րդ և 19-րդ հոդվածներին:

Դիմողը, վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում է, որ այն դեպքերում, երբ ակտն իր բովանդակային մասով բողոքաբերին հասանելի է դառնում հրապարակման օրվանից հետո որոշ ժամանակ անց, բողոքաբերը հրապարակման պահից սկսած մինչև ամբողջական դատական ակտն ստանալու պահը չունի այն բողոքարկելու իրական հնարավորություն, քանի որ իր տրամադրության տակ չկան բողոքի արդյունավետության համար անհրաժեշտ կարևոր տվյալներ: Դիմողը նշում է նաև, որ վիճարկվող դրույթների բովանդակությունը հանգում է նրան, որ նույնիսկ բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (օրինակ՝ դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալու պատճառով) վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում այն հարգելի համարելու, վերաքննիչ բողոքը դատական ակտն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնելու իրավունքն իրացնելու համար բողոքաբերը պետք է առանձին միջնորդությամբ խնդրի վերաքննիչ դատարանին թույլ տալ իրացնելու իր իրավունքը, իսկ վերջինիս հայեցողության սահմաններն ու շրջանակները որևէ կերպ սահմանված չեն օրենքով: Դիմողը գտնում է նաև, որ դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը նշանակում է, որ բողոքաբերը կարող է իր բողոքը ներկայացնել այդ ժամկետում՝ ցանկացած օր, այդ թվում՝ ժամկետի վերջին օրը: Տվյալ դեպքում բողոքաբերը, բացի բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու, բողոքի հիմնական թեզերը վստահորդի հետ

քննարկելու, մշակելու, համաձայնեցնելու գործողություններից, կախված իր աշխատանքային ծանրաբեռնվածությունից, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներից, ինքն է որոշում այդ հանգամանքների հաշվառմամբ բողոքարկման մեկամսյա ժամկետում բողոքը ներկայացնելու հնարավոր օրը, որը որոշակի դեպքերում կարող է լինել նաև սահմանված ժամկետի վերջին օրը: Մինչդեռ, բողոքաբերի կամքից անկախ պատճառով, ինչպիսին է հանդիսանում փոստային առաքմամբ բողոքարկվող դատական ակտն ու՛շ ստանալը, իր բողոքը ներկայացնելու համար սահմանված ժամկետը փոքրանում է, եթե բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկվի ակտի հրապարակման, այլ ոչ թե դրա ստացման օրվանից: Ընդ որում, այս դեպքում որևէ նշանակություն չունի, թե քանի օր ուշացումով է բողոքաբերն ստանում դատական ակտը:

ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը կարծում է, որ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետի փոխարեն ավելի քիչ ժամկետում այդ գործողությունը կատարելու պարտականություն սահմանելը և դա բողոքաբերի վրա դնելը դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետը ողջամիտ է, այն լիովին բավարար է սովորական հանգամանքներում արդյունավետորեն իրականացնելու համապատասխան բողոք ներկայացնող անձի դատական պաշտպանության իրավունքը:

Պատասխանող կողմը նշում է, որ անձի կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի բացթողման հանգամանքը տվյալ հիմքով գնահատելու համար անհրաժեշտ է որոշակի ապացույցների առկայություն, որոնք կհավաստեն, որ անձն իր կամքից անկախ, օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել իրացնելու իր բողոքարկման իրավունքը: Ընդ որում, այդ ապացույցները ենթակա են իրավական գնահատականի դատարանի կողմից:

Պատասխանող կողմն իրավական որոշակիության պահպանման նկատառումներով կարևորում է միջնորդության պահանջի առկայությունը և ընդգծում, որ «...առանց միջնորդության և միջնորդության հիմքում ընկած ապացույցների դատարանը չի կարող գնահատել, թե ինչ պատճառներով է անձը բաց թողել օրենքով սահմանված ժամկետը, առավել ևս, դա հնարավոր չէ ժամկետն ինքնին երկարացված համարելու օրենքի ուժով առանց դատարանի իրավական գնահատականի»:

Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը նկատի ունենալով հասարակական հարաբերությունների խիստ բազմազանությունը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փաստական հանգամանքների ինքնատիպությունը, չի կարող սպառիչ սահմանել, թե որ դեպքերում է դատարանը պարտավոր բաց թողնված ժամկետը հարգելի համարել: Օրենսդիրն այս հարցում դատարանին օժտել է հայեցողության որոշակի շրջանակով: Պատասխանողը նաև նշում է, որ միջնորդությունը պետք է բոլոր դեպքերում բավարարվի, եթե անձն ապացուցի, որ հարգելի պատճառով է բաց թողել ժամկետը: Դատարանը, որպես ընդհանուր կանոն, հայեցողություն ունի հանգամանքները հարգելի կամ ոչ հարգելի ճանաչելու հարցում, սակայն այն հանգամանքները, որոնք հարգելի համարելը կասկածից վեր է, ինչպիսին դատական ակտի գրավոր տեքստը անձի կամքից անկախ հանգամանքներում որոշակի ժամկետից հետո ստանալը, դատարանին որևէ այլընտրանք չեն թողնում, և նա բոլոր դեպքերում պարտավոր է բավարարել նման միջնորդությունները:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ միջնորդությամբ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառված միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, իսկ «միջնորդության մեխանիզմի առկայության պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է, քանզի անձն ունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը»:

5. ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է համարում ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 3 և 81-րդ հոդվածներ),

- 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ.

ա) սույն գործով վիճարկվում են գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի, այդ ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու վարչական դատավարական իրավակարգավորումները: Այդ իրավակարգավորումները բովանդակային առումով համարժեք են գործն ըստ էության

լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու ժամկետի, այդ ժամկետից հետո բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու վարչական դատավարական իրավակարգավորումներին, որոնց սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1254 որոշմամբ,

բ) սույն գործով քննության առարկա դիմումի հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք, ըստ էության, վերաբերում են ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասին՝ ամբողջությամբ, այլ միայն այդ մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը ...» դրույթին,

գ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ (114-րդ հոդվածի 2-րդ մաս), հրապարակվելուց անմիջապես հետո գործն ըստ էության լուծող դատական ակտը **հանձնվում է** դատավարության մասնակիցներին: Դատավարության մասնակիցներից որևէ մեկի ներկա չլինելու դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինակը հրապարակման կամ դրան հաջորդող օրն **ուղարկվում է** նրան (114-րդ հոդվածի 7-րդ մաս), վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (127-րդ հոդվածի 1-ին մաս),

դ) սույն գործով քննության առարկա դիմումի մուտքագրման պահին գործել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, և դիմողը վիճարկվող իրավակարգավորումները վիճահարույց է համարել ՀՀ Սահմանադրության այդ խմբագրությամբ 18 և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, ուստի սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համատեքստում:

6. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ.

ա) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1052 որոշմամբ քննության առարկա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՄԴՈ-1062 որոշմամբ քննության առարկա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի և ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա ՀՀ վարչական դատավարության

րության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ,

բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1052 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ,

գ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1249 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4141-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումների տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներով քննության առարկա իրավակարգավորումների և սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորումների առնչությամբ:

7. Նկատի ունենալով դատական ակտերի բողոքարկման ժամկետների, և այդ ժամկետներից հետո բերված բողոքները վարույթ ընդունելու, դրանք վերադարձնելու կամ առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերի իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը, այդ իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների միասնականությունը, սույն գործի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատական պրակտիկայի առկա վիճակի ուսումնասիրությանը: Հիշյալ ուսումնասիրության արդյունքներով, մասնավորապես, արձանագրվում է.

1) ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի մարտի 31-ի ԵՇԴ/0133/01/14 քրեական գործով կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում, մասնավորապես նշելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը հրապարակվել է 2016 թվականի հունվարի 14-ին, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշումը ստացվել է 2016 թվականի փետրվարի 4-ին, իսկ վճռաբեկ բողոքը բերվել՝ 2016 թվականի մարտի 4-ին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետն անցնելուց հետո: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վճռաբեկ բողոքը ներկայացվել է

բողոքարկվող դատական ակտը ստանալու պահից 27-օրյա ժամկետի խախտմամբ, հետևաբար՝ բողոքարկվող ակտը 2016 թվականի փետրվարի 4-ին ստանալու վերաբերյալ բողոք ներկայացրած անձի հիմնավորումը չի կարող բավարար համարվել վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին բողոքաբերի միջնորդությունը բավարարելու համար:

Հիշատակված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է միայն բողոքաբերի կողմից բողոքարկվող դատական ակտն ստանալու փաստը և չի արձանագրել այդ ակտի ամբողջական տեքստը բողոքաբերին տրամադրելու, նրան պաշտոնապես հասանելի դարձնելու այլ փաստ: Հարկ է ընդգծել, որ բողոքարկվող դատական ակտի հրապարակման օրվա (14.01.2016թ.) և այդ ակտը բողոքաբերի ստանալու օրվա (04.02.2016թ.) համադրումը ցույց է տալիս, որ բողոքարկվող դատական ակտը բողոքաբերին չի տրամադրվել (հասանելի չի դարձվել) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1062 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՀՀ սահմանադրությանը համապատասխանող՝ այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1052 որոշմամբ որպես երաշխիք ճանաչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածն այնքանով, որքանով այդ հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է եռօրյա ժամկետում դատական ակտի ամբողջական տեքստի տրամադրումը (հասանելիությունը) բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին:

**Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուժով իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն ընկալմամբ, որ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից՝ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում:**

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1062 որոշմամբ ամրագրել է և ՄԴՈ-1249 որոշմամբ կրկին արձանագրել այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար **ժամանակ** ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց,

սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի (հասանելի դարձվի) անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար»:

Վկայակոչված իրավական դիրքորոշմամբ նշված «առնվազն 27 օր ժամանակը» չի կարող դիտարկվել բողոք ներկայացնելու համար հաշվարկման ենթակա ինքնուրույն և առավելագույն ժամկետ: Միայն այն դեպքում, երբ դատական ակտի հրապարակման պահից օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) պետք է ունենա առնվազն 27 օր ժամանակ, որպես նվազագույն ժամկետ, հիմնավոր բողոք ներկայացնելու համար,

2) ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի մարտի 25-ի ԵՇԴ/0129/01/14 քրեական գործով կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում, մասնավորապես նշելով, որ բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը պետք է մերժել, քանի որ այն պատճառաբանված չէ:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1249 որոշմամբ ամրագրել է և ՄԴՈ-1254 որոշմամբ կրկին արձանագրել, մասնավորապես, այն իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց՝ «...երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունն օրյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: ... երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

Այսինքն՝ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության պատճառաբանվածության այլ պայման Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով չի ամրագրել: Տվյալ իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակությունից բխող պայմանն այն է, որ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի

է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետից հետո, ապա պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները:

Վերոհիշյալ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ դատական պրակտիկայում ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները դեռևս լիարժեքորեն հաշվի չեն առնվում՝ դրանով իսկ ստեղծելով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման արգելափակման վտանգ:

8. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ իր ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը դեռևս համապատասխան օրենսդրական համալիր և միասնական կանոնակարգումների չի ենթարկվել և այս հանգամանքը չի արտացոլվել պատասխանող կողմի ներկայացրած բացատրության մեջ:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին շեշտադրել իր որոշումներում արտահայտված, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «... մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել» (ՄԴՈ-1249),

բ) «... բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը» (ՄԴՈ-1249),

գ) «... քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով» (ՄԴՈ-1254):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .



1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

26 ապրիլի 2016 թվականի  
ՄԴՈ-1268



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍԱՔԵՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Ա. Այվազյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Մաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության

հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լ. Ալեքսանյանի, Ն. Մաքեյանի, Հ. Վարդանյանի և Գ. Ավետիսյանի՝ 2016 թվականի հունվարի 11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Նոտարիատի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքները, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. **«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը** ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. դեկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 1-ից:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ «Նոտարի գույքային պատասխանատվությունը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը սահմանում է.

«Նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար Հայաստանի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում»:

**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը** ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004թ. մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004թ. դեկտեմբերի 31-ից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Հիմնական հասկացությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, որը լրացվել է 17.12.14թ. ՀՕ-257-Ն օրենքով, ամրագրում է՝

«Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ...»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ֆ. Մկրտչյանն այլ անձի պատկանող անձնագրի օգտագործմամբ 04.07.2007թ. գնել է Երևան քաղաքի Շերամի փողոցի 113-րդ շենքի հ. 81 բնակարանը և ստացել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

04.08.2007թ. Ֆ. Մկրտչյանը ներկայանալով այլ անձի անունով՝ ներկայացնելով կեղծ անձնագիր, «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով վերը հիշատակված բնակարանը վաճառել է դիմող Լուսինե Ալեքսանյանին և դրա դիմաց նրանից ստացել 11.390.000 ՀՀ դրամին համարժեք 34.500 ԱՄՆ դոլար: Նույն օրը Ֆ. Մկրտչյանը կրկին ներկայացնելով նշված անձնագիրը՝ «Շենգավիթ» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով այդ բնակարանը վաճառել է դիմող Նարինե Մաքեյանին և վերջինից տարբեր տարադրամներով ստացել 10.938.916 ՀՀ դրամին համարժեք գումար:

06.08.2007թ. Ֆ. Մկրտչյանը վերը նշված եղանակով «Մալաթիա» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով նույն բնակարանը վաճառել է նաև դիմող Հասմիկ Վարդանյանին և դրա դիմաց նրանից ստացել 11.459.360 ՀՀ դրամին համարժեք 34.000 ԱՄՆ դոլար: Նույն օրը Ֆ. Մկրտչյանը վերստին ներկայացնելով վերը նշված կեղծ անձնագիրը՝ «Նոր Նորք» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով նույն բնակարանը 10.054.282 ՀՀ դրամին համարժեք 29.800 ԱՄՆ դոլար գումարով վաճառել է դիմող Գագիկ Ավետիսյանին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի 06.09.2011թ. ԵԿԴ/0047/01/11 դատավճռով Ֆ. Մկրտչյանը, ի թիվս այլ հանցագործությունների, մեղավոր է ճանաչվել նաև սույն գործով դիմողների առանձնապես խոշոր չափերով գումարները խարդախությամբ հափշտակելու համար և դատապարտվել ազատազրկման: Դատարանը վճռել է նաև Ֆ. Մկրտչյանից հոգուտ սույն գործով դիմողների, որպես հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցում, բռնագանձել առուվաճառքի պայմանագրերով նրանց վճարած գումարները:

Դատապարտյալին պատկանող գույքի բացակայության պատճառով հանցագործության հետևանքով դիմողների կրած գույքային վնասի հատուցման մասին դատարանի դատավճիռը չի կատարվել:

05.05.2014թ. դիմողների ներկայացուցիչները դիմել են ՀՀ արդարադատության նախարարին՝ նոտարների գործողությունների հետևանքով իրենց կրած գույքային վնասի հատուցման պահանջով: ՀՀ արդարադատության նախարարությունը 23.05.2014թ. №10/3396-14 գրությամբ վերադարձրել է դիմումը՝ պատճառաբանելով. «... դիմումով առաջադրված պահանջը չի մտնում ինչպես ՀՀ արդարադատության նախարարության, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ...»:

Վերը նշված դիմումով ակնկալվող բարենպաստ վարչական ակտ կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին դիմողներն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Վարչական դատարանը 2014թ. դեկտեմբերի 25-ի վճռով (վարչական գործ թիվ ՎԴ/3369/05/14) հայցը մերժել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2015թ. հուլիսի 8-ի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վերը նշված վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը

նույնպես մերժվել է: Միաժամանակ, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում դիմողների անունից «... գործի վարույթը կասեցնելու, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի` ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու հարցով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ» միջնորդություն է ներկայացվել, որը Վերաքննիչ դատարանի 18.06.2015թ. արձանագրային որոշմամբ մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2015թ. նոյեմբերի 4-ի որոշմամբ գտել է, որ նշված վարչական գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար անհրաժեշտ հիմքեր չկան և դիմողների անունից ներկայացված բողոքի վարույթ ընդունելը մերժել է:

3. Դիմողները գտնում են, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը` բացառելով նոտարի ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար Հայաստանի Հանրապետության պատասխանատվությունը, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը` նոտարին չդիտելով որպես վարչարարություն իրականացնող մարմին, հակասում են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 1-ին, 3, 23, 28, 61, 63, 66, 10 և 59, 76, 75-րդ հոդվածներին:

Դիմողները գտնում են, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը նոտարի ներկայությամբ կնքելը և դրա նոտարական վավերացումը կողմերի հայեցողությանը թողնված չէ` դա կամավոր գործողություն չէ, այլ կողմերի պարտականությունն է, որը չկատարելն իրավունքի ուժով հանգեցնում է գործարքի առոչնչության:

Դիմողները գտնում են, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով ապահովված չէ արդյունավետ կառուցակարգ անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասի վերականգնման համար, քանի որ «նոտարի իրավունակության և/կամ գործունակության դադարելու ցանկացած դեպքում որևէ մեկը պատասխանատվություն չի կրում նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար կամ նոտարի պաշտոնավարումը դադարելուց հետո, նյութաիրավական տեսանկյունից, նոտարի իրավահաջորդ գոյություն չունի: ... Հնարավոր են նաև դեպքեր, երբ բացակայում է առանձին վերցված նոտարի մեղքը, սակայն կառուցակարգերի անկատարության պատճառով անձինք դարձել են իրավունքի խախտման զոհ»:

Ըստ դիմողների` խնդրո առարկա իրավակարգավորման հետևանքով անձինք, այդ թվում նրանք, ովքեր նոտարի ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով ունեն «տուժողի» կարգավիճակ, զրկվում են իրավական պաշտպանության իրավունքից:

Իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողները վկայակոչում են սեփականության իրավունքի երաշխավորման, ապահովման և պաշտպանության վերաբերյալ Մահմանադրական դատարանի 12.07.2011թ. ՄԴՈ-983 որոշումը և այդ որոշմամբ վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) Մեծ պալատի՝ Օներյիլդիզ ընդդեմ Թուրքիայի գործով (**Oneryildiz v. Turkey** 48939/99) 2004թ. նոյեմբերի 30-ի վճռի 134-րդ կետը:

Ինչ վերաբերում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետին, ապա այն դիմողների համոզմամբ պարունակում է **իրավական բաց**, քանի որ չի ներառում նոտարներին՝ որպես հանրային ծառայություններ, գործառնություններ իրականացնող վարչական մարմնի: Դիմողները գտնում են, որ օրենսդիրը դրանով արտադատական իրավական պաշտպանությունից և վերահսկողությունից դուրս է թողել մի ամբողջ ոլորտ՝ նոտարների հետ իրավահարաբերությունները:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները համապատասխանում են ՀՀ Մահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի «վարչական մարմիններ» հասկացության մեջ նոտարները ներառվել չեն կարող, քանի որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած վճարովի ծառայությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը և, հետևաբար, որպես անհատ ձեռնարկատեր նրանք գործունեություն են իրականացնում իրենց ռիսկով, որի համար, ինչպես այլ անհատ ձեռնարկատերերի դեպքում, պետությունը պատասխանատվություն չի կրում:

Պատասխանողը գտնում է, որ նոտարի գործունեության հանրային բնույթ կրելը պայմանավորված է արդարադատությանը նպաստելու՝ նոտարների առաքելությամբ, որը, վարչական մարմիններին բնորոշ գործադիրկարգադրիչ գործունեություն չլինելով, վարչարարություն չի հանդիսանում:

Ըստ պատասխանողի՝ նոտարիատի գործող համակարգն արդյունավետ կառուցակարգ է քաղաքացիների կողմից իրենց իրավունքների իրացման համար: Այն, որ կոնկրետ գործով անձանց վնաս է պատճառվել խարդախության միջոցով, չի կարող տուժողների մոտ իրավաչափ ակնկալիք առաջացնել, որ հանցագործությամբ պատճառված վնասը պետք է հատուցվի պետության կողմից: Պետությունը չի կարող այնպիսի մեխանիզմ ներդնել, որով կբացառվի հանցագործությունների և դրանց հետևանքով անձանց վնաս պատճառելու հանգամանքը, կամ էլ կհատուցվի բոլոր հանցագործությունների հետևանքով տուժողներին պատճառված նյութական վնասը: Որպես նման վնասները հատուցելու մեխանիզմ պետությունը սահմանել է դրանք վնաս պատճառած անձանց կողմից հատուցելու պարտականություն:

5. ՀՀ նոտարական պալատը սահմանադրական դատարանի պահանջով ներկայացրել է դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, մասնավորապես հայտնելով, որ.

- Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող նոտարական համակարգը փոխառված է ռուսնագերմանական իրավական համակարգի երկրներում լայնորեն կիրառվող լատինական մոդելից, որտեղ նոտարներն իրավակիրառ գործընթացում կոչված են ապահովելու հանրային և մասնավոր շահերի գուգակցումը: Ու թեև նոտարն իրականացնում է հանրային գործառնություններ, իր լիազորություններն ստանում է պետությունից և դրանք իրականացնում պետության անունից, սակայն վերջինս չի հանդիսանում պետական մարմին, օժտված չէ պետաիշխանական լիազորություններով, որը կապահովի վերջինիս կամքի պարտադիրությունն իրավահարաբերության մյուս կողմի համար, այլ գործում է անկախ և սեփական պատասխանատվությամբ,

- ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ նոտարական գործողությունների հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցումն ապահովելու նպատակով օրենսդրական մակարդակով ամրագրված է ինչպես նոտարի գույքային պատասխանատվության, այնպես էլ նոտարի կողմից իր պատասխանատվության ռիսկն ապահովագրելու պարտադիր պահանջ,

- ամփոփելով նոտարի իրավական կարգավիճակի և պատասխանատվության վերաբերյալ համանման իրավական կարգավորումներն այլ պետություններում՝ նոտարական պալատը հանգել է այն հետևությանը, որ, որպես կանոն, պետությունները նոտարի գործողությունների համար պատասխանատվություն չեն կրում:

Նոտարական պալատը գտնում է, որ, հաշվի առնելով նոտարի գործունեության հանրային նշանակությունը՝ պետությունը նոտարի կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով անձանց պատճառված վնասի համար գույքային պատասխանատվության և այդպիսի պատասխանատվության ապահովագրության պարտադիր պահանջի օրենսդրական ամրագրմամբ ապահովել է սեփականության իրավունքի պաշտպանությունը:

6. Սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ելնել հանրային իշխանության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից և այդ համատեքստում պարզել և գնահատել.

- նոտարների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, նրանց գործունեության և դրա հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերը,

- արդյոք նոտարի գործունեության հետևանքով պատճառված վնասի

համար գույքային պատասխանատվություն կրելուն ուղղված իրավադրույթներն անձի խախտված իրավունքի վերականգնումն ապահովող անհրաժեշտ իրավակազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր են նախատեսում:

7. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Սահմանադրական հիշյալ դրույթը հանրային իշխանությունների վրա դնում է երկու հստակ պարտականություն՝ **հարգել**, մասնավորապես, ձեռնպահ մնալ որևէ անհարկի միջամտությունից, և **պաշտպանել**, այսինքն՝ որոշակի գործողությունների ամբողջության միջոցով երաշխավորել, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չխախտվեն կամ խախտվելու դեպքում՝ վերականգնվեն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գնահատելու համար, թե արդյոք հանրային իշխանությունը կատարել է նշված պարտականությունները, անհրաժեշտ է անդրադառնալ համապատասխան հիմնական իրավունքին կամ ազատությանն առնչվող սահմանադրական դրույթներին: Սույն գործի շրջանակներում սահմանադրաիրավական վեճն առնչվում է սեփականության իրավունքի իրացմանը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նշված դրույթը յուրաքանչյուրի համար երաշխավորում է ոչ միայն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, այլ նաև՝ օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը, ինչը պետությունից պահանջում է օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանից անձը վնաս չկրի, այլ երաշխավորվի սեփականություն ձեռք բերելու իրավունքը:

Նշված իրավունքների իրականացման արդյունավետ իրավակազմակերպական կառուցակարգեր և համապատասխան ընթացակարգեր չնախատեսելու դեպքում անձին կարող է վնաս հասցվել:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ ՄԻԵԿ անդամ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ անձի սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքն այլ անձանց ռոնձգություններից (Սովտրանսավոտ հոլդինգն ընդդեմ Ուկրաինայի (**Sovtransauro holding v. Ukraine**, 25/07/2002թ. վճիռ, գանգատ թիվ 48553/99, կետ 96):

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել ՄԴՈ-983 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումն առ այն, որ «Հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության խնդիրը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների



համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասի վերականգնման համար»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ամրագրվել է նոր դրույթ՝ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը, որն օրենսդրին ուղղակիորեն պարտավորեցնում է հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս սահմանել այնպիսի կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը:

8. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, **որը Հայաստանի Հանրապետության անունից**, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է այդ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ, այդ թվում՝ փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու միջոցով:

Նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, **«Հայաստանի Հանրապետության անունից»** հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Նրա ստորագրությամբ ու կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրակել է նոտարին: Ընդ որում, նոտարին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տալիս է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա նշված են «Հայաստանի Հանրապետություն» բառերը, և որով վավերացվում են համապատասխան փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է տվյալ գործառույթի կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման տեսանկյունից: Ուստի նոտարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր, ինչպես ներկայացվում է պատասխանողի կողմից:

Միաժամանակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած վճարովի ծառայությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով ընդունված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավորիրավական բնույթ:

Վերլուծելով նոտարի իրավական կարգավիճակի սահմանադրաիրավական բնույթը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «Նոտարիատի մասին» առանձին օրենքով օրենսդիրը կարգավորել է նոտարների գործունեությունը, հետևաբար՝ վարչական մարմինների ցանկում նոտարներին չընդգրկելն **օրենսդրական բաց** համարվել չի կարող: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ նոտարների նկատմամբ, այն վերաբերում է միայն վարչարարություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց գործունեության իրավական հիմքերն այլ են:

ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0) օրենսդրական նախաձեռնություն:

ՀՀ կառավարության կողմից առաջարկվող փոփոխություններով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում պետք է ամրագրվի 2-րդ մաս, ըստ որի՝ «... վարչական մարմին է համարվում նաև այն մարմինը կամ անձը, որին օրենքով ուղղակիորեն վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություն»: Փոփոխության նախագծի հիմնավորումներում նշվում է, որ «վարչական մարմին» հասկացությունը չի կարող ներառել միայն տվյալ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, քանի որ կան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ չհանդիսացող այլ մարմիններ և անձինք, որոնց օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություններ:

Սահմանադրական դատարանը կարևորում է այնպիսի իրավակարգավորումների անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում իր որոշ վարչական լիազորություններ մասնավոր անձանց փոխանցելու միջոցով պետությունը չի կարող հրաժարվել այդ լիազորությունների ոչ արդյունավետ իրականացման համար պատասխանատվությունից:

9. Անդրադառնալով այն հարցին, թե որքանով են պետության կողմից ստեղծված ընթացակարգերը երաշխավորում նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի ամբողջական հատուցումը, Սահմանադրական դատարանը

րանը գտնում է, որ այն պետք է գնահատել նույն օրենքի համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների հետ և արձանագրում է հետևյալը.

**նախ.** «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոտարի կողմից վավերացված կամ հաստատված փաստաթուղթն անվավեր ճանաչելը, կամ այն դատական կարգով փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ փաստաթուղթը վավերացրած կամ հաստատած նոտարի պատասխանատվությունը, եթե դա չի փոփոխվել կամ անվավեր ճանաչվել նոտարական գործողություններ իրականացնելիս նոտարի կողմից թույլ տված օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտման պատճառով: Բոլոր դեպքերում, խոսքը կարող է վերաբերել միայն մեղքի առկայության դեպքում պատասխանատվությանը: Դատարանի կողմից պետք է հաստատված լինի նոտարի մեղքը խախտման կամ օրենսդրությանը հակասող նոտարական գործողության կատարման մեջ:

**Երկրորդ՝** «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությանը համապատասխան՝ նոտարը գույքային պատասխանատվություն է կրում միայն իր կողմից **դիտավորությամբ** թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտավորությունը մեղքի միայն մի ձևն է: Մեղքի մյուս ձևերը բացահայտված են ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Չբացառելով իրականության մեջ նոտարի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում անձին անգոյությունամբ, մասնավորապես, անփութության հետևանքով վնաս պատճառելու հնարավորությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում նման տարբերակված մոտեցումը, երբ նոտարի պատասխանատվությունը նախատեսված է միայն նոտարի կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար, որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը (Ռուսաստան, Ուկրաինա, Լիտվա, Էստոնիա, Բուլղարիա, Սլովենիա) վկայում է այն մասին, որ երկրների մեծ մասում կիրառվում է «մեղավոր գործողությամբ» կամ «իր մեղքով» ձևակերպումը, ինչը նշանակում է, որ գույքային պատասխանատվություն կրելու համար նշանակություն չունի, թե մեղքի ինչ ձևով է թույլ տրվել խախտումը, որի արդյունքում վնաս է պատճառվել:

**Երրորդ՝** «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը, որի չափը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից: Այն հանգամանքը, որ նոտարը պարտավոր է ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը, վկայում է այն մասին, որ օրենսդիրը փորձել է ամրագրել այնպիսի ընթացակարգ, որի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցումը կլինի երաշխա-

վորված: Սակայն հարկ է նշել, որ ապահովագրվող պատասխանատվության ռիսկի նշված նվազագույն չափը միշտ չէ, որ կարող է բավարար համարվել նոտարի մեղքով պատճառված վնասի իրավաչափ հատուցման համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի նշված դրույթները, որոնք կարգավորում են նոտարի պատասխանատվության վերաբերյալ հարցերը, հաշվի չեն առնում հնարավոր իրավիճակների ամբողջ բազմազանությունը և բավարար կառուցակարգեր և ընթացակարգեր չեն սահմանում անձի խախտված սեփականության իրավունքի պաշտպանության համար, որպիսի պարտականություն ՀՀ Սահմանադրության 3-րդ և 75-րդ հոդվածների համաձայն կրում է պետությունը:

ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում անդրադառնալով պետության պոզիտիվ պարտավորությանը՝ ՄԻԵԴ-ը Բլումբերգան ընդդեմ Լատվիայի (**Blumberga v. Latvia**, 14/10/2008թ. վճիռ, գանգատ թիվ 70930/01, կետ 67) գործով արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել անձի իրավունքների պաշտպանությունն ազգային օրենսդրությամբ սահմանված արդյունավետ մեխանիզմների միջոցով, այդ թվում անհրաժեշտության դեպքում ապահովել վնասների հատուցման իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա օրենսդրական ընթացակարգերը **չեն երաշխավորում** նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի **իրավաչափ հատուցումը և անձի սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:**

Ինչ վերաբերում է պատճառված վնասի համար պետության պատասխանատվությանը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն որևէ կերպ չի նշանակում, որ վնասի հատուցումը պարտադիր պետք է տեղի ունենա բացառապես պետական միջոցների հաշվին: Տվյալ դեպքում պետության գույքային պատասխանատվությունը կարող է բացառվել, եթե **պետության կողմից ստեղծված կառուցակարգերը և ընթացակարգերը երաշխավորեն Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի ամբողջական հատուցում:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող:

2. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանքների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի հոկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

10 մայիսի 2016 թվականի  
ՍԴՈ-1271



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԼԻԼԻԹ ՍՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ «Ի ՀԱՅՑ  
ԳԱԼՈՒՑ ՀԵՏՈ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

31 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ.  
Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ.  
Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Կիրակոսյանի,  
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-  
տոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանա-  
կան վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ.  
Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լիլիթ Մուսեյանի դիմումի  
հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին  
մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով, Հայաստանի  
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լիլիթ Մուսեյանի՝ 2016թ. հունվարի 15-ին

ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու ժամկետը» վերտառությամբ 185-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումը կարող է ներկայացվել համապատասխան հիմքն ի հայտ գալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում»:

Վերոնշյալ դրույթն օրենսգրքի ընդունումից ի վեր փոփոխությունների կամ լրացումների չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողի անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթեր ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Վարչական դատարանը ՎԴ/10004/05/13 գործով իր՝ 27.06.2014թ. վճռով հայցը մերժել է, որը դիմողի անունից բողոքարկվել է վերաքննության կարգով: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 26.11.2014թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը, որը դիմողի անունից բողոքարկվել է վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 29.01.2015թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, դիմողի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու հիմքով, և տրամադրել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Իր՝ 25.02.2015թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, դիմողի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու հիմքով: ՀՀ սահմանադրական դատարանը 03.03.2015թ. ՍԴՈ-1192 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի հիմքում դրված՝ դիմողի նկատմամբ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված օրենքի դրույթը: ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015թ. ՍԴՈ-1192 որոշումը պաշտոնապես հրապարակվել է 11.03.2015թ. ՀՀ պաշտոնական տեղեկագրի 2015.03.11/13 (1102).1 համարում: ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015թ. ՍԴՈ-1192 որոշումը պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից հետո 3-ամսյա ժամկետում, ըստ դիմողի՝ 11.06.2015 թվականին դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու պահանջի մասին ներկայացվել է վճռաբեկ բողոք,

որով պահանջվել է ՀՀ վճարել դատարանից հարուցել ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի ՎԴ/10004/05/13 գործով 25.02.2015թ. որոշման և/կամ նույն գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.11.2014թ. որոշման վերանայման վարույթ: Վճարել դատարանն իր՝ 01.07.2015թ. որոշմամբ առանց քննության է թողել վճարել բողոքը՝ արձանագրելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1192 որոշումն ուժի մեջ է մտել 03.03.2015 թվականին, իսկ նոր հանգամանքի հիմքով վճարել բողոքը բերվել է 12.06.2015 թվականին, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» դրույթն իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, որով 3-ամսյա ժամկետի սկիզբ է համարվում Սահմանադրական դատարանի կողմից որոշման հրապարակման օրը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին, Սարգոսի իրա

վունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներին, քանի որ խոչընդոտում է անձի դատավարական իրավունքների իրացմանը, ինչպես նաև խախտում է արդարադատության մատչելիության և հասանելիության սկզբունքները:

Ըստ դիմողի՝ Սահմանադրական դատարանի եզրակացությունները և որոշումներն օբյեկտիվորեն հանրությանը հասանելի են դառնում պաշտոնական հրապարակումից հետո, հետևաբար՝ անձը Սահմանադրական դատարանի որոշմանը ծանոթանալու, վերանայման դիմում ներկայացնելու համար պետք է ունենա ողջամիտ ժամկետ՝ սկսած այն պահից, երբ փաստացի հնարավորություն է ունեցել սահմանադրական դատարանի որոշումը ձեռք բերելու և սահմանադրական դատարանի որոշմամբ ղեկավարվելու համար: Ըստ այդմ էլ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համադրված վերլուծության արդյունքում դիմողը եզրակացնում է, որ նորմատիվ իրավական ակտի պաշտոնական հրապարակման օրը համարվում է դրա ամբողջական տեքստի Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում առաջին անգամ հրապարակման օրը, ինչը երաշխավորում է, որ իրավահարաբերության սուբյեկտն ունենա բավարար չափով հնարավորություն և ժամանակ նոր ընդունված և իրավաբանական ուժ ստացած՝ իր համար կիրառելի իրավանորմի դրույթներին ծանոթանալու համար: Ըստ դիմողի՝ եթե օրենսդիրը նոր հանգամանքներով վերանայման բողոք ներկայացնելու համար ողջամիտ ժամկետ է համարում եռամսյա ժամկետը, ապա ողջամիտ պետք է համարվի այդ ժամկետի հոսումն այն պահից սկսած, երբ բողոք բերողի համար ի հայտ է եկել նոր հանգամանքներով վերանայման բողոք ներկայացնելու համար օրենսդրական հիմքերը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավանորմի մեկնաբանման շրջանակներում իրավակիրառ պրակտիկան նոր հանգամանքներով վերանայման դիմում ներկայաց-



նելու ժամկետի սկիզբ է դիտարկում ոչ թե իրավահարաբերության սուբյեկտի մոտ համապատասխան հիմքի օբյեկտիվ և փաստացի ի հայտ գալու պահը, այլ սահմանադրական դատարանի կողմից որոշման հրապարակման պահը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Գրոշեն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռի 22-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ պատասխանողը գտնում է, որ իրավահարաբերության սուբյեկտի մոտ համապատասխան հիմքի օբյեկտիվ և փաստացի ի հայտ գալու պահ է ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանի որոշման՝ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակման պահը, այլ այն պահը, երբ անձն օբյեկտիվորեն հնարավորություն է ստանում ծանոթանալու որոշման ամբողջական տեքստին:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016թ. ապրիլի 26-ի ՄԴՈ-1268 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ դրանք իրավունքի հարցերի և փաստերի նմանության պատճառով կիրառելի են նաև սույն գործով: Ըստ այդմ էլ՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցությունում ի հայտ գալու պահը ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահ համարելն արդարացված է, քանի որ անձն առնվազն 87 օր ունի դիմելու նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման համար, երբ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում առաքվում է դատավարության կողմին և տեղադրվում համացանցում:

5. Սույն գործի քննության շրջանակներում օրենսգրքի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության 3 և 81-րդ հոդվածներ),

- ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից,

- հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար օրենքներով անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրական պարտականության կատարման անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդված):

6. Դիմումի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն

արձանագրում է, որ դիմողը խնդրո առարկա իրավակարգավորումը վիճահարույց է համարում միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի տեսանկյունից, այն է՝ Սահմանադրական դատարանը տվյալ գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ համարել է, որ այդ դրույթն իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ: Ուստի Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող իրավակարգավորմանն անդրադառնում է միայն Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա նոր հանգամանքների առաջացման տեսանկյունից:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքարկման ժամկետների առնչությամբ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել իր ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1249, ՍԴՈ-1254 և ՍԴՈ-1268 որոշումներում, սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորում է նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման մասին դիմում ներկայացնողի կողմից Սահմանադրական դատարանի որոշումն ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու կամ ստանալու հնարավորություն ունենալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու անհրաժեշտությունը:

Այս կապակցությամբ արձանագրելով, որ դատական ակտի վերանայման բողոք կամ դիմում ներկայացնելու համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ, Սահմանադրական դատարանը մինևսյն ժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պետք է, ելնելով անձի՝ դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ երաշխիքներ նախատեսի դրանց ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք կամ դիմում ներկայացնելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե **որքանով է Սահմանադրական դատարանի որոշումը հասանելի շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:** Այս առիթով Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 3-րդ մասը, որում, ի տարբերություն համանման իրավակարգավորում նախատեսող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի, օրենսդիրը ՀՀ սահ-

մանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի առնչությամբ պարտադիր պայման է դիտարկում շահագրգիռ անձի կողմից Սահմանադրական դատարանի որոշման **ի հայտ գալու մասին իմանալը կամ իմանալու հնարավորություն ունենալը**:

Մյուս կողմից, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, 65-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասը, 62-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, Սահմանադրական դատարանի կանոնակարգի 54-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է Սահմանադրական դատարանի որոշման մասին իրավունքի սուբյեկտներին իրազեկելու չորս եղանակ՝ որոշման հրապարակում ՀՀ սահմանադրական դատարանի նիստում, որոշման տեղակայում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում, որոշման հրատարակում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պաշտոնական պարբերականում և ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Սահմանադրական դատարանը նկատի է առնում, որ.

**նախ**՝ Սահմանադրական դատարանի որոշումն առնչվում է ոչ միայն Սահմանադրական դատարանում դատավարությանը մասնակից դարձած անձանց շահերին, այլ՝ նաև այդպիսիք չհանդիսացող անձանց շահերին,

**երկրորդ**՝ Սահմանադրական դատարանն իր որոշումները դատավարության մասնակից չհանդիսացած անձանց առաքելու պարտականություն չունի /բացառություն են կազմում Հանրապետության Նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, ՀՀ վճռաբեկ դատարանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և ՀՀ գլխավոր դատախազը/,

**երրորդ**՝ Սահմանադրական դատարանի որոշումը համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելու համար սահմանված է առավել սեղմ ժամկետ /հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում/, քան ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում և «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պաշտոնական պարբերականում հրապարակելու համար /որոշումները տպագրվում են ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում եռամսյա ժամկետում, իսկ ՀՀ պաշտոնական տեղեկագրում՝ որոշման ընդունմանը հաջորդած եռօրյա ժամկետում որոշումն ուղարկելուց հետո ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում չորեքշաբթի օրը/:

Ելնելով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը երաշխավորելու նկատառումներից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ այն շահագրգիռ անձանց համար իրավական հետևանք է առաջացնում «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելուց հետո», երբ տվյալ որոշումը նոր հանգա-

մանքների հիմք է հանդիսանում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

31 մայիսի 2016 թվականի  
ՍԴՈ-1275



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ԳԵՎՈՐԳ ՍԱՏԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 87-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Գևորգ Սաֆարյանի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի և Գ. Պետրոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «Գևորգ Սաֆարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Գ. Սաֆարյանի՝ 2016 թվականի հունվարի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտե-

լով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը  
**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Հակընդդեմ հայց ներկայացնելը» վերտառությամբ 87-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Պատասխանողը մինչև գործով դատաքննությունն նշանակելը կարող է ներկայացնել հակընդդեմ հայց՝ ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

ՀՀ ոստիկանությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Գ. Սաֆարյանին (այսուհետ՝ դիմող) ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիմքով) վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ դիմողը պահանջել է ոստիկանների՝ իր իրավունքների իրականացմանը միջամտող գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ:

ՀՀ վարչական դատարանը 15.01.2015թ. որոշմամբ մերժել է հակընդդեմ հայցի ընդունումը՝ պատճառաբանելով, որ այն ներկայացվել է գործը դատաքննության նշանակելուց հետո:

ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.04.2015թ. որոշմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2015թ. որոշմամբ մերժվել է նաև վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերը նշված դատական ակտերով կիրառվել է իր նկատմամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին:

Վկայակոչելով սահմանադրական դատարանի դիրքորոշումները (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-902) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ դիմողը պնդում է, որ վիճարկվող իրավադրույթը, որը սահմանափակում է պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքը, չի համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, անհամաչափ սահմանափակում է անձի արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքները և խախտում դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների վերլուծության արդյունքում հանգել է այն հետևությանը, որ հակընդդեմ հայց ներկայացնելու՝ պատասխանողի իրավունքի իրականացման համար սահմանված վերջնաժամկետը՝ գործը դատաքննության նշանակելու պահը, կանխատեսելի չէ պատասխանողի համար: Դիմողը գտնում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում հնարավոր չէ կանխատեսել դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո գործը դատաքննության նշանակելու նվազագույն ժամկետը, քանի որ այն կախված է ինչպես հայցադիմումին պատասխան ներկայացնելու հանգամանքից, այնպես էլ նախնական դատական նիստ նշանակելու՝ դատարանի հայեցողական լիազորությունից:

Ըստ դիմողի դատաքննություն նշանակելու մասին որոշումն ստանալու պահից պատասխանողն այլևս զրկվում է հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքից, քանի որ այդ իրավունքը դադարում է ոչ թե դատաքննությունն սկսելու, այլ դատաքննությունը նշանակելու պահից: Պատասխանողը դատաքննությունը նշանակելու մասին որոշումն ստանալու պահին փաստացի իրազեկվում է հակընդդեմ հայց ներկայացնելու իր իրավունքի իրականացման ժամկետի և հնարավորության սպառման մասին, մինչդեռ հայցվորը պահպանում է հայցի հիմքն ու առարկան փոխելու հնարավորությունը: Դիմողը կարծում է, որ նման իրավակարգավորումն անհամաչափ սահմանափակում է դատարանի մատչելիության՝ պատասխանողի իրավունքը՝ խախտելով նաև կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը համակարգային առումով փոխկապակցված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 80-րդ հոդվածների հետ, և նույնիսկ այն պարագայում, երբ հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացվի՝ գործը դատաքննության փուլում գտնվելու պատճառաբանությամբ դատարանն այն բավարարել չի կարող:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, պնդում է, որ վիճարկվող իրավադրույթը համապատասխանում է ՀՀ Մահմանադրության պահանջներին:

Անդրադառնալով **կողմերի իրավահավասարության սկզբունքին՝ պատասխանողը** գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումն ավելի հավասարակշիռ է դարձրել կողմերի հնարավորությունները, քանի որ նախկին օրենսդրությամբ հայցի հիմքը և առարկան կարող էին փոփոխվել մինչև գործը դատաքննություն նշանակելը, իսկ հակընդդեմ հայց կարող էր ներկայացվել հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում: Գործող օրենսդրությամբ հայցի հիմքը և առարկան կարող են փոխվել մինչև դատաքննություն նշանակելը կամ դատաքննություն նշանակելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, իսկ հակընդդեմ հայց կարող է ներկայացվել մինչև դատաքննություն նշանակելը:

Ըստ պատասխանողի՝ **դատարանի մատչելիության** սկզբունքի խախտում

հնարավոր է, եթե սահմանափակվի անձի կողմից դատական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը: Մինչդեռ գործող իրավակարգավորումներն անձին հնարավորություն են տալիս ինչպես հակընդդեմ հայց ներկայացնել սկզբնական հայցի հետ միասին քննելու համար, այնպես էլ նման հայց չներկայացնելու դեպքում իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել դատավարական այլ վարույթի շրջանակներում՝ ներկայացնելով առանձին հայց:

Իրավական որոշակիության սկզբունքի առնչությամբ պատասխանողը նշում է, որ դատավարական ժամկետները կարող են սահմանվել ինչպես կոնկրետ ժամանակահատված նշելով, այնպես էլ սահմանելով որոշակի ժամանակահատված, որի հաշվարկի սկիզբը կամ ավարտը պայմանավորված լինի դատավարական որևէ իրադարձության վրա հասնելով՝ իրադարձություն, որի վրա հասնելու պահը դատավարության կողմերի կամքից անկախ է և անկանխատեսելի վերջիններիս համար: Պատասխանողը գտնում է, որ դա դեռևս չի նշանակում, որ խնդրո առարկա իրավակարգավորումները կարող են հանգեցնել անձի իրավաչափ սպասելիքների անկանխատեսելիության:

5. Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավադրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- վարչական դատավարությունում հակընդդեմ հայցի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը և նպատակը,

- վիճարկվող իրավակարգավորման պայմաններում օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխավորվածությունը (ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված),

- հակընդդեմ հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետի բավարար չափով որոշակիությունը, որպեսզի պատասխանողն ի վիճակի լինի դրսևորել համապատասխան վարքագիծ և իրականացնել արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իր սահմանադրական իրավունքները՝ հատկապես դատարանի մատչելիության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասեր):

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ **հակընդդեմ հայցը** տվյալ դատավարության շրջանակներում **սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար պատասխանողի կողմից ներկայացվող ինքնուրույն պահանջ է, որն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը կամ որի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը, կամ որը փոխադարձաբար կապված է սկզբնական հայցի հետ, և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը:** Ակնհայտ է, որ սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով հակընդդեմ հայցի ինստիտուտն իմաստազրկվում է, եթե անհրաժեշտ ու բավարար դատավարական ընթացակարգեր նախատեսված չեն այն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:



Հակընդդեմ հայցի ինստիտուտը հնարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահանջները և դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առավել արդյունավետությամբ: Հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև փոխադարձ կապի առկայությունը պարտադիր պայման է, և երկու փոխկապակցված հայցերի առանձին քննությունը կարող է երկարաձգել վեճի ըստ էության լուծումը և լիարժեք չերաշխավորել արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը:

Հակընդդեմ հայցը՝ հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց, նպատակ ունի նպաստել արդյունավետ դատական պաշտպանության՝ նրա իրավունքի իրացմանը և ապահովել արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրականացումը: Հետևաբար, օրենսդրորեն հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավակարգավորման հիմնական խնդիրն է դատավարական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ նախատեսել դրա իրավաչափ իրացումը երաշխավորելու համար:

**7. ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ բոլորը հավասար են օրենքի առջև, ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի շրջանակներում արտահայտվում է որպես դատավարական կողմերի իրավահավասարության պահանջ:**

Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 04.05.2010թ. ՄԴՈ-881 որոշման 5-րդ կետում ամրագրած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի. «... օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ ... սահմանելուն»:

**Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատավարության ընթացքում կողմերի իրավահավասարության սկզբունքին, Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության վճռում վերահաստատել է իր նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ «... դատավարությունում կողմերի իրավահավասարության պահանջը, որը արդար դատաքննության հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում»** (Nikoghosyan and Melkonyan v. Armenia, app. no. 11724/04 and 13350/04, 06.12.2007, §37; Dombó Beheer B.V. v. the Netherlands, app. no. 14448/88, 23.09.1993, §33; Steck-Risch v. Liechtenstein, app. no. 63151/00, 19.05.2005):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վայնենն ընդդեմ Բել-գիայի վճռով (Wynen and Centre Hospitalier Interregional Edith-Cavell v. Belgium, app. no. 32576/96, 05.11.2002) կողմերի իրավահավասարության պահանջի խախտում է համարել վճռաբեկ դատարանին լրացուցիչ միջնորդություններ ներկայացնելու՝ կողմերի համար տարբեր ժամկետների առկայությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը նախատեսում է վարչական դատավարության իրականացումը կողմերի իրավահավասարության հիման վրա, այսինքն՝ դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Սույն գործով վիճարկվող իրավադրույթը համադրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն վեճի առարկա դրույթով **կողմերի համար գործի վերաբերյալ իրենց դիրքորոշումները ներկայացնելու ժամկետի առումով հավասար հնարավորություններ չի ապահովվել**: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայցվորը հայցի հիմքը և (կամ) առարկան կարող է փոփոխել **նախնական դատական նիստի ընթացքում կամ դատաքննությունն նշանակելու մասին վարչական դատարանի որոշումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, մինչդեռ պատասխանողը հակընդդեմ հայց կարող է ներկայացնել միայն գործի դատաքննությունը նշանակելուն նախորդող ժամանակահատվածում**:

8. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սույն գործով վիճարկվող իրավադրույթի համաձայն՝ վարչական դատավարությունում հակընդդեմ հայց ներկայացնելը հնարավոր է միայն գործով դատաքննությունն նշանակելուն նախորդող ժամանակահատվածում: Բոլորովին այլ իրավակարգավորում է ամրագրում **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածը**, որը նախատեսում է, որ հակընդդեմ հայցը կարող է ներկայացվել մինչև գործով վճիռ կայացնելը:

Եվ քաղաքացիական, և վարչական դատավարությունները կառուցվում են հրապարակայնության և կողմերի իրավահավասարության սկզբունքների հիման վրա, և երկու դեպքում էլ առկա է գործը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրաիրավական պահանջ:

2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատելով նախորդ մի շարք որոշումներում, մասնավորապես՝ ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190 և ՍԴՈ-1222 որոշումներում, արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի

փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներից բխող՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության շրջանակներում գտել է, որ. «... որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»: Շեշտվել է նաև, որ «ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում... »:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթի սահմանադրականությունը նույնպես պետք է գնահատել հաշվի առնելով տվյալ իրավական դիրքորոշումը:

9. Սահմանադրական դատարանը, ինչպես և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել են, որ դատարանի մատչելիությունը կարող է ունենալ որոշակի ընթացակարգային և ժամանակային սահմանափակումներ, որոնք, սակայն, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Դատավարական ժամկետների սահմանումը գործով վարույթի կանոնակարգման և հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացման նպատակ է հետապնդում:

Դատավարական ժամկետների և հակընդդեմ հայցի ինստիտուտները փոխկապակցված են, և հակընդդեմ հայց ներկայացնելը նույնպես պետք է նախատեսվի այնպիսի փուլում, որպեսզի կողմերին տրամադրվի ողջամիտ ժամկետ իրենց իրավական դիրքորոշումը ձևավորելու համար:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական դատավարությունում գործը դատաքննության նշանակելու հստակ ժամկետ օրենսդիրը չի սահմանում: Վարչական դատարանը գործը դատաքննության նշանակելու մասին որոշում է կայացնում, երբ համարում է գործը դատաքննությանը նախապատրաստված (ՎԴՕ 90-րդ հոդված):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ **երկշաբաթյա ժամկետում**, վարչական դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը: Նույն հոդվածը նախատեսում է նաև դատարանի իրավունքը՝ **ելնելով գործի առանձնահատկություններից**, սահմանել պատասխանն ուղարկելու **ավելի երկար ժամկետ** կամ պատասխանողի միջնորդությամբ **երկարաձգել** պատասխանը ներկայացնելու ժամկետը: Բացի դրանից, **նույն հոդվածի 8-րդ մասի ուժով պատասխան չներկայացնելը վարչական դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում**, իսկ **9-րդ մասի ուժով՝ հակընդդեմ հայց ներկայացնելն անձին չի ազատում հայցադիմումի պատասխան ներկայացնելու պարտականությունից**:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս վարչական դատարանը պատաս-

խանողի կողմից հայցադիմումի պատասխանն ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում՝ պատասխանն ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դատաքննությունն արդյունավետ իրականացնելու նպատակով **կարող է** հրավիրել մեկից ավելի նախնական դատական նիստեր, որոնց ընթացքում, ի թիվս այլնի, պարզում է հայցի առարկան և հիմքերը, սահմանում ապացույցներ ներկայացնելու ժամկետները, լուծում ապացույցների ապահովման կամ հակընդդեմ հայցի հարցերը, ինչպես նաև կողմերի այլ միջնորդություններ:

Միայն նշված դատավարական գործողությունների ավարտից հետո դատարանը **կարող է** գործը համարել նախապատրաստված և նշանակել դատաքննություն: Օրենսդրական նման կանոնակարգումը **դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքի իրացումն ուղղակի կախվածության մեջ է դնում նախնական դատական նիստ հրավիրելու և գործը դատաքննության նշանակելու՝ դատավորի հայեցողությունից:** Ավելին, իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ առկա իրավակարգավորումը դիմողի համար նաև ստեղծում է իրավաչափ վարքագծի դրսևորման իրավական անորոշություն:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտնում է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հակընդդեմ հայցը ներկայացվում է հայց ներկայացնելու ընդհանուր կանոններով: Հակընդդեմ հայցը վարույթ ընդունելը, վերադարձնելը կամ հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը մերժելը կատարվում է նույն օրենսգրքի 78-80-րդ հոդվածներով սահմանված կարգով: Հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը մերժվում է նաև, եթե այն չի համապատասխանում նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին, **այն է՝ ներկայացվել է գործը դատաքննության նշանակելուց հետո կամ փոխկապակցված չէ սկզբնական հայցի հետ:**

Նման իրավակարգավորումը դատական պրակտիկայում կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ, քանի որ օրենսդիրը մի դեպքում ժամկետի բաց թողումն ուղղակիորեն հայցադիմումը մերժելու հիմք է համարել, բայց նույն հոդվածում հղում է կատարել օրենսգրքի 79-րդ հոդվածին, որի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ հայցադիմում ներկայացնելու ժամկետը բաց է թողնվել և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին, ոչ թե մերժվում է հայցադիմումի ընդունումը, այլ այն վերադարձվում է:

Բացի դրանից, չնայած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը նախատեսել է դատավարության մասնակիցների կողմից հարգելի պատճառով **բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարա-**

**նին միջնորդություն ներկայացնելու միջոցով վերականգնելու հնարավորություն, այնուամենայնիվ, վերը նշված իրավակարգավորման պայմաններում պարզ չէ՝ որքանով է այն կիրառելի հակընդդեմ հայցի պարագայում:**

Պատասխանողի փաստարկն այն մասին, որ հակընդդեմ հայցը մերժվելու դեպքում պատասխանողը հնարավորություն ունի հայց ներկայացնել ընդհանուր հիմունքներով, հիմնավոր համարվել չի կարող, քանի որ չի երաշխավորվում հակընդդեմ հայցի ինստիտուտի արդյունավետ իրացումը, և առանձին հայցի հարուցումը չի կարող ապահովել դատական պաշտպանության արդյունավետությունը և երաշխավորել գործի քննությունը ողջամիտ ժամկետում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը՝ «մինչև գործով դատաքննություն նշանակելը» դրույթի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասերին հակասող:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի դեկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա վեճի առարկա հոդվածի կիրառմամբ դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

23 հունիսի 2016 թվականի  
ՍԴՈ-1289



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 207-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 140-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Վ. Գասպարիի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի, Գ. Պետրոսյանի և Լ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Վարտգեզ Գասպարիի՝ 2016 թվականի փետրվարի

11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

**Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 140-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.**

«1. Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի»:

**Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 207-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.**

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը»:

**Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 213-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.**

«3. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Ա. Դեմիրխանյանը պատիվն ու արժանապատվությունն արատավորելու համար հրապարակավ ներողություն խնդրելու և վնասի հատուցման պահանջի մասին հայցադիմում է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Վարտգեզ Գասպարիի: Դատարանի 19.12.2014թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի:

Սույն քաղաքացիական գործով 26.01.2015թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը հաշվարկելով վճիռը բողոքաբերների մատչելի դառնալու պահից, այն է՝ 24.12.2014 թվականից:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 12.02.2015թ. կայացրել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում, որը բողոքաբերներն ստացել են

19.02.2015թ.: Վերաքննիչ բողոքը վերադարձվել է հետևյալ հիմնավորմամբ. «...վերաքննիչ բողոքը ներկայացվել է 26.01.2015 թվականին՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի՝ չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, ուստի վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման»:

Սույն քաղաքացիական գործով 05.03.2015թ. կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ երկշաբաթյա ժամկետի պահպանմամբ, ներկայացվել է նաև միջնորդություն՝ դատական ակտի հրապարակման պահից հաշվարկվող մեկամսյա ժամկետի՝ բողոքաբերներից անկախ պատճառներով բացթողումն իրավունքի ուժով (ex jure) հարգելի և վերականգնված ճանաչելու, իսկ վերաքննիչ բողոքը պատշաճ ժամկետում ներկայացված ճանաչելու խնդրանքով, հաշվի առնելով այն, որ բողոքաբերների համար այն մատչելի դառնալու պահից մեկամսյա ժամկետը լրանում է 26.01.2015թ.:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 18.05.2015թ. որոշում է կայացրել՝ վճռի բողոքարկման ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժել, իսկ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.12.2014թ. վճռի դեմ Վ. Գասպարիի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնել:

Վերոնշյալ որոշման դեմ 10.06.2015թ. բողոքաբերների կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանը 08.07.2015թ. որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը՝ վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է դատավարական ժամկետի խախտմամբ և չի պարունակում ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, վերաքննիչ բողոքը վերադարձվում է առանց թույլ տրված խախտումը վերացնելու համար ժամկետ տրամադրելու, ինչն այդ դեպքում հանգեցնում է բողոքի ընդունման մերժմանը: Նման սահմանափակմամբ չի հետապնդվում որևէ իրավաչափ ողջամիտ նպատակ, որի պարագայում արդարացված կարող է համարվել նման թերացում թույլ տված անձին վերաքննիչ բողոքի ներկայացման հնարավորությունից զրկելը:

Ըստ դիմողի՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին այս դեպքում նախատեսում է տրամագծորեն այլ իրավական կարգավորում՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելը գնահատելով որպես ձևական սխալ»: Նման պարագայում բողոք բերող անձին հնարավորություն է ընձեռվում սահմանված ժամկետում այդ ձևական սխալն ուղղելուց հետո վերստին ներկայացնելու վերաքննիչ բողոքը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները սույն գործով դատարանների կողմից կիրառվել են այն մեկնաբանությամբ, ըստ որի՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ



բողոք կարող է բերվել համապատասխան դատական ակտի հրապարակման, այլ ոչ՝ դատական ակտը կողմի համար մատչելի դառնալու պահից մեկ ամիս հետո, իսկ դատական ակտն ստանալու պահից սկսած մեկ ամսվա ընթացքում այն բողոքարկելու հնարավորությունը կարող է իրականացվել բացառապես բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության ներկայացման պարագայում:

Դիմողը նաև գտնում է, որ վիճարկվող դրույթները, դատական պրակտիկայում դրանց տրված վերոգրյալ մեկնաբանությամբ, ուղղակիորեն հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 28 և 29-րդ հոդվածներին, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին առ այն, որ բողոքարկման ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման, այսինքն՝ դատական ակտն ստանալու պահից:

Համադրված վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողը խնդրում է որոշել օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի, 207-րդ հոդվածի 1-ին մասի և 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1, 3, 28, 29, 78-81-րդ հոդվածներին, 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին համապատասխանության հարցը:

4. Վիճարկվող նորմերի սահմանադրականության առնչությամբ պատասխանողի դիրքորոշումը հետևյալն է.

ա) դատարանի մատչելիության իրավունքը կարող է օրենքով ենթարկվել իրավաչափ սահմանափակումների, ինչն առկա է, երբ՝ սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, և տվյալ սահմանափակման պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է:

Քննարկվող իրավակարգավորման դեպքում օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով անձը փաստացիորեն զրկվում է տեխնիկական սխալն ուղղելու հնարավորությունից, որի բացասական հետևանքը վերջինիս կողմից դատարան դիմելու իրավունքի փաստացի սահմանափակումն է: Նման սահմանափակումը, պատասխանողի կարծիքով, իրավաչափ նպատակ հետապնդել չի կարող, քանզի չկա ողջամիտ և օբյեկտիվ արդարացում նշված պայմանի և օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված այլ պայմանների տարբերակման հիմքում: «Նման իրավակարգավորման պայմաններում անձը զրկվում է հստակ և գործնական հնարավորությունից բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը», ինչը սահմանափակում է անձի՝ դատարան դիմելու իրավունքը.

բ) դատական ակտի բողոքարկման՝ օրենքով սահմանված ժամկետի հաշվարկման սկզբի և համապատասխան միջնորդության վերաբերյալ «ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հանգում են հետևյալին՝ 1) բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի մեկնարկը պետք է հաշվել ոչ թե դատական ակտի հրապարակման պահից,

այլ դատական ակտը փաստացի անձին հասանելի դառնալու պահից, 2) օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի ավարտից հետո բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունն օբյեկտիվ իրավական անհրաժեշտություն է»:

Պատասխանողի կարծիքով՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելու՝ քննարկվող կառուցակարգն ամբողջովին համահունչ է ՀՀ Սահմանադրության պահանջներին, այն է՝ միջնորդության մեխանիզմի առկայության պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է, քանզի անձն ունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու կոնկրետ դատական ակտը:

Կոնկրետ դեպքում անձի համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել դատարան համապատասխան միջնորդություն չներկայացնելը, այդ հիմքով բողոքը վերադարձնելը և վերջինիս կապակցությամբ դատարանի իրավական մեկնաբանությունները, այլ ոչ թե բողոքարկման ժամկետի հաշվարկի վերաբերյալ դատարանի իրավական մեկնաբանությունը:

զ) իրավական որոշակիության սկզբունքի իմաստով օրենսգրքի վիճարկվող դրույթներում քննարկվող ձևակերպումները բավականաչափ հստակ են և ամբողջությամբ համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող պահանջներին: Ինչ վերաբերում է օրենսգրքի վիճարկվող 140 և 207-րդ հոդվածների 1-ին մասերին, ապա վերջիններս, պատասխանողի կարծիքով, իրավաչափ կարգավորումներ են նախատեսում՝ համապատասխանելով ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողը նաև գտնում է, որ՝ «Օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի տարբերակված իրավակարգավորումները խտրական են, քանի որ հիմնավորված չէ այդ տարբերակման հիմքը որևէ իրավաչափ նպատակով, իսկ Օրենսգրքի խնդրո առարկա սահմանափակումը չունի ողջամիտ և օբյեկտիվ պրոպագոնդ»:

Պատասխանողի եզրահանգումն այն է, որ՝ «1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի և 140-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: 2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով չապահովելով համապատասխան միջնորդությունը չներկայացնելու դեպքում տվյալ սխալի շտկման հնարավորություն, չի երաշխավորում անձի համար դատարան դիմելու բավարար մատչելիություն, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին»:

5. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3 և 81-րդ հոդվածներ),

- ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է համանման իրավակարգավորման վերաբերյալ ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:

6. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՄԴՈ-1062 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի, ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի և ՄԴՈ-1268 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների և սույն գործով վիճարկվող օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի բովանդակային համարժեքությունը, փաստելով, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա՝ վերը նշված դրույթի առնչությամբ, Սահմանադրական դատարանը հիմք է ընդունում հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վերոհիշյալ որոշումների շրջանակում Սահմանադրական դատարանը որպես վիճարկվող դրույթների սահմանադրականության պայման նշել է, որ, նախ՝ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) պետք է ճանաչվի հարգելի: Ընդ որում, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինեն ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

7. Գործի նյութերի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմողի դիրքորոշումների ուսումնա-

սիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վկայակոչված՝ իր արդար դատաքննության և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումը և իր համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները պայմանավորված չեն օրենսգրքի տվյալ հոդվածի վիճարկվող մասի սահմանադրականությամբ, ինչպես նաև սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում բացակայում է դատարանների կողմից դիմողի նկատմամբ հիշյալ դրույթի կիրառման և դիմողի սահմանադրական վերոհիշյալ իրավունքների ենթադրյալ խախտման միջև պատճառահետևանքային կապը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգրքի 140-րդ հոդվածի հիշյալ դրույթը սահմանում է ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու կարգը: Վերջինիս կիրառումը դիմողին անմիջականորեն չի գրկում օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից: Հետևաբար, դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները, այն է՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու՝ օրենքով սահմանված ժամկետը դիմողից անկախ պատճառներով բաց թողնելու պարագայում վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից գրկված լինելը, պայմանավորված չեն դատարանների կողմից դիմողի նկատմամբ հիշյալ դրույթի կիրառմամբ:

Հետևաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հիման վրա «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի մասով ենթակա է կարճման:

8. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին և հաշվի առնելով հիշյալ դրույթի սահմանադրականության վերաբերյալ դիմողի և պատասխանողի դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում հիշյալ դրույթի սահմանադրականությունը գնահատվում է բացառապես այն մասով, որ վիճարկվող դրույթը չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և երկշաբաթյա ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները, սակայն վերջիններիս շարքում ներառված չէ բողոք ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ

միջնորդության բացակայության դեպքը: Այսինքն՝ օրենսգրքի 213-րդ հոդվածի վիճարկվող դրույթը չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորություն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձվում է առանց թույլ տրված խախտումը վերացնելու համար ժամկետ տրամադրելու, ինչն ինքնաբերաբար հանգեցնում է բողոքի ընդունման փաստացի մերժման:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց՝ օրենսդրական բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են սահմանադրական դատարանի սահմանած չափանիշները՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոտենցիալ հնարավորություն և օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն, կամ էլ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով (2015թ. խմբագրությամբ) նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, ի թիվս այլնի, կարող է ապահովվել այն դեպքում, երբ առկա են **բաց թողնված ժամկետի վերականգնման մասին միջնորդությունը վերադաս դատարանի կողմից պարտադիր քննության առարկա դարձնելու օրենսդրական երաշխիքներ:**

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը (2015թ. խմբագրությամբ) սահմանում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Սահմանադրության հիշատակված դրույթների համատեքստում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորություն թույլ չտալու հանգամանքը:

Այդ իմաստով՝ Սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող և պատասխանող կողմերի մոտեցումն այն հարցում, որ օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավակարգավորումն անձանց համար ստեղծում է դատարանի մատչելիության իրավունքի պաշտպանության խոչընդոտներ և չի հետապնդում որևէ իրավաչափ ողջամիտ նպատակ:

Նման սահմանափակման անհամաչափությունն առավել ակնհայտ է դառնում օրենսգրքի 210-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքերի հետ (օրինակ՝ բողոքա-

բերի կողմից պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելը, վերաքննիչ բողոքում նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումներ չներկայացնելը, բողոքաբերի պահանջը չներկայացնելը, վերաքննիչ բողոքը չստորագրելը) համադրման պարագայում, որոնց դեպքում նախատեսվում է թույլ տրված խախտումը շտկելու և վերաքննիչ բողոքը վերստին ներկայացնելու հնարավորություն:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի վերոհիշյալ անհամաչափ սահմանափակումներն օրենսդրի կողմից ամրագրվել են ոչ միայն քաղաքացիական դատավարության, այլ նաև քրեական և, մասամբ, վարչական դատավարությունների շրջանակներում, և վերաբերելի են դատական ակտերի ինչպես վերաքննության, այնպես էլ վճարելիության կարգով բողոքարկման ինստիտուտին:

Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանողի բացատրության շրջանակներում ներկայացված այն տեղեկատվությունը, համաձայն որի՝ «... քննարկվող իրավական խնդիրն արդեն իսկ հարթվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և քննարկման փուլում գտնվող «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որով առաջարկվում է Օրենսգիրքը շարադրել նոր խմբագրությամբ: Հիշյալ նախագիծը, նպատակ ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով հայեցակարգային լուծումներ տալ քաղաքացիադատաիրավական մի շարք ինստիտուտների, առաջարկում է նախատեսել նաև վերադարձման հիմք՝ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, և 15-օրյա ժամկետում այդ խախտումը վերացնելու դեպքում նորից բողոքը դատարան ներկայացնելու հնարավորություն»:

Կարևորելով քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը, համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումը, բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունների համար պատշաճ իրավակարգավորված ընթացակարգ նախատեսելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման բացով պայմանավորված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորության բացառումն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով)

100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի մասով կարճել:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա վեճի առարկա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հունիսի 2016 թվականի  
ՄԴՈ-1290



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԵՐՖՐԵՉ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ Խ. Օհանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երֆրեզ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը «Երֆրեզ» ԲԲԸ-ի՝ 2016թ. փետրվարի 16-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը և գործում առկա մյուս փաստա-



թղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը  
**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է.

«2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

...

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հակասության վերաբերյալ. »:

ՀՀ Ազգային ժողովի կողմից վերոնշյալ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, իսկ վիճարկվող դրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել թիվ ԵԱՔԴ/1104/02/11 գործն ըստ հայցի «Երֆրեզ» ԲԲԸ-ի՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի՝ 01.06.2005 թվականին կնքված պայմանագիրը վաղաժամկետ՝ 01.07.2010 թվականից լուծելու և որպես հետևանք՝ պատասխանողին փոխառությամբ տրամադրված սարքավորումները ետ վերցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի ՀՀ ֆինանսների նախարարության, երրորդ անձ՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի՝ ընդդեմ «Երֆրեզ» ԲԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ: Դատարանը 20.05.2013թ. վճռով «Երֆրեզ» ԲԲԸ-ի հայցը բավարարել է, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության հակընդդեմ հայցը՝ մերժել:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն

վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 20.05.2013թ. վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 25.12.2013թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.05.2013թ. վճիռը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հակընդդեմ հայցը մերժելու մասով մասնակի բեկանվել է, և բեկանված մասով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Մնացած մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 25.12.2013թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 05.03.2014թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.12.2014թ. վճռով հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2015թ. որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.12.2014թ. վճիռը մասնակիորեն՝ ՀՀ ֆինանսների նախարարության հակընդդեմ հայցը մերժելու մասով բեկանվել և փոփոխվել է՝ հակընդդեմ հայցը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 03.06.2015թ. որոշմամբ «Երֆրեզ» ԲԲԸ-ի անունից բերված վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ որոշումն ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար սահմանելով տասնհինգօրյա ժամկետ: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 22.07.2015թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ. «... Ընկերության անունից նախկինում բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.06.2015 թվականի որոշմամբ վերադարձվել է նաև այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում վկայակոչել է Էյրին ընդդեմ Իռլանդիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը (գանգատ թիվ 6289/73), Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը (գանգատ թիվ 28342/95) և Բեյանն ընդդեմ Ռումինիայի (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը (գանգատ թիվ 30658/05) ու ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/2534/02/08 քաղաքացիական և 04.07.2013 թվականի թիվ ՎԴ3/0011/05/10 վարչական գործերով որոշումները, սակայն բողոքին կից չի ներկայացրել այդ դատական ակտերը: Միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի նաև այդ ձևական սխալը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Այժմ, Ընկերության ներկայացուցիչը, չշտկելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.06.2015 թվականի որոշմամբ արձանագրված վերը նշված սխալը, կրկին նույն հիմքերով ներկայացրել է վճռաբեկ բողոք: Նման պայման-

ներում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության»:

3. Դիմողը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները հանդիսանում են իրավական պետության իրավական համակարգի բաղկացուցիչ տարրեր: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 03.06.2015թ. ընդունված որոշման և 22.07.2015թ. ընդունված՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշման տրամաբանությամբ՝ վճռաբեկ բողոք ներկայացնելիս պետք է կցել նաև ՀՀ քաղաքացիական, վարչական, քրեական դատավարության օրենսգրքերի և այլ իրավական ակտերի համապատասխան նորմերի պատճենները, որոնց հղում է կատարվում բողոքում: Դատարանի կողմից արդարադատության իրականացումը, արդար դատաքննության իրականացման սահմանադրական երաշխիքը պետք է անխափան գործեն: Այս արժեքները չեն կարող նսեմացվել տեխնիկական պատճառներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները վճռաբեկ բողոքին չկցելու պատճառաբանությամբ: Ավելին, սահմանադրական դատարան դիմելիս սահմանված չէ համանման նորմ, ըստ որի՝ դիմողը, եթե վկայակոչում է սահմանադրական դատարանի որևէ դիրքորոշում՝ նշելով որոշման համարը, պետք է կցի նաև այդ որոշումը:

Դիմողը փաստում է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և հատկապես բողոքի ընդունելիության պայմանների կապակցությամբ կարող է ենթարկվել սահմանափակումների: Բոլոր դեպքերում, պետություններն այս կապակցությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Ասվածի հետ մեկտեղ, այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը և նսեմացնի արդարադատությունը: Ուստի, դիմողը կարծում է, որ վիճարկվող իրավակարգավորումը հակասում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առանձին հանձնարարականներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին և չի բխում միջազգային իրավական մոտեցումներից, միտված է բացառելու արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը:

Վիճարկվող դրույթի առնչությամբ դիմողի փաստարկները հանգում են նրան, որ խախտվել են դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, քանի որ օրենսդրորեն սահմանված իրավանորմը թույլ չի տալիս վերականգնել խախտված իրավունքները, անհամաչափ պարտավորություն է դնում ու արգելափակում է նյութական իրավունքի իրա-

ցումը:

Համադրված կարգով վերլուծելով վիճարկվող նորմը՝ դիմողը եզրակացնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 78-րդ հոդվածին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին ու 6-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Վկայակոչելով դատարանի մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով 2007թ. մարտի 22-ի վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրելով, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ իրավունք չէ և ենթակա է իրավաչափ սահմանափակումների, պատասխանողը գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքի սկզբունքի խախտում կարող է առկա լինել, երբ նշված իրավունքը սահմանափակվի այնչափ, որ սահմանափակվի անձի կողմից դատարանի իրավական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը: Մինչդեռ, ըստ պատասխանողի, գործող իրավակարգավորումների դեպքում անձը գործնական հնարավորություն ունի օգտվելու դատական պաշտպանության իրավունքից, քանզի Եվրոպական դատարանի որոշումները հրապարակային են և հասանելի յուրաքանչյուրին: Իսկ անգամ բողոքին առաջին անգամ Եվրոպական դատարանի համապատասխան ակտերը չկցելն անձին չի զրկում դատական պաշտպանության հնարավորությունից, քանի որ դատարանի կողմից ժամկետ է սահմանվում խախտումը վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վկայակոչելով վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները, առանձին երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում, համանման իրավակարգավորումները, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասը, 231-րդ հոդվածի 2-րդ մասը, ընդգծելով ՀՀ վճռաբեկ դատարանի դերը ՀՀ արդարադատության համակարգում՝ պատասխանողն իրավաչափ է համարում վճռաբեկ բողոքին Եվրոպական դատարանի դատական ակտը կցելու պահանջն այն հիմքով, որ խնդրո առարկա պահանջն օրենսդրական երաշխիք է առ այն, որ անձն ամբողջությամբ ծանոթ է իր կողմից վկայակոչվող իրավական ակտերի բովանդակությանը, քանի որ անձը պարտավոր է իր կողմից վկայակոչվող իրավական ակտերի հակասությունը հիմնավորել՝ մեջբերելով դրանց հակասող մասերը:

Անդրադառնալով վիճարկվող դրույթի՝ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ դիմողի փաստարկներին,

պատասխանողը, վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Միշոն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2012թ. դեկտեմբերի 6-ի վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները, նույն հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 և 2014թ. ապրիլի 2-ի ՍԴՈ-1142 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող պահանջներին:

5. Սույն գործով վիճարկվող իրավադրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել դատական պաշտպանության, վերջինիս տարրը հանդիսացող՝ արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում, կարևորելով՝

- արդարադատության մատչելիության (դատարան դիմելու իրավունքի)՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության իրավունքի իրացման կարևոր նախապայմանի ազատ իրականացման երաշխավորումը: Գնահատել այն այդ իրավունքի իրացման ընթացակարգային գործող կանոնների և դրանց կիրառմամբ առաջացած իրավական հնարավոր հետևանքների շրջանակներում՝ հաշվի առնելով նաև այդ իրավունքի առումով Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշները,

- վեճի առարկա կանոնակարգմամբ պայմանավորված՝ իրավական սահմանափակման համադրելիությունը ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի էության հետ:

6. Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածներով, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանո՞վ է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Ի

թիվս այլնի, այդ հանգամանքով է պայմանավորված վեճի առարկա իրավա-  
կարգավորման սահմանադրականությունը հատկապես դատարանի  
մատչելիության իրավունքի համատեքստում գնահատելը:

7. Իր մի շարք որոշումներով (ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-  
844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052,  
ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220,  
ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289) Սահմանադրական դատարանը հանգա-  
մանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և  
արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանա-  
դրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպա-  
նության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով  
դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2015թ. փոփոխու-  
թյուններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավոր-  
ման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական  
պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն  
սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր  
վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է  
իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, որոնք սույն գործով վեճի առարկա  
նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքա-  
յին նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող  
խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ  
իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխա-  
վորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք  
հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել  
որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության  
իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափա-  
կումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական  
պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի  
մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերա-  
տիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ  
Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է  
լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման,

- ինքնին խնդրահարույց չէ վճարել բողոքի ընդունելիության այնպիսի  
պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմանները, այդ թվում բողոքարկման ժամկետները չպետք է գերակայեն կամ խոչընդոտեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել նաև դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Luordo v. Italy, 2003թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, Staroszczyk v. Poland, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ, Stanev v. Bulgaria, 2012թ. հունվարի 17-ի վճիռ և այլն),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania (application no. 3738/02), Judgment of 18 December 2007, para. 113):

Նշված դիրքորոշումները կարևորվում են հատկապես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման օրենսդրական երաշխիքների ապահովման համար:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից բխում է, որ եթե բողոք բերած անձը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ապա բողոքը բերած անձը պետք է, մասնավորապես, հիմնավորի, որ.

- տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ,

- բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը,

- բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

- բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու պահանջն իրավաչափ է, քանզի այն ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են բողոքարկվող դատական ակտի՝ վկայակոչվող դատական ակտին հակասող մասերը մեջբերելը, բողոքարկվող դատական ակտի և վկայակոչվող դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծություն կատարելը:

Հիշյալ համատեքստում հիմնավորում ներկայացնելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անիրագործելի պարտականություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի հանգեցնում նաև իրավունքի էության խախտման: Ավելին, հիմնավորում ներկայացնելու պահանջներ սահմանելու նպատակը ոչ թե բողոք բերած անձին ավելորդ պարտականություններով ծանրաբեռնելն է, այլ տվյալ բողոքարկվող գործով ներկայացված հանգամանքների իրավաչափությունը փաստարկելը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու իրավապահանջը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների իրացումը և նպաստել միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, քանզի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հանդիսանում են իրավակիրառ պրակտիկայի և, ընդհանրապես, իրավական համակարգի կայուն դինամիկ զարգացման առանցքային ուղենիշներ:

Այդպիսով, վճռաբեկ բողոք բերողի կողմից վկայակոչվող իրավական դիրքորոշումների և համապատասխան դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծության պահանջն իրավաչափ է: Ընդ որում, վերջինս կարող է ապահովվել միայն այն պարագայում, երբ վկայակոչվում է ոչ միայն համապատասխան իրավական դիրքորոշումը, այլև մատնանշվում են այն դատական ակտի նույնականացման, բնութագրական, բնորոշիչ տվյալները, որտեղ տեղ են գտել վկայակոչվող իրավական դիրքորոշումները (մասնավորապես, վկայակոչվող դատական ակտն ընդունած



մարմնի անվանումը, դատական ակտի անվանումը, ընդունման ամսաթիվը, գործի համարը):

9. Ակնհայտ է, որ իրավունքի ցանկացած սահմանափակում՝ որպես ժողովրդավարական ինստիտուտների և կոնկրետ անձի շահերի միջև հավասարակշռության ապահովման միջոց, պետք է կիրառվի խիստ բացառիկ դեպքերում: Որպեսզի «բացառիկ դեպքեր» հասկացությունը չմեկնաբանվի շատ լայն կամ կամայականորեն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան սահմանում է, որ անձի իրավունքները կարող են սահմանափակվել միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, և բխում է պետական անվտանգության, հասարակական կարգի, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ ուրիշ այնպիսի շահերից, որոնք ավելի մեծ հանրային կարևորություն ունեն, քան անձի համար նշված իրավունքների ապահովումն է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա իրավանորմի շրջանակներում վկայակոչվող դատական ակտերը բողոքին կցելու պահանջը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է բողոքաբերին: Ավելին, նման պահանջը ոչ միայն ոչ համարժեք սահմանափակում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը, այլև Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրաիրավական գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման առումով խոչընդոտ է հանդիսանում՝ հնարավորություն չտալով Վճռաբեկ դատարանին օրենքով սահմանված այլ հիմքերի բավարարման պարագայում վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և իրականացնել արդարադատություն:

Վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջ նախատեսելն այն պարագայում, երբ դրանք հասանելի են դատավարության կողմերին և ՀՀ վճռաբեկ դատարանին (այդ թվում՝ համացանցի համապատասխան պաշտոնական կայքէջերից օգտվելու միջոցով), հիմնավոր չէ: Պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների, Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև ստորադաս դատարանի դատական ակտերի հասանելիությունը: Ընդ որում, դա պետք է ապահովվի հավաստի և իրավաբանական առումով համարժեք թարգմանված և կոնկրետ պետական մարմնի կողմից հաստատված տեքստերի միջոցով: Օրենքի պահանջը՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը վկայակոչող բոլոր ակտերը բողոքին կցելու վերաբերյալ, երբ, մի կողմից՝ դրանք մի քանի տասնյակ էջեր են կազմում ու համաձայն իրավակիրառ պրակտիկայի՝ պետք է թարգմանաբար ներկայացվեն (նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերենով), մյուս կողմից՝ սահմանափակ է բողոք ներկայացնելու ժամկետը կամ դրա ձգձգումը կարող է դիմողի համար ունենալ անշրջելի բացասական հետևանքներ, իրական

վտանգ է ստեղծում արգելափակելու անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը (մասնավորապես, տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. ապրիլի 27-ի քաղաքացիական գործով թիվ ԵԱՔԴ/0229/02/16 որոշումը):

Ասվածի համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ, ի տարբերություն վիճարկվող իրավադրույթի, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը բողոք բերած անձի համար համապատասխան դատական ակտերը կցելու առումով որևէ պարտականություն չեն նախատեսում: Դրանցում սահմանվում են՝

- յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, **իրավունք ունի մատնանշելու** նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները),

- որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ:

Ընթացակարգային, ձևական պահանջներն արդարադատության արդյունավետ իրականացման համար, որպես կանոն, անհրաժեշտություն են: Սակայն Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը՝ տվյալ դեպքում վեճի առարկա պահանջը չպահպանելու հիմնավորմամբ, դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է հանդիսանում: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Ուստի Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավաչափ նպատակին հնարավոր է հասնել նաև առանց վճռաբեկ բողոքին վեճի առարկա դրույթում վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի նախատեսման՝ չխաթարելով ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով վեճի առարկա իրավադրույթին համանման իրավակարգավորումներ են առկա նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 3-րդ կետում: Դրանց նույնպես ՀՀ Ազգային ժողովն անհրաժեշտ ուշադրություն

պետք է դարձնի՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով:

Սահմանադրական դատարանը նաև ՀՀ Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ քննության առարկա և հիշյալ իրավական ակտերում առկա է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «վճիռ» և «որոշում» հասկացությունների ոչ համարժեք կիրառում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝ վճռաբեկ բողոքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, 78-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

12 հուլիսի 2016 թվականի  
ՄԴՈ-1293



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱՐԵՏԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 249-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Մարետա Առաքելյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարետա Առաքելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Մարետա Առաքելյանի՝ 29.02.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիա-

կան օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ **«Գրավ դրված գույքի վրա առանց դատարանի հիմնելու բռնագանձում տարածելու կարգը»** վերտառությամբ 249-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարանի հիմնելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

2. Գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին առանց դատարանի հիմնելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավա-

ռուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով»:

Օրենսգրքի վիճարկվող 249-րդ հոդվածը գործող խմբագրությամբ ամրագրվել է 04.10.2005 թվականի ՀՕ-188-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողի ամուսնու Գեղամ Առաքելյանի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բանկ) միջև՝ 20.07.2007 թվականին կնքված թիվ 068-23 վարկային պայմանագրի համաձայն՝ բանկը բնակելի տուն ձեռք բերելու նպատակով նրան տրամադրել է 36.000.000 ՀՀ դրամ գումար վարկ՝ տարեկան 15 տոկոս տոկոսադրույքով՝ մինչև 20.07.2019 թվականը մարելու պայմանով: Բանկի օգտին գրավադրվել է ձեռք բերվող՝ Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի թիվ 59/1 հասցեի տունը և հողամասը:

12.10.2009 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող հիփոթեքի թիվ 270-23/ԱՀ պայմանագրի համաձայն՝ բանկը Գեղամ Առաքելյանին տարեկան 24 տոկոս տոկոսադրույքով տրամադրել է 50.000 ԱՄՆ դոլար վարկ՝ մինչև 12.10.2011 թվականը մարելու պայմանով: «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար Նունե Սարգսյանի կողմից 12.10.2009 թվականին վավերացված համաձայնության համաձայն՝ դիմողը համաձայնել է, որ Գեղամ Առաքելյանը (ամուսինը) գրավադրի իրենց ամուսնության ընթացքում ձեռք բերված՝ Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի թիվ 59/1 հասցեի տունը, իսկ վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում՝ համաձայնել է, որ գրավառուի պահանջները բավարարվեն գրավ դրված գույքի հաշվին՝ առանց դատարան դիմելու:

Բանկի կողմից 15.03.2011 թվականին Գեղամ Առաքելյանին ուղարկված և վերջինիս կողմից ստացված թիվ 269 բռնագանձման ծանուցման համաձայն՝ բանկը նշել է, որ Գեղամ Առաքելյանի կողմից 10-օրյա ժամկետում պարտավորությունները պատշաճ չկատարվելու դեպքում ծանուցումը հանձնելուց 2 ամիս հետո բանկն իրավունք ունի ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելու իր օգտին գրավադրված՝ Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի թիվ 59/1 հասցեի բնակելի տունը:

Արտադատական բռնագանձման արդյունքում՝ գրավադրված բնակելի տունը 17.10.2012 թվականի թիվ 858/ԱՀ պայմանագրի համաձայն սեփականության իրավունքով հանձնվել է բանկի վարչության նախագահի տեղակալ Օվսաննա Առաքելյանին:

Դիմողի և նրա ամուսնու կողմից 15.05.2013 թվականին հայց է ներկայացվել Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Յունիբանկ» ՓԲԸ-ի, Օվսաննա Առաքելյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Երևանի ստորաբաժանման, երրորդ անձ՝ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ սեփականության իրավունքը վերականգնելու, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի դրույթները՝ դատարանը թիվ ԵԱԴԴ/0529/02/13 քաղաքացիական գործով 21.10.2014 թվակա-

նին կայացրել է վճիռ, որով մերժել է հայցը:

Վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ հիմնավոր համարելով վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքը, որ բանկի կողմից խախտվել է գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ գրավատուին ծանուցելու իմպերատիվ պահանջը, 29.01.2015 թվականին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու և գործը նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը 27.11.2015 թվականի որոշմամբ բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2015 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2014 թվականի վճռին:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը՝ իրավակիրառ պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, հակասում է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ և 61-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով չի համապատասխանում սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումներին:

Համադրելով ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներում ամրագրված երաշխիքները և վիճարկվող օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն» դրույթը՝ դիմողն իր վերը նշված եզրահանգումը փաստարկում է հետևյալ կերպ. «ա) ակնհայտ է, որ արտադատական կարգով գրավադրված գույքի իրացման դեպքում նախատեսված է սեփականատիրոջ կամքին հակառակ առանց դատարանի որոշման գրավառուի կողմից սեփականության բռնագանձում, որը ենթադրում է սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքից զրկում, բ) ակնհայտ է, որ վիճելի իրավական նորմում բացակայում են սեփականության իրավունքից զրկման համար անհրաժեշտ օրենքով նախատեսված օբյեկտիվ հիմքերը»:

Դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-903 որոշման մեջ ամրագրված՝ սեփականությունից զրկելու հիմնական պարտադիր պայմանները, գտնում է, որ սեփականության իրավունքից զրկումը պետք է իրականացվի դատարանի միջոցով, անհատույց կերպով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Մինչդեռ անձի սեփականության նկատմամբ գրավառու բանկի հավակնությունը ներկայումս ձևավորված դատաիրավակիրառ պրակտիկայում լուծվում է գրավառու բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող բռնագանձման գործընթացի համատեքստում, նրանց հայեցողությամբ և հանգեցնում է սեփականությունից զրկելու կամայականությունների և ապօրինությունների:

Իր դատական պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտումը հիմնա-

վորելու համար դիմողը, արձանագրելով, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածի հիման վրա բանկն արտադատական կարգով բռնագանձել է իր գույքը, իրեն չի ծանուցել գրավի առարկայի բռնագանձման մասին, չի ուղարկել բռնագանձման ծանուցագրեր, գտնում է, որ դրա արդյունքում ինքը, որպես տան համասեփականատեր, զրկվել է գույքի բռնագանձման օրինականությունը վիճարկելու հնարավորությունից, հետևաբար՝ սեփականության իրավունքի դատական պաշտպանության իրավունքից: Բացի դրանից, ըստ դիմողի՝ վիճարկվող նորմում բավարար հստակությամբ չի բացահայտվում գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման կամավոր և հարկադիր հիմքերի համադրման մեխանիզմները: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմի առաջին մասում նախատեսված՝ սեփականության արտադատական իրացումը հանդիսանում է սեփականությունից զրկում սեփականատիրոջ կամքին հակառակ, իսկ երկրորդ մասը նախատեսում է սեփականատիրոջ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին համաձայնության առկայության պարտադիր պայման և սահմանում, որ գույքի արտադատական բռնագանձումը չի կարող իրականացվել, եթե բացակայում է սեփականությունը հանձնելու մասին սեփականատիրոջ կամքով գրավատուի հետ կնքված գրավոր համաձայնությունը: Ըստ դիմողի՝ նման պայմանագիրը՝ տունը պարտքի դիմաց բանկին հանձնելու մասին, պետք է կազմվեր գրավոր ձևով և վավերացվեր նոտարական կարգով: Դիմողը, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2013/02/12 և ԵԱԴԴ/0529/02/13 քաղաքացիական գործերով կայացրած որոշումները, գտնում է, որ Վճռաբեկ դատարանը դատական պրակտիկայում վիճարկվող նորմին տված իր տարբեր, իրարամերժ և հակասական մեկնաբանություններով սահմանափակել է իր դատական պաշտպանության և սեփականության իրավունքները, հանգեցրել իր իրավունքների և օրինական շահերի ոտնահարման:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը: Անդրադառնալով դիմողի կողմից վկայակոչված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրությանը՝ պատասխանողը նշում է, որ արձանագրության 1-ին հոդվածը չի վերաբերում մասնավոր անձանց միջև զուտ պայմանագրային բնույթ ունեցող հարաբերություններին:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է սեփականությունից զրկելուն, ինչը ենթադրում է անձի կամքին հակառակ սեփականության իրավունքի փոխանցում, մինչդեռ քննարկվող հոդվածի շրջանակներում անձը սեփականությունը կորցնում է գրավի առարկայի նկատմամբ նախապես տրված կամահայտնության պայմաններում:



Պատասխանողն արձանագրում է, որ գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու դեպքում անհրաժեշտ է, որ անձն իր համաձայնությունը հայտնի կա՛մ անմիջականորեն գրավի պայմանագրով, կա՛մ գրավի պայմանագրից առանձին՝ գրավոր համաձայնությամբ: Նման իրավակարգավորմամբ օրենսդիրն անձի կամքի հստակ արտահայտման երաշխիք է սահմանել. կամքի արտահայտումը պետք է իրականացվի բացառապես գրավոր, այն է՝ օբյեկտիվ նյութական կրիչի վրա: Հետևաբար, ըստ պատասխանողի, անձը նախապես համաձայնում է իր պարտավորությունները պատշաճ չկատարելու դեպքում հնարավոր իրավական հետևանքներին, և այս մասով վերջիններս կանխատեսելի են անձի համար: Նշված տրամաբանությունը հատուկ է քաղաքացիա-իրավական հարաբերություններում պարտավորությունների էությանը:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողն անհիմն է վկայակոչում վիճարկվող դրույթի՝ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին հնարավոր հակասությունը, քանզի օրենսգրքի 249-րդ հոդվածը գրավատուին իրավունք է վերապահում դատական կարգով վիճարկելու նույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բնագանձման ընթացքը:

Ըստ պատասխանողի՝ դիմողը սույն սահմանադրական վեճի շրջանակներում ակնհայտորեն վիճարկում է խնդրո առարկա դրույթների իր նկատմամբ կիրառման իրավաչափությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված հակասական ակտերին գնահատական տալուն, ապա, ըստ պատասխանողի, ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությանը չի վերաբերում դատական ակտերի իրավաչափության քննությունն ու դրանց իրավական գնահատական տալը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը վիճարկում է նորմի կիրառման իրավաչափությունը, պատասխանողը միջնորդում է գործի վարույթը կարճել:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը սահմանադրական կոնկրետ վերահսկողության շրջանակներում մատնանշում է երկու խնդիր, այն է՝

1. իր՝ որպես գրավի առարկայի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունք ունեցող անձի սեփականության իրավունքը խախտելը,

2. դատական պաշտպանության իրավունքը չապահովելը՝ գրավ դրված գույքի վրա արտադատական կարգով բնագանձում տարածելու ընթացքում:

Ուստի սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հիմնախնդիրներին՝

1) արդյո՞ք գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բնագանձում

տարածելու կարգը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող սեփականության իրավունքի բովանդակությանը,

2) արդյոք օրենսգրքի 249-րդ հոդվածի իրավակարգավորումները չեն սահմանափակում ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ դատարանի մատչելիության իրավունքն այնքանով, երբ անձը կարող է գրկվել դատական պաշտպանության իրավունքից:

6. Համադրելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված դրույթների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ «սեփականությունից զրկում» ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.07.2010թ. ՄԴՈ-903 որոշմամբ վերահաստատել է սեփականությունից զրկելու հետևյալ հիմնական տարրերը, այն է՝

«- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում **սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ** գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում.

- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունների միաժամանակյա դադարեցում՝ առանց շարունակության երաշխավորման»:

Գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու իրավահարաբերություններում գույքի սեփականատիրոջ կամքի և համաձայնության արտահայտման վերաբերյալ հարկ է արձանագրել հետևյալը.

**նախ**՝ կնքելով գրավի պայմանագիրը՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հնարավոր դադարման վերաբերյալ,

**երկրորդ**՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում արտադատական կարգով գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորության վերաբերյալ: Ընդ որում, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ նման համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ գրավատուի և գրավառուի միջև կնքված առանձին համաձայնությամբ,

**երրորդ**՝ գրավադրված գույքի վրա գրավառուի կողմից արտադատական կարգով բռնագանձում տարածելուց առաջ գրավատուն հնարավորություն ունի կամ միջոցներ ձեռնարկել գրավով ապահովված պարտավորությունը կատարելու համար և դրանով կանխել գրավադրված գույքի նկատմամբ սեփա-

կանության իրավունքի կորուստը, կա՛մ դատական կարգով վիճարկել արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը:

Վերոհիշյալ երեք հնարավոր իրավիճակներից առաջին երկուսում (որոնք կարող են համընկնել գրավի պայմանագրում արտադատական կարգով բռնագանձման պայման նախատեսվելու դեպքում) գրավադրվող գույքի սեփականատիրոջ կամաարտահայտությունը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, և այդպիսի ակտիվ գործողությունների կատարումը պարտադիր պայման է: Երրորդում սեփականատիրոջ կամքը կարող է արտահայտվել պասիվ գործողությամբ, երբ տեղեկանալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին՝ նա չի ձեռնարկում արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելուն ուղղված՝ օրենքով սահմանված որևէ գործողություն:

Վերջինիս դեպքում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն սեփականատիրոջ իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության իրավակարգավորումները:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հողվածի համատեքստում սեփականության իրավունքի պաշտպանությունը սերտորեն փոխկապակցված է դատական պաշտպանության իրավունքի հետ: Վերլուծելով վիճարկվող հողվածի դրույթները՝ հարկ է առանձնացնել գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման հետևյալ իրավական երաշխիքները.

1) գրավատուի պատշաճ ծանուցումը գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում),

2) արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը,

3) գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելը գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո,

4) գրավատուի կողմից գրավի առարկայի իրացումը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Մյուս կողմից, օրենսգրքի 249-րդ հոդվածը սահմանում է գրավատուի մի շարք պարտականություններ, մասնավորապես՝ դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավատուի հնարավոր վնասները հատուցելու համար»: Այս դրույթը, դիտարկելով ՀՀ Սահմանադրության 10-րդ (Սեփականության երաշխավորումը), 60-րդ (Սեփականության իրավունքը), ինչպես նաև 61-րդ (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը) և 78-րդ (Համաչափության սկզբունքը) հոդվածների լույսի ներքո, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն անհամաչափ ծանրաբեռնում է գրավատուի՝ արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելու հնարավո-

րությունը, քանի որ կասեցնելու համար պարտավորեցնում է գրավատուին տրամադրել ապահովում ոչ թե գրավառուի հնարավոր վնասների, այլ գրավ դրված առարկայի արժեքի չափով: Մի շարք դեպքերում գրավադրված գույքի արժեքը մի քանի անգամ կարող է գերազանցել ոչ միայն գրավով ապահովված հիմնական պարտավորության, այլ՝ նաև գրավառուի հնարավոր վնասների չափը: Նման իրավակարգավորման պարագայում գրավատուի համար հիմնականում անիրագործելի է դառնում գրավի առարկայի բնագանձման ընթացքը կասեցնելու վերաբերյալ օրենքով նախատեսված իրավունքի իրացումը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի նաև այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, ծանուցման պահանջը կոչված է ապահովելու գրավատուի մեկ այլ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածով սահմանված իրավունքը, որի համաձայն՝ «պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ դադարեցնել դրա վրա բնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է: Այդ իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է»:

Բացի դրանից, օրենսդրի կողմից գրավառուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության ամրագրումը նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը:

Այդ առումով, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է կիրառվի վերոնշյալ նորմերով նախատեսված՝ գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում՝ օրենսդրությամբ գրավատուին ընձեռված՝ բնագանձման օրինականությունը վիճարկելու կամ բնագանձումը դադարեցնելու իրավունքների իրականացումն արդյունավետ չի լինի և չի բխի ՀՀ Սահմանադրության պահանջներից:

Մյուս կողմից, օրենսդիրը վիճարկվող հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում որպես պատշաճ ծանուցման հասցեատեր դիտարկում է ոչ թե գրավատուին, այլ պարտապանին: Մասնավորապես՝ «Բնագանձման ծանուցումը **պարտապանին** պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավատուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար: Բնագանձման ծանուցումը **պարտապանին** հանձնելուց երկու ամիս հետո գրավատուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել»:

Ըստ վերոհիշյալ կարգավորման՝ գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում կատարելու մասին գրավառուն պատշաճ ձևով ծանուցում է և՛ գրավատուին, և՛ պարտապանին, սակայն միայն պարտապանին ծանուցելուց երկու ամիս հետո նա օրենքի ուժով իրավունք է ստանում իրացնելու գրավի առարկան:

Վիճարկվող հողվածում տարբեր հասցեատերերի՝ գրավատուի կամ պարտապանի օրենսդրորեն ամրագրումը կարող էր և որևէ խնդիր չառաջացնել, եթե գրավատուն և պարտապանը միշտ հանդիսանար միևնույն անձը: Մակայն այլ է իրավիճակը, երբ պարտապանը և գրավատուն չեն համընկնում: Օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Գրավատու կարող է լինել ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը»:

Վիճարկվող հողվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ, ի տարբերություն գրավով ապահովված պարտավորության պարտապանին ծանուցելու դեպքի, երրորդ անձ գրավատուին ծանուցելու դեպքում բռնագանձման ծանուցումը վերջինիս հանձնելուց մեկ օր հետո գրավառուն ձեռք է բերում գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելու իրավունք:

Հարկ է նշել նաև, որ թեև գրավի պայմանագրի կողմերը՝ գրավատուն և գրավառուն, որպես քաղաքացիաիրավական պարտավորության կողմեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն կոչվում են պարտապան և պարտատեր, այնուամենայնիվ, վիճարկվող հողվածի տրամաբանությունից բխում է, որ պարտապանը հանդիսանում է գրավով ապահովված հիմնական պարտավորության կողմը:

Այդ առումով, օրենսդիրը հստակորեն և միանշանակ չի կարգավորել այն հարցերը, թե գրավատուին ինչ ժամկետում ծանուցելուց հետո գրավառուն կարող է իրացնել գրավի առարկան: Վիճարկվող հողվածում որևէ խոսք չկա այն գրավատուի կամ գրավատուների մասին, որոնք պարտապան չեն հանդիսանում: Նման կարգավորումները մի շարք խնդիրներ կարող են առաջացնել մարդու սեփականության հիմնարար իրավունքի երաշխավորման տեսանկյունից: Մասնավորապես՝ այդ անորոշության հետևանքով պարտապան չհանդիսացող գրավատուները պարտապան հանդիսացող գրավատուների համեմատ չեն օգտվում իրենց սեփականության պաշտպանության հավասար պայմաններից: Գրավով ապահովված պարտավորությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատարող անբարեխիղճ պարտապանգրավատուն պարտադիր կերպով ծանուցվում է բռնագանձման մասին, որից միայն երկու ամիս անց կարող է նրա գրավադրված գույքն իրացվել, իսկ պարտապան չհանդիսացող գրավատուին նման հնարավորություն կարող է և չտրվել, քանի որ վիճարկվող դրույթում ամրագրված երկամսյա ժամկետն առնչվում է պարտապանին, այլ ոչ թե գրավատուներին: Բացի դրանից, նման կարգավորումը երրորդ անձ հանդիսացող գրավատուին կարող է զրկել գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից, ինչպես նաև գործնականում կարող է խոչընդոտ հանդիսանալ նաև օրենսգրքի 252-րդ հոդ-

վածում ամրագրված իրավունքի իրականացման համար: Այդ մասին է վկայում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ինչպես 28.11.2014թ. թիվ ԵԿԴ/2013/02/12 դատական գործով, այնպես էլ 27.11.2015թ. թիվ ԵԱԴԴ/0529/02/13 դատական գործով կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրումը, երբ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու դեպքում գրավատուներին պատշաճ ծանուցելուն:

8. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրական այս դրույթը ներառում է սեփականության իրավունքի իրացման երկու կարևորագույն երաշխիք՝

- Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է սեփականության բոլոր ձևերը, և՛

- Հայաստանի Հանրապետությունը հավասարապես պաշտպանում է սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև, ինչից բխում է, որ օրենքով ամրագրված երաշխիքներից և ընթացակարգերից պետք է օգտվեն համանման իրավիճակում գտնվող բոլոր սուբյեկտները:

Հավասարության սկզբունքը Հայաստանի Հանրապետությունից պահանջում է, որ տարբերություն չդրվի սեփականության նույն ձևի շրջանակներում տարբեր սուբյեկտներին պատկանող սեփականությունը պաշտպանելիս:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

Օրենսգրքի վիճարկվող 249-րդ հոդվածը նվիրված է գրավադրված գույքի վրա առանց դատարանի որոշման բռնագանձում տարածելու կարգին, ինչը հանդիսանում է գրավի պայմանագրի միջոցով սեփականատիրոջ՝ օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգ: Սակայն նման ընթացակարգը պետք է լինի իրավաչափ, ինչպես նաև չխախտի օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Ինչպես վիճարկվող դրույթի, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, **որ օրենսդրական կարգավորման անորոշությունը հնարավորություն չի տալիս հստակ հասկանալու, թե պարտապան չհանդիսացող գրավատուն ինչ ընթացակարգային երաշխիքներից է օգտվում բռնագանձման ծանուցման առնչությամբ**, ինչն էլ վիճարկվող կարգավորումները երրորդ անձ հանդիսացող գրավատուի առնչությամբ դարձնում է ոչ արդյունավետ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «գրավատու» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ տվյալ իրավահարաբերություններում «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապանգրավատուին, այլ նաև այդ հարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում «պարտապան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապանգրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

Խնդիրն այն է, որ «Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո» ձևակերպման բովանդակային ծավալում այլ գրավատուներին չներառելով՝ օրենսդիրն երրորդ անձ հանդիսացող գրավատուի համար հստակ ու միանշանակ չի երաշխավորում այդ երկամսյա ժամկետը, ինչը խախտում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս ամենի արդյունքում երրորդ անձ հանդիսացող գրավատուն կարող է գրկվել ոչ միայն գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու իր իրավունքից՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է, այլ՝ նաև բռնագանձման օրինականությունը վիճարկելու իրավունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ պարբերությունում «գրավատու» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապանգրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ պարբերություններում «պարտապան» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «պարտապան» եզրույթը վերաբերում

է ոչ միայն պարտապանգրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավատուի հնարավոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին հակասող և անվավեր:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից էլնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 հուլիսի 2016 թվականի

ՄԴՈ-1294





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՊԱՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 283-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 288-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,  
Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող),  
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողներ Պավել Մանուկյանի, Վարուժան Ավետիսյանի ներկայացուցիչներ  
Տ. Եգորյանի և Դ. Գյուրջյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-  
բանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ  
Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Պավել Մանուկյանի և  
Վարուժան Ավետիսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարու-  
թյան օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի, 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝  
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանու-  
թյան հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Պավել Մանուկյանի և Վարուժան Ավետիսյանի՝ 2016 թվականի մարտի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մարտի 24-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի և 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ Պավել Մանուկյանի և Վարուժան Ավետիսյանի դիմումներով գործերը միավորվել են:

Ուսումնասիրելով միավորված գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը» վերառությամբ 283-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ»:

Օրենսգրքի 283-րդ հոդվածի հիշյալ մասում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություն և/կամ լրացում չի կատարվել:

Օրենսգրքի՝ «Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը» վերառությամբ 288-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ մասը սահմանում է.

«3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին»:

Օրենսգրքի 288-րդ հոդվածի հիշյալ մասում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություն և/կամ լրացում չի կատարվել:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է

հետևյալին.

**2.1. Պավել Մանուկյանի գործով.**

09.04.2015 թվականին դիմողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ և 225-րդ հոդվածներով նախատեսված հատկանիշներով: Նույն օրը նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց դիմողի նկատմամբ կիրառելու նպատակով, որը քննության է առնվել դռնփակ դատական նիստում: Դռնփակ դատական նիստ անցկացնելու վերաբերյալ պաշտպանական կողմի հարցմանն ի պատասխան դատարանը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը: Նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից բավարարվել է, իսկ այդ կապակցությամբ ընդունված դատական ակտը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Բողոքի քննության նպատակով հրավիրված դռնփակ դատական նիստին դիմողն անձամբ մասնակից չի դարձվել, իսկ պաշտպանական կողմի բանավոր միջնորդությունները՝ նրան մասնակից դարձնելու մասին (ըստ դիմումի), դատարանի կողմից մերժվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այդպիսի հնարավորության բացակայության պատճառաբանությամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը 20.08.2015թ. որոշմամբ մերժել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը:

**2.2. Վարուժան Ավետիսյանի գործով.**

09.04.2015 թվականին դիմողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ և 225-րդ հոդվածներով նախատեսված հատկանիշներով: Նույն օրը նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց դիմողի նկատմամբ կիրառելու նպատակով, որը բավարարվել է: Ըստ դիմումում բերված փաստարկի՝ դռնփակ դատական նիստ անցկացնելու վերաբերյալ պաշտպանական կողմի հարցմանն ի պատասխան դատարանը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը: Խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը դատարանի կողմից բավարարվել է, իսկ այդ կապակցությամբ ընդունված դատական ակտը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Բողոքի քննության նպատակով հրավիրվել է դռնփակ դատական նիստ, որին դիմողն անձամբ մասնակից չի դարձվել, իսկ պաշտպանական կողմի բանավոր միջնորդությունները՝ նրան մասնակից դարձնելու մասին (ըստ դիմումի), դատարանի կողմից մերժվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այդպիսի հնարավորության բացակայության պատճառաբանությամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը 20.08.2015թ. որոշմամբ մերժել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը:

**3. Դիմողները գտնում են, որ.**

ա/ օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը և 288-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով կալանավորման վերաբերյալ միջնորդության քննության և

կալանավորման որոշման օրինականության ստուգման առնչությամբ նախատեսում են դռնփակ դատական նիստի անցկացում, հակասում են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին,

բ/ օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթը՝ դատական պրակտիկայում դրան տրված այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մեղադրյալի կալանավորման որոշման օրինականության ստուգման կապակցությամբ նշանակված դատական նիստը վերաքննիչ դատարանում կարող է անցկացվել մեղադրյալի բացակայությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասին:

Դիմողներն օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի և 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին ենթադրյալ հակասելը հիմնավորում են հետևյալ փաստարկներով. «...ցանկացած հարցի քննության կապակցությամբ հրավիրված դատական նիստը չի կարող բացառապես օրենքի պահանջի հիման վրա անցկացվել դռնփակ առանց Սահմանադրության 63րդ հոդվածի 2րդ մասի նախապայմանների առկայության»: Դռնփակ կարգով դատական նիստեր անցկացնելու համար պետք է առկա լինի իրավաչափ նպատակ, հակառակ դեպքում տեղի կունենա հրապարակային դատական քննության իրավունքի խախտում: Ըստ դիմողների՝ խափանման միջոցի կիրառման կապակցությամբ հրավիրված դատական նիստերը, «ընդ որում բոլոր դատական ասյաններում», պետք է լինեն հրապարակային: Հիշյալ ընդհանուր կանոնից բացառություններն էլ պետք է պայմանավորված լինեն Սահմանադրության 63րդ հոդվածի 2րդ մասում նշված հիմքերից որևէ մեկի առկայությամբ, այլ ոչ «դրանց վրա չհիմնված օրենքի ձևական և աննպատակ պահանջի շրջանակներում»: Կալանավորումն անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառելու հարցը կապված է անձին որոշակի ժամանակահատվածով ազատությունից զրկելու հետ, ինչը, ըստ դիմողների, «ավելի է բարձրացնում նման գործի հրապարակայնության և թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը որպես անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների ապահովման լրացուցիչ երաշխիք»: Հետևաբար, դիմողները գտնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283րդ հոդվածի 1ին մասում նախատեսված պահանջը՝ անձի կալանավորման հարցը դռնփակ դատական նիստում լուծելու մասով, հակասում է ՀՀ Սահմանադրության 63րդ հոդվածի 1ին և 2րդ մասերին:

Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ դիմողները կարծում են, որ անձն իրավունք ունի անձամբ և/կամ փաստաբանի միջոցով մասնակցել նաև նախնական քննության ընթացքում իր հանդեպ խափանման միջոցի կիրառման հարցի քննարկմանը, կիրառված հարկադրանքի կամ խափանման միջոցի օրինականության ստուգման, վերստուգման և դրա հետ կապված բոլոր այլ իրավական ընթացակարգերին՝ «այդ մասնակցության միջոցով պաշտպանելով իր իրավունքներն ու օրինական շահերը այդ թվում իր ընտրած պաշտպանի միջոցով»: Ըստ դիմողների՝ այն մեղադրվող անձին տալիս է հնարավորություն և ընտրություն իր իրավունքները և օրինական շահերը

պաշտպանել ինքնուրույն կամ փաստաբանի միջոցով կամ «երկուսը միաժամանակ», սակայն դա որևէ կերպ չի կարող սահմանափակել անձի իրավունքը մասնակցել իր իրավունքի սահմանափակման օրինականության ստուգմանը, եթե նույնիսկ վերջինս ունի պաշտպան, որն այդ ստուգմանը մասնակցում է: Հետևաբար, դիմողները գտնում են, որ դատական ստուգումը մեղադրյալի բացակայությամբ անցկացնելը չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ և զրկում է վերջինիս՝ Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքներն անձամբ պաշտպանելու իրավունքից: Իսկ «փաստաբանի միջոցով իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացումը չի կարող բացառել կամ փոխարինել անձի ինքնուրույն պաշտպանվելու իրավունքի իրացման հնարավորությունը»: Դիմողները գտնում են, որ վերոշարադրյալ իրավակարգավորման մասով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 67րդ հոդվածին:

Դիմողները միաժամանակ գտնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288րդ հոդվածի 3րդ մասի՝ «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» իրավադրույթը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 63րդ հոդվածի 1ին և 2-րդ մասերին՝ նույն օրենսգրքի 283րդ հոդվածի 1ին մասի սահմանադրականության վերաբերյալ դիմումում բերված փաստարկների հիմքով:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման օրենսդրական պահանջը չի կարող արդյունավետ իրականացվել, նախնական քննության խնդիրները չեն կարող արդյունավետ լուծում ստանալ նախաքննական գաղտնիության բացառման պայմաններում: Հետևաբար, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունների քննությունը դռնփակ դատական նիստում իրավաչափ նպատակ է հետապնդում՝ պաշտպանելու նախնական քննության տվյալների, այդ թվում օպերատիվհետախուզական գործունեությամբ բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության կիրառմամբ ձեռք բերված տեղեկատվության գաղտնիությունը՝ ելնելով արդարադատության շահերը պաշտպանելու անհրաժեշտությունից:

Նման իրավակարգավորումը, պատասխանողի կարծիքով, նպատակ է հետապնդում նաև գերծ պահելու մեղադրյալներին հասարակության կողմից հնարավոր պիտակավորումից՝ պաշտպանելով անմեղության կանխավարկածը, քանզի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար բավարար է որևէ հանցավոր արարք մեղադրյալի կողմից կատարված լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը, որն անհամեմատ ցածր չափանիշ է անձի կողմից տվյալ արարքը կատարելու մեջ մեղքը հաստատված լինելուց, ինչը կարող է հասարակության կողմից հնարավոր տարրնկալումների և թյուրըմբռնումների արդյունքում վնասել անմեղության կանխավարկածի սկզբունքի լիարժեք իրացումը քրեական արդարադատությունում, ինչը ևս չի բխի և կհակասի արդարադատության շահերին:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 63րդ հոդվածում նախատեսված իրավաչափ նպատակներն «առկա են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունները քննելու դեպքերում, և բացակայում է դատարանի կողմից յուրաքանչյուր դեպքում դատական նիստը դռնփակ անցկացնելու հարցին անդրադառնալու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահերից ելնելով»:

Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դիմումատուների մասնակցությանն ու իրենց իրավունքներն անձամբ պաշտպանելու վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին, ապա պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվում է ոչ թե օրենքի բացի սահմանադրականությունը, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288րդ հոդվածի 3րդ մասի՝ «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» իրավադրույթը «դատախազի և պաշտպանի մասնակցության մասով Վերաքննիչ դատարանի կողմից դրան տրված մեղադրյալի բացակայությամբ իր իսկ կալանավորման հարցով նշանակված նիստը անցկացնելու մեկնաբանությունը»՝ առանց ներկայացնելու որևէ ապացույց: Ուստի պատասխանող կողմը գտնում է, որ «հնարավոր չէ սահմանադրաիրավական գնահատական տալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288րդ հոդվածի 3րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված հնարավոր մեկնաբանությանը, այլև դիմումատուների նկատմամբ նշված դրույթի կիրառման առկայությանը»:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283րդ հոդվածի 1ին և 288րդ հոդվածի 3րդ մասերով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել՝

- անձնական ազատությունից զրկելու սահմանադրաիրավական չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից,

- մինչդատական վարույթի շրջանակներում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության երաշխավորման, ինչպես նաև դատաքննության հրապարակայնության սահմանափակման՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների՝ օրենքով երաշխավորման տեսանկյունից:

Սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման, ինչպես նաև միջազգային իրավական պրակտիկայում հաստատված չափորոշիչների կիրառման անհրաժեշտության տեսանկյունից:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների ու ազատությունների լիա-

կատար և համապարփակ պաշտպանության կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված արդար և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, որն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածում: Այդ իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-664, ՄԴՈ-665, ՄԴՈ-690, ՄԴՈ-691, ՄԴՈ-751, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-767, ՄԴՈ-773, ՄԴՈ-780, ՄԴՈ-787, ՄԴՈ-818, ՄԴՈ-833, ՄԴՈ-851 և այլն): Վերահաստատելով այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով սույն գործով քննության առարկան, դիմող կողմի փաստարկները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճելի իրավակարգավորման սահմանադրականության գնահատման շրջանակներում անձի իրավունքների դատական պաշտպանության երաշխավորման խնդրին անդրադառնալ նախ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում նախատեսված անձնական ազատության իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ նկատի ունենալով հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի նկատմամբ դատական կարգով կիրառվող խափանման միջոցի (կալանավորման) բնույթն ու բովանդակությունը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով, մասնավորապես՝ անձին իրավասու մարմնին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով: Միաժամանակ, Սահմանադրության վերոհիշյալ նորմերի համաձայն՝ դատարանն է որոշում ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամից ավել անազատության մեջ անձի հետագա պահելը թույլատրելու հարցը (ՀՀ Սահմ. 27-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ անձնական ազատությունից զրկված անձն իրավունք ունի դատական ստուգման կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է (ՀՀ Սահմ. 27-րդ հոդվածի 5-րդ մաս):

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի իրավական բովանդակությունից անմիջականորեն բխում է, որ.

անձնական ազատությունից զրկելու իրավական չափանիշները սահմանվում են Սահմանադրությամբ,

- անձնական ազատությունից զրկելու կարգը սահմանվում է օրենքով,

- ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամից ավել անազատության մեջ գտնվող անձի հետագա պահելու հարցը որոշում է դատարանը,

- անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը,

- ազատությունից զրկելու իրավաչափության հարցը դատարանը որոշում է սեղմ ժամկետում:

Համադրելով անձնական ազատության իրավունքի պաշտպանության վերոշարադրյալ, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշումներով բացահայտված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման չափորոշիչները՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները նախատեսող նորմերի հետ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով են (այսուհետ՝ օրենսգիրք) նախատեսված անձին ազատությունից զրկելու կարգն ու պայմանները, երբ առկա է անձին իրավասու մարմինն ներկայացնելու նպատակ, նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է կանխելու համար հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի հնարավոր փախուստը (285-րդ հոդված), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության ընդհանուր պահանջներին,

- օրենսգրքով է նախատեսված՝ ոչ ուշ, քան յոթանասուններկու ժամից ավել անազատության մեջ գտնվող անձին հետագա պահելու հարցի քննության դատավարական ընթացակարգը (283-րդ հոդված), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության և 4-րդ մասի ընդհանուր պահանջներին,

- օրենսգրքով նախատեսված է անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու և սեղմ ժամկետում (երեք օր) համապատասխան որոշում կայացնելու ընթացակարգ (278-րդ հոդվածի 3-րդ մաս, 288-րդ հոդված), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին,

- անձին դատական կարգով ազատությունից զրկելու բոլոր ընթացակարգերում երաշխավորված է հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք (285-րդ և 288-րդ հոդվածներ), ինչը համահունչ է դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Անդրադառնալով անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու ընթացակարգում նաև տվյալ անձի կողմից անձամբ պաշտպանվելու իրավունքի երաշխավորման վերաբերյալ դիմող կողմի հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ մեղադրանքից, հավասարապես՝ նաև ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ չի կարող բացառել անձի՝ անձամբ պաշտպանվելու իրավունքը, եթե առկա է վերջինիս կողմից հստակ արտահայտված համապատասխան ցանկություն (դատավարական միջնորդություն): Անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, հետևա-



բարձր պարտադիր է ապահովման իրավակիրառական պրակտիկայում: **Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ անձի՝ լսվելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում:**

Ինչ վերաբերում է վիճելի իրավակարգավորման շրջանակներում դատաքննության հրապարակայնության սահմանափակման վերաբերյալ դիմող կողմի հարցադրմանը, Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ (այդ թվում՝ կալանավորում) կիրառելու մասին միջնորդությունները դռնփակ դատական նիստում քննելու կարգը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությամբ 39-րդ գլխում նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝

- դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդություններ (278-րդ հոդված),

- դատարանը քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքներ (278-րդ հոդված),

- դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները, ինչպես նաև բանկային, ապահովագրական, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունները և առգրավումները (279-րդ հոդված):

Վերոհիշյալ հանգամանքների առկայությամբ դատավարական ընթացակարգերի հրապարակայնության սահմանափակումն ուղղակիորեն պայմանավորված է վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասում նախանշված պայմաններով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին համահունչ օրենսդրի կողմից օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասով և 288-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ դատաքննության հրապարակայնության սահմանափակման դեպքում որպես սահմանափակման հիմք է ընդունվել արդարադատության շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Ընդ որում, արդարադատության շահերի պաշտպանության համատեքստում նախնական քննության տվյալների գաղտնիության ապահովումն ունի հանրային այնպիսի կարևորություն, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը քրեականացրել է:

7. Անդրադառնալով անձին ազատությունից զրկելու իրավաչափության հարցի քննության (դատական ստուգման) շրջանակներում արդյունավետ դատական պաշտպանության երաշխավորման միջազգային իրավական սկզբունքների ապահովման անհրաժեշտությանը՝ Սահմանադրական դատարանը կարևորում է հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Այդ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, սակայն եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից» (Toth v. Austri, 11894/85, 12 դեկտեմբերի 1991թ.):

Անդրադառնալով ազատությունից զրկելու հետ կապված դատական ընթացակարգերում անձի պաշտպանվելու իրավունքի իրացման խնդրին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է մի շարք սկզբունքային դիրքորոշումներ, մասնավորապես.

- «Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վտանգված էր դիմումատուի ազատությունը, ինչպես նաև հաշվի առնելով տարբեր որոշումների միջև ընկած ժամանակահատվածը և կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերի վերազնահատումը, 1997թ. հուլիսի 3-ի և 17-ի լուսններին դիմումատուի ներկայությունը պարտադիր էր, որպեսզի նա հնարավորություն ունենար իր պաշտպանին տալ բավարար տեղեկատվություն և ցուցումներ: Ավելին, այս և հետագա վարույթները, որպես մեկ ամբողջություն, չեն ապահովել դիմումատուի կողմից՝ իր կալանքի իրավաչափության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացումը, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆում: Այս հանգամանքներում, Դատարանը եզրահանգում է, որ դիմումատուին չեն տրվել երաշխիքներ, որոնք համապատասխանում են ազատությունից զրկելու տվյալ տեսակին» (Grauzinis v. Lithuania, 37975/97, 10 հոկտեմբերի 2000թ.),

- «Կարևորելով առաջին վերաքննիչ նիստը, վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի բնութագրի վրա հիմնվելը և իր կալանքի որոշակի պայմաններից ելնելով իրեն ազատ արձակելու շահերից հանդես գալու դիմումատուի մտադրությունը, նրա մասնակցությունը պարտադիր էր իր պաշտպանին բավարար տեղեկատվություն և ցուցումներ տալու համար... Վերոշարադրյալի հիման վրա, Դատարանը գտնում է, որ 2004թ. օգոստոսի 10-ի վերաքննիչ նիստին ներկա գտնվելու համար բացակայելու վերաբերյալ խնդրանքի մերժումը զրկել է դիմումատուին իր կալանավորման իրավաչափության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆում» (Mamedova v. Russia, 7064/05, 1 հունիսի 2006թ.),

- «Դատարանը վերահաստատում է, որ կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանը ապահովի դատական քննության երաշխիքները: Վարույթը պետք է

լինի մրցակցային, և միշտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: ... Այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքի կիրառման վրա տարածվում է 5-րդ հոդվածի 1(գ) պարագրաֆի գործողությունը, հարցի դատական քննությունը պարտադիր է: Հաշվի առնելով տվյալ անձին ազատությունից զրկելու էական ազդեցությունը նրա հիմնարար իրավունքների վրա, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆի ներքո իրականացվող վարույթը պետք է սկզբունքորեն համապատասխանի արդար դատաքննության հիմնարար պահանջներին հնարավորինս լայն առումով, հաշվի առնելով կատարվող նախաքննության հանգամանքները» (Musuc v. Moldova, 42440/06, 6 նոյեմբերի 2007թ.):

Անձին ազատությունից զրկելու օրինականության հարցի քննության ընթացքում տվյալ անձի՝ անհապաղ լսվելու իրավունքի ապահովումը կարևորվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք այլ գործերով ևս (Կամպանինո ընդդեմ Հունաստանի գործով 1995թ. հունիսի 13-ի վճիռը, կետ 47, Աքվիլինան ընդդեմ Մալթայի գործով 1999թ. ապրիլի 29-ի վճիռը, 47-50-րդ կետեր, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012թ. հունիսի 26-ի վճիռը, Մեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012թ. հոկտեմբերի 2-ի վճիռը և այլն):

Անդրադառնալով անձնական ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշներին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ այդպիսիք նախատեսված են նաև միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, մասնավորապես.

- **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր** (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200A (XXI) բանաձևով), հոդված 9. «4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք օժտված է դատարանում իր գործի քննության իրավունքով, որպեսզի այդ դատարանը կարողանա անհապաղ որոշում կայացնել նրա կալանավորման օրինականության վերաբերյալ և նրան ազատելու որոշում կայացնի, եթե կալանավորումն անօրինական է»,

- **ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 45/110 բանաձև** (14 դեկտեմբերի 1990թ.)՝ «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ)». «6.3. Իրավախախտում կատարած անձը պետք է իրավունք ունենա դատարանում կամ այլ իրավասու անկախ մարմնում բողոքարկել իր նկատմամբ կիրառված նախաքննական կալանքը»,

- **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե**, հանձնարարական թիվ Rec(2006)13՝ «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» (ընդունվել է 2006թ. սեպտեմբերի 27-ին). «18. Կալանավորված անձը, ինչպես նաև այն անձը, ում կալանքի ժամկետը երկարացվել է կամ ում նկատմամբ կիրառվում է այլընտրանքային միջոց, պետք է իրավունք ունենա բողոքարկել ընդունված որոշումը և այդ որոշումն ընդուն-

վելու պահին տեղեկացվի այդ իրավունքի մասին,

19. (1) Կալանքի տակ գտնվող անձը պետք է հատուկ իրավունք ունենա արագացված ընթացակարգով բողոքարկելու իր կալանավորման օրինականությունը դատարանում:

(2) Այդ իրավունքը կարող է իրականացվել կալանքի կիրառման վերաբերյալ որոշման պարբերաբար վերանայման միջոցով, որի ընթացքում կարող են քննարկվել կալանավորված անձի կողմից բարձրացված բոլոր հարցերը»:

Նկատի ունենալով նաև միջազգային իրավական վերոհիշյալ մոտեցումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը որևէ արգելող դրույթ չի բովանդակում որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը դատական ստուգման կարգով բողոքարկված անձի մասնակցության մասին: Ընդ որում, վիճարկվող դրույթի երկրորդ նախադասությամբ բողոքը քննելու օրվա մասին իրազեկումը վերաբերում է հենց կողմին: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 29-րդ կետը բացահայտում է «պաշտպանության կողմ» հասկացության բովանդակությունը, համաձայն որի՝ պաշտպանության կողմի կազմում հանդես են գալիս կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասում «պաշտպան» եզրույթը պետք է մեկնաբանել ու կիրառել պաշտպանության կողմի լիարժեք մասնակցության երաշխավորման տեսանկյունից՝ բացառելով նաև պաշտպան չունենալու դեպքում անձի իրավունքների ոտնահարման հնարավորությունը: Հետևաբար, առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով՝ արդարադատական պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որպեսզի կասկածյալը կամ մեղադրյալը ցանկության դեպքում չզրկվեն լավելու իրենց իրավունքից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլխի իրավադրույթների, ինչպես նաև 6-րդ հոդվածի 29-րդ կետի, 390-րդ հոդվածի համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսդրական կարգավորման մակարդակում նման հնարավորությունն առկա է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝

սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 սեպտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1295



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԱՉԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ԱՍԻՐԲԵԿՅԱՆԻ, ԳԵՂԱՄ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 233.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողներ Վ. Կարապետյանի և Լ. Ամիրբեկյանի ներկայացուցիչ Տ. Եգորյանի, դիմող Գ. Մելիքսեթյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի, նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վաչիկ Կարապետյանի, Լուսինե Ամիրբեկյանի, Գեղամ Մելիքսեթյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի՝ 2016 թվականի մարտի 14-ին և Գեղամ Մելիքսեթյանի՝ 2016 թվականի հունիսի 13-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 8-ի ՄԴԱՌ-58 աշխատակարգային որոշմամբ, հաշվի առնելով, որ Գեղամ Մելիքսեթյանի դիմումի հիման վրա ու Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի դիմումի հիման վրա քննության ընդունված գործերը վերաբերում են նույն հարցին, նշված գործերը միավորել է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը» վերտառությամբ 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է, կամ այն մերժվել է. »:

Վիճարկվող դրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-49-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի հունիսի 10-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի հունիսի 21-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 3-ից:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ա) Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի մասով.

դիմելով դատարան՝ Նաիրա Մկրտչյանը և հայցվորի կողմում հանդես եկող՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձինք՝ Գերասիմ Անդրեասյանը և Սոնյա Կուրդինյանը պահանջել են Վաչիկ Կարապետյանին և Լուսինե Ամիրբեկյանին վտարել Լոռու մարզի Վանաձորի Մոսկովյան փողոցի թիվ 50/4 հասցեի տնատիրությունից: Վաչիկ Կարապետյանը և Լուսինե Ամիրբեկյանը, հակընդդեմ հայցով Նաիրա Մկրտչյանի դեմ դիմելով դատարան, պահանջել են առոչինչ ճանաչել Վաչիկ Կարապետյանի և Նաիրա

Մկրտչյանի միջև կնքված՝ Վանաձորի Մոսկովյան փողոցի թիվ 50/4 հասցեում գտնվող առանձնատան առուվաճառքի պայմանագիրը և կիրառել անվավերության հետևանքներ /քաղաքացիական գործ թիվ ԼԴ/1323/02/13/:

Դիմելով դատարան՝ Նաիրա Մկրտչյանը պահանջել է Լուսինե Ամիրբեկյանից որպես վնասի հատուցում բռնագանձել բանկին վճարված 11.439.768 ՀՀ դրամը և սկսած 01.09.2013 թվականից հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսագումարները, նաև՝ որպես բաց թողնված օգուտ, բռնագանձել 711.360 ՀՀ դրամ: Վաչիկ Կարապետյանը և Լուսինե Ամիրբեկյանը, հակընդդեմ հայցով Նաիրա Մկրտչյանի դեմ դիմելով դատարան, պահանջել են առոչինչ ճանաչել Վաչիկ Կարապետյանի և Նաիրա Մկրտչյանի միջև կնքված՝ Վանաձորի Մոսկովյան փողոցի թիվ 50/4 հասցեում գտնվող առանձնատան առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ 13.10.2008 թվականի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանման կողմից տրված թիվ 1883899 սեփականության վկայականը և 23.08.2011թ. կնքված նախնական առուվաճառքի պայմանագիրը և վերացնել դրանց հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքները՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված հետևանքները՝ շղթայաբար առոչինչ ճանաչելով Լուսինե Ամիրբեկյանի և Նաիրա Մկրտչյանի միջև 23.08.2011 թվականին կնքված՝ Վանաձորի Մոսկովյան փողոցի թիվ 50/4 հասցեում գտնվող առանձնատան նախնական առուվաճառքի պայմանագիրը և 02.08.2013 թվականին Նաիրա Մկրտչյանի և Գերասիմ Անդրեասյանի միջև կնքված պայմանագիրը՝ ճանաչելով Վանաձորի Մոսկովյան փողոցի թիվ 50/4 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Վաչիկ Կարապետյանի սեփականության իրավունքը: Դատարանին խնդրել են նաև հօգուտ հակընդդեմ հայցվորի հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ դրանք հաշվարկելով 30.08.2011 թվականից Նաիրա Մկրտչյանին պարտքով տրված 7.000 ԱՄՆ դոլար գումարի վրա մինչև այն փաստացի վերադարձնելու օրը՝ 30.08.13 թվականը /քաղաքացիական գործով թիվ ԼԴ/1324/02/13/:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 12.05.2014 թվականի որոշմամբ թիվ ԼԴ/1324/02/13 քաղաքացիական գործը միացվել է թիվ ԼԴ/1323/02/13 քաղաքացիական գործին:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 12.03.2015 թվականի վճռով Նաիրա Մկրտչյանի և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձինք՝ Գերասիմ Անդրեասյանի և Սոնյա Կուրդիյանի հայցը՝ տնատիրությունից վտարելու պահանջի մասին, բավարարվել է, իսկ Նաիրա Մկրտչյանի մյուս հայցը՝ գործարքի հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցման և բաց թողնված օգուտի գումարների բռնագանձման պահանջների մասին, ինչպես նաև Վ. Կարապետյանի և Լ. Ամիրբեկյանի հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.06.2015 թվականի որոշմամբ Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի վերաքննիչ բողոքը բավարար-



վել է մասնակիորեն՝ Նաիրա Մկրտչյանի հայցապահանջը բավարարելու մասով դատարանի 12.03.2015 թվականի վճիռը բեկանվել է և այն փոփոխվել է՝ հայցը մերժվել է, իսկ մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իր՝ 26.08.2015թ. որոշմամբ Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ. «Տվյալ դեպքում բողոք բերած անձը, Վերաքննիչ դատարանի 30.06.2015 թվականի որոշման դեմ սույն վճռաբեկ բողոքը բերել է 03.08.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո, և չի ներկայացրել միջնորդություն՝ վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին: ...Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնույմ է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության...»:

Տվյալ գործով Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի ներկայացուցչի կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իր՝ 28.10.2015թ. որոշմամբ ներկայացված բողոքը կրկին թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ. «...Վճռաբեկ դատարանը կրկին անգամ արձանագրելով, որ 03.08.2015 թվականի վճռաբեկ բողոքում ներառված ծանոթագրությունը չի կարող գնահատվել որպես վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն, գտնույմ է, որ երկրորդ անգամ բերված վճռաբեկ բողոքում ներառված միջնորդությամբ բողոք բերած անձը որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու վերաբերյալ, հետևաբար, բողոք բերած անձը բաց է թողել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետն առանց հարգելի պատճառների»:

բ) Գեղամ Մելիքսեթյանի մասով.

դիմելով դատարան՝ Սամվել Մարտիրոսյանը պահանջել է Գեղամ Մելիքսեթյանից բռնագանձել 1.662.000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված փաստաբանական գործունեության վճար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված բանկային տոկոսի գումարն առ 01.07.2013 թվականը՝ 115.400 ՀՀ դրամ՝ բռնագանձումը շարունակելով մինչև պարտավորության լրիվ կատարումը, ինչպես նաև պետական տուրքի գումարը՝ 35.550 ՀՀ դրամ: Գործի նոր քննության արդյունքում Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.02.2016 թվականի որոշմամբ Գեղամ Մելիքսեթյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Տվյալ գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գեղամ Մելիքսեթյանը: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իր՝ 30.03.2016

թվականի որոշմամբ վճարեկ բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ «...վճարեկ բողոքը փոստային ծառայության միջոցով ներկայացրել է 04.03.2016 թվականին (հիմք՝ թիվ RR192153864AM փոստային ծրար), այսինքն՝ օրենքով սահմանված վճարեկ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո, և չի ներկայացրել միջնորդություն վճարեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին: Նման պայմաններում Վճարեկ դատարանը գտնում է, որ վճարեկ բողոքը պետք է թողնել առանց քննության...»:

Տվյալ գործով Գեղամ Մելիքսեթյանը կրկին վճարեկ բողոք է ներկայացրել: ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իր 20.04.2016թ. որոշմամբ ներկայացված բողոքը կրկին թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ. «Տվյալ դեպքում սույն գործում առկա թիվ RR202827608AM փոստային անդորրագրի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի 01.02.2016 թվականի որոշումը Գեղամ Մելիքսեթյանին է ուղարկվել 02.02.2016 թվականին (հատոր 3, գ.թ. 138), իսկ հետադարձ ծանուցման փոստային անդորրագրի համաձայն՝ Գեղամ Մելիքսեթյանը Վերաքննիչ դատարանի 01.02.2016 թվականի որոշումը ստացել է 04.02.2016 թվականին (հատոր 3-րդ գ.թ. 139), Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ վերջինիս կողմից փոստային ծառայության միջոցով վճարեկ բողոք է ներկայացվել 04.03.2016 թվականին (հիմք՝ թիվ RR192153864AM փոստային ծրար), այսինքն՝ օրենքով սահմանված վճարեկ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո, որը ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.03.2016 թվականի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ օրենքով սահմանված վճարեկ բողոք բերելու ժամկետը բացթողելու և վճարեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չներկայացնելու հիմքերով, այնուհետև սույն վճարեկ բողոքը փոստային ծառայության միջոցով ներկայացվել է 08.04.2016 թվականին (հիմք՝ թիվ RR205243999AM փոստային ծրար), և պատճառաբանելով, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.02.2016 թվականի որոշումը ստացել է 04.02.2016 թվականին և ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.03.2016 թվականի §Վճարեկ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ որոշումը ստանալուց անմիջապես հետո ձեռնամուխ է եղել բաց թողնված ժամկետ հարգելի համարելու միջնորդությունը կազմելուն և նույն օրն այն ուղարկել է ՀՀ վճարեկ դատարան, միջնորդել է հարգելի ճանաչել վճարեկ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառը և այն վերականգնել: Մինչդեռ Վճարեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի միջնորդության պատճառաբանությունը հիմնավոր չէ և հիմք չէ դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու համար: Նման պայմաններում Վճարեկ դատարանը գտնում է, որ վճարեկ բողոքը պետք է թողնել առանց քննության...»:

3. Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթը՝ դատական պրակտիկայում

դրան տրված մեկնաբանությամբ, չի ապահովում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումն այն պատճառաբանությամբ, որ այդ դրույթի կիրառումը հանգեցնում է իրավական անորոշության:

Իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողները, վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը, նշում են, որ առանց որևէ ողջամիտ և օբյեկտիվ արդարացման խտրական վերաբերմունք է սահմանվում դատական ակտի բողոքարկման համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ խնդրանք ներկայացրած անձանց միջև. անձինք, ովքեր դատական ակտի բողոքարկման համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ խնդրանքը վերնագրել են որպես միջնորդություն, և անձինք, ովքեր նշված խնդրանքն ուղղակի շարադրել են առանց այն հատուկ վերնագրելու:

Ըստ դիմողների՝ «միջնորդել» և «խնդրել» եզրույթները նույն իմաստն են պարունակում, մինչդեռ Վճռաբեկ դատարանի կողմից սույն դիմումով վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությամբ՝ այն ղեկավարում, երբ դատարանին հասցեագրված խնդրանքը վերնագրված չէ որպես միջնորդություն և/կամ բողոքում տեղակայված չէ համապատասխան հատվածում, այն չի հանդիսանում միջնորդություն:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-630, ՍԴՈ-690, ՍԴՈ-753, ՍԴՈ-902 և ՍԴՈ-1052 որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած համապատասխան իրավական դիրքորոշման տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողները նշում են, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու ձևը և կարգը սահմանված չեն, ինչը հանգեցնում է իրավական անորոշության, որի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել են դիմողների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Վերլուծելով վիճարկվող դրույթը՝ դիմողները եզրահանգել են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 3-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետը ողջամիտ է, այն լիովին բավարար է սովորական հանգամանքներում արդյունավետորեն իրականացնելու համապատասխան բողոք ներկայացնող անձի դատական պաշտպանության իրավունքը:

Պատասխանող կողմը նշում է, որ անձի կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի բացթողման հանգա-

մանքը տվյալ հիմքով գնահատելու համար անհրաժեշտ է որոշակի ապացույցների առկայություն, որոնք կհավաստեն, որ անձն իր կամքից անկախ, օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել իրացնելու իր բողոքարկման իրավունքը: Ընդ որում, այդ ապացույցները ենթակա են իրավական գնահատականի դատարանի կողմից:

Պատասխանող կողմն իրավական որոշակիության պահպանման նկատառումներով կարևորում է միջնորդության պահանջի առկայությունը և ընդգծում, որ. «...առանց միջնորդության և միջնորդության հիմքում ընկած ապացույցների դատարանը չի կարող գնահատել, թե ինչ պատճառներով է անձը բաց թողել օրենքով սահմանված ժամկետը, առավել ևս, դա հնարավոր չէ ժամկետն ինքնին երկարացված համարելու օրենքի ուժով առանց դատարանի իրավական գնահատականի»:

Արձանագրելով, որ սույն գործով վիճարկվող նորմի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254, ՄԴՈ-1268, ՄԴՈ-1290 որոշումներով քննության առարկա դարձած համապատասխան նորմերի իրավակարգավորման տրամաբանության հետ, փաստելով, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով, պատասխանողը հանգում է այն հետևությանը, որ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (*ex jure*) հարգելի ճանաչելու համար պատճառաբանված միջնորդության և համապատասխան ապացույցների առկայությունն անհրաժեշտություն է: Ընդ որում, պատասխանողի կարծիքով, նշված բովանդակային պահանջի բավարարման դեպքում բողոքը չի կարող առանց քննության թողնվել միայն այն ձևական պահանջ նկատառումով, որ առկա չէ «միջնորդություն», «միջնորդագիր» կամ այլ համարժեք ձևակերպում:

Միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը պարունակում է օրենքի բաց, քանի որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վճարեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և որոշակի ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն: Այս կապակցությամբ պատասխանողը գտնում է, որ սույն գործով հարկ է կիրառել ՄԴՈ-1290 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համարում է խնդրահարույց՝ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության տեսանկյունից՝ այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վճարեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո օրենքով սահմանված ժամկետում թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

5. ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավանորմի

սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է համարում ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ ՀՀ Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից,

- ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

6. Սույն գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1249 որոշմամբ քննության առարկա դարձած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա դարձած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՄԴՈ-1268 որոշմամբ քննության առարկա դարձած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իրավակարգավորումների տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներով քննության առարկա իրավակարգավորումների և սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորումների առնչությամբ:

Մասնավորապես, իր՝ ՄԴՈ-1249 որոշման մեջ սահմանադրական դատարանը նշել և ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում կրկին արձանագրել է հետևյալը. «...երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին **միջնորդությունն օրյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն** է, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: ... երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ

դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

7. Նկատի ունենալով դատական ակտերի բողոքարկման ժամկետների և այդ ժամկետներից հետո բերված բողոքները վարույթ ընդունելու, դրանք վերադարձնելու կամ առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերի իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը, այդ իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների միասնականությունը, սույն գործի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատական պրակտիկայի առկա վիճակի ուսումնասիրությանը: Այսպես, Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի և ԼԴ/1323/02/13 քաղաքացիական գործի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 2015 թվականի օգոստոսի 26-ին կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում, մասնավորապես նշելով, որ բողոք բերած անձը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.06.2015 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոքը բերել է 03.08.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո, և չի ներկայացրել միջնորդություն՝ վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին: Այնուհետև, կրկին բերված վճռաբեկ բողոքի ուսումնասիրման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 2015 թվականի հոկտեմբերի 28-ին կրկին կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ 03.08.2015 թվականի վճռաբեկ բողոքում ներառված ծանոթագրությունը չի կարող գնահատվել որպես վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն: Համանման իրավիճակ է առկա նաև Գեղամ Մելիքսեթյանի գործի մասով (քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0976/02/13):

Արձանագրելով, որ դատարանը հանդես է գալիս որպես արդարադատություն իրականացնող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի կողմից դատավարական ակնկալվող գործողության կատարման, այն է՝ բաց թողնված դատավարական ժամկետն իրավունքի ուժով (ex jure) վերականգնելու համար անհրաժեշտ է, որպեսզի բողոք բերած անձը գրավոր միջնորդի համապատասխան գործողության կատարումը: Հետևաբար, համապատասխան միջնորդության առկայությունն այն անհրաժեշտ նախապայմանն է, որը վկայում է բողոք բերած անձի կողմից ակնկալվող գործողությունը հայցելու մասին, ինչն էլ բավարար հիմքերի

առկայության դեպքում դատարանի համար առաջացնում է բաց թողնված դատավարական ժամկետն իրավունքի ուժով (ex jure) վերականգնելու պարտականություն:

Քննության առարկա գործը դիտարկելով վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդիրը ոչ միայն «ծանոթագրություն» բառն է, այլև այն հանգամանքը, թե շարադրանքի բովանդակությունը որքանով է հնարավորություն ընձեռում այն դատարանի կողմից որպես միջնորդություն ընկալվելու համար: Իսկ այդպիսին ընկալվելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է, որպեսզի բողոք բերած անձը հստակորեն ներկայացնի իր միջնորդությունը: Այս առումով հատկանշական է այն, որ երկու գործերի դեպքում էլ, երբ վճարեկ դատարանն առանց քննության է թողել վճարեկ բողոքները, կրկին անգամ ներկայացված վճարեկ բողոքներում բողոք բերած անձինք արդեն իրենց խնդրանքը շարադրել են այնպես (ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային առումով), որ վճարեկ դատարանի կողմից այն ընկալվել և գնահատվել է արդեն որպես միջնորդություն: Բացի դրանից, ԼԴ/1323/02/13 քաղաքացիական գործով վճարեկ բողոքում, ի տարբերություն բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու հատվածի, որը ներկայացված է որպես «ծանոթագրություն», պետական տուրքի գծով խնդրանքը ներկայացված է որպես միջնորդություն՝ «միջնորդում եմ» ձևակերպմամբ: Հետևաբար, օրենքով սահմանված միջնորդելու պարտականության բարեխիղճ կատարման փոխարեն այն չկատարելը չի կարող դիտարկվել որպես դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացման խոչընդոտ:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ դատական պրակտիկայում ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները դեռևս ոչ լիարժեք են հաշվի առնվում, ինչը կարող է հանգեցնել արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման արգելափակման վտանգի:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վիճարկվող դրույթը հստակ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վճարեկ բողոքն առանց քննության թողնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և որոշակի ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն, ինչը փաստում է նաև պատասխանող կողմը: Այս տրամաբանությունն է ընկած եղել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքում, ինչը ՀՀ սահմանադրական դատարանի 28 հունիսի 2016թ. ՄԴՈ-1290 որոշմամբ ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված

Ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Այդուհանդերձ, դիմողներից Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի նկատմամբ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև Վճռաբեկ դատարանը բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով Վաչիկ Կարապետյանի և Լուսինե Ամիրբեկյանի վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, սակայն կրկին անգամ ներկայացված վճռաբեկ բողոքի դեպքում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության ոչ թե բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով, այլ այն հիմքով, որ. «...երկրորդ անգամ բերված վճռաբեկ բողոքում ներառված միջնորդությամբ բողոք բերած անձը որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու վերաբերյալ, հետևաբար, բողոք բերած անձը բաց է թողել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետն առանց հարգելի պատճառների»:

Վճռաբեկ դատարանը համանման որոշում է կայացրել նաև Գեղամ Մելիքսեթյանի թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով՝ 20.04.2016թ. որոշման մեջ արձանագրելով, որ. «... Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի միջնորդության պատճառաբանությունը հիմնավոր չէ և հիմք չէ դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու համար»: Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը որոշել է. «Մերժել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և այն վերականգնելու մասին Գեղամ Մելիքսեթյանի միջնորդությունը»:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ իր ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254, ՄԴՈ-1268 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը դեռևս համապատասխան օրենսդրական համալիր և միասնական կանոնակարգումների չի ենթարկվել, և այս հանգամանքն արտացոլվել է նաև պատասխանող կողմի ներկայացրած բացատրության մեջ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում նույնաբնույթ հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ



պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

6 սեպտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1296



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ  
ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի,  
Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,  
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավա-  
խորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ  
հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ  
օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի  
դիմումի հիման վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց  
սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝  
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությո-

յան հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները, վարչական գործը պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ՀՀ կառավարության գրավոր դիրքորոշումը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալ Ս. Սախյանի պարզաբանումները, ինչպես նաև հետազոտելով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՕ-1-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի փետրվարի 4-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի փետրվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ին:

Ընդունման պահից ի վեր օրենքի 9-րդ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել համապատասխանաբար «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-29-Ն, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-55-Ն, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-198-Ն և «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-14-Ն ՀՀ օրենքներով:

Հիշյալ օրենքներից ՀՕ-29-Ն և ՀՕ-14-Ն օրենքներով նախատեսված փոփոխությունները և լրացումները օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասին վերաբերելի չեն:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 10.06.2014 թվականին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 21.06.2014 թվականին ստորագրված և 01.07.2014 թվականին ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-55-Ն ՀՀ օրենքով օրենքի 9-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում:

Սույն մասով նախատեսված անձանց՝ Հայաստանի Հանրապետության

դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրան կատարմամբ սահմանված հավելվածարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով:

Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 01.12.2014 թվականին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 20.12.2014 թվականին ստորագրված և 01.01.2015 թվականին ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-198-Ն ՀՀ օրենքով օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

19.06.2015 թվականին Լ. Աթանյանը և Մ. Սարոյանը հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ խնդրելով պարտավորեցնել պատասխանողին կատարել կենսաթոշակի վերահաշվարկ՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-198-Ն ՀՀ օրենքին համապատասխան:

Լ. Աթանյանի և Մ. Սարոյանի՝ որպես դատավորների լիազորությունները դադարել են 2015 թվականի մարտին:

Հիմք ընդունելով օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Լ. Աթանյանի և Մ. Սարոյանի՝ որպես դատավորի լիազորությունները դադարելու պահի դրությամբ գործող իրավակարգավորումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայցվորների կենսաթոշակը հաշվարկելիս որպես ելակետ հիմք է ընդունել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող ամսվա՝ 2014 թվականի հունիսի աշխատավարձը, իսկ կենսաթոշակի առավելագույն չափը որոշելիս՝ 2014 թվականի հունիսին գործող դատավորի պաշտոնային դրույքաչափը:

Դատարանի՝ 29.06.2015 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է համահայցվորներին:

10.07.2015 թվականին համահայցվորները, վերացնելով դատարանի մատնանշած թերությունները, կրկին հայցադիմում են ներկայացրել դատարան:

Դատարանի 17.07.2015 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

10.02.2016 թվականին դատարանի նախնական դատական նիստի ընթացքում հայցվոր Մ. Մարոյանի կողմից կատարվել է հայցի հիմքի փոփոխություն, ինչի արդյունքում հայցապահանջը ձևակերպվել է հետևյալ բովանդակությամբ. «պարտավորեցնել պատասխանողին կատարել կենսաթոշակի վերահաշվարկ՝ հիմք ընդունելով հայցվորների՝ որպես դատավոր պաշտոնավարման վերջին ամսվա /2015թ. փետրվար/ աշխատավարձը և դրույքաչափը:

23.03.2016 թվականին հայցվորները դատարանին ներկայացրել են միջնորդություն՝ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ հիշյալ վարչական գործով կիրառման ենթակա՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությանը հարցը որոշելու խնդրանքով:

Արձանագրելով, որ դատավորի կենսաթոշակի հաշվարկի բանաձևը սահմանված է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով, և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայցվորների կենսաթոշակը հաշվարկել է այդ նորմի հիման վրա՝ դատարանը գտել է, որ թիվ ՎԴ/2688/05/15 վարչական գործի լուծումը կարող է իրականացվել միայն նշված նորմի կիրառմամբ և բավարարել է հայցվորների՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ հիշյալ միջնորդությունը, կասեցրել է վերը նշված վարչական գործի վարույթը և որոշում է կայացրել դիմելու ՀՀ սահմանադրական դատարան:

3. Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են հետևյալին.

դիմողի գնահատմամբ՝ ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 94-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավադրույթը ենթադրում է, որ Սահմանադրությամբ և օրենքներով պետք է ստեղծվեն անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ դատարանների անկախության ապահովման համար, իսկ դատարանների անկախությունը, ի թիվս այլնի, ենթադրում է սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ և բավարար են դատարանների և ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար:

Կենսաթոշակի՝ որպես դատավորի անկախության սոցիալական երաշխիքի վերաբերյալ մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում դիմողը հանգում է այն եզրակացությանը, որ գործում են դատավորի՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին

կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու, ինչպես նաև դատավորների արդեն իսկ ձեռք բերած երաշխիքների նվազեցման արգելքի միջազգայնորեն ընդունված սկզբունքները, որոնք իրենց արտացոլումն են ստացել նաև սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության և Լիտվայի սահմանադրական դատարանների պրակտիկայում:

Դատավորի սոցիալական ապահովությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգող ՀՀ օրենսդրության փոփոխությունների վերլուծության արդյունքում դիմողը հանգում է այն եզրակացությանը, որ՝ «...մինչև վիճարկվող իրավակարգավորումների ուժի մեջ մտնելը դատավորի կենսաթոշակի հետ կապված՝ տարբեր ժամանակահատվածներում գործած իրավակարգավորումների համար ընդհանրական և անփոփոխ է եղել մի սկզբունքային տարր, այն է՝ դատավորի կենսաթոշակի համար ելակետ է ընդունվել իր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձը: Արդյունքում, ... ապահովվում էր հնարավորինս ողջամիտ հարաբերակցություն որպես դատավոր ստացած վարձատրության և կենսաթոշակի միջև, որպիսի պայմաններում կենսաթոշակը կատարում էր դատավորի կողմից անկախ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման ստեղծելու հատուկ գործառույթը»:

Դիմողի գնահատմամբ՝ դատավորի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող գործող իրավակարգավորումը, ի տարբերություն նախկին իրավակարգավորումների, նվազեցնում է դատավորի սոցիալական պաշտպանության երաշխիքը, ինչպես նաև, դիմողի կարծիքով, դիտարկվող օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով կատարված օրենսդրական փոփոխությունը չի ապահովում ինչպես ՀՀ միջազգային պարտավորությունների, այնպես էլ ՀՀ սահմանադրական և օրենսդրական զարգացումների տեսանկյունից դատավորի սոցիալական անկախության երաշխիքի հետագա ամրապնդումը և նահանջ է դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու սկզբունքից:

Դիմումի շրջանակներում դիմողը բարձրացնում է նաև այն հարցը, որ վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում դատավորների միջև, ըստ տարբեր ատյանների, տարբերակում չի կատարվում, և համաձայն վիճարկվող իրավակարգավորման՝ 01.07.2014 թվականի դրությամբ առաջին ատյանի դատավորի պաշտոն զբաղեցրած, հետագայում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատավոր նշանակված դատավորի կենսաթոշակի համար հիմք է ընդունվում առաջին ատյանի դատարանի դատավորի աշխատավարձի չափը: Այս առնչությամբ դիմողը հայտնում է, որ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում ընդունված է այն սկզբունքը, որ տարբերակված մոտեցում պետք է ցուցաբերվի տարբեր ատյանների դատավորների նյութական և սոցիալական երաշխիքների միջև:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկների՝ դիմողը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ինչպես կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորման բնագավառի վերաբերյալ, այնպես էլ դատավորների կենսաթոշակների վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, կենսաթոշակի՝ որպես դատավորի անկախության սոցիալական երաշխիքի վերաբերյալ մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր և օտարերկրյա պետությունների սահմանադրական արդարադատության մարմինների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներ:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ թիվ ՎԴ/2688/05/15 վարչական գործով վեճի լուծման համար կիրառելի՝ դիտարկվող օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված իրավակարգավորումը՝ երկրորդ և երրորդ պարբերություններում առկա՝ «մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը» ձևակերպումների մասով հակասում է ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածին:

4. Պատասխանողը գտնում է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 94-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, կասկածի տակ չդնելով դատավորների կենսաթոշակի՝ վերջիններիս անկախության սոցիալական երաշխիք լինելու հանգամանքը, անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ինչպես դատավորների վարձատրության, այնպես էլ նրանց տրամադրվող կենսաթոշակի չափի՝ որպես սոցիալական երաշխիքի ապահովման պատշաճության գնահատական կարող է տրվել՝ այն համեմատելով տվյալ երկրում առկա այլ տնտեսական գործոնների հետ, ինչպիսին, օրինակ, միջին աշխատավարձն է:

Այս կապակցությամբ ընդգծելով, որ դատավորների պատշաճ վարձատրության չափանիշները սահմանվում են Արևելյան գործընկերության պետություններում դատական բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում հրապարակված 2013 թվականի զեկույցում, ներկայացնելով նշված զեկույցի վերաբերյալ իր վերլուծությունները, պատասխանողն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում դատավորները բավականին բարձր են վարձատրվում, հետևաբար՝ այդ վարձատրությանը մոտ՝ դատավորի պաշտոնային դրույքաչափի՝ օրենքով սահմանված 92 տոկոսի չափն ապահովում է անհրաժեշտ սոցիալական երաշխիքներ:

Արձանագրելով, որ դիմողը որևէ վիճակագրություն կամ հաշվարկ չի ներկայացրել՝ պատասխանողը գտնում է, որ դիմողը բարձրացրել է կենսաթոշակի հաշվարկման բանաձևի նպատակահարմարության հարց: Ըստ պատասխանողի՝ դիմողը հաշվի չի առել, որ եթե նախկին իրավակարգավորմամբ աշխատանքային կենսաթոշակը սահմանվում էր որպես դատավորի վերջին

գրադեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի 75 տոկոսի չափով, ապա ներկայումս՝ 92 տոկոսի չափով, ինչը, ըստ պատասխանողի, բարելավում է, այլ ոչ թե նվազում:

Անդրադառնալով կենսաթոշակի բանաձևի ընտրությանը՝ պատասխանողը գտնում է, որ այդ բանաձևի ընտրությունը պետության հայեցողության սահմաններում է, քանի դեռ այն չի հակասում ՀՀ Սահմանադրության պահանջներին կամ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին:

Ըստ պատասխանողի՝ եթե պետությունը դատավորի կենսաթոշակի չափը պայմանավորի ոչ թե կոնկրետ ժամանակաշրջանում դատավորի ստացած աշխատավարձով, այլ վերջին աշխատավարձի չափով, ապա յուրաքանչյուր դեպքում դատավորների աշխատավարձի անգամ չնչին բարձրացումը մեխանիկորեն բերելու է կենսաթոշակի չափի բարձրացման, ինչը կարող է չհամապատասխանել պետության ֆինանսական հնարավորություններին:

Անդրադառնալով քննարկվող նորմերի՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանության հարցին՝ պատասխանողը նկատում է, որ համապատասխան միջազգային փաստաթղթերը՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ Rec(2010)12 հանձնարարականը, «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիան չեն կարևորում կենսաթոշակի հաշվարկման բանաձևը, այլ կարևորում են այն հանգամանքը, որ դատավորի կենսաթոշակը գտնվի ողջամիտ հարաբերակցության մեջ դատավորի պաշտոնավարման ժամանակ ստացած աշխատավարձի հետ: Հետևաբար, ըստ պատասխանողի՝ միջազգային փաստաթղթերում առկա չէ որևէ պահանջ, որ դատավորի կենսաթոշակի հաշվարկման հիմքում դրվի դատավորի պաշտոնավարման վերջին ամսում ստացած աշխատավարձը:

Միաժամանակ, պատասխանողը չի ժխտում, որ տարիներ անց դատավորների աշխատավարձի կտրուկ ավելացման պայմաններում գործող իրավակարգավորումը կարող է նվազեցնել դատավորների սոցիալական պաշտպանության երաշխիքները, ինչի պարագայում, ըստ պատասխանողի, օրենսդիրն ուշադրություն կդարձնի այդ հանգամանքի վրա և կքննարկի կենսաթոշակի ներկայումս ընդունված բանաձևի փոփոխության տարբերակները:

5. ՀՀ կառավարությունը Սահմանադրական դատարան ներկայացրած իր գրավոր դիրքորոշմամբ փաստում է, որ ՀՀ վարչական դատարանը Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ իր որոշման մեջ հիմնավոր փաստարկներ չի ներկայացրել իր վարույթում գտնվող գործով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ հայցվորների միջնորդությունը բավարարելու կապակցությամբ, պատշաճ չի հիմնավորել վիճարկվող նորմի և գործի ելքի միջև անմիջական պատճառահետևանքային կապը:

Վերը նշվածի կապակցությամբ ՀՀ կառավարությունն առաջարկում է սույն



գործի քննությունը մերժել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, այն է՝ դիմողն իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան:

Այնուամենայնիվ, անդրադառնալով ՀՀ վարչական դատարանի որոշման պատճառաբանական մասին՝ ՀՀ կառավարությունը հարկ է համարում նշել, որ դատավորների կենսաթոշակին վերաբերող չափանիշների շարքում չեն ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությունն իր գրավոր դիրքորոշման մեջ ներկայացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք գործերով կայացված վճիռներից առանձին հատվածներ՝ հիմնավորելու համար սույն գործով վիճարկվող իրավակարգավորման Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ լինելու հանգամանքը:

6. Հաշվի առնելով դիմող և պատասխանող կողմերի փաստարկները, մասնավորապես այն, որ ըստ դիմողի՝ գործող իրավակարգավորումը, ի տարբերություն նախկին իրավակարգավորումների, նվազեցնում է դատավորի սոցիալական պաշտպանության երաշխիքը, իսկ ըստ պատասխանողի՝ դիմողն իր դիրքորոշումը փաստարկել է առանց որևէ վիճակագրություն կամ հաշվարկ ներկայացնելու, սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում **կատարել նախկին և գործող իրավակարգավորումների համեմատական վերլուծություն և դրա հիման վրա պարզել, թե որքանով է վեճի առարկա դրույթն ամրապնդում կամ թուլացնում դատավորի սոցիալական պաշտպանության երաշխիքը:**

Այսպես, «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 18.05.2007 թվականին համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի:

«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի՝ անմիջականորեն ուժը կորցնելուն նախորդող խմբագրությամբ տեքստի 1-ին և 2-րդ մասերի համաձայն. «Դատավորն ունի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք:

**Դատավորի պաշտոնում 10 և ավելի տարի աշխատած** և սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատված քաղաքացու կենսաթոշակի նկատմամբ սահմանվում է ամենամսյա հավելավճար նրա, որպես դատավոր, զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի **75 տոկոսի և պետական կենսաթոշակի տարբերության չափով**, որը վճարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին»:

«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների վերլուծությունից բխում է, որ դիտարկվող օրենքը կենսաթոշակային հարաբերություններում դատավորի պաշտոն զբաղեցրած և կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց՝ պայմանականորեն **բաժանել էր երկու խմբի**. անձինք, որոնք

կենսաթոշակի անցնելիս չունեն դատավորի պաշտոնում 10 և ավելի տարվա աշխատանքային ստաժ, և անձինք, որոնք կենսաթոշակի անցնելիս ունեն դատավորի պաշտոնում 10 և ավելի տարվա աշխատանքային ստաժ: **Եթե առաջին խմբի անձանց կենսաթոշակի չափը հաշվարկվում էր «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, ապա երկրորդ խմբի անձանց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով հաշվարկվող կենսաթոշակի չափին ավելացվում էր ամենամսյա հավելավճար նրա՝ որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսի և պետական կենսաթոշակի տարբերության չափով:**

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ է մտել 18.05.2007 թվականին, սակայն մինչև 01.01.2013 թվականը այն չէր պարունակում դատավորի կենսաթոշակի իրավունքը կարգավորող նորմեր. դատավորի կենսաթոշակի իրավունքը կարգավորող նորմերը նշված ժամանակահատվածում ամրագրված էին սկզբում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՕ-519-Ն ՀՀ օրենքով, որն ուժը կորցրել է 01.01.2013 թվականին, այնուհետև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՕ-243-Ն ՀՀ օրենքով:

01.01.2013 թվականին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-246-Ն ՀՀ օրենքը, որով ՀՀ դատական օրենսգիրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 75.1-րդ հոդվածով.

**«1. Որպես դատավոր առնվազն 10 տարի պաշտոնավարած անձին, որի լիազորությունները դադարեցվել են սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով, ինչպես նաև 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, նշանակվում է կենսաթոշակ վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի ընդհանուր գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով:**

2. Դատավորի պաշտոն զբաղեցրած անձին նշանակված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:

3. Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ դատավորի պաշտոնային դրույքաչափը բարձրացվելու դեպքում՝ պաշտոնային դրույքաչափի բարձրացմանը համամասնորեն:

4. Դատավորի պաշտոն զբաղեցրած անձի միջին աշխատավարձը և ստաժը հաշվարկելու, կենսաթոշակը նշանակելու (վերահաշվարկելու), վճարելու կարգը, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Նշված հոդվածն ուժը կորցրել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.07.2014 թվականից:

ՀՀ դատական օրենսգրքի 75.1-րդ հոդվածի ուժը կորցրած ճանաչվելը պայմանավորված էր 01.07.2014 թվականից ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՕ-1-Ն ՀՀ օրենքով: Նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

« 1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի՝

...3) դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով...»:

«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերլուծությունից բխում է, որ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից 10.06.2014թ. ընդունված ՀՕ-55-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. փետրվարի 4-ին ընդունված ՀՕ-1-Ն ՀՀ օրենքով դատավորների համար սահմանվում էր **կենսաթոշակի իրավունք՝ 10 տարվա ստաժի առկայության և ՀՀ դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով: Միաժամանակ, կենսաթոշակի չափի հաշվարկման ընդհանրական հիմք էր սահմանվում հիշյալ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգը**, համաձայն որի.

«1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է  $Կ=Հ*Գ+ՄՄ*ՄՄԱ$  բանաձևով, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ),

Գ-ն՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը (այսուհետ՝ գործակից),

ՄՄ-ն՝ մասնագիտական ստաժը,

ՄՄԱ-ն՝ մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:

2. 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մասնագիտական ստաժում հաշվառվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները:

3. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը, գործակիցը փոխվելու դեպքում:

4. Մասնագիտական ստաժը հաշվարկելու կարգը (մասնագիտական ստա-

ժուր հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Նման իրավակարգավորման պայմաններում **ակնհայտ էր երկու խնդիր.**

1. տարբերակված մոտեցում չէր դրսևորվում դատավորի պաշտոն զբաղեցրած այն անձանց նկատմամբ, ովքեր նոր օրենքի ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ ունեին 10 և ավելի տարվա աշխատանքային ստաժ,

2. տեղի էր ունենում նման ստաժ ունեցող դատավորների սոցիալական ապահովության երաշխիքների կտրուկ վատացում՝ այն դեպքում, երբ նրանք կենսաթոշակի իրավունքն արդեն իսկ ձեռք էին բերել մինչև նոր օրենսդրական կարգավորումները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սկզբունքորեն ստեղծված իրավիճակի հաղթահարման նպատակ է հետապնդել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի լրացումը 21.06.2014թ. ՀՕ-55-Ն ՀՀ օրենքով, որով լուծվում է հետևյալ խնդիրը. կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած դատավորների համար թույլ չտալ սոցիալական պաշտպանվածության երաշխիքների թուլացում և նրանց նկատմամբ չտարածել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Տվյալ խնդիրը գործնականում լուծելի է դարձնում հիշյալ օրենքի 9-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, համաձայն որի. «Սույն մասով նախատեսված անձանց՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և գրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով»:

Նման իրավակարգավորումը որոշակի երաշխիք է նախորդ իրավակարգավորումների պայմաններում կենսաթոշակի իրավունք ձեռք բերած դատավորների սոցիալական պաշտպանության երաշխիքները պահպանելու համար:

Այսուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորմամբ հանդերձ՝ առկախ մնացին որոշակի խնդիրներ՝ կապված առնվազն 10 և ավելի տարի ստաժ ունեցող դատավորների կենսաթոշակային հարցերի գործնական լուծման հետ: Մասնավորապես, օրենսդրի կողմից «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրվեց նաև հետևյալ դրույթը. «Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի

չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»: ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **նախ**՝ տվյալ դրույթը որոշակի անհամապատասխանության մեջ է գտնվում նույն մասում ամրագրված այն դրույթի հետ, համաձայն որի. «Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում»:

**Երկրորդ**՝ տվյալ դրույթն օրենսդրական փոփոխությունների ընդհանուր նպատակից բխող որևէ խնդիր չի լուծում և իրավակիրառ պրակտիկայում տարրնթեռնումների տեղիք է տալիս:

**Երրորդ**՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված հաշվարկները վկայում են, որ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի, ՀՀ վերաքննիչ ու ՀՀ վճռաբեկ, ինչպես նաև վարչական դատարանների դատավորների համար, ովքեր 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ 10-ից ավելի տարի ստաժ ունեն, կախված այդ պաշտոնում աշխատանքային ստաժի տևողությունից նախկին և ներկա աշխատավարձերի հիմքով կենսաթոշակն հաշվարկելիս սոցիալական ապահովության երաշխիքների ոչ համաչափ տարբերակում է առաջանում:

Նման իրավիճակը պետք է հաղթահարվի, մասնավորապես՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում՝ նկատի ունենալով, որ այն անձանց համար, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում, կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվարկային հիմք է ընդունվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը՝ եթե այն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը: Ընդ որում, ակնհայտ է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «սույն օրենքի» արտահայտությունը վերաբերում է հենց այդ օրենքին:

7. Խնդիրը դիտարկելով նաև դատավորների անկախության սոցիալական երաշխիքների վերաբերյալ միջազգային չափորոշիչների համատեքստում՝ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ 1998թ. ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի՝ դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ապահովման մասին 6.4. կետի՝ «Կարգավիճակը, մասնավորապես, դատավորներին ապահովում է ... ծերության թոշակով, որի չափը պետք է հնարավորինս մոտ լինի դատական համակարգում ստացած նրա վերջին աշխատավարձին»: Նույն սկզբունքն է արտացոլված նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության,

արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ Rec(2010)12 հանձնարարականում:

Նշված մոտեցումներից բխում է, որ, մասնավորապես, խարտիան չի սահմանում դատավորի կենսաթոշակի առավել կոնկրետացված չափ և օգտագործելով «հնարավորինս մոտ լինի» բառակապակցությունը՝ հաշվի է առել տվյալ պետության սոցիալտնտեսական զարգացածության մակարդակը: Սակայն դա չի նշանակում, որ ազգային մակարդակով իրավակարգավորումը կարող է

ըջանցել միջազգային իրավունքում հանրաճանաչ այս կարևոր սկզբունքը: Դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց սոցիալական երաշխիքների իրավական ինստիտուտը կատարում է երկու սահմանադրաիրավական գործառույթ՝ այն, մի կողմից, հանդիսանում է հիշյալ անձանց սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք, մյուս կողմից՝ ապահովում է դատավորների և դատարանների անկախության սահմանադրաիրավական սկզբունքի իրացումը: Ուստի իրավակարգավորման հետագա զարգացումները, դատարանի գործառութային, կառուցակարգային ու նյութական անկախության երաշխիքների ապահովման հետ մեկտեղ, պետք է միտված լինեն դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ամրապնդմանը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-647, ՄԴՈ-723, ՄԴՈ-881 որոշումների մեջ հանգամանալից անդրադարձել է դատավորների աշխատավարձի և կենսաթոշակի ողջամիտ հարաբերակցության վերաբերյալ միջազգային սկզբունքին: Սահմանադրական դատարանը կենսաթոշակի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքի պահպանման խնդիրներին անդրադառնալով, մասնավորապես շեշտել է, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի առաջին մասի /2005թ. խմբագրությամբ/ պահանջներից ու դատավորների անկախության սոցիալական երաշխիքների միջազգային չափորոշիչներից չի բխում այն հանգամանքը, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով համարժեք երաշխիքներ չեն նախատեսվում 2014 թվականի հուլիսի մեկից հետո կենսաթոշակի իրավունք ձեռք բերող դատավորների անկախության սոցիալական երաշխիքների ապահովման ուղղությամբ, և այս հանգամանքը պահանջում է իրավակարգավորման մոտեցումների վերանայում: Բացի դրանից, հիմնախնդրի առնչությամբ 2014թ. իրականացված նոր իրավակարգավորումների փաթեթում անտեսվել է նաև դատավորի անկախության սոցիալական երաշխիքի կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ սոցիալական ապահովության վերաբերյալ նրա իրավաչափ սպասելիքների իրացման երաշխավորումը, ինչը նույնպես օրենսդրի կողմից սկզբունքային և համակարգային վերանայման անհրաժեշտություն ունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը՝ երկրորդ և երրորդ պարբերություններում «մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը» ձևակերպումների մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 սեպտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1302



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԵՎ ՎԱՐԴՈՒՀԻ ՄՎՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՄԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
1801-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ 15-ԲԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

20 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների ներկայացուցիչներ Գ. Պետրոսյանի և Տ. Եզորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավա-  
խորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ  
Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-  
ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատա-  
րանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարտգեզ Գասպարիի և  
Վարդուհի Մկրտչյանի դիմումների հիման վրա՝ Վարչական իրավախախտում-  
ների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասի՝ Հայաստանի  
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Վարտգեզ Գասպարիի՝ 2016 թվականի ապրիլի 5-  
ին և Վարդուհի Մկրտչյանի՝ 2016 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ սահմանադրա-



կան դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի օգոստոսի 25-ի ՄԴԱՌ-78 աշխատակարգային որոշումով որոշել է վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելը» վերտառությամբ 1801-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 15-րդ մասը սահմանում է.

«15. Հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության՝ օրենքով սահմանված պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Վերոհիշյալ հոդվածը գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում ամրագրվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-73-Ն օրենքով:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ա) Վարտգեզ Գասպարիի դիմումի մասով.

դիմելով դատարան՝ ՀՀ ոստիկանությունը (Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժինը) պահանջել է Վարտգեզ Գասպարիին ենթարկել վարչական պատասխանատվության: Վարտգեզ Գասպարին, հակընդդեմ հայցով դիմելով դատարան, պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի ոստիկանների միջամտող գործողությունները, ինչպես նաև ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնից հոգուտ հակընդդեմ հայցվորի բռնագանձել դատական ծախսերը, այդ թվում՝ փաստաբանի խելամիտ վարձատրությունը: ՀՀ վարչական դատարանի 26.12.2014թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ վճռի դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի

08.07.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 02.09.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում,

բ) Վարդուհի Մկրտչյանի դիմումի մասով.

դիմելով դատարան ՀՀ ոստիկանությունը պահանջել է Վարդուհի Մկրտչյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար: ՀՀ վարչական դատարանի 25.11.2014թ. որոշմամբ հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.09.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 13.01.2016թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողները գտնում են, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասը (սանկցիա նախատեսող դրույթի մասով) հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 44-րդ, 60-րդ (1-4-րդ մասեր), 71-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին:

Դիմողները, վերլուծելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթը, նշում են, որ դատարանը կաշկանդված է կոնկրետ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության միջոց սահմանող նոր մի շրջանակներով և իրավասու չէ դուրս գալ իրավախախտման համար նախատեսված սանկցիայի սահմաններից: Եթե վարչական իրավախախտման համար նախատեսված սանկցիայով սահմանված են վարչական տուգանքի նվազագույն և առավելագույն շեմեր, ապա դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին համապատասխան իրավասու չէ նշանակել տուգանք՝ նվազագույն շեմից ավելի ցածր չափով: Այդ հնարավորության բացակայությունը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության պահանջներին անհամապատասխանության խնդրի՝ վիճարկվող դրույթով այլընտրանքային պատասխանատվության միջոց նախատեսված չլինելու և տուգանքի նվազագույն չափի՝ զգալի լինելու հանգամանքներով պայմանավորված:

Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքի չափը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն և միջին աշխատավարձերի չափերը: Վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքի չափը գրեթե

համընկնում է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի չափի հետ: Բացի դրանից, դիմողները նշելով, որ հաճախ հավաքները կազմակերպվում են տարբեր սոցիալական բնույթի խնդիրների շուրջ բնակչության բողոքի ձայնը բարձրացնելու նպատակով, հետևաբար, հավաքին հաճախ կարող են մասնակցել սոցիալապես ոչ այնքան ապահով քաղաքացիներ, նաև կարծում են, որ գույքային դրությունից ելնելով՝ վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքի նվազագույն չափը կարող է զգալի լինել վերջիններիս համար՝ անհամաչափ սահմանափակելով հավաքի մասնակիցների հավաքների ազատության և սեփականության իրավունքները:

Դիմողները նշում են, որ համաչափության, հավասարության սկզբունքների խախտումն առավել ակներև է դառնում վիճարկվող նորմում «օրենքով սահմանված պահանջների» հստակեցված չլինելու պայմաններում: Յուրաքանչյուր դեպքում ներկայացված պահանջը կարող է էապես տարբերվող բնույթի լինել, էականորեն տարբեր կարող են լինել այդ պահանջի կատարման հանրային նշանակությունը, պահանջի չկատարման հանրային վտանգավորության աստիճանը և հետևանքները:

Դիմողները, համադրելով վիճարկվող դրույթը ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների հետ, եզրահանգում են, որ ելնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված զանցանքի առանձնահատկություններից, տուգանքի նվազագույն չափից, այլընտրանքային պատասխանատվության միջոց նախատեսված չլինելու հանգամանքներից՝ զանցանքի համար նախատեսված պատասխանատվությունը պետք է ընձեռի պատժաչափի տարբերակված կիրառման հնարավորություն:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողների փաստարկներին՝ գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողը վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած պատասխանատվության համաչափության, պատժաչափի տարբերակման սկզբունքների, վարչական պատասխանատվության վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշում է, որ իրավաբանական պատասխանատվության համաչափության ապահովման պետության պոզիտիվ պարտականությունը պետք է իրացվի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ընթացքում: Ըստ պատասխանողի՝ պետությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով խնդրո առարկա արարքի համար սահմանել է համաչափ պատասխանատվություն: Միաժամանակ, պետությունն ինքն է որոշում իրավակիրառողին տալ իրավաբանական պատասխանատվության համաչափության գնահատման հայեցողություն, թե՛ ոչ՝ կախ-

ված կոնկրետ զանցակազմի բնույթից և դրսևորման բազմազանությունից:

Պատասխանող կողմն արձանագրում է, որ մի շարք դեպքերում, երբ նորմի դիսպոզիցիայում նկարագրվող արարքները կարող են լինել բազմասեռ, հանրային վտանգավորության աստիճանով միմյանցից տարբերվող կամ կատարվեն մեղքի տարբեր ձևերով կամ այնպիսի տարբեր կարգավիճակ ունեցող անձանց կողմից, որոնց պատասխանատվության հարցում կոնկրետ արարքի դեպքում անձանց կարգավիճակով պայմանավորված տարբերակված պատասխանատվության անհրաժեշտություն է առկա, օրենսդիրը սահմանել է ոչ միայն պատասխանատվության միջոցի նվազագույն և առավելագույն չափեր, այլև շատ դեպքերում՝ պատասխանատվության այլընտրանքային միջոցներ: Իսկ երբ այդ անհրաժեշտությունն առկա չէ, օրենսդիրը սահմանել է համաչափ կոնկրետ պատասխանատվություն: Խնդրո առարկա սանկցիայով պետությունն արդեն իսկ սահմանել է անձի իրավունքի համաչափ սահմանափակում՝ պատժաչափի կոնկրետ չափը թողնելով իրավակիրառողի հայեցողությանը: Ըստ պատասխանողի՝ նման կարգավորումն իրավաչափ է, քանզի պետությունը քննարկվող հոդվածով նպատակ է հետապնդում պաշտպանել նաև հավաքին չմասնակցող այլ անձանց իրավունքները՝ ոստիկանության միջոցով ապահովելով հավաքի խաղաղ և բնականոն ընթացքն օրենքով սահմանված պահանջների կատարմամբ:

Պատասխանող կողմը փաստում է նաև, որ մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-73-Ն օրենքի ուժի մեջ մտնելը խնդրո առարկա հոդվածն առանձին մասերի բաժանված չի եղել: Հետագայում օրենսդիրը փոխել է քննարկվող հոդվածի բովանդակությունը՝ առանձին մասերով սահմանելով հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելու տարբեր արարքների համար տարբեր սանկցիաներ՝ նկատի ունենալով վարչական իրավախախտումների համար տուգանքների սահմանման և փոփոխման ընդհանուր կանոնները՝ արարքի լրջությունը, հաճախականությունը, այն հանգամանքները, որոնցում դրսևորվում է արարքը: Ըստ պատասխանողի՝ այս փոփոխությունների արդյունքում խնդրո առարկա սանկցիան հարաբերականորոշակի է իրավակիրառողին տալիս է հնարավորություն գործի կոնկրետ հանգամանքների հիման վրա նախատեսված տուգանքի նվազագույն և առավելագույն չափերի շրջանակում ընտրել համաչափ պատժաչափ:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասի սահմանադրականության հարցը բարձրացնում են վերջինիս կառուցվածքային տարր հանդիսացող սանկցիայի մասով:

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները և ելնելով սույն գործով դիմողների ու

պատասխանողի փաստարկներից և եզրահանգումներից, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթի իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատել՝

ա) վիճարկվող դրույթի դիսպոզիցիայում ամրագրված «օրենքով սահմանված պահանջներ» եզրույթի և հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված ոստիկանության լիազորությունները սահմանող օրենսդրական ակտերի համադրված վերլուծության համատեքստում,

բ) համաչափության սկզբունքի և դրա բաղադրատարր հանդիսացող պատժաչափի տարբերակման սկզբունքի ապահովման տեսանկյունից հաշվի առնելով նաև այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի հանրային վտանգավորության գնահատման իր իրավասության շրջանակներում օրենսդիրը հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության՝ օրենքով սահմանված պահանջները չկատարելը որակել է որպես վարչական իրավախախտում՝ այն ամրագրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի «Հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ» վերտառությամբ 13-րդ գլխում:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Սահմանադրական հիշյալ իրավակարգավորման համատեքստում անդրադառնալով վիճարկվող դրույթի դիսպոզիցիայում ամրագրված «օրենքով սահմանված պահանջներ» եզրույթի բովանդակային ծավալին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն, մասնավորապես, ընդգրկում է փոխկապակցված հետևյալ բաղադրատարրերը.

ա) պահանջը պետք է ներկայացվի իրավասու սուբյեկտի, կոնկրետ դեպքում՝ ոստիկանության կողմից,

բ) իրավասու սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, այսինքն՝ իրավասու սուբյեկտի հանրային իրավական վարքագիծը պետք է բխի իր լիազորություններից, կոնկրետ դեպքում՝ հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության լիազորություններից:

Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ոստիկանության պահանջի օրինականությունն ապահովող իրավական գործիքակազմը բազմաբնույթ է, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ միջազգային պայմանագրերը, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 44-րդ հոդվածի

1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով: Հիշյալ հոդվածը սահմանում է նաև այն նպատակները, որոնց առկայությամբ պայմանավորված՝ հավաքների ազատության սահմանափակումն իրավաչափ է: Այսպես, ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հավաքների ազատության և դրա սահմանափակման համանման կարգավորումներ ամրագրված էին նաև 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 29-րդ և 43-րդ հոդվածներով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Կոնվենցիա) 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի խաղաղ հավաքների ազատության իրավունք: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այս իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:

Կոնվենցիայի վերոհիշյալ հոդվածի առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց, մասնավորապես՝

- անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել այնպիսի հանրահավաքին մասնակցելու համար, որը չի արգելվել, քանի դեռ այդ անձն ինքնին որևէ պատժելի արարք չի կատարել (Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (*Ezelin v. France*), թիվ 11800/85, 1991թ. ապրիլի 26-ի վճիռ, Գալստյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 26986/03, 15.11.2007թ. վճիռ),

- հասարակական վայրում տեղի ունեցող ցանկացած հանրահավաք կարող է առաջ բերել բնականոն կյանքի որոշակի աստիճանի խաթարում, ներառյալ երթևեկության խաթարում, և եթե ցուցարարները բռնի գործողություններ չեն կատարում, ապա կարևոր է, որ իշխանությունները որոշակի աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերեն խաղաղ հավաքների նկատմամբ, այլապես Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատության սկզբունքը կհիմաստազրկվի (Աշուրյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 33268/03, 17.07.2008թ. վճիռ, Օյա Ատամանն ընդդեմ Թուրքիայի (*Oya Ataman v. Turkey*), թիվ 74552/01, 2006թ. դեկտեմբերի 5-ի վճիռ),

- Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հիմնական նպատակը հանրային իշխանու-

թյունների կամայական միջամտությունից անհատի երաշխավորված իրավունքների պաշտպանությունն է (Associated Society of Locomotive Engineers and Firemen (ASLEF) v. the United Kingdom, թիվ 11002/05, 2007թ. փետրվարի 27-ի վճիռ):

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատությունն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը սահմանված են «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով: Հիշյալ օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է հավաքի մասնակիցների պարտականությունները, մասնավորապես ամրագրելով, որ հավաքի մասնակիցը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք նպատակաուղղված են հավաքի բնականոն ընթացքը խոչընդոտելուն (1-ին մասի 3-րդ կետ): Նույն օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է հավաքի ընթացքում ոստիկանության պարտականությունները, մասնավորապես ամրագրելով, որ ոստիկանությունը պարտավոր է հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, եթե այլ կերպ հնարավոր չէ ապահովել այն (1-ին մասի 3-րդ կետ):

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով ամրագրված են ոստիկանության խնդիրները, այդ թվում՝ հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունն օրենքին համապատասխան ապահովելը (4-րդ կետ): Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, լիազորությունների իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ (2-րդ մաս): Ոստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր (3-րդ հոդվածի 3-րդ մաս):

Վերոհիշյալ օրենքով սահմանված են նաև ոստիկանության պարտականությունները մարդու անվտանգությունն ապահովելիս, նրա իրավունքներն ու ազատությունները պաշտպանելիս: Մասնավորապես, նշված օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը հանցավոր և այլ ոտնձգություններից:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջների կատարումը պարտադիր է բոլոր քաղաքացիների և պաշտոնատար անձանց համար: Դրանք չկատարելը կամ ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը խոչընդոտող գործողություններն առաջացնում են պատասխանատվություն՝ օրենքով

սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

- ոստիկանությունն իր լիազորություններն իրականացնելիս կաշկանդված է մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներով և ազատություններով,

- անձն ազատ է հավաքներին մասնակցելու իրավունքի իրացման տեսանկյունից, սակայն հավասարակշռվածություն պետք է լինի անձի այդ իրավունքի և այլոց իրավունքների ու ազատությունների իրացման միջև: Այդ հավասարակշռվածության ապահովման պարտականությունը, մի կողմից, կրում է պետությունը, որը համապատասխան մարմինների (ոստիկանության) միջոցով ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, մյուս կողմից՝ հավաքին մասնակցող անձը, ով պետք է դրսևորի այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող վարքագիծ,

- ոստիկանության պահանջի օրինականությունը գնահատման ենթակա է հանրային իրավահարաբերություններում վերջիններիս մասնակցությունը և լիազորությունները սահմանող իրավադրույթների և փաստացի դրսևորված վարքագծի իրավահամեմատության հիման վրա, ինչը կարող է բացահայտվել կոնկրետ դատաքննության շրջանակներում՝ գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում,

- յուրաքանչյուր կոնկրետ գործով իրավակիրառողի կողմից պետք է գնահատվի՝ արդյո՞ք արարքը կոպտորեն խախտում է հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, և որքանո՞վ են իշխանությունները որոշակի աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերել խաղաղ հավաքների նկատմամբ, որպեսզի ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված՝ հավաքների ազատության սկզբունքը չիմաստազրկվի:

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վարչական պատասխանատվության վերաբերյալ արտահայտել է նաև իրավական դիրքորոշում, մասնավորապես ամրագրելով, որ արարքի ֆինանսական պատասխանատվությունն այնպիսի զսպող միջոցի կիրառմամբ, ինչպիսին տուգանքն է, պետության հայեցողության տիրույթում է (Վալիկո ՄՊԸ-ն ընդդեմ Իտալիայի (Valico S.r.l. v. Italy) 2006թ. մարտի 21-ի որոշում):

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի հուլիսի 8-ի ՍԴՈ-1291 որոշման մեջ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ «...արձանագրելով, որ օրենսդրի իրավասության շրջանակներում է, մասնավորապես, որոշել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, սահմանել վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների, վարչական պատասխանատվության միջոցների ու չափերի շրջանակը, միաժամանակ անհրաժեշտ է համարում նշել, որ



հիշյալ հարցերում օրենսդրի հայեցողությունն ունի իր սահմանադրական շրջանակները: Նշված լիազորություններն իրացնելիս օրենսդիրը պետք է ղեկավարվի սահմանադրական սկզբունքներով: Հանրային իշխանության իրականացումը, նախևառաջ, սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով, որը հանդիսանում է իրավական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության, հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նշել է, որ. «...համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»:

Վիճարկվող դրույթի սանկցիայի մասով իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելով համաչափության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող պատժաչափի տարբերակման սկզբունքի ապահովման տեսանկյունից՝ սույն գործով Սահմանադրական դատարանը վերաբերելի է համարում 2010 թվականի նոյեմբերի 16-ի ՍԴՈ-924 որոշմամբ արտահայտած իր այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից»:

8. Սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթով նախատեսված վարչական իրավախախտման պարտադիր հատկանիշ է համարվում ոստիկանության պահանջի ուղղված լինելը հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովմանը, այդ պահանջի օրենքով սահմանված լինելը և այդ պահանջի չկատարումը: Հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության օրինական պահանջը չկատարելն օրենքով նախատեսված իրավախախտում է, իսկ սուբյեկտից ակնկալվող վարքագիծը՝ պետք է բխի օրենքի պահանջից: Իսկ ոստիկանության պահանջի օրինականության առնչու-

թյամբ անհամաձայնությունը, ինչպես նշվեց, կարող է դառնալ դատաքննության առարկա:

Օրենսդիրը, ելնելով հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության օրենքով սահմանված պահանջի հանրային նշանակությունից, անձի հավաքներին մասնակցելու իրավունքի և այլոց իրավունքների ու ազատությունների իրացման հավասարակշռվածության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ոստիկանության՝ օրենքով սահմանված պահանջը չկատարելու հանրային վտանգավորության աստիճանից, գտել է, որ վիճարկվող դրույթով նախատեսված զանցանքի համար պատասխանատվության անհատականացման և տուգանքի չափի տարբերակման անհրաժեշտությունն առկա է: Օրենսդիրը վիճարկվող դրույթով սահմանել է տուգանքի նվազագույն չափ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, և առավելագույն չափ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Այսինքն, կոնկրետ դեպքում, վարչական պատասխանատվության նախատեսված միջոցը հարաբերականորոշակի է, ինչով օրենսդիրը տարբերակել է պատասխանատվության չափը՝ իրավակիրառողին հնարավորություն տալով ապահովել համաչափություն կատարված արարքի և նշանակվող տուգանքի չափի միջև: Այդ համաչափությունը պետք է ապահովվի՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ըստ որի՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող (33-րդ հոդված) և ծանրացնող (34-րդ հոդված) հանգամանքները:

Ինչ վերաբերում է դիմողների այն փաստարկին, որ դատարանն իրավասու չէ նշանակել տուգանք նվազագույն չափից ավելի ցածր մասով, և, նշված հանգամանքը հաշվի առնելով, հարկ է, որպեսզի վիճարկվող դրույթի սանկցիան նախատեսեր նաև այլընտրանքային պատասխանատվության միջոց, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթում օրենսդիրն իր կամքը հստակորեն արտահայտել է՝ դրանով իսկ նախանշելով իրավակիրառողի իրավաչափ հայեցողության սահմանները: Ընդ որում, տվյալ արարքի համար հիմնական պատասխանատվության միջոցին զուգահեռ նաև այլընտրանքային պատասխանատվության միջոց նախատեսելը ևս գտնվում է օրենսդրի հայեցողության տիրույթում: Այդ տիրույթում է գտնվում նաև վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքի չափի և նվազագույն ամսական աշխատավարձի փոխկապակցվածության ընտրությունը:

Այսուհանդերձ, միջազգային պրակտիկայում, հաշվի առնելով վարչական տարբեր իրավախախտումների բնույթի ու դրանց նկատմամբ պատասխանատվության սահմանման առանձնահատկությունները, իրավակիրառողների համար նախատեսվում են նաև հայեցողության ավելի լայն շրջանակներ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ որպես ընդհանուր կանոն սահմանելով վարչական տուգանքի ընդհանուր նվազագույն չափ (ինչը,

օրինակ, առկա է Ռուսաստանի Դաշնությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, Լիտվայի Հանրապետությունում, Լատվիայի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Մոլդովայի Հանրապետությունում և այլն): ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակարգավորման նման մոտեցման պայմաններում իրոք խնդրահարույց կարող էր դառնալ առանձին վարչական իրավախախտումների համար սահմանված տուգանքի նվազագույն շեմից ավելի նվազ չափով տուգանքի նշանակման՝ իրավակիրառողի հայեցողության հարաբերական սահմանափակումը, ինչը կարող էր խոչընդոտել ընդհանուր կանոնից ելնելով ավելի նվազ չափով տուգանքի նշանակումը: Սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին իրավակարգավորումների համանման մոտեցում չի որդեգրել:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ այս կամ այն մոտեցման ընտրությունը համակարգային բնույթ պետք է կրի և երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը, որը հաշվի կառնի այս ոլորտում նաև միջազգային փորձը և որով կերաշխավորվի իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1801-րդ հոդվածի 15-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 սեպտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1304



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 205-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

11 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Վ. Ավետիսյանի ներկայացուցիչ Տ. Սիրադեղյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարուժան Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Վարուժան Ավետիսյանի՝ 2016 թվականի հունիսի 6ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և

պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 205-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը վերջնական է, վերանայման ենթակա չէ և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

Սույն գործով վիճարկվող հոդվածում փոփոխություն և (կամ) լրացում չի կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողը 2016 թվականի փետրվարի 15-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով մասնակիորեն՝ 2016 թվականի փետրվարի 26-ին կայանալիք հավաքի նկատմամբ կիրառված ժամանակի սահմանափակման և հավաքի ընթացքում վրան օգտագործելը մերժելու մասով, անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի 2016 թվականի փետրվարի 3-ին ընդունած որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ դիմողի հայցադիմումն ընդունվել է վարույթ և գործը նշանակվել դատաքննության, որը կայացել է 2016 թվականի փետրվարի 18-ին:

ՀՀ վարչական դատարանը, քննության առնելով դիմողի կողմից հատուկ վարույթի կարգով ներկայացված հայցադիմումը, 2016 թվականի փետրվարի 19-ին հրապարակված վճռով մերժել է ներկայացված հայցը և, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածով, վճռի եզրափակիչ մասում արձանագրել, որ «սույն վճիռը վերջնական է, վերանայման ենթակա չէ և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 06.04.2016 թվականի որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205րդ հոդվածի 1ին և 2րդ մասերի, ինչպես նաև՝ 137րդ հոդվածի 1ին մասի 4րդ կետի դրույթները, մերժել է դիմողի ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը:

3. Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմող կողմը բերում է հետևյալ հիմնավորումները.

ՀՀ վարչական դատարանի կողմից դիմողի նկատմամբ կիրառված ՀՀ

վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքին այնքանով, որքանով գրկում է դատավարության կողմերին իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու իրավունքից:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանափակել է դատավարության մասնակից հանդիսացող դիմողի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը՝ հնարավորություն չտալով իրացնել դատարանի գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտը բողոքարկելու իր սահմանադրական իրավունքը: Նշելով, որ ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխի դրույթների շրջանակներում հատուկ վարույթի կարգով քննության է առնում անձանց սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի հավաքների ազատության իրավունքի իրացման արգելքի կամ սահմանափակման իրավաչափությունը, դիմողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթը ոչ միայն գրկում է անձին դատարանի ոչ արդարացի դատական ակտը բողոքարկելու իրավունքից, այլև՝ ստորադաս դատարանի հնարավոր ոչ արդարացի դատական ակտով իր խախտված կամ սահմանափակված իրավունքի վերականգնման հնարավորությունից:

Վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթները՝ դիմողը գտնում է նաև, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա են վերանայման վերաքննության կարգով, ինչը բխում է անձի՝ դատական պաշտպանության իրավունքից, և այս առումով բացառություն են կազմում միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ակտերը, մինչդեռ դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունն է:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորելու նպատակով վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներ:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է ընդհանուր դատավարական կարգ բոլոր գործերի համար, իսկ առանձին գործերով հատուկ վարույթի տեսակներ՝ վերջինիս բնորոշ առանձնահատկություններով: Այն, որ վիճարկվող նորմով որպես բացառություն սահմանվել է, որ հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտը վերջնական է, ենթակա չէ

բողոքարկման, դեռևս չի նշանակում, որ խնդրո առարկա կարգավորումը հակասում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններին:

Ինչ վերաբերում է առանձին գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության բացառմանը, պատասխանողը՝ հղում կատարելով Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին, նշում է, որ Եվրոպական դատարանն ըստ էության հնարավոր և գործնական է համարում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը դատական մեկ աստյանի միջոցով՝ առանց վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխի դրույթներով հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության բացառումը, ըստ պատասխանողի, պայմանավորված է վերոնշյալ կատեգորիայի գործերին բնորոշ առանձնահատկություններով, ինչպիսին հանդիսանում է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված ժամկետային սահմանափակումը, որի պայմաններում, ըստ պատասխանողի, գործնականորեն անհնարին է եռաստիճան դատական համակարգի բոլոր դատական աստյաններում գործի քննությունը, հետևաբար՝ նաև դրանով է պայմանավորված, որ օրենսդիրը քննարկվող գործերով հատուկ վարույթի շրջանակներում սահմանել է ընդհանուրի համեմատ առավել կարճ ժամկետներ:

5. Հաշվի առնելով դիմումում բերված փաստարկներն ու հիմնավորումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունն անհրաժեշտ է համարում գնահատել՝

- ելնելով հավաքների ազատության՝ որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի (ազատության) ու դրա դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համատեքստից, ինչպես նաև մարդու և քաղաքացու սահմանադրական հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման ընդհանուր սկզբունքների պահպանման անհրաժեշտությունից,

- հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, ինչպես նաև ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն իրագործելու անհրաժեշտությունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հավաքների ազատությունը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի խմբագրությամբ) 44րդ հոդվածով, որի 1ին, 2րդ, 4րդ և 5րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Հավաքների

ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով: Այդ իրավունքը (ազատությունը) կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ դրույթների իրավական բովանդակությունից անմիջականորեն բխում է, որ.

հավաքների ազատությունը Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունք է,

այդ իրավունքի իրացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով,

հավաքների ազատությունը բացարձակ իրավունք չէ և Սահմանադրությամբ նախանշված դեպքերում կարող է սահմանափակվել միայն օրենքով:

Հավաքների ազատությունն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը սահմանվում են «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-72Ն, 22.04.2011թ.): Հիշյալ օրենքում հավաքների ազատության իրավունքի իրացման կարգը, պայմանները, սահմանափակման հիմքերը և այդ իրավունքի իրացման շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունների (ակտերի) իրավաչափության և դրա հետ կապված վեճերի լուծման կարգը սահմանող նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ.

- հանրային հավաքը (բացի շտապ և ինքնաբուխ հավաքներից) անցկացվում է սահմանված կարգով ու ժամկետներում համապատասխան համայնքի ղեկավարին (Երևանի քաղաքապետին) կամ նրա լիազորած անձին (այսուհետ լիազոր մարմին) նախապես իրազեկելու պայմանով (9 և 10-րդ հոդվածներ),

- իրազեկման հետ կապված լիազոր մարմնի կազմակերպած լսումներին հավաքի կազմակերպչին լիարժեք հնարավորություն պետք է տրվի ներկայացնելու իր տեսակետը (17-րդ հոդվածի 4-րդ մաս),

- եթե առկա են հանրային հավաքը սահմանափակելու կամ արգելելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, ապա լիազոր մարմինն այդ մասին կայացնում է որոշում (5, 18, 19 և 20-րդ հոդվածներ),

- լիազոր մարմինն օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է ղեկավարվել համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով (4-րդ հոդված),

- լիազոր մարմնի՝ հանրային հավաքը սահմանափակելու կամ արգելելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (23-րդ հոդված):

Այսպիսով, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճելի իրավակարգավորման հետ կապված վերոհիշյալ նորմատիվ դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 39, 42, 44, 75, 77, 78, 79 և 80-րդ հոդվածներում ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման ընդհանուր սկզբունքներին, քանի որ.



- երաշխավորում են Սահմանադրությամբ և օրենքով չարգելված՝ մարդու ազատ գործելու, ինչպես նաև կարծիքի արտահայտման ազատության իրավունքի իրացումը,

- համահունչ են հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանադրաիրավական շրջանակներին (սահմանափակումներին), մասնավորապես՝ երաշխավորում են հավաքների ազատության իրավունքի չարաշահումն արգելելու սահմանադրական պահանջի իրացումը,

- բխում են մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգային և ընթացակարգային ընդհանուր սկզբունքներից,

- կոչված են ապահովելու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցի՝ սահմանված նպատակի միջև համաչափության սկզբունքը և հավաքների ազատության իրավունքի էության անխախտելիությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը վերոշարադրյալ եզրահանգումները հատկապես կարևորում է հավաքների ազատության իրավունքի իրացման մինչդատական իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համատեքստում այդ իրավունքի դատական պաշտպանության առանձնահատկությունների իրավագնահատման տեսանկյունից: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ հավաքների ազատության իրավունքի դատական պաշտպանությանը նախորդող իրավակարգավորումները (իրազեկում, լսումներ և անհրաժեշտության դեպքում՝ լիազոր մարմնի որոշման կայացում) անհրաժեշտ իրավական նախադրյալներ են պարունակում հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանադրաիրավական կարգավորման ընդհանուր սկզբունքների երաշխավորման առումով:

6. Անդրադառնալով հավաքների ազատության իրավունքի դատական պաշտպանության արդյունավետության (լիազոր մարմնի որոշումների՝ դատական կարգով բողոքարկելիության) վերաբերյալ դիմումում բերված փաստարկներին ու հիմնավորումներին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս ելնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ (հատուկ վարույթի շրջանակներում) կանոններից, մասնավորապես բացահայտելով.

- հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը հատուկ վարույթի շրջանակներում քննելու դատավարական անհրաժեշտությունը,

- այդ գործերով վարչական դատարանի կողմից կազմի՝ ՀՀ Սահմանադրության 61, 63 և 75-րդ հոդվածներում ամրագրված ինչպես արդարադատական, այնպես էլ իրավունքի իրացման անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգի ու ընթացակարգի սահմանադրաիրավական չափանիշներին համապատասխանելիությունը,

- հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերով վարչական դատարանի կայացրած ակտի անբողոքարկելիության սահմանադրաիրավական հիմնավորվածությունը և այդպիսի գործերով արդար, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորումը,

- հիշյալ գործերով արդարադատության միջազգային իրավական չափանիշներին ու եվրոպական պետությունների օրենսդրական կարգավորումների պրակտիկային համապատասխանելիությունը:

Հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթը վարչական դատարանում իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխում նախատեսված նորմատիվ կանոններով, որոնք, իրավակարգավորման առանձնահատկություններից ելնելով, ամփոփված են օրենսգրքի «Հատուկ վարույթներ» վերտառությունը կրող 5-րդ բաժնում: Օրենսգրքի ընդհանուր և հատուկ իրավակարգավորումներ նախատեսող նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ հատուկ վարույթի շրջանակներում նախատեսված ընթացակարգերն օբյեկտիվորեն առանձնահատուկ են ըստ՝

- դատական վերահսկողության օբյեկտների (նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ընտրական իրավունքի պաշտպանության, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու, անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման, անձնական տվյալների պաշտպանության, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու, նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովի որոշումների վիճարկման վերաբերյալ գործեր),

- դատարանի կազմի (առաջին ատյանի կոլեգիալ և միանձնյա կազմով),

- գործ հարուցելու և վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման (դիմող անձանց կազմի) առանձնահատկության,

- հայց ներկայացնելու ժամկետների (կրճատ ժամկետների) և կարգի,

- հայցադիմումը վարույթ ընդունելու և մերժելու ընթացակարգի,

- գործի վարույթը կասեցնելու և կարճելու ընթացակարգի,

- դատաքննության կազմակերպման, փաստական հանգամանքների ապացուցման,

- գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և այդ ակտերից բխող իրավական հետևանքների և բողոքարկելիության (բողոքարկելի կամ բողոքարկման ոչ ենթակա) առանձնահատկության:

Այսպիսով, վարչական դատավարության հատուկ վարույթի շրջանակներում, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից (այդ թվում՝ հավաքի անցկացման վերաբերյալ գործերով), օրենսդիրը տարբերակված մոտեցում է

դրսևորել՝ հիմք ընդունելով հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով վարչական դատարանի առջև դրված կոնկրետ խնդիրները և այն լուծելու իրավական արդյունավետ միջոցի ընտրության առաջնահերթությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հատուկ վարույթի շրջանակներում վարչաարդարադատական ընդհանուր կանոններից տարբեր առանձնահատուկ իրավակարգավորումներ նախատեսելը, այդ թվում՝ հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված (61-րդ հոդվածի 1-ին մաս, 75-րդ հոդված)՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման կազմակերպական և ընթացակարգային ընդհանուր սկզբունքների իրացումը, միտված է արագ, արդյունավետ արդարադատության իրականացմանը, հանրային իրավական նշանակության հրատապ հարցերի լուծմանն ու անձանց Սահմանադրությամբ ու օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես, հավաքի անցկացման գործերով օրենսդիրը վարչական դատարանին առաջադրել է արագ (դատաքննության սեղմ ժամկետներում), մինչև իրազեկմամբ նախատեսվող միջոցառման իրականացումը կոլեգիալ կազմով իրականացնել գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու սահմանադրաիրավական խնդիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից լինի անշրջելի: Որպես հիշյալ խնդրի արդյունավետ իրականացման երաշխիք օրենսդիրը դիտարկել է **վարչական դատարանի կոլեգիալ կազմը** (երեք դատավորի կազմով) ՀՀ վարչ. դատ. օր. 203-րդ հոդված), դատարան դիմելու իրավունք ունեցող **սուբյեկտների սահմանափակ կազմը** (հավաքի կազմակերպիչ, համապատասխան տարածքի սեփականատեր կամ վարձակալ) ՀՀ վարչ. դատ. օր. 202-րդ հոդված), դատարան դիմելու և դատաքննության ընդհանուր կանոնակարգումից տարբեր առավել **սեղմ ժամկետները** (ՀՀ վարչ. դատ. օր. 204-րդ հոդված):

7. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորման շրջանակներում վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող ակտի բողոքարկելիության խնդրին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150, 151, 152, 161, 163 և 205-րդ հոդվածների դրույթների համատեքստում: Հիշյալ հոդվածներում ամրագրված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ.

- վարչական դատարանի ակտն ըստ օրենսգրքի ընդհանուր կանոնակարգման ենթակա է բեկանման (բողոքարկման), եթե առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում,

- **նյութական իրավունքի նորմերը** համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ, որը պետք է կիրառեր.

2) կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ, որը չպետք է կիրառեր.

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ.

- նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, **եթե** հանգեցրել է գործի սխալ լուծման,

- դատական ակտը **դատավարական իրավունքի նորմերի** խախտման արդյունքում բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, ներառյալ՝ այնպիսի դատավորի կողմից, որը Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել.

2) դատարանը գործը քննել է դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3) դատական ակտն ստորագրված և կնքված չէ.

4) դատական ակտն ստորագրված և կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից.

5) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

6) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը.

7) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ.

8) դատական ակտը շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները.

9) առկա են սույն օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը.

- դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Այսպիսով, չնայած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերը դուրս են սույն գործով վեճի առարկայի շրջանակներից, այնուհանդերձ, ըստ իրավակարգավորման նպատակի և եղանակի կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացումը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հատուկ վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների շրջանակներում հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական համապատասխան երաշխիքներ նախատեսելով՝ օրենսդիրն ապահովել է **նյութական իրավունքի** նորմերի արդյունավետ իրացումը: Մինչդեռ **դատավարական իրավունքի** նորմերի խախտմամբ դատական ակտ կայացնելու հավանականությունը բացառելու համար (օրենսգրքի 152-րդ հոդվածում թվարկված կամ համանման ակնհայտ որոշ այլ դեպքերում) օրենսդիրը գործով ըստ էության ակտի բողոքար-

կման հնարավորություն նախատեսելով լրացուցիչ երաշխիքներ կապահովել հավաքների անցկացման ազատության իրավունքի դատական պաշտպանության նկատմամբ հանրային առավել բարձր վստահություն ապահովելու և ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների իրացման առավել ամբողջական նախադրյալներ նախատեսելու ուղղությամբ: Նման դիրքորոշումը բխում է նաև օրենսգրքի վերաթվարկյալ հոդվածներում ամրագրված դրույթների իրավական բովանդակությունից, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող վարչադատական ակտերի բողոքարկելիության կարգ սահմանելիս օրենսդիրն առավել իմպերատիվ է՝ ընթացակարգային իրավունքի նորմերի հնարավոր խախտումներով դատական սխալը վերահսկողության կարգով ուղղելու անհրաժեշտության հարցում (օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերություն): Սակայն նման իրավակարգավորումը հայեցակարգային նոր մոտեցում է պահանջում և լուծելի է միայն օրենսդրական հետագա համակարգային բարեփոխումների շրջանակներում:

8. Անդրադառնալով հավաքների ազատության դատական պաշտպանության իրավունքի միջազգային իրավական չափանիշներին ու եվրոպական պետությունների օրենսդրական կարգավորումների պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ կարևորել ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ Rec (2004) 20 հանձնարարականում արտահայտված կողմնորոշիչ այն սկզբունքը, համաձայն որի՝ «Վարչական ակտի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանի ակտը, առնվազն կարևոր գործերով, պետք է ենթակա լինի բողոքարկման ավելի բարձր ատյան, եթե գործն ուղղակիորեն չի ուղարկվում ավելի բարձր ատյան ներպետական օրենսդրության համաձայն»:

Իսկ վերոհիշյալ հանձնարարականի բացատրական հուշագրում, մասնավորապես, նշված է, որ. «...ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները և բողոքարկման մարմնի իրավագործությունը, որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին: Վարչական վարույթում վերադաս դատական ատյանի ներգրավումն էական նշանակություն ունի վարչական նախադեպային իրավունքի հետևողականությունն ապահովելու հարցում»:

Խաղաղ հավաքների ազատության և դրա արդյունավետ իրացման ու դատական պաշտպանության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 83-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 4 հունիսի 2010թ.) ընդունված ուղեցույցի համաձայն՝ «...արդյունավետ միջոցի իրավունքը ներառում է հավաքների արգելման կամ սահմանափակումների էության վիճարկման իրավունքը: Վարչական վերահսկողության սկզբնական հնարավորությունը կարող է ինչպես նվազեցնել դատարանների բեռը, այնպես էլ օժանդակել հանրության և պետական մարմինների միջև ավելի կառուցողական հարաբերությունների ձևավորմանը: Այնուամենայնիվ, եթե այդպիսի վերահսկողությունը չի բավարարում դիմումատուին, ապա պետք է առկա լինի անկախ դատարանում բողոքարկման մեխանիզմ: Բողոքարկումը պետք է տեղի ունենա արագ և ժամանակին, որպեսզի հանրային

մարմինների որոշման նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվի առանց դիմումատուի իրավունքներին վնաս պատճառելու: Հետևաբար, վերջնական որոշումը կամ դատական կարգադրությունը պետք է կայացվի մինչև հավաքի ծանուցման մեջ նշված ամսաթիվը»:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի ԵԱՀԿ որոշ անդամ պետություններում խաղաղ հավաքների ազատության մոնիտորինգի վերաբերյալ զեկույցում (մայիս 2013թ. – հուլիս 2014թ.) հավաքների ազատության իրավունքի արդյունավետ պաշտպանության շրջանակներում կարևորված է հատկապես այն, որ՝ «...կարգավորման գործընթացը պետք է նախատեսի կարգավորող մարմնի որոշման բողոքարկման կամ անկախ դատարանում այդ որոշումն այլ կերպ վիճարկելու հնարավորություն: Բողոքները և վիճարկման այլ հայցերը պետք է քննվեն արագ և ժամանակին՝ հնարավորություն տալով այդպիսի մարմինների որոշումների նկատմամբ վերահսկողությունն իրականացնել առանց դիմումատուի իրավունքներին վնաս հասցնելու»:

Եվրոպական պետությունների օրենսդրական կարգավորումների պրակտիկան վկայում է, որ հավաքների ազատության իրավունքի դատական պաշտպանությունն իրացվում է տարբեր ընթացակարգերով՝ պայմանավորված նաև արդարադատության իրականացման համակարգային առանձնահատկություններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան վկայում է, որ, ելնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների՝ իր կողմից բազմիցս արված մեկնաբանություններից, արդարադատության իրականացման ընդհանուր կանոնների շրջանակներում դատարանը Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, սակայն, եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքներից (ինչպես, օրինակ՝ *Platakou v. Greece*) 2001թ. հունվարի 11-ի գործով (38-րդ կետ):

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 1-ին, 3, 14, 18, 19-րդ և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով (մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-780, ՍԴՈ-873, ՍԴՈ-936, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1127): Հիշյալ որոշումներով անդրադառնալով նաև դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովման, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում, անհրաժեշտությանը՝ խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության

նպատակներին, այնպես էլ ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու և ապահովելու տեսանկյունից, Սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը» (ՄԴՈ-719),

բ) « ... սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (ՄԴՈ-936),

գ) «... դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից» (ՄԴՈ-936),

դ) «Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին աստիճանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (ՄԴՈ-1037):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումներն նույնպես վերաբերում են բողոքարկման ինստիտուտի գործողության ընդհանուր կանոններին: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք օրենսդրի կողմից պետք է հաշվի առնվեն **դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշման հնարավոր բողոքարկման ընթացակարգերի ամրագրման շրջանակներում՝** հաշվի առնելով սույն որոշման 7-րդ կետում Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 հոկտեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1314





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԿ ՄԱՇՈՒՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 176-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

18 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Հայկ Մաշուրյանի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ռ. Ռեւազյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի եւ իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայկ Մաշուրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայկ Մաշուրյանի՝ 20.06.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (ՀՕ-139-Ն) (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 176-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Հոդված 176. Գործի նոր քննության կարգը

...

2. Գործի նոր քննության ժամանակ չեն կարող փոխվել հայցի հիմքը, առարկան կամ հայցային պահանջների չափը, չի կարող ներկայացվել հակընդդեմ հայց»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը փոփոխության եւ լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Կենտրոնական բաժինը 12.09.2013թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով վարչական պատասխանատվության ենթարկել դիմողին՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջները չկատարելու համար: Վարչական դատարանը 07.10.2013թ. որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ:

Վարչական դատարանը 08.10.2014թ. որոշմամբ ՀՀ ոստիկանության հայցն ընդդեմ դիմողի՝ վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, բավարարել է, եւ դիմողը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 50.000 (հիսուն հազար) դրամի չափով: Նշված որոշումը դիմողի կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որն իր՝ 25.02.2015թ. որոշմամբ բավարարել է վերաքննիչ բողոքը, բեկանել է ՀՀ վարչական դատարանի 08.10.2014թ. որոշումը եւ թիվ ՎԴ/8125/05/13 վարչական գործն ուղարկել է ՀՀ վարչական դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Դիմողի կողմից 12.06.2015 թվականին ներկայացված հակընդդեմ հայցի ընդունումը ՀՀ վարչական դատարանի 16.06.2015թ. որոշմամբ մերժվել է պատճառաբանությամբ, որ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը, սահմանելով գործի նոր քննության կարգը, բացառում է գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությունը»: Միեւնույն ժամանակ, դատարանը նշել է, որ հակընդդեմ հայցադիմումում ներկայացված հիմքերի ու հիմնավորումների շրջանակներում շահագրգիռ անձն իր իրավունքներն ու օրինական շահերը կարող է պաշտպանել առանձին հայցի ներկայացման միջոցով:

Դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատա-

րան, որն իր՝ 07.08.2015թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը եւ ՀՀ վարչական դատարանի «Հակընդդեմ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է անփոփոխ:

Դիմողը 11.09.2015 թվականին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի թիվ ՎԴ/8125/05/13 գործով «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան, որն էլ 02.12.2015թ. կայացրել է որոշում՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին»:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությունը Հայաստանի իրավագործության ներքո գտնվող անձանց, ի թիվս այլոց, երաշխավորում է դատական պաշտպանության, իրավահավասարության, խտրականությունից զերծ լինելու իրավունքներ: Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ՝ դիմողը նշում է, որ Սահմանադրական դատարանը դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր է համարել արդարադատության մատչելիությունը, ինչպես նաեւ արդար եւ արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորումը:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը:

Դիմողը նշում է, որ Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին ու պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ «քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու» իրավունքը:

Դիմողը վկայակոչում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն կամ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալի հիման վրա դիմողը եզրահանգում է, որ ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելով՝ սահմանափակել է դիմողի՝ հակընդդեմ հայցով դատարան դիմելու իրավունքը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ

մասը որեւէ տարբերակում չի նախատեսում, սակայն, ըստ դիմողի՝ պետք է ընդունել, որ կարող են լինել էականորեն տարբեր իրավիճակներ: Մասնավորապէս, սույն գործի շրջանակներում դիմողն ընդհանրապէս հնարավորություն չի ունեցել իր դեմ հարուցված հայցի վերաբերյալ ներկայացնել հակընդդեմ հայց: Իր նկատմամբ հարուցված գործի վերաբերյալ տեղեկացել է միայն Վարչական դատարանի վերջնական դատական ակտն ստանալուց հետո: Խնդիրն այլ կլինէր, եթէ դիմողը տեղեկացված լինէր, որ իր դեմ հայց է հարուցված, եւ նա օբյեկտիվորեն հնարավորություն ունենար հանդէս գալու հակընդդեմ հայցով: Սակայն էապէս տարբեր իրավիճակներում գտնվող հանգամանքներում օրենսդիրը սահմանել է նույն ընթացակարգը:

Դիմողի համոզմամբ, չսահմանելով որեւէ տարբերակում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը պարունակում է իրավական բաց, որը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 61 եւ 63-րդ հոդվածներին:

Բացի դրանից, ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող ընթացակարգային նորմերը խոչընդոտում են մարդու՝ ընդհանրապէս, եւ դիմողի՝ մասնավորապէս, «դատարանի մատչելիության իրավունքի» իրացմանը, ինչը խախտում է սահմանադրական իրավունքի հիմնարար սկզբունքներից՝ «իրավունքի ընթացակարգային նորմը չի կարող նյութական նորմի ամբողջական ու լիարժեք իրացման խոչընդոտ հանդիսանալ» սկզբունքը:

4. Պատասխանող կողմը, վկայակոչելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթները, ինչպէս նաեւ Եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումները արդար դատաքննության բաղադրատարր համարվող դատարանի մատչելիության վերաբերյալ (Միակրկական ընդդեմ Լեհաստանի (Sialkowska v. Poland) 2007թ. մարտի 22-ի վճիռ), եզրահանգում է, որ հիշյալ իրավական սկզբունքի խախտում կարող է առկա լինել, երբ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվի այնչափ, որ սահմանափակվի անձի դատական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը:

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 23-ի ՍԴՈ-1289 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ պատասխանողը նշում է, որ հակընդդեմ հայցը՝ հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց, նպատակ ունի նպաստել արդյունավետ դատական պաշտպանության՝ նրա իրավունքի իրացմանը եւ ապահովել արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրականացումը: Մա նշանակում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը վարչական դատավարությունում հակընդդեմ հայցի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բաղկացուցիչ է համարում հակընդդեմ հայցն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու արդյունավետ կառուցակարգի սահմանումը, որով լիարժեք կերպով իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության իրա-

վունքի իրացումը:

Իրավական որոշակիության կապակցությամբ պատասխանողն անդրադարձ կատարելով Եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, նշում է, որ «(...) որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Պատասխանողի կարծիքով՝ օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը հակընդդեմ հայցի ներկայացման համար հստակ ժամկետային սահմանափակում (արգելք) է պարունակում վարչական դատավարության որոշակի փուլում, ինչն իրավաչափ լուծում է:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ այդ մասով խնդրո առարկա դրույթն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձեւակերպումների հստակության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի կարգադրագրերի պահանջներին համապատասխանեցնելու գործնական, ռեալ հնարավորության եւ օրենքի պահանջներին չհետեւելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետեւանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին: Խնդիրն այն է, որ հասարակական հարաբերությունները խիստ բազմազան են եւ որևէ իրավական ձեւակերպմամբ օբյեկտիվորեն հնարավոր չէ օրենքներում ապահովել բոլոր դեպքերի համար լուծումներ:

Սակայն, պատասխանողի կարծիքով, կոնկրետ դեպքում՝ հանգամանքների որոշակի գույքորդմամբ, անձն օբյեկտիվորեն զրկվել է հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքից, ինչը չի բխում ոչ միայն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման նպատակից, այլև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի հունիսի 23-ի ՍԴՈ-1289 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների տրամաբանությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթն այնքանով, որքանով չի ապահովում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությունը, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործով վիճարկվող իրավադրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հիմնախնդիրներին.

- արդյո՞ք վերադաս դատարանի կողմից բողոքի բավարարման հետեւանքով գործը լրիվ ծավալով նոր քննության ուղարկելու դեպքում հակընդդեմ հայց ներկայացնելու արգելքը չի սահմանափակում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ

միջազգային իրավական ակտերով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության իրականացման հնարավորությունը,

- արդյո՞ք վիճարկվող դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդարացի դատաքննության սկզբունքներից մեկի՝ կողմերի ելակետային պայմանների հավասարության սկզբունքին,

- արդյո՞ք ինքնուրույն հայցադիմում հարուցելու հնարավորության պայմաններում վիճարկվող դրույթում առկա է իրավական բաց՝ հաշվի առնելով նաև վերջինիս վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանել է մի շարք պայմաններ, որոնց առկայության պարագայում հնարավոր է դառնում հակընդդեմ հայցադիմումի ընդունումը քննության: Դրանք են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները, այն է՝

1) հակընդդեմ հայցի պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը, կամ

2) հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը, կամ

3) հակընդդեմ եւ սկզբնական հայցերի միջեւ առկա է փոխադարձ կապ, եւ դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ եւ ճիշտ լուծում:

Բացի դրանից, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ հակընդդեմ հայց չի կարող ներկայացվել վիճարկման եւ պարտավորեցման հայցերով, ինչպես նաև օրենսգրքի 26-րդ եւ 28-րդ գլուխներով նախատեսված գործերով:

Դիտարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հակընդդեմ հայցի ինստիտուտի՝ անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրագործման տեսանկյունից՝ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ ՍԴՌ-1289 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ՝

- «սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով հակընդդեմ հայցի ինստիտուտն իմաստազրկվում է, եթե անհրաժեշտ ու բավարար դատավարական ընթացակարգեր նախատեսված չեն այն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար»,

- «հակընդդեմ հայցը՝ հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց, նպատակ ունի նպաստել արդյունավետ դատական պաշտպանության՝ նրա իրավունքի իրացմանը եւ ապահովել արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրականացումը»:

Վերագրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորության սահմանափակումներն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում անձի դատական պաշտպանության հնարավորությունը, քանի որ ցանկացած պարագայում նա իրավասու է վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ինքնուրույն հայց ներկայացնել դատարան, այնուամենայնիվ, նման սահմանափակումները կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում համաչափության սկզբունքին չհամապատասխանելու պարագայում կարող են համահունչ չլինել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ եւ անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային եւ **ողջամիտ ժամկետում** քննության իրավունք:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելուց եւ գործը նոր քննության ուղարկելուց հետո հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու օրենսդրական արգելքն անհրաժեշտ է դիտարկել գործի նոր քննության ինստիտուտի ողջ համատեքստում:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի իրավակարգավորումների՝ գործի նոր քննությունը վարչական կամ վերաքննիչ դատարանում իրականացվում է համապատասխանաբար վարչական կամ վերաքննիչ դատարանում գործերի քննության համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով: Միաժամանակ, օրենսդիրը, ելնելով գործի նոր քննության առանձնահատկություններից, նախատեսել է մի շարք բացառություններ:

**նախ**՝ ստորադաս դատարանում գործի քննությունն իրականացրած դատավորը չի կարող մասնակցել տվյալ գործի նոր քննությանը /հոդվ. 175/,

**երկրորդ**՝ գործի նոր քննության ժամանակ չեն կարող փոխվել հայցի հիմքը, առարկան կամ հայցային պահանջների չափը /հոդվ. 176/,

**երրորդ**՝ գործի նոր քննության ժամանակ չի կարող ներկայացվել հակընդդեմ հայց /հոդվ. 176/,

**չորրորդ**՝ ստորադաս դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վերադաս դատարանի որոշման հիման վրա՝ վերադաս դատարանի սահմանած ծավալով /հոդվ. 177/,

**հինգերորդ**՝ գործի նոր քննության ժամանակ կողմերը չեն կարող ներկայացնել նոր ապացույցներ, բացառությամբ, երբ դատարանը մատնանշում է ապացուցման ենթակա նոր փաստ եւ պահանջում է ներկայացնել դրա հետ կապված նոր ապացույցներ, ինչպես նաև լսում է մյուս կողմի առարկությունները բեկանման հիմք հանդիսացած փաստերի վերաբերյալ /հոդվ. 177/:

Վերոնշյալ առանձնահատկությունների առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերադաս դատարանի կողմից բողոքը բավարարվելու

արդյունքում գործի նոր քննության փուլն ուղղված է դատական սխալի հիմքով (նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը) վեճն ըստ էության լուծող դատական ակտի վերանայմանը: Այսինքն՝ բողոքի բավարարման հետեւանքով գործի նոր քննությունը նպատակ ունի ուղղել արդեն իսկ կայացված դատական ակտի հետ կապված նյութաիրավական եւ/կամ դատավարական թերությունները:

Բացի դրանից, հայցի հիմքի, առարկայի, հայցային պահանջի չափի փոփոխման, հակընդդեմ հայց հարուցելու, որոշակի բացառություններով նոր ապացույցներ ներկայացնելու արգելքն ուղղված է անձի իր գործի ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքի ապահովմանը: Այն դեպքերում, երբ վերադաս դատարանն իրացնելով իր լիազորությունը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը, բեկանված մասով գործն ուղարկում է համապատասխան դատարան՝ նոր քննության, եւ սահմանում նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ, վերոնշյալ սահմանափակումները դառնում են անհրաժեշտ եւ արդյունավետ:

Չարկ է նշել, որ գործի նոր քննության շրջանակներում հակընդդեմ հայց հարուցելու արգելքը փոխկապակցվում է հայցվորի կողմից հայցի հիմքի, առարկայի կամ հայցային պահանջների չափը փոփոխելու հնարավորության բացակայության հետ: Օրենսդրի կողմից այսպիսի սահմանափակումներ նախատեսելն ընդհանուր առմամբ հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել ողջամիտ հավասարակշռություն դատավարության ընթացքում կողմերի ունեցած հնարավորությունների միջեւ:

8. Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այլ է խնդիրը, երբ դատական ակտը բեկանվում է նիստի ժամանակի եւ վայրի մասին պատասխանողի՝ պատշաճ ծանուցված չլինելու արդյունքում դատավարությանը չմասնակցելու պատճառով, ինչի հետեւանքով նա փաստացի գրկված է լինում արդյունավետ դատական պաշտպանության իր իրավունքների իրականացման, այդ թվում՝ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու հնարավորություններից:

Ըստ գործի նյութերի՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, բեկանելով Վարչական դատարանի որոշումը եւ գործն ուղարկելով ամբողջ ծավալով նոր քննության, կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը, որը դատական ակտի անվերապահ բեկանման հիմք է:

ՀՀ սահմանադրական դատարանը, կոնկրետ վերահսկողության շրջանակներում չանդրադառնալով բեկանման հիմքերի կիրառման իրավաչափության հարցերին, գտնում է, որ տվյալ պարագայում գործի նոր քննության կարելուրագույն նպատակներից է հնարավորություն ընձեռել պատասխանողին մասնակցելու դատավարությանը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով օրենքով նախատեսված դատավարական պաշտպանության միջոցները, այդ թվում՝ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելը: Դրանով իսկ ապահովվում է նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսված՝



կողմերի իրավահավասարության սկզբունքը, համաձայն որի՝ յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու **լիարժեք** հնարավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատավարության ընթացքում կողմերի իրավահավասարության սկզբունքին, Նիկողոսյանը եւ Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության վճռում վերահաստատել է իր այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... դատավարությունում կողմերի իրավահավասարության պահանջը, որը արդար դատաքննության հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում» (Nikoghosyan and Melkonyan v. Armenia, app. no. 11724/04):

Այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1289 որոշման մեջ արտահայտված իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «... օրենսդրորեն հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավակարգավորման հիմնական խնդիրն է դատավարական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ նախատեսել դրա իրավաչափ իրացումը երաշխավորելու համար», կիրառելի է նաև դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատասխանողի պատշաճ ծանուցված չլինելու հիմքով դատական ակտը բեկանելուց հետո գործի լրիվ ծավալով նոր քննության պարագայում:

9. Մահմանադրական դատարանը կարելու է համարում նաև այն հանգամանքը, որ հակընդդեմ հայցի ինստիտուտը հնարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահանջները եւ դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առավել արդյունավետությամբ:

Այն փաստարկը, որ հակընդդեմ հայցի մերժման դեպքում պատասխանողն իրավունք ունի ինքնուրույն հայցադիմում ներկայացնելով իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը, չի կարող լիարժեք հիմնավոր համարվել պատասխանողի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության տեսանկյունից՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

**նախ**՝ ՀՀ դատական օրենսգրքի՝ «Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխման կարգը» վերտառությամբ 21.2-րդ հոդվածը կանոնակարգում է դատարաններում, այդ թվում՝ վարչական դատարանում գործերի բաշխման գործընթացը: Ի տարբերություն հակընդդեմ հայցադիմումի, պատասխանողի կողմից ինքնուրույն հայցադիմում ներկայացվելու դեպքում վերոհիշյալ կանոնակարգումը չի երաշխավորում այդ հայցի քննումը վարչական դատարանի նույն նստավայրում,

**երկրորդ**՝ ինքնուրույն հայց ներկայացնելու դեպքում ակնհայտորեն ավելանում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58 եւ 59-րդ հոդվածներով

նախատեսված դատական ծախսերը,

**Էրրորդ**՝ հակընդդեմ հայցը հիմնական հայցի հետ քննելու արդյունքում կայացվում է մեկ դատական ակտ, ինչն առավել մատչելի եւ արդյունավետ է այդ ակտի բողոքարկման, ինչպես նաեւ կատարման տեսանկյուններից:

10. Անդրադառնալով վիճարկվող դրույթում գործի նոր քննության պարագայում հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու որեւէ հնարավորության բացակայության խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել, մի կողմից, հակընդդեմ հայց ներկայացնելու ինստիտուտի, մյուս կողմից՝ օրենսդրական բացի վերաբերյալ դիմող կողմի հարցադրումների համատեքստում:

2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով նախորդ մի շարք որոշումներում /մասնավորապես՝ ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190 եւ ՍԴՈ-1222/ արդար դատաքննության եւ դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է, որ. «... որեւէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»: Շեշտվել է նաեւ, որ «...ընթացակարգային որեւէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպէս ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում... »:

Օրենսդրական բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք իրավական դիրքորոշումներ (ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-933, ՍԴՈ-1143), որոնք, մասնավորապէս, հանգում են հետեւյալին.

- «Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք» (ՍԴՈ-864),

- «... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը» (ՍԴՈ-914),

- «... օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սուսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման

լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետեւանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը» (ՄԴՈ-1143):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված սահմանափակումը՝ կապված գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելը ցանկացած պարագայում բացառելու հետ, թերի իրավակարգավորման արդյունքում ոչ իրավաչափորեն սահմանափակում է արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաեւ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, այն դեպքերում, երբ չի ապահովվում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու եւ այն ամբողջ ծավալով քննության առարկա դարձնելու հնարավորություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով չի ապահովվում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորություն:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

18 հոկտեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1315



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԿԱՐԻՆԵ ՏԻՏԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 88-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի,  
Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի,  
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Կ. Տիտանյանի ներկայացուցիչ Ս. Միմոնյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության  
իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ.  
փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին  
մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-  
րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կարինե Տիտանյանի  
դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի  
88-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-  
թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը 17.06.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան

մուտքագրված՝ Կ. Տիտանյանի դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 25.09.2001 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 27.10.2001 թվականին և ուժի մեջ է մտել 06.12.2001 թվականին: Օրենքի ընդունումից ի վեր՝ դիմողի կողմից վիճարկվող 88-րդ հոդվածի 5-րդ մասը չի ենթարկվել փոփոխությունների:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «5. Ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել միանձնյա գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների, կառավարիչ-կազմակերպության կամ կառավարչի հետ կնքված պայմանագրերը, եթե կանոնադրությամբ այդ հարցի լուծումը վերապահված չէ խորհրդի իրավասությանը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչության պետի 08.06.1999 թվականի թիվ 28 հրամանով Կարինե Տիտանյանը 07.06.1999 թվականից նշանակվել է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գործադիր տնօրենի պաշտոնակատար:

ՀՀ կառավարության 06.11.2003 թվականի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին վերապահելու մասին» թիվ 1401-Ն որոշմամբ Ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի 15.01.2004 թվականի թիվ 1-Ա որոշմամբ հաստատվել է Ընկերության կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն)՝ նոր խմբագրությամբ:

Կանոնադրության 8.1-րդ կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: ՀՀ կառավարության 06.11.2003 թվականի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին վերապահելու մասին» թիվ 1401-Ն որոշմամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է Խորհուրդը:

Կանոնադրության 8.2-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության

բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն է պատկանում Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

Խորհրդի 15.01.2004 թվականի թիվ 1-Ա որոշմամբ Կարինե Տիտանյանը վերանշանակվել է Ընկերության տնօրեն:

Կանոնադրության 8.12-րդ կետի համաձայն՝ Ընկերության խորհրդի իրավասություններն իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը 16.07.2013 թվականին որոշում է կայացրել 16.07.2013 թվականից Ընկերության գործադիր մարմնի ղեկավար (տնօրեն) Կարինե Տիտանյանի լիազորությունները դադարեցնելու և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, օգտվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետով իրեն վերապահված՝ միանձնյա գործադիր մարմնի հետ կնքված պայմանագիրը ցանկացած ժամանակ լուծելու իրավունքից, 16.07.2013 թվականին որոշում է կայացրել 16.07.2013 թվականից Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Կարինե Տիտանյանի լիազորությունները դադարեցնելու և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին:

Կարինե Տիտանյանի կողմից 13.08.2013 թվականին հայցադիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի, և պատասխանող կողմում ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲ ընկերության՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու և լիազորությունները դադարեցնելու մասին 2013 թվականի հուլիսի 16-ի թիվ 29-Լ որոշումն անվավեր ճանաչելու ու նախկին աշխատանքում վերականգնելու, սկսած հրամանի ընդունման պահից մինչև աշխատանքում վերականգնելու պահը հարկադիր պարապուրդի և տուժանքի գումարի բռնագանձման պահանջների մասին:

Դատարանի 21.08.2014 թվականի դատական ակտով վճռվել է. «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումը ճանաչել անվավեր ու հայցվոր Կարինե Նապոլեոնի Տիտանյանին վերականգնել իր նախկին աշխատանքում՝ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի՝ տնօրենի պաշտոնում: «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲ ընկերությունից հոգուտ Կարինե Նապոլեոնի Տիտանյանի բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով սկսած 16.07.2013 թվականի հաշվարկվող միջին աշխատավարձի գումարը»:

Դատարանը պատճառաբանել է, որ կողմերի միջև ծագած իրավահարաբերություններն աշխատանքային բնույթի են, հետևապես՝ կողմերի միջև այդ իրավահարաբերությունները պետք է դադարեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքերով՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային

օրենսգրքի բացառությունները, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ Ընկերությունն իր գործունեությունը չի ծավալում այնպիսի բնագավառում, որի մասով օրենքով սահմանված է աշխատանքային հարաբերությունների կարգավորման առանձնահատկություն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.11.2014 թվականի որոշմամբ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲ ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 28.12.2015 թվականի որոշմամբ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն.

«ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014 թվականի որոշման՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.08.2014 թվականի վճիռը՝ հայցը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 16.07.2013 թվականի թիվ 29-Լ որոշումն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասով բավարարելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասերը, բեկանվել է և այդ մասերով այն փոփոխել՝ հայցն այդ մասերով մերժվել է»:

Պատճառաբանվել է, որ «ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հնարավորությունը բխում է բաժնետիրական ընկերության բաժնետերերի շահերից, իսկ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել ձեռնարկատիրական գործունեության զարգացման ռազմավարության և մարտավարության փոփոխությամբ, կամ ընկերության ղեկավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, կամ գործունեության նոր ուղղությունների ընտրությամբ, ինչպես նաև այլ պատճառներով, որոնց սպառիչ և ամբողջական ցանկը հնարավոր չէ նախապես սահմանել: Դատարանն արձանագրել է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրված «ցանկացած ժամանակ» ձևակերպումը, որը ենթադրում է այդպիսի անհրաժեշտության առաջացման դեպքում յուրաքանչյուր պահի ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու հնարավորության առկայություն, ըստ էության, բխում է շուկայական տնտեսության պահանջներից՝ հաշվի առնելով բաժնետիրական ընկերությունների տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընկերության տնօրենի հետ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համապատասխան մարմնի որոշումը կարող է չպարունակել որևէ պատճառաբանություն, ինչը ևս բխում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության սկզբունքից, հաշվի առնելով, որ այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառները կարող են կապված լինել, օրինակ, առևտրային գաղտնիքի կամ նոու-հաուի (know-how) հետ և այլն:

3. Գործով դիմողը ներկայացնում է հետևյալ փաստարկները.

ըստ դիմողի՝ իր համար բացասական իրավական հետևանքներ է առաջացրել թիվ ԵԿԴ/1896/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված և դատական ակտում անմիջականորեն վկայակոչված՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ կետը, որը, դիմողի գնահատմամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին, 28-րդ հոդվածին, 29-րդ հոդվածին, 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ, ինչպես նաև 80-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ վկայակոչված իրավադրույթների բովանդակային համադրված վերլուծության լույսի ներքո կարելի է աներկբա եզրակացնել, որ իրավական պետության գործառույթային առաքելության շրջանակներում պետք է ապահովվի անհատի իրավունքների և օրինական շահերի համակողմանի պաշտպանություն՝ ներառյալ աշխատանքային իրավունքի ոլորտում:

Օրենքի՝ վեճի առարկա դրույթով, ըստ դիմողի, « փաստացի նախատեսվել է Գործատուի իրավունքը առանց որևէ հիմքի, միանձնյա լուծել գործադիր մարմնի հետ կնքված պայմանագիրը առանց անգամ հղում անելու ՀՀ-ում աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող հիմնական կոդիֆիկացված ակտին՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքին»: Նման իրավակարգավորումն ակնհայտորեն հակասում է իրավական պետության արժեքանական հիմքը կազմող իրավական որոշակիության (*res judicata*) հիմնարար սկզբունքին: Արդյունքում՝ չի ապահովվում իրավական նորմի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ ողջամիտ հարաբերակցությունը:

Դիմողի կարծիքով՝ ակներև է, որ օրենսդիրը պետք է ապահովի սահմանադրական իրավունքների և ազատությունների, աշխատանքային պայմանագրով գործատուի ու աշխատողի իրավունքների և օրինական շահերի արդարացի հավասարակշռվածությունը, որը Հայաստանի Հանրապետությունում որպես սոցիալական պետությունում աշխատանքային հարաբերությունների անհրաժեշտ պայման է: Մինչդեռ Ընկերությանը նման իրավունք տրամադրելու հետ մեկտեղ, Սահմանադրությամբ ամրագրված վերը նշված սկզբունքների հաշվառմամբ, օրենսդրի կողմից պետք է նախատեսվեին որոշակի համարժեք իրավական երաշխիքներ՝ ընկերության տնօրենին այն բացասական հետևանքներից պաշտպանելու համար, որոնք կարող են վրա հասնել աշխատանքը կորցնելու, գործատուի կողմից դրսևորված հնարավոր կամայականության և խտրականության հետևանքով:

Դիմողը գտնում է, որ Բաժնետերերի ընդհանուր ժողովին նման իրավունք վերապահելը ենթադրում է ցանկացած ժամանակ, ելնելով օպերատիվ-կազմակերպական շահերից և նպատակներից, Ընկերությունը կարող է դադարեցնել գործադիր մարմնի հետ ձևավորված աշխատանքային իրավահարաբերությունները:

Դիմողի կարծիքով, տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքը



համադրելով վիճարկվող իրավադրույթի բովանդակության հետ՝ կարելի է փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ ընկերության տնօրենի հետ առանց հիմքերը նշելու աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու իրավունքն օրենսդրորեն ամրագրելը դեռևս չի ենթադրում, որ նման որոշում կայացնելիս **ընկերությունն օժտված է անսահմանափակ ազատությամբ և հայեցողությամբ**, իրավունք ունի գործելու կամայականորեն՝ նրան նման լիազորությամբ օժտելու վերը նշված նպատակներին հակառակ՝ առանց հաշվի առնելու ընկերության օրինական շահերը, իսկ ընկերության տնօրենը զրկված է նման հնարավոր կամայականությունից և խտրականությունից դատական կարգով արդյունավետորեն պաշտպանվելու իրավունքից:

4. Սույն գործով պատասխանողի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 12.10.2016թ. ներկայացվել է բացատրություն, որում պատասխանողը, ի թիվս այլնի, գտնում է, որ առանձին օրենքներով կարող են սահմանվել և սահմանվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներից տարբերվող իրավական կարգադրագրեր /օրինակ՝ «Հանրային ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներ և այլն/՝ պայմանավորված կարգավորվող կոնկրետ հասարակական հարաբերությունների էությամբ և բնույթով:

Պատասխանողի կարծիքով՝ վերոգրյալ մեկնաբանությունն ամբողջությամբ համահունչ է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011թ. հոկտեմբերի 11-ի ՄԴՈ-991 որոշման 5-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշմանը:

Պատասխանողը, քննարկվող իրավակարգավորման իրավաչափությանն անդրադառնալիս, գտնում է, որ նման կարգավորումն օբյեկտիվորեն արդարացված է, քանզի պայմանավորված է Սահմանադրության 11-րդ հոդվածով ամրագրված ՀՀ տնտեսական կարգին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ գարգացման սահմանադրաիրավական հրամայականով: Ի տարբերություն աշխատանքային այլ հարաբերությունների, երբ կատարված աշխատանքի պատշաճության հիմքն աշխատանքի որակն է, բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի աշխատանքի դեպքում վերջինիս գործունեության պատշաճության հիմքում առավելապես ընկած է կատարված աշխատանքի արդյունքը, որի գնահատականի հասցեատերերն ընկերության բաժնետերերն են: Գործադիր մարմնի աշխատանքային գործունեության առանձնահատկության վերաբերյալ այս տրամաբանությունը հաստատվում է նաև օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմամբ, որի համաձայն՝ «Ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պայմանագրով կարող են տրվել առևտրային կազմակերպության /կառավարող կազմակերպության/ կամ անհատ ձեռնարկատիրոջ /կառավարչի/»: Ըստ պատասխանողի՝ «... սա նշանակում է, որ իրավաբանական անձինք քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարչական ծառայություններ կարող են մատուցել բաժնետիրական ընկերություններին, ինչն աշխատանքային հարաբերություններում բացառ-

վում է, քանզի աշխատող կարող է լինել բացառապես սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացի: Այլ խոսքով, եթե ընկերության այլ աշխատակիցները պատասխանատվություն չեն կրում կատարված աշխատանքի արդյունքում ընկերության ցուցաբերած արդյունքների համար, ապա գործադիր մարմնի ղեկավարն անմիջական պատասխանատվություն է կրում, հետևապես, բաժնետերերի իրավաչափ ակնկալիքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված հարկավոր է վերջիններիս հնարավորություն ընձեռել օպերատիվ կերպով հաղթահարել ընկերության առջև ծառայած մարտահրավերներն ընկերության քաղաքականության փոփոխման միջոցով»:

Պատասխանողը նաև գտնում է, որ որոշակի խումբ աշխատանքային հարաբերությունների դադարման առանձնահատուկ կարգը, այդ թվում՝ այդ հարաբերությունների էությունից բխող աշխատանքային հարաբերությունների դադարման անհրաժեշտության սուբյեկտիվ գնահատման հնարավորությունը չի կարող դիտվել կամայական, եթե այն հետապնդում է օբյեկտիվ և իրավաչափ նպատակ: Ըստ պատասխանողի՝ նույն տրամաբանությունն ընկած է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հիմքում, որով սահմանվում է, որ հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում: Այս դեպքում ևս սահմանվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարման հիմքերից տարբերվող առանձնահատուկ իրավակարգավորում, ինչն իրավաչափ է և բխում է պետական պաշտոնների տվյալ խմբի գործառույթային առանձնահատկություններից: Վերոշարադրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործով վիճարկվող իրավական դրույթի սահմանադրականության հարցը պարզելու համար Սահմանադրական դատարանն առանցքային է համարում անդրադարձը հետևյալ հիմնահարցերին.

- քննության առարկա իրավակարգավորման բնույթը,
- արդյո՞ք բաժնետիրական ընկերության տնօրենն ունի հատուկ կարգավիճակ, որի ուժով նրան աշխատանքից ազատելու առնչությամբ ամրագրվել է ընդհանուր աշխատանքային օրենսդրությունից տարբերվող իրավական կարգավորում,
- արդյո՞ք քննության առարկա իրավահարաբերությունները ՀՀ օրենսդրության շրջանակներում ստացել են ամբողջական կանոնակարգում:

6. Վիճարկվող դրույթի խնդրահարույց բնույթը պայմանավորված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասում օգտագործվող «ցանկացած ժամանակ» ձևակերպմամբ:

Դիմողը, վկայակոչելով Սահմանադրության 1-ին հոդվածը, 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 28-րդ հոդվածը, 57-րդ հոդվածի 2-րդ մասը, 61-րդ հոդվածի

1-ին մասը, 79 և 80-րդ հոդվածները, առաջ է քաշում այն գաղափարը, որ ժողովը չպետք է իրավունք ունենա իր որոշմամբ, «ցանկացած ժամանակ», առանց որևէ հիմնավորման աշխատանքից ազատել ընկերության գործադիր մարմնի ղեկավարին, այլ դա պետք է արվի միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերով, որոնք նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ և 113-րդ հոդվածներում:

Հարկ է նշել, որ, վկայակոչելով բավականին մեծ թվով սահմանադրական նորմեր, այդուհանդերձ, դիմողն առարկայորեն չի կոնկրետացնում, թե այդ նորմերից որի սահմանադրաիրավական բովանդակությանը և ինչ առումով է հակասում օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը, այլ միայն եզրակացնում է, որ իր նկատմամբ դրսևորվել է խտրական վերաբերմունք և խախտվել է Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ իրեն ազատել են «անհիմն»:

ՀՀ սահմանադրական դատարանը վիճարկվող իրավադրույթի և դիմողի վկայակոչած սահմանադրաիրավական նորմերի բովանդակության վերլուծության հիման վրա արձանագրում է հետևյալը:

Դեռևս իր՝ 04.05.2010թ. ՍԴՈ-881 որոշման մեջ Սահմանադրական դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից»:

Իսկ 11.10.2011թ. ՍԴՈ-991 որոշման մեջ մեկնաբանելով այդ պահին գործող Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված աշխատանքի ընտրության ազատության սահմանադրական ինստիտուտը՝ Սահմանադրական դատարանը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Սահմանադրության 32-րդ հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում»:

Սույն գործի քննության շրջանակներում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթում նախատեսված նման բացառությունն

ինքնանպատակ չէ. այն պայմանավորված է «տնօրեն-գործարար հարաբերություններ» առանձնահատկություններով: Կազմակերպության տնօրենը հանդես է գալիս որպես մասնակիցների շահերից բխող գործունեություն իրականացնող, այլ կերպ՝ տնտեսական ընկերության գործարար գործունեության հիմնական կազմակերպիչ ու ղեկավար, ում գործունեության որակն ուղղակիորեն անդրադառնում է, ի թիվս այլնի, տվյալ տնտեսական ընկերության շահութաբերության և այլ իրավաչափ սպասելիքների վրա:

Նկատի ունենալով, որ բաժնետիրական ընկերության տնօրենի աշխատանքային իրավական կարգավիճակն էականորեն տարբերվում է մնացած աշխատողների աշխատանքային իրավական կարգավիճակից, հաշվի առնելով նաև վերջինիս կողմից գործատուի ներկայացուցիչ հանդիսանալը և առանձնահատուկ լիազորություններով օժտված լինելու հանգամանքը, ինչպես նաև հիմնվելով Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների վրա՝ դատարանն արձանագրում է, որ քննության առարկա հանդիսացող իրավադրույթը չի խախտում Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներով նախատեսված՝ օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելման սկզբունքները:

7. Անդրադառնալով բաժնետիրական ընկերության ժողովի լիազորությանը, համաձայն որի՝ նա կարող է՝ «ցանկացած ժամանակ» լուծել միանձնյա գործադիր մարմնի... հետ կնքված պայմանագիրը, Սահմանադրական դատարանը կրկին վերահաստատում է իր 07.07.2010թ. ՄԴՈ-902 որոշմամբ ձևակերպած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ տնտեսական գործունեության ազատությունը, ի թիվս այլնի, ենթադրում է գործատուին այնպիսի իրավազորությունների տրամադրումը, որոնք նրան թույլ կտան տնտեսական գործունեության արդյունավետության և իր գույքի ռացիոնալ օգտագործման նպատակներից ելնելով ինքնուրույնաբար և իր ռիսկով ընդունել կազմակերպչական և կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

Սահմանադրական դատարանը հիմնվելով վերոնշյալ, ինչպես նաև քննության առարկային առնչվող իր մյուս որոշումների վրա՝ գտնում է, որ, ի թիվս այլնի, որպես օբյեկտիվ հիմք պետք է դիտել այն հանգամանքը, որ օրենքի վիճարկվող իրավադրույթը բաժնետիրական ընկերության ժողովին տրամադրել է հայեցողական բնույթի բավականին լայն ազատություն, նկատի ունենալով երկու հանգամանք՝ այն, որ վերջինս պետք է օժտված լինի տնտեսական գործունեության ազատությամբ ու ազատ տնտեսական մրցակցության ապահովմամբ, և որ բաժնետիրական ընկերության տնօրենն ունի առանձնահատուկ կարգավիճակ:

Ի տարբերություն աշխատանքի շուկայում առկա այլ իրավահարաբերությունների, որտեղ, որպես կանոն, կատարված աշխատանքի գնահատման չափանիշն աշխատանքի որակն է, բաժնետիրական ընկերությունների միանձնյա գործադիր մարմնի կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամների աշխատանքի գնահատականը հիմնականում կատարված աշխատանքի արդ-

յունքն է, որի գնահատողն ընկերության բաժնետերերն են:

8. Դիմողը պնդում է, որ աշխատանքից ազատված անձի իրավունքի պաշտպանության արդյունավետությունը փոխհատուցման վճարմամբ ապահովելու հնարավորություն ինչպես օրենքով, այնպես էլ պայմանագրով նախատեսված չլինելու պայմաններում ակնհայտ է դառնում, որ առկա չէ աշխատանքի իրավունքի խախտման բացասական իրավական հետևանքները վերացնելու որևէ իրական և գործուն միջոց, որպիսի պայմաններում անձի համար չի ապահովվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավադրություն փոխհատուցման պահանջ օրենսդրորեն չսահմանելը չի կարող առաջ բերել Սահմանադրության հետ հակասության խնդիր: Օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է, որ այն չի արգելում քաղաքացուն Ընկերության տնօրենի պաշտոն գրադեցնելու առաջարկություն ստանալիս իր կողմից կնքվող պայմանագրում առաջադրել, որ իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը ցանկացած պահի լուծելու դեպքում իրեն տրամադրեն «արդարացի փոխհատուցում»:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով»: Ինչպես արդեն նշվել է, նման առանձնահատկություն է առկա «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածում: Այս հոդվածի 5-րդ մասն ըստ էության նախատեսում է բացառություն ընդհանուր կանոնից: Ընդ որում, նման բացառություն տեղ է գտել միայն վիճարկվող դրությամբ: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում որևէ հատուկ կարգավիճակ որևէ աշխատակցի համար, սակայն տնօրենի աշխատանքից ազատման առնչությամբ օրենքի 88-րդ հոդվածում ամրագրված իրավասության բնույթից հետևում է, որ այստեղ առկա է հատուկ կարգավիճակի ինստիտուտ: Ի դեպ, նույնը վերաբերում է նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին: Ընդունելով հանդերձ, որ նման իրավակարգավորումը գտնվում է օրենսդրի իրավասության շրջանակներում, հարկ է ընդգծել, որ այս ոլորտի աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորելիս անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ ընթացակարգային երաշխիքներ՝ նման իրավահարաբերություններում հայտնված անձանց իրավունքների պաշտպանության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հոկտեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1316



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 նոյեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հակողության վարչության պետի տեղակալ Ա. Մանուկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38, 68 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-

տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 25.08.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև ձևավորված իրավակիրառական պրակտիկան, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (ՀՕ-248) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը» վերտառությամբ 21-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համապատասխանաբար՝ 25.05.2006 թվականի ՀՕ-91-Ն, 21.02.2007 թվականի ՀՕ-93-Ն և 28.11.07 թվականի ՀՕ-270-Ն ՀՀ օրենքներով: Իսկ վիճարկվող դրույթների բովանդակությունը լրացվել է 21.02.2007 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-93-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի մարտի 15-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

2. Դիմող կողմը գտնում է, որ դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասին տրված մեկնաբանությունը, որը ՀՀ գլխավոր դատախազին հնարավորություն չի տալիս, ի թիվս գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների, վերացնելու նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, զրկում է ՀՀ դատախազությանը, որպես քրեական հետապնդման բացառիկ գործառույթ ունե-



ցող հանրային իշխանության կրողի, արդյունավետ ձևով հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից: Ըստ դիմողի՝ նման մեկնաբանությամբ արհեստականորեն սահմանափակվում է հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը, քանի որ կոնկրետ անձի վերաբերյալ կայացրած որոշումները վերացնելու հնարավորության պայմաններում (քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին), գլխավոր դատախազը, որպես քրեական հետապնդում հարուցելու սահմանադրական բացառիկ առաքելություն իրականացնող մարմին, զրկվում է պարզապես քրեական վարույթ նախաձեռնելու հնարավորությունից:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված այնպիսի մեկնաբանումը, որը ՀՀ գլխավոր դատախազին կզրկի օրենքի խախտմամբ կայացված քրեական գործը կարճելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը վերացնելու իրավունքից, սահմանափակում է ՀՀ դատախազության քրեական հետապնդման սահմանադրական գործառույթը, ուստի հակասում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի դրույթներին:

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի նոյեմբերի 17ի ՄԴՈ1236 որոշմանը՝ դիմողը ներկայացնում է փաստարկներ այն մասին, որ «...առանձին կետերով դիրքորոշում հայտնելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումներով ՀՀ սահմանադրական դատարանի առջև բարձրացված սահմանադրաիրավական տեսանկյունից վիճահարույց երեք հիմնական հարցի վերաբերյալ, որոշման եզրափակիչ մասում որևէ անդրադարձ չի կատարել ՀՀ գլխավոր դատախազի դիմումում ներկայացված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21րդ հոդվածի 4րդ մասին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությանը սահմանադրաիրավական գնահատական տալու խնդրանքին: Արդյունքում, ինչպես ՀՀ վճռաբեկ, այնպես էլ ընդհանուր իրավասության այլ դատարանների կողմից ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ1236 որոշման մեկնաբանությունը, ուստի՝ իրավակիրառական պրակտիկայում ՄԴՈ1236 որոշման նկատմամբ իրավաբանական հանգում է նրան, որ տվյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն ընդհանրապես չի անդրադարձել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21րդ հոդվածի 4րդ մասի սահմանադրականությանը»:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ պատասխանողը գտնում է, որ դատախազի կամ գլխավոր դատախազի կողմից քրեական գործի նորոգումը՝ դատախազական հսկողության գործառույթի սահմաններում որոշակի

սահմանափակ ժամկետներում վիճարկվող դրույթով նախատեսված համապատասխան որոշումների վերացման միջոցով, չի հակասում Եվրոպական կոնվենցիայի պահանջներին:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21րդ հոդվածի 4րդ մասով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, իսկ ինչ վերաբերում է իրավակիրառական պրակտիկային, ապա ըստ պատասխանողի՝ «...Դիմողը չի ներկայացրել որևէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որ հնարավորություն կտար գնահատելու դատարանի համապատասխան դիրքորոշման հիմքերը և հիմնավորումները՝ համադրելով գործի կոնկրետ փաստական հանգամանքների հետ»: Հետևաբար, ինչպես գտնում է պատասխանող կողմը՝ «...հնարավոր չէ իրավակիրառական պրակտիկայի սահմանադրականության վերաբերյալ գնահատական տալը»:

4. Սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21րդ հոդվածի 4-րդ մասին՝ ելնելով նաև ձևավորված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրման արդյունքներից, ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր 2015 թվականի նոյեմբերի 17ի ՄԴՈ1236 որոշմամբ, որի եզրափակիչ մասում օրենսգրքի վերոհիշյալ նորմը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը (2005 թվականի փոփոխություններով) համապատասխանող՝ այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

Մասնավորապես, բացահայտելով վերոհիշյալ օրենսգրքի վիճարկվող նորմի՝ «...Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում» բովանդակությամբ դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, սահմանադրական դատարանը գտել է, որ «...մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությանը և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ**» (ՄԴՈ1236 որոշման եզրափակիչ մասի 1ին կետի երկրորդ մասի երրորդ պարբերություն):

Միաժամանակ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորմերի համակարգային վերլուծության և ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 89-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, 103-րդ հոդվածի

սահմանադրաիրավական բովանդակության հետ համադրման արդյունքում գտնելով, որ՝ քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը՝ դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնելու դատախազի լիազորությունը, իսկ դրանից հետո քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը մեկ անգամ և միայն **գլխավոր դատախազի կողմից այդպիսի որոշում կայացնելուց հետո վեց ամսվա ժամկետում վերացնելու վերաբերյալ լիազորությունն անառարկելի են** (ՄԴՈ1236 որոշման 6րդ կետի երկրորդ մասի «Ա» ենթակետի 7րդ պարբերություն), վիճարկվող հիշյալ դրույթի սահմանադրաիրավական բովանդակության առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր նույն որոշմամբ արտահայտել է նաև մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնց համաձայն, մասնավորապես՝

մի կողմից հետաքննության, նախաքննության մարմինների, մյուս կողմից՝ դատախազության միջև գործառության տարանջատումը համահունչ է ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 5-րդ հոդվածի, 89-րդ հոդվածի 7-րդ կետի և 103-րդ հոդվածի պահանջներին և կարևոր երաշխիք է հանցավոր ռոնձություններից մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից (ՄԴՈ1236 որոշման 6րդ կետ),

«...Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված գործառույթները (**քրեական հետապնդման հարուցում, հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն, դատարանում մեղադրանքի պաշտպանություն**) իրավակիրառական պրակտիկայում պետք է ընկալվեն, մեկնաբանվեն ու կիրառվեն ելնելով դրանց սահմանադրաիրավական **փոխկապակցվածությունից**» (ՄԴՈ1236 որոշում, նույն տեղում),

«...վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը **չեն կարող մեկնաբանվել հայեցողաբար**, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (53-րդ հոդված), նաև՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների համապատասխան փոխկապակցված նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության համատեքստից դուրս: Այն անխուսափելիորեն կհանգեցնի ինչպես դատախազության սահմանադրական գործառույթների իմաստազրկմանը, այնպես էլ կվտանգի մարդու Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը՝ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի շրջանակներում: Արդյունքում՝ կխախտվի սահմանադրական օրինականությունը» (ՄԴՈ1236 որոշում, նույն տեղում),

«ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու պարտականությունն է **հսկող դատախազի վերը նշված լիազորության կատարումից կամ այդ լիազորու-**

թյան կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում և օրենքով նախանշված ժամկետում ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի անօրինական որոշումը» (ՄԴՈ1236 որոշում, նույն տեղում),

«... ելնելով գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունից, քրեական հետապնդման մարմնի հիշյալ որոշումը վերացնելու մասին գլխավոր դատախազի որոշումը մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված լինելու կամ չլինելու հանգամանքի հետ: Դատախազական հսկողության այդ փուլում գլխավոր դատախազն իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան իրավասու է իրականացնել հսկողություն ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ, այնպես էլ գերատեսչական հսկողություն ստորադաս (հսկող) դատախազի նկատմամբ:** Հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված բոլոր լիազորությունները, **այդ թվում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի և քննիչի որոշումը վերացնելու մասին,** հավասարապես վերաբերում են նաև գլխավոր դատախազին» (ՄԴՈ1236 որոշում, նույն տեղում),

«...ՀՀ գլխավոր դատախազին բացառիկ իրավունք է վերապահված վերոհիշյալ որոշումների օրինականության վերաբերյալ կայացնելու **վերջնական որոշում,** որն իրավական լուրջ երաշխիք է մինչդատական վարույթի շրջանակներում թե՛ այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու, ծագած իրավական այս կամ այն խնդիրը վերջնական հանգուցալուծելու և թե՛ անձանց իրավունքները ողջամիտ ժամկետներում պաշտպանելու ուղղությամբ: Հետևաբար, վիճարկվող նորմերը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ընկալվելու, մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում չեն կարող հանգեցնել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը և դատախազական հսկողության խոչընդոտմանը» (ՄԴՈ1236 որոշում, 7րդ կետ):

Անդրադառնալով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների կիրառման դատական պրակտիկային՝ Սահմանադրական դատարանը հիշյալ որոշման մեջ արձանագրել է, որ՝ «...ՀՀ դատական պրակտիկան ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի և 53-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական այս բովանդակության **հետևողական իրացում չի երաշխավորել**» (ՄԴՈ1236 որոշման 6-րդ կետ):

Քննելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը՝ Սահմանադրական դատարանն իր հիշյալ

որոշմամբ նաև ի գիտություն է ընդունել պատասխանող կողմի իրազեկումն այն մասին, որ «իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդիրը շտկելու համար ՀՀ Ազգային ժողովում պատրաստվում է օրենքի նախագիծ» և շրջանառության մեջ է դրված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որում համարժեք լուծումներ նախատեսված են (ՄԴՈ1236 որոշման 9րդ կետ): Պատասխանող կողմն իր ՀՀ սահմանադրական դատարանին հասցեագրած գրավոր բացատրությունում նաև արձանագրել էր վիճարկվող իրավակարգավորման «թերությունը» (Ն.1000, 02.11.15թ. թվակիր գրությանը կից ներկայացված բացատրության 13րդ էջ):

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման գործընթացները դեռևս չեն ավարտվել և տվյալ իրավակարգավորման շրջանակներում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից էլնելով օրենսդրական մակարդակում անհրաժեշտ հստակություն չի ապահովվել:

5. Վերահաստատելով ՄԴՈ1236 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես հետևում է սույն գործի նյութերից և դիմող կողմի հարցադրումներից՝ իրավակիրառական պրակտիկայում դեռևս պատշաճ ընկալված չեն ՀՀ գլխավոր դատախազի սահմանադրական լիազորություններից բխող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21րդ հոդվածի 4րդ մասի՝ հետաքննության մարմնի, քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը մեկ անգամ և միայն **գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում վերացնելու վերաբերյալ լիազորության անառարկելիությունը**, և այդ **լիազորությունը Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ բացահայտված իրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությունը**: Դրա մասին են վկայում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 29.01.2016թ. ԵԿԴ/0060/11/15 գործով և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 25.04.2016թ. ԱԸԱԴ1/0052/01/15 գործով կայացրած որոշումներում արտահայտված դիրքորոշումները:

Ելնելով սահմանադրական օրինականության ապահովման անհրաժեշտությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանն անթույլատրելի է համարում սահմանադրական դատարանի որոշումների և դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների անտեսումը կամ կամային մեկնաբանությունն իրավակիրառական պրակտիկայում: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների բնույթի, իրավաբանական ուժի առանձնահատկության սահմանադրաիրավական բովանդակության խնդիրներին Սահմանադրական դատարանը հանգամանալից անդրադարձել է իր 25.02.2011 թվականի ՄԴՈ943 որոշմամբ: Վերահաստատելով այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ **ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն և կիրառվեն որպես ՀՀ Սահմանա-**

դրության գերակայության ապահովմանն ուղղված պաշտոնական ամբողջական փաստաթղթեր, որոնք բխում են իրավունքի գերակայության սկզբունքի ու իրավական պետության սահմանադրական դրույթի պահանջների իրացման անհրաժեշտությունից, և որոնց իրավաբանական ուժն ու կիրառման նորմատիվ բովանդակությունը կանխորոշված են ՀՀ Սահմանադրությամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը նկատի է ունենում այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ (2.1-րդ մասի 2.2-րդ կետի 2-րդ ենթակետ) և 414.2-րդ (2-րդ մասի 2-րդ կետ) հոդվածների պահանջն է՝ ուղղված վճռաբեկ բողոք բերած անձանց՝ հիմնավորելու ստորադաս դատարանի դատական ակտի և ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման **եզրափակիչ մասի** միջև առկա հակասությունը որպես դատական բողոքարկվող ակտի վերանայման (բեկանման, փոփոխման) հիմք: Ի դեպ, օրենսգրքի վերոհիշյալ 407-րդ (2.1-րդ մասի 2.2-րդ կետի 3-րդ ենթակետ) և 414.2-րդ (2-րդ մասի 3-րդ կետ) հոդվածներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման առնչությամբ նման **շեշտադրումներ՝ որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ, չեն կատարվում**: Այս հանգամանքը հիմք ընդունելով՝ դատական պրակտիկայում պատշաճ ուշադրություն չի դարձվում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումներին, ինչն իմաստագրկում է Սահմանադրական դատարանի որոշման ամբողջականությունն ու նշանակությունը՝ որպես իրավունքի աղբյուր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիշյալ հոդվածների նորմատիվ պահանջներն ինքնին չեն բխում ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-943 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից: Սակայն դրանց սահմանադրականության գնահատման հարցին բովանդակային անդրադարձը դուրս է քննության առարկա սույն գործի շրջանակներից:

Այդուհանդերձ, սույն գործով Սահմանադրական դատարանն առաջնորդվում է ՀՀ Սահմանադրության գերակայության և, մասնավորապես՝ ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակից բխող գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական կարևորությամբ: Ուստի իրավակիրառական պրակտիկայում ստեղծված իրավիճակին սահմանադրաիրավական բովանդակություն հաղորդելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատական պրակտիկան պետք է առաջնորդվի 17.11.2015թ. ՄԴՈ-1236 որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներով: Դրանց համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ մինչդատական վարույթում **գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու**

մասին քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի կամ քննիչի) որոշումը ՀՀ գլխավոր դատախազի կողմից կարող է վերացվել մեկ անգամ և միայն այդպիսի որոշման կայացումից հետո՝ վեց ամսվա ժամկետում՝ անկախ քրեական հետապնդման մարմնի վերոհիշյալ որևէ որոշման առնչությամբ ստորադաս հսկող դատախազի դատավարական լիազորությունների իրականացումից:

ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու պարտականությունն է **հսկող դատախազի՝ օրենքով սահմանված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի (7-օրյա) ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում (6 ամիս) ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի անօրինական գնահատված որոշումը՝ կայացնելով վերջնական որոշում, ինչն անհրաժեշտ է ապահովելու տուժողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը:

6. Հաշվի առնելով վերոշարադրյալ դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի 17 նոյեմբերի 2015թ. ՄԴՈ-1236 որոշմամբ հստակ դիրքորոշում է արտահայտվել վեճի առարկա իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ՝ այն արտահայտելով որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում: Իրավական պետության սահմանադրաիրավական հիմնարար չափորոշիչներից ելնելով՝ այդ դիրքորոշումներով պետք է առաջնորդվեն ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ մարմինները: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1236 որոշման վերանայման և նոր որոշման ընդունման որևէ անհրաժեշտություն կամ հիմք առկա չէ՝ նկատի ունենալով նաև նշված որոշման ընդունումից հետո տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունները:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման, միաժամանակ որոշման եզրափակիչ մասում շեշտելով ՄԴՈ-1236 որոշումից բխող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ գլխավոր դատախազին վերաբերող լիազորության սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ելնելով դատական պրակտիկայի սահմանադրականացման և անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով)

100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64, 68 և 71րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել՝ հաշվի առնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1236 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում մինչդատական վարույթում **գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու** մասին քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի կամ քննիչի) որոշումը ՀՀ գլխավոր դատախազի կողմից կարող է վերացվել մեկ անգամ և միայն այդպիսի որոշման կայացումից հետո՝ վեց ամսվա ժամկետում՝ անկախ քրեական հետապնդման մարմնի վերոհիշյալ որևէ որոշման առնչությամբ ստորադաս հսկող դատախազի դատավարական լիազորության իրականացումից: ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու սահմանադրաիրավական պարտականությունն է **հսկող դատախազի՝ օրենքով սահմանված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի (7-օրյա) ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում (6 ամիս) ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ կայացնելով վերջնական որոշում:

Վեճի առարկա նորմը դատական պրակտիկայում շարունակում է կիրառվել այլ մեկնաբանությամբ, ինչը ենթակա է վերանայման:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1 նոյեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1319





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԷՄՄԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍՈՐՔԻ 1226-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 նոյեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Է. Վարդանյանի և նրա ներկայացուցիչ Գ. Պետրոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Էմմա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Էմմա Վարդանյանի՝ 2016 թվականի հունիսի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատաս-

խանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը սահմանում են.

«1. Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

...

3. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար,

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր,

3) իր հաշվին վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները»:

2. Սույն գործով դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Անժելա Աթոյանի՝ ժառանգատու Մանուշակ Աթոյանի ժառանգական գույք հանդիսացող՝ Երևանի Արշակունյաց 36ա շենք, բն. 30 հասցեում գտնվող բնակարանի 1/4 բաժնեմասի նկատմամբ Մարլեն Աթոյանի պարտադիր բաժնի իրավունքը ճանաչելու, Մարլեն Աթոյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Էմմա Վարդանյանի կողմից ժառանգատու Մարլեն Աթոյանին պատկանող վերոհիշյալ հասցեի բնակարանի 1/4 բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Անժելա Աթոյանի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, դրա հիման վրա ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված թիվ 0113187 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

29.05.2015 թվականին թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով Դատարանի կայացրած վճռով դիմողի հայցը մերժվել է, իսկ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված թիվ 0113187 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով հիշյալ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Հիշյալ վճռի դեմ դիմողի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ

վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2015 թվականի որոշմամբ մերժվել է և Դատարանի 29.05.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2015 թվականի որոշման դեմ դիմողի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 25.11.2015 թվականի որոշմամբ մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ամրագրված իրավադրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ (3-րդ մաս), 28-րդ, 29-րդ, 60-րդ (1-4-րդ մասեր), 61-րդ (1-ին մաս), 78-81-րդ հոդվածներին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողի գնահատմամբ՝ օրենսգրքով նախատեսված է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում ներկայացնելու և ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով: Ընդ որում, ըստ դիմողի՝ օրենսգրքի 1226-րդ հոդվածով որևէ կերպ հստակեցված չէ ժառանգության հիմքը, որևէ վերապահում նախատեսված չէ առ այն, թե արդյոք ըստ օրենքի, թե ըստ կտակի ժառանգության ընդունման են վերաբերում սահմանված երկու եղանակները:

Դիմողը գտնում է, որ. «ՀՀ Սահմանադրության 60-րդ, 28-րդ, 29-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների դրույթներին համահունչ մեկնաբանությամբ՝ վիճարկվող դրույթը պետք է ենթադրի ժառանգության ընդունման նախատեսված երկու եղանակների կիրառումը բոլոր հիմքերով ժառանգության ընդունման, այդ թվում՝ ժառանգության պարտադիր բաժնի ընդունման դեպքում»:

Դիմողը նաև գտնում է, որ թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով իր նկատմամբ օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, պայմանավորված վերջիններիս նորմատիվ բովանդակության անորոշությամբ, կիրառվել են ՀՀ Սահմանադրության պահանջներին հակասող մեկնաբանությամբ՝ հանգեցնելով վիճարկվող դրույթների կամայական կիրառությանը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2015 թվականի որոշման մեջ տեղ գտած հիմնավորումների և եզրահանգումների վերլուծության արդյունքում դիմողը հանգում է այն եզրակացությանը, որ իր նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է այն մեկնաբանությամբ, ըստ որի ժառանգության պարտադիր բաժնի ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգության փաստացի ընդունման դասական եղանակները (ժառանգական գույք հանդիսացող բնակարանում բնակվելը, բնակարանի հետ կապված բոլոր վճարումները և դրա պահպանման ծախսերը կատարելը), որոնք ուղղակիորեն բխում են օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասից, կիրառելի չեն, և այս դեպքում ժառանգությունը կարող է ընդունվել միայն ժառանգական իրավունքները ձևակերպելու՝ նոտարին դիմելու միջոցով:

Ի հիմնավորումն իր դիրքորոշումների՝ դիմողը վկայակոչում է Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 29.05.2012 թվականի՝ ժառանգու-

թյան գործերով դատական պրակտիկայի վերաբերյալ թիվ 9 որոշումը, իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներ:

4. Պատասխանողը կարծում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, գտնելով, որ դիմողը, ըստ էության, վիճարկում է նորմերի կիրառման իրավաչափությունը, պատասխանողը միջնորդում է կարճել գործի վարույթը:

Գործի վարույթը կարճելու վերաբերյալ իր տեսակետը պատասխանողը փաստարկում է նրանով, որ օրենսգրքի 1226-րդ հոդվածով նախատեսված ժառանգության ընդունման 2 եղանակի հիմքում էլ ընկած է այն տրամաբանությունը, որ անձը որոշակի ակտիվ գործողությունների միջոցով հստակ կամահայտնություն է հայտնում ժառանգությունն ընդունելու մասին, այն է՝ ձեռք բերելու ինչպես ժառանգական զանգվածի մաս կազմող նյութական բարիքներ, այնպես էլ ստանձնելու ժառանգատուի՝ նախկինում ունեցած պարտավորությունները:

Այս կապակցությամբ պատասխանողն իրավաչափ է համարում դատարանի դիրքորոշումն առ այն, որ անձն ակտիվ գործողությունների պետք է դիմի, իսկ այն, թե կոնկրետ դեպքում անձը դիմել է համապատասխան միջոցների, և արդյոք դրանք բավարար են գնահատելու նրա կողմից ժառանգությունն ընդունելու փաստը դատական կարգով հաստատված լինելու մասին, ըստ պատասխանողի՝ ապացուցման ենթակա հանգամանքներ են քաղաքացիական դատավարությունում, ինչն էլ, որ, դարձյալ՝ ըստ դիմողի, կատարել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, արձանագրելով, որ. «Դիմողը թեև ունեցել է ժառանգության իրավունք, սակայն պատշաճ ապացույցներ չի ներկայացրել ժառանգությունը որևէ եղանակով ընդունելու վերաբերյալ»:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի եզրակացությունն առ այն, որ դատարանը սույն գործով վիճարկվող դրույթները կիրառել է սխալ մեկնաբանությամբ, հիմնազուրկ է, ուստի դիմողը ձևականորեն բարձրացնելով վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության հարց՝ նպատակ է հետապնդում քննել այդ դրույթների իր նկատմամբ կիրառման իրավաչափությունը, որն էլ, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման, հանդիսանում է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմք:

Անդրադառնալով օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ դիմողի կողմից վկայակոչված «նորմատիվային բովանդակության անորոշությանը», պատասխանողը հարկ է համարում նկատել, որ, ի տարբերություն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ժառանգության ընդունման խիստ որոշակի եղանակին, նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժառանգության

ընդունման երկրորդ եղանակը՝ ժառանգված գույքի փաստացի տիրապետումը կամ կառավարումը, ներառում է որոշակի գործողությունների ոչ սպառիչ ցանկ: Առանձին գործերով կոնկրետ գործողությունների՝ այդ ցանկում ներառելը կամ այդ ցանկից բացառելը թողնված է իրավակիրառ պրակտիկային՝ որոշակի օբյեկտիվ չափանիշի կիրառմամբ:

Ըստ պատասխանողի՝ վիճարկող իրավական դրույթների հետ կապված՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներով հստակեցրել է, թե որ գործողություններն են համարվում ժառանգության ընդունում ժառանգված գույքի փաստացի տիրապետմամբ կամ կառավարմամբ:

Վերոգրյալի առումով պատասխանողը գտնում է, որ խնդրո առարկա դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի կարգադրագրերի պահանջներին համապատասխանեցնելու գործնական, ռեալ հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը սեփականության սահմանադրական իր իրավունքի ապահովման սահմանադրականության հարցը բարձրացնում է վերջինիս կառուցվածքային տարր հանդիսացող ժառանգելու իրավունքի երաշխավորման համատեքստում:

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 68-րդ հոդվածի 7-րդ մասերի պահանջները և ելնելով սույն գործով դիմողի և պատասխանողի փաստարկներից ու եզրահանգումներից, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում.

- պարզել և բացահայտել վիճարկվող իրավակարգավորումների նպատակները, հիմքերը և սահմանադրաիրավական բովանդակությունը,
- գնահատել վիճարկվող դրույթների իրավակիրառական պրակտիկան,
- պարզել ժառանգելու իրավունքի երաշխավորվածությունը՝ վիճարկվող իրավակարգավորումների իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության համատեքստում:

6. Դիմումի և դրան կից դատական ակտերի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը նպատակ է հետապնդել դատական կարգով ճանաչել վեճի առարկա բնակարանի համապատասխան բաժնեմասի նկատմամբ իր սեփականության իրավունքը՝ այդ բաժնեմասի նկատմամբ իր մահացած ամուսնու պարտադիր բաժնի իրավունքը ճանաչելու, իր ամուսնուն որպես ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և իրեն՝ այդ բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու միջոցով:

Սույն գործի քննության շրջանակներում դիմողն իր իրավունքների ենթադրյալ

խախտումը պայմանավորում է ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված դրույթներին տրված այնպիսի մեկնաբանությամբ, ըստ որի՝ ժառանգության պարտադիր բաժնի ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգության փաստացի ընդունման դասական եղանակները (ժառանգական գույք հանդիսացող բնակարանում բնակվելը, բնակարանի հետ կապված բոլոր վճարումները և դրա պահպանման ծախսերը կատարելը), որոնք ուղղակիորեն բխում են օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասից, կիրառելի չեն, և այս դեպքում ժառանգությունը կարող է ընդունվել միայն ժառանգական իրավունքները ձևակերպելու՝ նոտարին դիմելու միջոցով:

Դիմումի և կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտմանն առնչվում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դիմողի նկատմամբ օրենսգրքի 1226-րդ հոդվածի միայն 3-րդ մասի կիրառումը՝ այդ մասի դրույթներին տրված մեկնաբանությամբ, իսկ նույն հոդվածի 1-ին մասի և դիմողի սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման միջև անմիջական պատճառահետևանքային կապը բացակայում է:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ դիմումների ակնհայտ անհիմնության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Էմմա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի մասով ենթակա է կարճման:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն վեճն անմիջականորեն առնչվում է անձի սեփականության սահմանադրական իրավունքի երաշխավորման խնդրին, այսինքն՝ առկա է պատճառահետևանքային կապ սահմանադրաիրավական վեճի և սեփականության սահմանադրական իրավունքի միջև:

7. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ բացահայտել օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է անձի սեփականության իրավունքը, որի շրջանակներում սահմանադիրն առանձին դրույթով՝ նույն հոդվածի 2-րդ մասով, երաշխավորում է ժառանգելու իրավունքը: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված՝ «օրինական հիմքով ձեռք բերած» բառակապակցությունը ներառում է նաև գույքի

ժառանգումը՝ որպես սեփականության ձեռքբերման հիմք: Նշված իրավական դիրքորոշումը բխում է օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, այն է՝ «... քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են ... օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով» և 172-րդ հոդվածի 3-րդ կետի, այն է՝ «Քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան, անցնում է այլ անձանց» դրույթներից:

Ընդ որում, ելնելով Սահմանադրությամբ ամրագրված՝ խտրականության արգելքի և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների պահանջներից, ժառանգելու իրավունքն օրենսդրորեն երաշխավորվում է ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության դեպքում, այդ թվում՝ նաև պարտադիր բաժնի իրավունքի հիմքով ժառանգության դեպքում:

8. Սույն սահմանադրաիրավական վեճի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

**Առաջին՝** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն ամրագրել է այնպիսի գործողությունների ոչ սպառիչ ցանկ, որոնց իրականացումը ժառանգի կողմից ենթադրում է, որ ժառանգն ընդունել է ժառանգությունը: Որպես այդպիսի գործողություններ օրենսդիրը, ի թիվս այլնի, դիտարկում է ժառանգի կողմից գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկելը, իր հաշվին գույքը պահպանելու ծախսեր կատարելը, իր հաշվից ժառանգատուի պարտքերը վճարելը կամ երրորդ անձանցից ժառանգատուին հասանելիք գումարներն ստանալը:

**Երկրորդ՝** օրենսգրքի 1226, 1227 և 1228-րդ հոդվածների և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի համադրված վերլուծությունից բխում է, որ.

ա) ժառանգությունն ընդունելու համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո շահագրգիռ անձը, անկախ ժառանգական գույքը փաստացի տիրապետելու հանգամանքից, կարող է ժառանգությունն ընդունել նոտարական կարգով, եթե առկա է ժառանգությունն ընդունած բոլոր ժառանգների համաձայնությունը,

բ) ժառանգությունն ընդունելու համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո շահագրգիռ անձը, անկախ ժառանգական գույքը փաստացի տիրապետելու հանգամանքից, կարող է ժառանգությունն ընդունել դատական կարգով, եթե, ի թիվս այլ պայմանների, դատարանը նրան կճանաչի ժառանգությունն ընդունած հարգելի համարելով ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բացթողումը,

գ) ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետներից անկախ շահագրգիռ անձը, այն է՝ ժառանգական գույքը փաստացի տիրապետողը, կարող է ժառանգությունն ընդունել դատական կարգով, որի դեպքում դատարանը հաստատում է փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունելու

փաստը:

**Երրորդ**՝ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունման վերաբերյալ ձևավորվել է իրավակիրառական որոշակի պրակտիկա: Այսպես, օրինակ, վիճարկվող դրույթների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային մի շարք որոշումների վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, արտահայտել է սույն գործի համար սկզբունքային նշանակություն ունեցող հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) «...ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման...» (թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշում),

2) «...Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը» (թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշում),

3) ժառանգական գույքի փաստացի տիրապետման փաստը կարող է ապացուցվել օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում՝ «...գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն փաստը, որ ժառանգատուի մահից հետո ժառանգը փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգությունը» (թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի հունիսի 1-ի որոշում),

4) «...ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման



եղանակներից մեկը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր»:

Միաժամանակ, «...ըստ կտակի ժառանգության դեպքում օրենքով սահմանված ժամկետում կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն ինքնին չեն վկայում այն մասին, որ ժառանգն ընդունել է ըստ կտակի ժառանգությունը, այդ դեպքում գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները կարող են վկայել ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու մասին (եթե ըստ կտակի ժառանգը պատկանում է ըստ օրենքի ժառանգների թվին), իսկ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար անհրաժեշտ են գիտակցված, ակտիվ գործողություններ: Ըստ էության, դրանք հանգում են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելուն» (թիվ ԱՐԱԴ/0420/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի որոշում),

5) «...ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ ժառանգը գույքը տիրապետել և կառավարել է նաև մինչև ժառանգատուի մահը: Ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ժառանգության զանգվածի մեջ մտնող որևէ գույք ժառանգման իրավունք ունեցող անձի փաստացի տիրապետման և կառավարման ներքո կարող է գտնվել նաև մինչև ժառանգության բացումը: Նման պարագայում ժառանգության ընդունման համար էական է այն փաստը, որ ժառանգը ժառանգատուին պատկանող գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները շարունակի կատարել նաև ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում:

Այլ է իրավիճակն ըստ կտակի ժառանգման պարագայում, քանի որ այդ դեպքում ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգը պետք է հիմնավորի, որ իր գործողությունները միտված են եղել հատկապես ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն» (թիվ ԵԱԲԴ/1018/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 1-ի որոշում):

**Չորրորդ`** օրենսգրքի` «Ժառանգության պարտադիր բաժնի իրավունք» վերտառությամբ 1194-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն` ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ

կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Հիշատակված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների շրջանակն սպառիչ է, և այդ բաժնի իրավունքը կախված չէ այն ստանալու համար մյուս ժառանգի համաձայնությունից, ինչպես նաև նրանից, թե անհրաժեշտ ժառանգն ապրել է ժառանգատուի հետ համատեղ, թե՛ առանձին:

Ավելին, օրենսդիրը սահմանելով ժառանգության պարտադիր բաժնի չափը որոշելու կարգը, նշելով, որ պետք է հաշվի առնել այն ամենը, ինչ նման բաժնի իրավունք ունեցող ժառանգը որևէ հիմքով կարող էր ստանալ ժառանգությունից ներառյալ նման ժառանգի օգտին սահմանված կտակային հանձնարարության արժեքը (օրենսգրքի 1194-րդ հոդվ., մաս 3):

Միաժամանակ, հաշվի առնելով օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, ըստ որի՝ «ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման», սույն դիմումի և կից փաստաթղթերի վերլուծությունից պարզ է դառնում, որ կտակային հանձնարարության դեպքում հաշվի չի առնվել այն, որ ժառանգությունից պարտադիր բաժնի ստանալու իրավունք է ունեցել մյուս ժառանգը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին. պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձի կողմից ժառանգական գույքի՝ օրենքով նախատեսված ժառանգության պարտադիր բաժնի փաստացի տիրապետումը կամ կառավարումն ինքնին վկայում է այն մասին, որ այդ անձը ընդունել է ժառանգությունը, և այլևս անհրաժեշտ չեն այլ ակտիվ գործողություններ, որոնք միտված կլինեն ժառանգությունն ընդունելուն, մասնավորապես՝ նոտարին դիմում տալը, և իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա նշված ուղղությամբ:

9. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի գնահատմանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն հակասական է: **Իսկ այդ հակասական պրակտիկան չի հաղթահարվել Վճռաբեկ դատարանի կողմից, ավելին, վերջինիս 2015 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ՝ թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է և, արդյունքում, իրավակիրառական պրակտիկան հանգեցրել է ոչ իրավաչափ լուծումների:**

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է հետևյալը. դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ գործի շրջանակներում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը պայմանավորել է օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպա-

յին պրակտիկայից տարբերվող մեկնաբանություններով կիրառմամբ:

**Այսպես,** Վերաքննիչ դատարանն օրենսգրքի մի շարք դրույթների, ինչպես նաև վիճարկվող դրույթների վերլուծության արդյունքում հանգել է հետևյալ եզրակացությանը. «...որպեսզի անձը համարվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ժառանգությունն ընդունած ժառանգ, այսինքն՝ ձեռք բերի իրեն հասանելիք ժառանգության զանգվածը, անհրաժեշտ է, որ վերջինս այն ընդունի, մասնավորապես վեց ամսվա ընթացքում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմում կամ փաստացի տիրապետի ժառանգական գույքը»:

Վերաքննիչ դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշման կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը վեց ամսվա ընթացքում ժառանգության բացման վայրի նոտարին ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմում հանձնելու հետ մեկտեղ որպես ժառանգության ընդունման եղանակ է դիտարկում **ժառանգական գույքի փաստացի տիրապետման եղանակը:**

**Այնուհետև,** Վերաքննիչ դատարանը, թեև վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 1-ի թիվ ԵԱՔԴ/1018/02/09 նախադեպային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ ժառանգության ընդունման եղանակ է նաև **ժառանգական գույքի փաստացի տիրապետումը,** այնուամենայնիվ, անտեսելով այդ դիրքորոշման պահանջը՝ նեղացրել է վիճարկվող դրույթին Վճռաբեկ դատարանի կողմից տրված սկզբնական մեկնաբանությունը՝ արտահայտելով հետևյալը, որ. «ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միտված են ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել **միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով**»:

Սահմանադրական դատարանն այդ կապակցությամբ արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի նշված իրավական դիրքորոշման պարագայում իրավակիրառական պրակտիկան հանգեցրել է ոչ իրավաչափ լուծումների:

Վերաքննիչ դատարանն անդրադառնալով փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ սույն գործով դիմողի փաստարկին՝ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որ դիմողի կողմից «...նշված բնակարանում բնակվելը և բնակարանի հետ կապված բոլոր վճարումները և դրա պահպանման ծախսերը կատարելը դեռևս բավարար չէ ժառանգի կողմից ժառանգական զանգվածից իրեն հասանելիք պարտադիր բաժինն ընդունելու փաստը հիմնավոր դիտելու համար, քանի դեռ վերջինս չի ձեռնարկել ակտիվ գործողություններ և չի ձևակերպել իր ժառանգական իրավունքները»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման մոտեցմամբ Վերաքննիչ դատարանն արտահայտել է Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հետ չհամընկնող և այդ դրույթների սահմանադրաիրավական

բովանդակությունից տարբերվող մեկնաբանություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 63 և 64-րդ հոդվածներով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի 7-րդ և 12-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Էմմա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի մասով կարճել:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումը պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձի կողմից ինքնին բավարար հիմք է տվյալ անձի կողմից ժառանգության ընդունման փաստը դատական կարգով հաստատելու համար, և այդ փաստի հաստատման համար անհրաժեշտ չեն ժառանգությունն ընդունելուն միտված այլ ակտիվ գործողությունների կատարման և, մասնավորապես, նոտարին դիմում տալու վերաբերյալ ապացույցներ:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

15 նոյեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1321



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԺԱԿԼԻՆ ԱՅԱՆՅԱՆԻ, ԾԱՂԻԿ ԱՅԱՆՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ԱՅԱՆՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
158-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

22 նոյեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի  
(գեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ.  
Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների ներկայացուցիչներ Կ. Մեծլումյանի, Զ. Հայրապետյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի և նույն վարչության իրավա-  
խորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ժակլին Այանյանի,  
Ծաղիկ Այանյանի և Կարինե Այանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական  
դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝  
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանու-  
թյան հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ժակլին, Ծաղիկ և Կարինե Այանյանների՝ 2016թ. հուլիսի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ մտել 2014թ. հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է.

«2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոք բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝ ...

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ժակլին, Ծաղիկ և Կարինե Այանյանները (այսուհետ՝ դիմողներ) դիմել են ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ անշարժ գույքի նկատմամբ երրորդ անձանց անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումն առոչինչ ճանաչելու պահանջով (ՎԴ/7463/05/13):

ՀՀ վարչական դատարանը 2015թ. մայիսի 14-ի վճռով հայցը մերժել է:

Դիմողների ներկայացուցչի կողմից նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերվել, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2015թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ մերժվել է և վարչական դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2015թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է վարչական վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը: Վճռաբեկ դատարանը պատճառաբանել է, որ «... բողոքաբերը բերված վճռաբեկ բողոքում թեև վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 03.02.2006թ. թիվ 3-204(ՎԴ), 20.06.2008թ. թիվ 3-402(ՎԴ), 03.12.2010թ. թիվ ՎԴ2/0091/05/10, 12.03.2010թ. թիվ ՎԴ/0562/05/09 և 26.12.2013թ. թիվ ՎԴ3/0233/05/12 որոշումները, կատարել է որոշակի համեմատա-

կան վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտում և վկայակոչված դատական ակտերում միևնույն նորմի իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ, սակայն չի հիմնավորել, թե սույն գործով ստորադաս դատարանների կողմից նորմերին տրված մեկնաբանությունն ինչով է հակասում բողոքում նշված որոշումներում միևնույն նորմերին տրված մեկնաբանություններին»:

3. Դիմողները, վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը, գտնում են, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 92-րդ հոդվածին:

Դիմողները պնդում են, որ վիճարկվող իրավադրույթի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» արտահայտությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և իրավակիրառ պրակտիկայում տեղիք է տալիս կամայական և տարածական մեկնաբանության՝ հանգեցնելով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտման: Դիմողները պատճառաբանում են, որ իրավունքն իրացնողի համար վիճարկվող դրույթի այդ պահանջն անհասկանալի և անկանխատեսելի է, քանի որ օրենսդիրը չի սահմանել, թե համեմատական վերլուծությունն ինչպես պետք է կատարել, այն ինչ չափանիշների և պայմանների պետք է համապատասխանի, որպեսզի վճռաբեկ դատարանի համար բավարար հիմք հանդիսանա վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար: Այսինքն, ըստ դիմողների՝ «համեմատական վերլուծություն» արտահայտությունը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որի արդյունքում իրավունքն իրացնող սուբյեկտը չի կարողանում իր վարքագիծը կարգավորել այդ իրավանորմին համապատասխան:

Դիմողները, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, եզրակացնում են, որ վճռաբեկ դատարանի նախադեպերում նույնպես չի բացահայտվում, թե որոնք են բավարար «համեմատական վերլուծության» չափանիշները, ինչն էլ հնարավորություն է տալիս հայեցողական և սուբյեկտիվ մեկնաբանություն տալ բողոքում համեմատական վերլուծություն կատարած լինելու փաստին:

Հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավական դիրքորոշումներին դիմողները կարծում են, որ «համեմատական վերլուծություն» արտահայտության ընդհանուր և վերացական ձևակերպված լինելը հանգեցնում է դիմումատուի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը, քանի որ վճռաբեկ բողոքում համեմատական վերլուծություն կատարված լինելու դեպքում էլ հնարավոր է, որ այդ վերլուծությունը բավարար չհամարվի բողոքը վարույթ ընդունելու համար:

4. Պատասխանող կողմը պնդում է, որ «կատարելով համեմատական վերլու-

ծություն» արտահայտության մեկնաբանությունը և կիրառությունը գործնական հարց է, և օրենսդիրն օբյեկտիվորեն չի կարող այս դեպքերում ապահովել իրավական որոշակիության ավելի բարձր աստիճան: Պատասխանողը նշում է, որ տվյալ դեպքում «համեմատական վերլուծություն» արտահայտությունն օգտագործվել է «օրենքի միատեսակ կիրառություն» հասկացության բացահայտման և մասնավորեցման նպատակով:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը՝ պատասխանողը գտնում է, որ իրավական դրույթների հնարավոր տարբերումների նկատմամբ միասնական դիրքորոշումն ապահովվում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի շրջանակներում:

Պատասխանողի կարծիքով՝ նման դեպքում «համեմատական վերլուծության» բավարար աստիճան պետք է համարվի ենթադրյալ հակասող դատական ակտերում տեղ գտած միևնույն իրավական դրույթների մեկնաբանությունների համադրման և իրավական վերլուծությունների այնպիսի մակարդակը, որը գործի ելքով չչափազորվածներին օբյեկտիվորեն կհամոզի, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանության և վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանության միջև առկա է հակասություն:

Ըստ պատասխանողի՝ խնդրո առարկա դրույթն ամբողջությամբ համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

Դատարանի մատչելիության խնդրի կապակցությամբ պատասխանող կողմը վկայակոչելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում հաստատված դիրքորոշումը՝ արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքը կարող է օրենքով ենթարկվել իրավաչափ սահմանափակումների:

Պատասխանողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտության հիմնավորման պարտականության բեռը վճռաբեկ դատարանից բողոքաբերին փոխանցելն իրավաչափ է, քանզի պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ սահմանադրաիրավական ինքնատիպ կարգավիճակով, ՀՀ դատական համակարգում ունեցած ուրույն դերով և բխում է նաև միջազգային լավագույն պրակտիկայից:

Պատասխանողի կարծիքով՝ գործող իրավակարգավորումների պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է, քանզի բողոք բերող անձն ունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված դրույթը համապատաս-



խանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դիմողը, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, բարձրացնում է միայն «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրականության հարցը, և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ է պարունակում միայն այդ եզրույթի վերաբերյալ: Հետևաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ Սահմանադրական դատարանը գործը քննության է առնում միայն «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրականության բացահայտման շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը, ելնելով նաև դիմումում առաջադրված հարցադրումների բովանդակությունից, անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի՝ «... կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրականությունը գնահատել իրավական որոշակիության սահմանադրական պահանջներին համապատասխանության (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներ) և դրա հետ կապված՝ արդար դատաքննության սահմանադրական իրավունքի ու վերջինիս կարևոր տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորվածության (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներ) տեսանկյունից:

6. Համաձայն ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 79-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանը բազմիցս իր որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270 և այլն):

ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է ՄԴՈ-1176 և ՄԴՈ-1213 որոշումներում արտահայտած իր հետևյալ իրավական դիրքորոշումները. «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը կարևորում է իր ՍԴՈ-1270 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներն առ այն, որ «... Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:» և «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես գտել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է (**«Busuioac v. Moldova», application no. 61513/00, 21/12/2004**):

**ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, եթե բողոք բերած անձը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ապա պետք է, մասնավորապես, հիմնավորի, որ.**

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ,

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Սահմանադրական դատարանի որոշման մեջ բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը,

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը (հիմնավորումը) հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Վիճարկվող դրույթի վերլուծությունից հետևում է, որ վճռաբեկ դատարանի որոշման միջոցով օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը նպաստելու հանգամանքը հիմնավորելու համար օրենսդիրը բողոքաբերին հստակ պահանջ է առաջադրում՝ մեջբերել բողոքարկվող դատական ակտի և վճռաբեկ դատարանի որոշման **հակասող մասերը** և կատարել **համեմատական վերլուծություն**՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ

ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքնին պետք է գնահատման առարկա դառնա իրավակիրառի կողմից, սակայն այդ գնահատումը պետք է իրացվի միայն հայեցողության իրավաչափության շրջանակներում՝ այնպես, որ այդպիսի գնահատումը հնարավորինս օրինական և արդարացի ընկալվի:

Ելնելով վերոհիշյալից, ինչպես նաև հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (**«Hilda Hafsteinsdottir v. Iceland», application no.40905/98, 08.06.2004, p. 56**), ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ:

Հաշվի առնելով ՀՀ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղը և դերը՝ խնդրի առավել կանոնակարգված և կանխատեսելի լուծումը կարող էր իրականացվել նաև վճռաբեկ դատարանի կողմից՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի ընկալման չափանիշների վերաբերյալ նախադեպային որոշման շրջանակներում: Նման պարագայում կհստակեցվեին նաև դատարանի հայեցողության սահմանները և դատարանի մատչելիության հարցում կերաշխավորվեր կանխատեսելիությունը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է նաև դատարանի մատչելիության երաշխավորման խնդրին՝ այն դիտարկելով որպես դատական պաշտպանության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61-րդ և 63-րդ հոդվածներ) անհրաժեշտ բաղադրատարր:

Սահմանադրական դատարանի, ինչպես նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում պարզորոշ հաստատված է, որ դատարանի մատչելիությունը ենթադրում է դատական բոլոր առյանների մատչելիություն:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր այն դիրքորոշումները, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (ՄԴՈ-1192), և որ ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում:

(ՄԴՌ-1257):

Սահմանադրական դատարանը միաժամանակ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ դատարանի մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը, և դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով (ՄԴՌ-1257), և որ իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի ինպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման (ՄԴՌ-1192):

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ՝ «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (ՄԴՌ-719):

ՄԻԵԴ-ը նույնպես գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (**«Luordo v. Italy», application no. 32190/96, 17/10/2003, «Staroszczyk v. Poland», application no. 59519/00, 09/07/2007, «Stanev v. Bulgaria», application no. 36760/06, 17/12/2012 և այլն**):

Պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (**«Khalifaoui v. France», application no. 34791/97, 14/03/2000**):

ՄԻԵԴ-ը բազմաթիվ վճիռներում նշել է, որ վճռաբեկ դատարան տրվող գանգատին ներկայացվող պահանջները կոչված են ապահովելու արդարադատության լավագույն կառավարում, սակայն ազգային դատարանների կողմից գանգատների ձևակերպման նկատմամբ **չափազանց ձևական մոտեցումը** վճռաբեկ գանգատների ընդունման հարցում կարող է հանգեցնել դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Վճռաբեկ գանգատի հստակ ձևակերպված չլինելու հիմքով վարույթ չընդունելը, ըստ ՄԻԵԴ-ի, կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման (**«Kemp v. Luxembourg», application no.17140/05, 24/04/2008, § 50, «Reichman v. France», application no. 50147/11, 12/07/2016, «Viard v. France», application no. 71658/10, 09/01/2014, §36**):

Հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հետևում է, որ պետք է խուսափել ավելորդ ֆորմալիզմից, բայց միաժամանակ չլինել չափազանց ճկուն, որպեսզի վճռաբեկ գանգատին ներկայացվող պահանջները չդառնան անիմաստ («Walchli v. France», application no. 35787/03, 26/07/2007, §§ 31-37, «Dumitru Gheorghe v. Romania», application 33883/06, 12/04/2016, § 28):

ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում, որ ներպետական դատավարական կարգի համաձայն դիմողից պահանջվի հայցը կամ գանգատը, այդ թվում փաստական հիմքերն ու իրավական փաստարկները, ներկայացվեն գրավոր՝ որոշակի ձևանմուշին համապատասխան: Այդուհանդերձ, այս պահանջը չպետք է հանգեցնի ծայրահեղ ֆորմալիզմի, և հարկ է, որ ներպետական դատարանները սեփական նախաձեռնությամբ գործի հանգամանքների որոշակի ուսումնասիրություն կատարեն՝ դիմողի փաստարկներն ըստ էության proprio motu կարգով գնահատելու համար, եթե նույնիսկ դրանք ձևակերպված չեն եղել բացարձակ պարզորոշ կամ ճշգրիտ կերպով («Dattel-2 v. Luxembourg», application no.18522/06, 10/12/2009, §§ 36-47):

8. ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավակարգավորումը՝ վճռաբեկ բողոքում հիմնավորում ներկայացնելու, համապատասխան դատական ակտը կցելու, հակասող մասերը մեջբերելու և համեմատական վերլուծություն կատարելու պահանջների մասով **ընդհանուր առմամբ համադրելի է** ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1293 որոշմամբ քննության առարկա դարձած՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համանման իրավակարգավորմանը:

Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով ՄԴՈ-1293 որոշմամբ քննության առարկա իրավակարգավորման և սույն գործով իրավակարգավորման՝ անձի վրա դրված պարտականությունների մասով բովանդակային համարժեքությունը՝ գտնում է, որ նշված որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ:

Սահմանադրական դատարանը հիշյալ որոշման մեջ նշել է, որ «... օրենսդրի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու պահանջն իրավաչափ է, քանզի այն ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են բողոքարկվող դատական ակտի՝ վկայակոչվող դատական ակտին հակասող մասերը մեջբերելը, բողոքարկվող դատական ակտի և վկայակոչվող դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծություն կատարելը: Հիշյալ համատեքստում հիմնավորում ներկայացնելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անիրագործելի պարտականություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի հանգեցնում նաև

իրավունքի էության խախտման»:

Հետևաբար, բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծության պահանջն ինքնին իրավաչափ է:

Այլ է հարցը, թե որքանով է այդ պահանջն իրավակիրառ պրակտիկայում ընկալվում դրա սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

«Կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության իրավաչափ ընկալման համար կարևոր է, որ բողոքաբերի կողմից վկայակոչվող՝ վճռաբեկ դատարանի դատական ակտերը վերաբերելի լինեն, այսինքն, բողոքարկվող դատական ակտը և վճռաբեկ դատարանի վկայակոչվող դատական ակտը կամ ակտերն ունենան նույնանման փաստական հանգամանքներ: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նման պարագայում հակասող մասերի մեջբերում կատարելը և բողոքարկվող դատական ակտի ու նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը՝ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումը, ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Իսկ իրական հակասության առկայությունը պարզելու և գնահատելու իրավական հնարավորությունը տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի բացառիկ իրավասության շրջանակներում է: Ուստի անընդունելի է իրավակիրառ պրակտիկայում այս դրույթի այնպիսի ընկալումը, որի պարագայում ստացվում է, որ հակասող մասերի մեջբերում կատարելը և առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են: Բողոքի հիմնավորվածության վերաբերյալ դատարանի բացարձակ հայեցողական գնահատականն իրական վտանգ է անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման համար: Վեճի առարկա իրավանորմի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթն ինքնին վճռաբեկ բողոքի հիմնավորման պահանջի իրացումն է: Դիմումը քննության ընդունելու փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք ապահովման և վճռաբեկ դատարանի մատչելիության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցում խուսափել հայեցողության բացարձականացումից ու ավելորդ ձևականությունից և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավակարգավորումը կիրառել վերը շարադրված իրավական դիրքորոշմանը համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համաձայն որի՝ բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Դիմումը քննության ընդունելու փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ վեճի առարկա դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 նոյեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1322



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱՐԻԱՄ ԼԱԼԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ  
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
12-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

29 նոյեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմող Ս. Լալայանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի, նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարիամ Լալայանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Մարիամ Լալայանի՝ 2016 թվականի հունիսի 14-ին



ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 22.12.2010 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 30.12.2010 թվականին և ուժի մեջ է մտել 01.01.2011 թվականից: Վիճարկվող դրույթն օրենքում տեղ է գտել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 19.03.2012 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 12.04.2012 թվականին և ուժի մեջ է մտել 05.05.2012 թվականին:

Օրենքի վիճարկվող դրույթը սահմանում է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է... «12) աշխատանքային և զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2003 թվականին դիմողի նկատմամբ նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Կենսաթոշակը դիմողն ստացել է մինչև 2004 թվականի մարտ ամիսը, որից հետո դիմում է ներկայացրել, որպեսզի կենսաթոշակը փոխանցվի ՀՀ կենտրոնական բանկում առկա իր բանկային հաշվին:

Ըստ դիմողի՝ համոզված լինելով, որ իր կենսաթոշակը կուտակվում է, տարիների ընթացքում չի փորձել ստուգել: 2013 թվականին դիմողին հայտնի է դարձել, որ 2012 թվականի հունիսի 1-ից կենսաթոշակ ստանալու իր իրավունքը դադարեցվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով:

2013 թվականի դեկտեմբերի 19-ին դիմողը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության ծառայության աշխատակազմի Վանաձորի սոցիալական ապահովության տարածքային բաժնին պարտավորեցնել վերականգնել կենսաթոշակ ստանալու իր իրավունքը և վճարել անցած տարիների չվճարված կենսաթոշակը:

2014 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ վարչական դատարանը վճռել է հայցը մերժել (վարչական գործ թիվ ՎՂ6/0666/05/13):

ՀՀ վարչական դատարանի վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի

որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ մի մասով թողնվել է առանց քննության, իսկ մյուս մասով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, ինչպես նաև 83-րդ հոդվածին, քանի որ իրեն զրկում է իր սեփականությունից:

Վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.06.2006թ. թիվ 3-1260 (ՎԴ) որոշումը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի, Բեյլերն ընդդեմ Իտալիայի գործերով վճիռները՝ դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ կենսաթոշակի նշանակման պահից իրեն տրամադրման ենթակա գումարները հանդիսացել են իր սեփականությունը, որ ինքն ունեցել է այդ գումարներն իր հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրավունք, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող դրամական միջոցներն իր բանկային հաշվին փոխանցելու վերաբերյալ դիմումով ինքն ընդամենը որոշել է գույքի տիրապետման եղանակը, և ինքը չի կատարել սեփականության իրավունքով իրեն պատկանող դրամական միջոցներից հրաժարվելուն ուղղված որևէ գործողություն:

Դիմողը նաև նշում է, որ կենսաթոշակի դադարեցման համար օրենքի վիճարկվող դրույթով նման ժամկետի սահմանումը չունի որևէ հիմնավորում, և արդյունքում տուժում է խոցելի խավի ապրուստի և գոյատևման համար կենսական նշանակություն ունեցող սոցիալական ապահովության իրավունքը և սեփականության իրավունքը:

4. Պատասխանողը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ՝ պատասխանողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ կենսաթոշակն իր բանկային հաշվին փոխանցելու վերաբերյալ դիմողի կողմից ենթադրյալ դիմում ներկայացնելու պահին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի իմաստով դիմողը չունի վճարվելիք դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունք, քանզի կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու և կենսաթոշակի ստացման շարունակականության ապահովման համար օրենսդիրը սահմանել է որոշակի խումբ իրավաչափ պարտականություններ, ինչպիսիք են անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը, կենսաթոշակն անկանխիկ ստանալու դեպքում՝ տարեկան առնվազն մեկ անգամ բանկ ներկայանալը:

Ըստ պատասխանողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը չի

հանգեցնում կենսաթոշակի իրավունքի կորստի:

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում Մահմանադրական դատարանը հարկ է համարում նախ անդրադառնալ օրենքում օգտագործվող «կենսաթոշակի իրավունքը» և «կենսաթոշակ ստանալու իրավունքը» եզրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը:

Օրենքի «Կենսաթոշակի իրավունքը և կենսաթոշակ ստանալու իրավունքը» վերտառությամբ 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում (այսուհետ՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում), և նրան նշանակվել է կենսաթոշակ (այսուհետ՝ կենսաթոշակառու):»:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ»:

Վերը նշված իրավական նորմերից հետևում է, որ.

ա/ կենսաթոշակի իրավունքը, որպես սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի դրսևորման ձև, ելակետային է, այն նախապայման է կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար,

բ/ կենսաթոշակի իրավունքն ունի ծագման իր նախադրյալներն ու օրինական հիմքերը,

գ/ կենսաթոշակ ստանալու իրավունքը կենսաթոշակի իրավունքի իրացման երաշխիքն է՝ օրենքով սահմանված իրավապայմանների առկայության պարագայում:

Տարբեր են կենսաթոշակի իրավունքի և կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման նախադրյալները. եթե, կոնկրետ դեպքում, տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունքի ծագման նախադրյալներն են որոշակի տարիքը լրանալը և որոշակի աշխատանքային ստաժի առկայությունը, ապա կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման նախադրյալներն են կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմում ու անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը:

Օրենսդիրն օրենքով ամրագրել է այն պայմանները, որոնք անձի համար նախադրյալ են սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացման համար: Նախ՝ օրենքի 35-րդ հոդվածը որոշակի պարտականություն է ամրագրում, մասնավորապես 6-րդ մասը սահմանում է՝ «Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար **պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ**, նախորդ տարվա ընթացքում բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասն-

երկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին»: Իսկ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է «սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքում»:

Ընդ որում, օրենքի 36 և 41-րդ հոդվածներից հետևում է, որ **օրենսդիրը նախատեսել է միայն կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման, այլ ոչ թե կենսաթոշակի իրավունքի դադարեցման հնարավորություն**: Դրանից բխում է նաև ինդրո առարկա օրենքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու վերաբերյալ դրույթների նախատեսումը /օրենքի 41-րդ հոդվածի համապատասխանաբար 3-րդ և 4-րդ մասեր/: Ընդ որում, օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներից հետևում է, որ, նախ՝ պետք է վերականգնվի կենսաթոշակ ստանալու իրավունքը, հետո միայն վերսկսվի կենսաթոշակ վճարելը:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի միջև ներքին տրամաբանական կապի առավել հստակեցման անհրաժեշտություն գոյություն ունի: Ակնհայտ է, որ «կենսաթոշակ ստանալու իրավունքը» բխում է «կենսաթոշակի իրավունքից»: Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերը: Նույն հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես, նախատեսում է, որ **կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում**: Իսկ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ չվճարելն է դառնում կենսաթոշակ ստանալու իրավունքի **դադարեցման հիմք**: Օրենքի 41-րդ հոդվածում հետևողական ու տարբերակված մոտեցում չի դրսևորվում «**դադարում**» և «**դադարեցում**» եզրույթների նկատմամբ: Եթե «**դադարումը**» ենթադրում է իրավունքի ուժով առաջացող իրավական հետևանք, ապա «**դադարեցումը**» որոշակի իրավական գործընթացի **հետևանք է, պետաիշխանական լիազորությամբ օժտված մարմնի կամաարտահայտման հետևանք**: Նման պարագայում կարող է առաջանալ նաև ընդհուպ դատական կարգով անձի իրավունքների պաշտպանության ինդիք: Բացի դրանից, նույն հոդվածի 1-ին մասի իրավապայմաններից հետևում է, որ, բացառությամբ 12-րդ կետի, մնացած բոլոր դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքի **դադարեցման** հիմքերը բխում են կենսաթոշակի իրավունքի **դադարման** հանգամանքից:

Միաժամանակ, օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ **կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման պարագայում**: Սակայն համակարգային կապն առկա չէ նույն հոդվածի 4-րդ մասի /կենսաթոշակ վճարելը վերսկսելու/ և 1-ին մասի 12-րդ կետի հիմքով կենսաթոշակ ստանալու **իրավունքի դադարեցման** իրավակարգավորումների

միջև: Եթե տվյալ դրույթի առնչությամբ օրենսդիրը նկատի է ունեցել, որ կենսաթոշակի իրավունքը դադարում է, և որպես հետևանք՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, երբ անձը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակը չի ստացել, ապա այդպես էլ պետք է հստակ շարադրվեր տվյալ դրույթը: Հակառակ պարագայում հարցեր են առաջանում, թե, մասնավորապես, ինչու՞ չի վճարվել, ի՞նչ հնարավորություն է ունեցել անձը պաշտպանելու իր իրավունքները, ի՞նչ կարգով և ո՞վ պետք է **դադարեցնի** կենսաթոշակ վճարելը և այլն:

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը» վերտառությամբ 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»: Չնայած օրենսդրական կանոնակարգման տվյալ սահմանադրական պահանջն անմիջականորեն վերաբերում է հիմնական իրավունքներին և ազատություններին, սակայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված երաշխիքները նույնպես պետք է բավարարեն արդյունավետության սահմանադրական պահանջը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա իրավակարգավորմամբ այդ պահանջը հետևողականորեն չի իրացվել: Աշխատանքային և զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակատուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելը կարող է ունենալ տարբեր պատճառներ և ինքնին չի կարող ենթադրել, որ առկա է կենսաթոշակի իրավունքի **դադարման** հանգամանքը: Բացի դրանից, խախտվում է նաև պատճառահետևանքային կապը: Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝ ... կենսաթոշակ չվճարելու դեպքում», իսկ նույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Կենսաթոշակ վճարելը **դադարեցվում է՝ ... կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու** դեպքում»: Նման իրավակարգավորումը հանգեցնում է նրան, որ անձն ունենում է միայն մեկ հնարավորություն՝ վերականգնել **կենսաթոշակի իրավունքը** /ինչն իրականում նա չէր կորցրել/ և կրկին ձեռք բերել կենսաթոշակ ստանալու նոր իրավունք:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը, երբ հաշվի չի առնվում անձին կենսաթոշակ չվճարելը՝ առանց նրա **կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման** կոնկրետ հանգամանքները հաշվի առնելու, իրավաչափ չէ և չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջներին: Նման իրավակարգավորման պարագայում անձը զրկվում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքի **դադարեցման հարցը** դատական կարգով բողոքարկելու, ինչպես նաև իր սեփականու-

թյան իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված իրավական բովանդակության շրջանակներում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 60, 61, 78, 79 և 83-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

2. Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթը համակարգային առումով փոխկապակցված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 36-րդ, 41-րդ և մի շարք այլ հոդվածների դրույթների հետ, և հաշվի առնելով սույն որոշման հրապարակման պահին տվյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությամբ պայմանավորված հնարավոր հետևանքները, ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 102-րդ հոդվածի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի մասով սույն որոշման ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ սահմանել 2017 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանն իրենց իրավասությունների շրջանակներում քայլեր ձեռնարկել համակարգային ամբողջականության մեջ վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը երաշխավորելու ուղղությամբ:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

29 նոյեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1325



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 77-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Թունյանի,  
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի՝ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի  
դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի և նույն վարչության իրավա-  
խորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-  
րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանա-  
դրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Սյունիքի մարզի  
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝  
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ  
հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-  
տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Տուժողի իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 59-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասն ամրագրում է.

«Տուժողն իրեն պատկանող իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է համապատասխան իրավունքների և պարտականությունների բնույթին: Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը»:

Վիճարկվող հոդվածում փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.02.04թ. ՀՕ-34-Ն և 25.05.06թ. ՀՕ-91-Ն ՀՀ օրենքներով, որոնք, սակայն, սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճին վերաբերելի չեն:

Օրենսգրքի՝ «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 77-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, սույն օրենսգրքով, սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) ծանոթանալ առաջադրված մեղադրանքին, իսկ կասկածյալի օրինական ներկայացուցիչը՝ նաև իմանալ՝ ինչու է կասկածվում ներկայացվող անձը.

2) իմանալ դատավարությանը ներկայացվող մասնակցին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և ուղեկցել նրան.

3) առանձին, կոնֆիդենցիալ, անարգել տեսակցել դատավարության ներկայացվող մասնակցի հետ՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ.

4) քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին.

5) տալ բացատրություններ.

6) ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետազոտելու համար.



7) հայտնել բացարկներ.

8) հարուցել միջնորդություններ.

9) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

10) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա կամ դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակիցը մասնակցել կամ ներկա է գտնվել, դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

11) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն.

12) ստանալ մեղադրական եզրակացության պատճենը.

13) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը, իր կողմից ներկայացվող քաղաքացիական հայցվորի և մեղադրյալի համապատասխանաբար ներկայացուցչի կամ պաշտպանի բացակայության դեպքում՝ հանդես գալ ճառով և ռեպլիկով.

14) իր խնդրանքով անվճար ստանալ այն որոշումների պատճենները, որոնք դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակիցը սույն օրենսգրքով ստանալու իրավունք ունի.

15) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

16) հետ վերցնել իր ներկայացրած բողոքը.

17) դատավարության՝ իր կողմից ներկայացվող մասնակցի շահերին առնչվող մասով առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացված կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

18) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առիթով.

19) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

20) առարկել նախագահողի գործողությունների դեմ.

21) իր կողմից ներկայացվող անձի համար հրավիրել համապատասխանաբար պաշտպան և ներկայացուցչի, դադարեցնել իր կողմից հրավիրված պաշտպանի և ներկայացուցչի լիազորությունները.

22) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, ինչպես նաև իրեն

պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները:

2. Անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ընթացքում իրականացնում է նրանց իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անբաժանելի են նրանց անձից:

3. Սահմանափակ գործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝

1) դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի համաձայնությամբ դադարեցնել պաշտպանի լիազորությունները.

2) իմանալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի մտադրության մասին՝

հետ վերցնելու նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը.

հաշտվելու տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հետ.

հրաժարվելու իր ներկայացրած քաղաքացիական հայցից կամ ընդունելու իրեն ներկայացված քաղաքացիական հայցը.

հետ վերցնելու նրա շահերի պաշտպանության համար ներկայացված բողոքը.

3) համաձայնվել կամ չհամաձայնվել իր կողմից ներկայացվող անձի՝ սույն հոդվածի երրորդ մասի 2-րդ կետում թվարկված որոշումներին:

4. Անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի անունից՝

1) հետ վերցնել նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը.

2) հայտարարել հանցանքի կատարման մեջ իր կողմից ներկայացվող մեղադրյալի մեղավորության մասին.

3) հաշտվել տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հետ.

4) ընդունել մեղադրյալին ներկայացված հայցը և հրաժարվել քաղաքացիական հայցվորի ներկայացրած հայցից.

5) հետ վերցնել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի ներկայացրած բողոքը:

5. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի կատարել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի շահերին հակասող որևէ գործողություն, մասնավորապես՝ մեղադրյալի անունից հրաժարվել պաշտպանից:

6. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել օրինական ներկայացուցչի իր լիազորությունները հաստատող փաստաթղթերը.

2) իր կողմից ներկայացվող անձի շահերը պաշտպանելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ներկայացնել իր

մոտ եղած առարկաները և փաստաթղթերը.

4) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

5) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն:

7. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը կարող է կանչվել որպես վկա:

8. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

9. Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իր իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ»:

Վիճարկվող հողվածում փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.02.04թ. ՀՕ-34-Ն և 25.05.06թ. ՀՕ-91-Ն ՀՀ օրենքներով, որոնք, սակայն, նույնպես չեն առնչվում սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2016 թվականի հունվարի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 32150116 քրեական գործը, իսկ 2016 թվականի հունվարի 26-ին Սամսոն Խուրշուդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: 2016 թվականի մարտի 30-ին Սամսոն Խուրշուդյանի վերաբերյալ թիվ 32150116 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ քրեական գործին շնորհվել է ՄԴ2/0005/01/16 համարը:

Արձանագրելով, որ Ռուզաննա Խուրշուդյանը՝ որպես տուժող, ինչպես նաև որպես տուժող Լիանա Խուրշուդյանի օրինական ներկայացուցիչ, հայտարարել է, որ հաշտվել է ամբաստանյալ Սամսոն Խուրշուդյանի հետ, որ ամբաստանյալ Սամսոն Խուրշուդյանը հայտնել է, որ հաշտվել է տուժողներ Ռուզաննա Խուրշուդյանի և Լիանա Խուրշուդյանի հետ, և ցանկանում է, որպեսզի քրեական գործի վարույթը կարճվի, դատարանը գտել է, որ ամբաստանյալ Սամսոն Խուրշուդյանի հետ հաշտվելու վերաբերյալ տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժող Լիանա Խուրշուդյանի մտադրությունը պարզելու կապակցությամբ պետք է կիրառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի դրույթները, և որոշում է կայացրել թիվ ՄԴ2/0005/01/16 քրեական գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ տվյալ քրեական գործով կիրառման ենթակա 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ

հողվածի դրույթները հակասում են 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին այնքանով, որքանով դրանք իրավունք չեն տալիս տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողներին, իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, դիրքորոշում (կարծիք) հայտնել կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ, ինչպես նաև բացառում են տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, կատարելով օրենսգրքի 59-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածների դրույթների համեմատական վերլուծություն, արձանագրում է, որ օրենսգրքը, ի տարբերություն տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս (երեխա) տուժողների, տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողներին որևէ հնարավորություն չի տալիս, իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, դիրքորոշում (կարծիք) հայտնել կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ նույնիսկ այն դեպքում, երբ հաշտությունը բխում է անգործունակ (տասնչորս տարին չլրացած) տուժողի շահերից (օրինակ, երբ կասկածյալը կամ մեղադրյալը հանդիսանում է տուժողի ծնողը կամ այլ անձ, ով ամբողջությամբ կամ որոշակի չափով տուժողի համար ապահովում է անհրաժեշտ կենսապայմաններ):

4. Պատասխանողը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասով և 77-րդ հոդվածով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, կատարելով քաղաքացիաիրավական և քրեաիրավական նորմերի համեմատական վերլուծություն, գտնում է, որ մինչև տասնչորս տարեկան երեխաներն իրենց գիտակցական մակարդակում օրենսդրորեն հավասարեցված են անգործունակ ճանաչված քաղաքացիներին: Այդ տրամաբանությամբ առաջնորդվելով՝ պատասխանողը կարծում է, որ տասնչորս տարին չլրացած երեխաների կողմից հանցագործությունների հանրային վտանգավորության չգիտակցումը և այդ հիմքով վերջիններիս նկատմամբ քրեական պատասխանատվության բացառումը խոսում են այն մասին, որ այդ կատեգորիայի երեխաները հանցագործության գոհ լինելու դեպքում ի վիճակի չեն գիտակցելու իրենց շահը հանցագործին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ ազատելու հարցերում: Հետևաբար, օրենսդիրն իրավաչափորեն սահմանել է, որ մինչև տասնչորս տարին լրացած երեխաների, ինչպես նաև անգործունակների հաշտվելը կասկածյալի, մեղադրյալի հետ հիմք չէ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար, ինչը երաշխիք է այս խոցելի կատեգորիայի անձանց իրավունքների և շահերի դատական պաշտպանության համար:

Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ վիճարկվող դրույթները

բացառում են տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը, պատասխանողը նկատում է, որ տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերի հավասարակշռությունն արդեն իսկ հաստատված է օրենքով՝ այն տեսքով, որ դատարանն է վերջնական դատական ակտով որոշում կայացնում, այդ թվում՝ անչափահաս տուժողների շահերից ելնելով, ի թիվս այլնի, հաշվի առնելով տուժող երեխայի վերաբերմունքը հանցանքը կատարած անձի նկատմամբ, ներառյալ՝ քրեական գործի վարույթը չբացառող և քրեական հետապնդումը չդադարեցնող հանգամանք հանդիսացող՝ երեխայի հաշտեցումը մեղադրյալի հետ:

5. Մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթներին անդրադառնալը՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունում առկա է ներքին հակասություն. **նախ**, օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությամբ ամրագրված նախադասությունն սկսվում է «անգործունակ տուժողի» բառակապակցությամբ, մինչդեռ նույն նախադասությունում հետագայում օգտագործվում է «սահմանափակ գործունակ մասնակցի անունից» բառակապակցությունը, **երկրորդ**՝ դրա հետևանքով պարզ չէ, թե օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու արգելքը վերաբերում է անգործունակ, թե սահմանափակ գործունակ տուժողին:

Վերոգրյալի կապակցությամբ, հաշվի առնելով օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունում «սահմանափակ գործունակ մասնակցի անունից» բառակապակցությունը վերաբերում է անգործունակ մասնակցին:

6. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բարձրացված սահմանադրաիրավական վեճը վերաբերում է բացառապես անգործունակ տուժողին, որի ներքո դիմողը նկատի է ունեցել տասնչորս տարին չլրացած անձանց: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է երկու հիմնախնդիր. առաջին՝ օրենքի բաց, որը, ըստ դիմողի, դրսևորվում է նրանում, որ օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասում և 77-րդ հոդվածում բացակայում է անհրաժեշտ նորմը, որն իրավունք կվերապահեր տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողներին իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան դիրքորոշում (կարծիք) հայտնել կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ, և երկրորդ՝ օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը և 77-րդ հոդվածը բացառում են տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետա-

պնդումը դադարեցնելու հնարավորությունը: Վերջին հիմնախնդրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողը, ըստ էության, վիճարկում է օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված նորմը, քանի որ միայն վերջինս է, որ արգելում է անգործունակ, այսինքն, ըստ դիմողի, տասնչորս տարին չլրացած անչափահաս (երեխա) տուժողների շահերից բխելու դեպքում հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող նորմերը քննության առարկա է դարձնում **բացառապես անգործունակ տուժողի մասով, ինչպես նաև օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված արգելքի իրավաչափության մասով:**

7. Նկատի ունենալով, որ դիմողը և պատասխանողը փորձում են իրենց դիրքորոշումները հիմնավորել հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ այդ դրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»:

Սահմանադրական վերոնշյալ նորմերից հետևում է, որ սահմանադիրը տվյալ նորմով երեխային վերապահել է.

- ոչ միայն իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, այլ նաև, ի թիվս այլնի, իրեն վերաբերող դատական գործընթացներում լսվելու իրավունք,

- լսվելու իրավունքի շրջանակներում՝ դատական մարմինների կողմից իր կարծիքը հաշվի առնելու իրավունք:

Միաժամանակ, Սահմանադրության տվյալ հոդվածը չի նախատեսում տարիքային կամ այլ որևէ սահմանափակում: «Հաշվի առնողի» համար է պարտականություն սահմանված՝ ելնել երեխայի տարիքից և հասունության աստիճանից: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը հանրային իշխանության վրա դնում է հստակ պարտականություն՝ առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերին՝ նրան վերաբերող հարցերում: Հետևաբար, սահմանադրի նպատակն է երեխային վերաբերող հարցերում տարբեր շահերի առկայության դեպքում առաջնահերթ պաշտպանել երեխայի շահերը, այնուհետև՝ առկա մյուս շահերը, իսկ այդ շահերի հակասության դեպքում հանրային իշխանությունը պարտավոր է պաշտպանել երեխայի շահերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրու-

թյան 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 37-րդ հոդվածի, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերի դրույթները գործում են անմիջականորեն, և դատական պրակտիկան պարտավոր է առաջնորդվել այդ պահանջով:

Վերոգրյալից ելնելով՝ **ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրատ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, ինչն ուղղակիորեն առկա չէ վեճի առարկա հոդվածներում և չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել:**

8. Երեխայի տարիքի, հասունության մակարդակի և նրան առաջադրված հարցի բարդության միջև հարաբերակցության, երեխայի շահերն առաջնահերթ ուշադրության արժանացնելու հարցերին է նվիրված նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով ընդունված և 1990 թվականի սեպտեմբերի 2-ին ուժի մեջ մտած՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան: Նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է. «1. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն»:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն 2013թ. մայիսի 29-ին հատուկ անդրադարձ կատարելով երեխայի լավագույն շահերի ապահովմանը՝ մասնավորապես արձանագրում է, որ բոլոր երկրներն են պարտավոր երաշխավորել, որպեսզի երեխայի լավագույն շահերն առաջնահերթության կարգով հաշվի առնվեն նրա վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ ինչպես դատարանների, վարչական մարմինների կողմից, այնպես էլ իրավակարգավորման գործընթացում:

9. ՀՀ գործող օրենսդրության ընդհանուր տրամաբանությունն իրավակիրատ պրակտիկայի կողմից ընկալվել և իրացվում է այնպես, որ համաձայն քաղաքացիական, քրեական, վարչական պատասխանատվության համար տարիք սահմանող նորմերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ և 1067-րդ հոդվածներ, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդված, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդված)՝ տասնչորս տարին չլրացած անչափահասները և հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ

ճանաչված անձինք դիտարկվում են միևնույն կատեգորիայում: Քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում ամրագրված նորմով արգելվել է անգործունակ տուժողի օրինական ներկայացուցչին հաշտվել կասկածյալի, մեղադրյալի հետ՝ հետևություն է արվում, որ տասնչորս տարին չլրացած անձի տարիքը և հասունության մակարդակը չեն համապատասխանում կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը: Միաժամանակ, չի բացառվում այնպիսի հնարավոր իրավիճակներ, ինչպիսիք են, մասնավորապես, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հենց **փոքրահասակի** ծնողի հայտնվելը, որպիսի պարագայում **փոքրահասակի** մյուս ծնողն է հանդես գալիս որպես օրինական ներկայացուցիչ: Նման իրավիճակում ծնողների միջև հնարավոր հաշտությունը կախված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից, կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից: **Վերջինիս գնահատման պարտականությունը վարույթն իրականացնող մարմնին է վերապահված:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածը՝ վեճի առարկայի և սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 դեկտեմբերի 2016 թվականի  
ՄԴՈ-1333





## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՂԱՍԻ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻ ԵՎ ՆՇԱՆ ԻՍՊԻՐՑԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 52-ՐԴ  
ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 231-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 231-ՐԴ  
ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

27 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների ներկայացուցիչներ Կ. Մեժլումյանի, Զ. Հայրապետյանի, Կ. Աղաջանյանի, Է. Հակոբյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Մարգարյանի և նույն վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աղասի Տեր-Եսայանի և Նշան Իսախրյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»

գործը:

Գործի քննության առիթը Ադապի Տեր-Եսայանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ին և Նշան Իսպիրյանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի ՍԴԱՌ-99 աշխատակարգային որոշմամբ որոշել է վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Ապացուցելուց ազատվելու հիմքերը» վերտառությամբ 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասն օրենսգրքում ամրագրվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.07թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է.

«2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝ ... 4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ (28.11.07թ. ՀՕ-277-Ն, 26.12.08թ. ՀՕ-233-Ն և 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքներ), իսկ վիճարկվող դրույթները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածում ամրագրվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.14 ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ա) Ադասի Տեր-Եսայանի դիմումի մասով.

Դիմելով դատարան՝ Ադասի Տեր-Եսայանը պահանջել է Երևան համայնքի (քաղաքապետարանի) գործողությունները, որոնցով իր անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 0,0020 հա մակերեսով հողամասից քանդվել է «Երևանի Գլխավոր պողոտայի» և Մարգարյանի անվան հիվանդանոցի հարակից տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող 19,0 քմ մակերեսով առևտրի կրպակը, ճանաչել ապօրինի: Որպես հետևանք՝ նա պահանջել է Երևան համայնքին պարտավորեցնել հատուցել ապօրինի գործողությունների արդյունքում իրեն պատճառված վնասը՝ բռնագանձելով 4.750.000 դրամ՝ որպես գույքի կորստի գումար, 1.705.000 դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, ինչպես նաև 2011թ. օգոստոս ամսից սկսած 4.750.000 դրամի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթին համապատասխան տոկոսներ: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.06.2015թ. վճռով հայցը մերժվել է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.11.2015թ. որոշմամբ Ադասի Տեր-Եսայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 17.06.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 27.11.2015թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ 10.02.2016թ. ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում՝

մասնավորապես պատճառաբանելով, որ «...թեև բողոքաբերը բերված վճռաբեկ բողոքում վկայակոչել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.06.2013 թվականի թիվ ԵՄԴ/0599/02/12 որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի թիվ ԱԲԱԴ/0209/02/13 և 18.07.2014 թվականի թիվ ՄԴ3/0055/02/13 որոշումները և մեջբերել է դրանց և բողոքարկվող դատական ակտի ենթադրյալ հակասող մասերը, սակայն չի կատարել բավարար համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և վերոնշյալ դատական ակտերում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը նույնպես հիմնավորված չէ»:

Բ) Նշան Իսայիրյանի դիմումի մասով.

Հասմիկ Բադալյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Նշան Իսայիրյանի՝ պահանջելով ճանաչել հայրությունը, բռնագանձել ալիմենտ և պարտավորեցնել որոշակի ժամանակահատվածում զբաղվել երեխայի խնամքով և դաստիարակությամբ (քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3052/02/14): Դատարանի 17.09.2015թ. վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 23.12.2015թ. որոշմամբ Նշան Իսայիրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 17.09.2015թ. վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 23.12.2015թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ 30.03.2016թ. ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, մասնավորապես, հետևյալ կերպ.

- «... սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի էլքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար»,

- «... թեև բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1167(ՎԴ) քաղաքացիական գործով և թիվ 3-1519(ՎԴ) քաղաքացիական գործով 10.10.2007 թվականի, թիվ 3-1580 քաղաքացիական գործով 12.12.2007 թվականի, թիվ ԵԱՆԴ/2775/02/08 քաղաքացիական գործով 04.12.2009 թվականի, թիվ ԵՄԴ/0826/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումները և մեջբերել է դրանց ու բողոքարկվող որոշման ենթադրյալ հակասող մասերը, սակայն չի կատարել բավարար համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և վերոնշյալ դատական ակտերում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ...»:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առումով դիմող Ադասի Տեր-Եսայանը բարձրացնում է իրավական անորոշության հարց՝ այն համատեքստում, որ վիճարկվող դրույթի՝ «դատարանի վճռով» արտահայտությունը ձևակերպված է ոչ բավարար հստակությամբ, ամրագրված չէ անհրաժեշտ փաստակազմ՝ «կարճման վճիռ» արտահայտությունը, որը հնարավորություն կտար իրավակիրառողին կարճման վճռի առկայության պայմաններում կիրառել վիճարկվող դրույթը: Ըստ այդմ, վիճարկվող դրույթի առնչությամբ դիմողի փաստարկները հանգում են նրան, որ «դատարանի վճռով» արտահայտության ոչ հստակ ձևակերպումը, միաժամանակ նաև օրենսդրական բացը իրավակիրառ պրակտիկայում բացառում են կարճման մասին վճռով հաստատված հանգամանքները որպես նախադատելի փաստ ընդունելը, ինչն առաջ է բերում արդար դատաքննության իրավունքի խախտում: Դիմողը նշում է նաև, որ այդ անորոշությունը հնարավորություն չի տալիս անձին իրավական նորմին համապատասխանեցնել իր վարքագիծը և դատական կարգով արդյունավետ պաշտպանել իր սահմանադրական իրավունքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի առումով դիմողները նշում են, որ այդտեղ օգտագործվող՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, որը, իր հերթին, իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է կամայական և տարածական մեկնաբանության՝ հանգեցնելով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը: Դիմողները նշում են նաև, որ իրավունքն իրացնողի համար անհասկանալի և անկանխատեսելի է թե՛ այդ նորմի բովանդակությունը, թե՛ կիրառելիությունը, քանի որ օրենսդիրը չի սահմանել, թե համեմատական վերլուծությունն ինչպես պետք է կատարել, այն ինչ չափանիշների և պայմանների պետք է համապատասխանի, որպեսզի վճռաբեկ դատարանի համար բավարար լինի և հիմք հանդիսանա բողոքը վարույթ ընդունելու համար: Այսինքն, «համեմատական վերլուծություն» եզրույթը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, ինչի արդյունքում իրավունքն իրացնող սուբյեկտը չի կարողանում իր վարքագիծը կարգավորել այդ իրավանորմին համապատասխան, քանի որ պարզ չէ, թե համեմատական վերլուծությունը, ինչպես նաև դատական ակտերի միջև առկա հակասությունն ինչպես պետք է մատնանշվի վճռաբեկ բողոքում, որպեսզի վճռաբեկ դատարանի համար դիտվի և հանդիսանա բավարար բողոքը վարույթ ընդունելու համար:

Դիմողները, վկայակոչելով վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, եզրահանգում են, որ վճռաբեկ դատարանը նույնպես չի բացահայտում «համեմատական վերլուծություն» եզրույթի չափանիշները, ինչն էլ վերջինիս հնարավորություն է տալիս գործել բացարձակ հայեցողությամբ, հայեցողական և սուբյեկտիվ մեկնաբանություն տալ բողոքում համեմատական վերլուծություն կատարած լինելու փաստի հետ կապված: ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք

որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանությանը հիմնվելով՝ դիմողները կարծում են, որ «համեմատական վերլուծություն» եզրույթի ընդհանուր և վերացական ձևակերպված լինելը հանգեցնում է իրենց դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը, քանի որ վերջիններս բողոքում կատարում են համեմատական վերլուծություն, որը, սակայն, վճռաբեկ դատարանի համար բավարար չէ բողոքը վարույթ ընդունելու համար: Հետևաբար, այդ հիմքով վճռաբեկ բողոք բերելը դառնում է անարդյունավետ և անիմաստ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի առումով դիմող Նշան Բսպիրյանը, կրկին շեշտադրելով իրավական որոշակիության վերաբերյալ ներկայացված վերլուծությունը, գտնում է, որ համանման իրավական խնդիր առկա է նաև այս պարագայում: Մասնավորապես, օրենսդիրը չի բացահայտել, թե որոնք են այն չափանիշները և պայմանները, որոնք բավարար են փաստելու դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, և որոնք պետք է պահպանված լինեն դատական սխալի վերաբերյալ հիմնավորումները և վերլուծությունները շարադրելիս: Դիմողը կարծում է նաև, որ հնարավոր չէ հասկանալ, թե ինչպես պետք է ներկայացնել հիմնավորումները, որպեսզի այն վճռաբեկ դատարանի համար համարվի բավարար:

Վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողները եկել են այն եզրահանգման, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և 231-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 92-րդ հոդվածին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «դատարանի վճռով» արտահայտությունը վերաբերում է միայն քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած վճիռներին, իսկ 52-րդ հոդվածի 3-րդ մասը քաղաքացիական դատավարության կողմերին ազատում է ապացուցման բեռից քրեական գործերով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերի (ըստ որոնց՝ հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք) համար: Օրենսգրքի 52-րդ հոդվածում առկա է օրենսդրական բաց այնքանով, որքանով որպես նախադատելի փաստեր չեն սահմանվել վարչական գործերով դատարանի վճռով հաստատված հանգամանքները, ինչն արդեն շտկվել է ՀՀ Ազգային ժողովի նիստերի օրակարգ ընդգրկված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծով:

Ինչ վերաբերում է կարճված գործերի վճիռներով հաստատված հանգամանքների նախադատելիությանը, ապա պատասխանողը նշում, որ և ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքով, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործի վարույթի կարճման հիմքերն այնպիսին են, որ օբյեկտիվորեն կարճման վճռի շրջանակներում չեն կարող հաստատվել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակում ներառված փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար, ըստ պատասխանողի, իրավական որոշակիության խնդիր սահմանադրաիրավական վեճի առարկա քննարկվող դրույթում առկա չէ, քանի որ բացակայում է օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում կարճման վճիռներով հաստատված հանգամանքների նախադատելիության սահմանման անհրաժեշտությունը:

Մեջբերելով իրավական որոշակիության սկզբունքի հետ կապված ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ համեմատական վերլուծության բավարար լինելն առանձին գործերով թողնված է իրավակիրառ պրակտիկային: Ըստ պատասխանողի՝ համեմատական վերլուծության բավարար աստիճան պետք է համարվի ենթադրյալ հակասող դատական ակտերում (բողոքարկվող դատական ակտում և նորմի մեկնաբանության և վճռաբեկ դատարանի որոշման մեջ) տեղ գտած միևնույն իրավական դրույթների մեկնաբանությունների համադրման և իրավական վերլուծությունների այնպիսի մակարդակը, որը գործի ելքով չշահագրգռված անձին օբյեկտիվորեն կհամոզի, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանության և վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանության միջև առերևույթ առկա է հակասություն: Միևնույն ժամանակ, պատասխանողը համարում է, որ գործնական մեկնաբանման արդյունքում ձևավորված օբյեկտիվ չափանիշներն անհրաժեշտ է կիրառել առանց որևէ խտրականության: Հետևաբար, որևէ դատական ատյան, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, իրավունք չունի առանց որևէ օբյեկտիվ հիմքի, առաջնորդվելով կամայականությամբ՝ ընտրողաբար վարույթ ընդունել դատական գործերը: Ընդ որում, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները պետք է պատշաճ պատճառաբանված լինեն:

Օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև 231-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման և այդ խախտման՝ գործի ելքի վրա ազդեցության հիմնավորման պարտականության բեռը բողոքաբերին վճռաբեկ դատարանից փոխանցելը, պատասխանողի կարծիքով, իրավաչափ է, քանզի պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական ինքնատիպ կարգավիճակով, ՀՀ դատական համակարգում ունեցած ուրույն դերով և բխում է նաև միջազգային լավագույն պրակտիկայից:

Այս առումով խնդրո առարկա դրույթները, ըստ պատասխանողի, համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիու-

թյան, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության պահանջներին:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, իսկ վերջին երկու դրույթների կիրառման պրակտիկան խնդրահարույց է հաշվի առնելով 2016 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-1322 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

- դիմող Ադասի Տեր-Եսայանը, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, բարձրացնում է միայն «դատարանի վճռով» եզրույթի սահմանադրականության հարցը, և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ է պարունակում միայն այդ եզրույթի վերաբերյալ,

- դիմողները, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, բարձրացնում են միայն «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրականության հարցը, և դիմումները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ են պարունակում միայն այդ եզրույթի վերաբերյալ,

- դիմող Նշան Իսպիրյանը, խնդրելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասը, բարձրացնում է միայն «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտության սահմանադրականության հարցը, և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ է պարունակում միայն այդ արտահայտության վերաբերյալ:

Հետևաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ Սահմանադրական դատարանը սույն գործը քննության է առնում միայն «դատարանի վճռով» եզրույթի, ինչպես նաև «կատարելով համեմատական վերլուծություն» և «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունների սահմանադրականության բացահայտման շրջանակներում:

6. Ելնելով դիմումներում առաջադրված հարցադրումների բովանդակությունից՝ սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետ-



կյալ հարցադրումներին.

- արդյոք միայն վեճն ըստ էության լուծող դատարանի վճռով հաստատված փաստերը նախադատելի փաստեր համարելը չի խոչընդոտում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացմանը,

- արդյոք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառված՝ «դատարանի վճռով» հասկացությունը չի խախտում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված որոշակիության սկզբունքն այնքանով, որ անձը հնարավորություն չունենա կանխատեսելու իրավական հետևանքները և ընտրելու իր վարքագիծը,

- արդյոք վճռաբեկ բողոքում հիմնավորման պահանջը՝ համեմատական վերլուծություն կատարելու միջոցով, ինչպես նաև խախտման հիմնավորման պահանջը, որ այն ազդել է գործի ելքի վրա, չի սահմանափակում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ իրականացման հնարավորությունը, ինչպես նաև համապատասխանում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

7. Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-873, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289 և այլն) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատաբանական կարգապահության բնագավառներում: Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման մի շարք սկզբունքներ (չափանիշներ), որոնք սույն գործով վեճի առարկա նորմերի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն: Մասնավորապես.

« - դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել

որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով» (ՄԴՈ-1257),

- «իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման» (ՄԴՈ-1192),

- «ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել» (ՄԴՈ-1192),

- «նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն» (ՄԴՈ-690),

- անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (ՄԴՈ-719):

Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ որոշակի դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որոնց համաձայն.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Case of Stanev v. Bulgaria, application no. 36760/06, 17/12/2012),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalifaoui v. France, application no.

34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania, application no. 3738/02, 18/12/2007):

ՄԻԵԴ-ը բազմաթիվ վճիռներում նշել է, որ վճռաբեկ դատարան տրվող գանգատին ներկայացվող պահանջները կոչված են ապահովելու արդարադատության լավագույն կառավարում, սակայն ազգային դատարանների կողմից գանգատների ձևակերպման նկատմամբ **չափազանց ձևական մոտեցումը** վճռաբեկ գանգատների ընդունման հարցում կարող է հանգեցնել դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Վճռաբեկ գանգատի հստակ ձևակերպված չլինելու հիմքով վարույթ չընդունելը, ըստ ՄԻԵԴ-ի, կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման (Case of Reichman v. France, application no. 50147/11, 12/07/2016):

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հետևում է, որ պետք է խուսափել ավելորդ ձևականությունից, «բայց միաժամանակ չլինել չափազանց ճկուն, որպեսզի վճռաբեկ գանգատին ներկայացվող պահանջները չդառնան անիմաստ» (Case of Dumitru Gheorghe v. Romania, application 33883/06, 12/04/2016):

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ուսումնասիրության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում, որ ներպետական դատավարական կարգի համաձայն դիմողից պահանջվի հայցը կամ գանգատը, այդ թվում՝ փաստական հիմքերն ու իրավական փաստարկները ներկայացվեն գրավոր՝ որոշակի ձևանմուշին համապատասխան: Այդուհանդերձ, այս պահանջը չպետք է հանգեցնի ծայրահեղ ձևականության, և հարկ է, որ ներպետական դատարանները սեփական նախաձեռնությամբ գործի հանգամանքների որոշակի ուսումնասիրություն կատարեն՝ դիմողի փաստարկներն ըստ էության proprio motu կարգով գնահատելու համար, եթե նույնիսկ դրանք ձևակերպված չեն եղել բացարձակ պարզորոշ կամ ճշգրիտ կերպով (Case of Dattel-2 v. Luxembourg, application no.18522/06, 10/12/2009):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս անդրադարձել է խնդրատարկա հարցին և նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ,

դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (Case of Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Case of Garcia Manibardo v. Spain, 15 feb. 2000, Case of Bellet v. France, 20 nov. 1995 և այլն):

Նշված դիրքորոշումները կարևորվում են հատկապես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման օրենսդրական երաշխիքների ապահովման համար:

8. Համաձայն ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 79-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իր բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-731, ՄԴՈ-753, ՄԴՈ-984, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270 և այլն) Սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով, մասնավորապես.

- «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753),

- «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակ-

ներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1270),

- «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (ՄԴՈ-1270):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում, Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է ապացուցման կարիք չունեցող փաստերի այն հիմքերը, որոնց հիման վրա գործին մասնակցող անձն ազատվում է տվյալ փաստի ապացուցման պարտականությունից: Այդպիսի հիմք է նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը, համաձայն որի՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Դիմողներից Ադասի Տեր-Եսայանի դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա՝ սույն գործի քննության շրջանակներում բարձրացված սահմանադրաիրավական վեճն ըստ էության վերաբերում է վիճարկվող դրույթում ամրագրված՝ «դատարանի վճռով» եզրույթին՝ կապված այն դեպքերի հետ, երբ դատարանը վեճը դատարանին ընդդատյա չլինելու հիմնավորմամբ կարճում է գործի վարույթը:

Ադասի Տեր-Եսայանի դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար որպես նախկինում քննված օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ է հանդիսանում ՀՀ վարչական դատարանի՝ 03.10.2013թ. ՎԴ/3088/05/12 վարչական գործով դատական ակտը: Այդ վճռով ՀՀ վարչական դատարանը վարչական գործի վարույթն ըստ հայցի Ադասի Տեր-Եսայանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ պատասխանողների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, կարճել է՝ վեճը վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմնավորմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է անհամապատասխանություն. մասնավորապես, մի կողմից, օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն վճիռը կայացվում է գործն ըստ էության լուծելու դեպքում, իսկ մյուս կողմից՝ 110-րդ հոդվածը սահմանում է, որ գործի վարույթը կարճելու մասին նույնպես կայացվում է վճիռ: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ գործի վարույթը կարճելու մասին վճիռը չի կարող միանշանակ համարվել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Անդրադառնալով նախադատելիության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության հարցերին՝ հարկ է նկատի ունենալ հետևյալը.

**նախ**՝ նախադատելիության կանոնների սահմանումը գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, քանի որ ի վերջո օրենսդիրն է որոշում նախադատելիության այս կամ այն դրույթի ընդունման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման հնարավորությունը,

**երկրորդ**՝ դատավարական տեսանկյունից նախադատելիության ինստիտուտը ապահովում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը,

**երրորդ**՝ նախադատելիության ինստիտուտը ենթադրում է, որ այն հանգամանքները, որոնք ճանաչվում են նախադատելի հանգամանքներ, հաստատվել են դատարանի կողմից մրցակցային դատավարության կանոններով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքների միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական իր գործառույթը, արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «...վճիռների նախադատելիության կանոնները միևնույնն են ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում, հետևաբար քաղաքացիական գործեր քննելիս վարչական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերով հաստատված հանգամանքները,

ինչպես այլ քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները, ևս ունեն նախադատելի նշանակություն» (թիվ ԱԸԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով վճռաբեկ դատարանի 18.07.2014թ. որոշում):

Նախադատելիության հարցի վերաբերյալ առկա են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք այլ որոշումներ:

Մասնավորապես, թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նախադատելիության ինստիտուտի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորություն է տալիս ապացուցման առարկայի՝ **վեճի լուծման համար նշանակություն ունեցող** հանգամանքների ճիշտ որոշման հարցին, քանզի դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման:

...

նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ունեն նախադատելի նշանակություն քննվող այլ գործի համար, բացառությամբ այն **բացառիկ** դեպքերի, երբ՝

ա) այդ հաստատված հանգամանքը վերաբերելի չէ նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային (չի դասվում հաստատման ենթակա հանգամանքների շարքը) և/կամ

բ) այդ հանգամանքը հաստատվել է ֆորմալ դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ կամ կողմերից մեկի՝ դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում»:

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի վկայակոչումն այն մասին, որ ինքը վստահ էր, որ կարճման մասին վճռով հաստատված ցանկացած հանգամանք հանդիսանում է այլևս ապացուցման կարիք չունեցող փաստ, անհիմն է:

Այն պարագայում, երբ դատարանը կարճում է գործի վարույթը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության, ապա դատարանը հայցվորի նյութաիրավական պահանջին ըստ էության իրավական գնահատական չի տալիս, այլ դատարանի դատողությունները, դատարանի կողմից իրավունքի կիրառման գործընթացը և դրանց հիման վրա ձևավորված եզրահանգումն ուղղված են պատճառաբանելու և հիմնավորելու գործի վարույթն այդ հիմքով կարճման ենթակա լինելու հանգամանքը: Ուստի գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճռի պատճառաբանական մասն ուղղված է ոչ թե որոշակի հանգամանքներ հաստատելուն, այլ գործի որոշակի հանգամանքների համադրման, վերլուծության և եզրահանգման միջոցով հիմնավորելուն, որ տվյալ վեճը ենթակա չէ տվյալ դատարանում քննության:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի՝ վեճը ենթակա չէ տվյալ դատարանում քննության հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին վճիռն ուղղված չէ որոշակի հանգամանքներ հաստատելուն, հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «դատարանի վճռով» եզրույթը չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը կարճում է գործի վարույթն այն հիմքով, որ վեճը ենթակա չէ դատարանում քննության (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետ):

Հարկ է արձանագրել նաև, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտի տեսակն արդեն իսկ հստակեցված է ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով, որի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ կայացվում է որոշում:

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վիճարկվող 4-րդ կետի դրույթի վերլուծությունից հետևում է, որ վճռաբեկ դատարանի որոշման միջոցով օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը նպաստելու հանգամանքը հիմնավորելու համար օրենսդիրը բողոքաբերին հստակ պահանջ է առաջադրում՝ մեջբերել բողոքարկվող դատական ակտի և վճռաբեկ դատարանի որոշման հակասող մասերը և կատարել համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավակարգավորումը՝ վճռաբեկ բողոքում հիմնավորում ներկայացնելու, համապատասխան դատական ակտը կցելու, հակասող մասերը մեջբերելու և համեմատական վերլուծություն կատարելու պահանջների մասով, ընդհանուր առմամբ, համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1293 որոշմամբ հետազոտված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համանման իրավակարգավորմանը:

Հետևաբար, հաշվի առնելով ՄԴՈ-1293 որոշմամբ քննության առարկա իրավակարգավորման և սույն գործով իրավակարգավորման՝ անձի վրա դրված պարտականությունների մասով բովանդակային համարժեքությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ:

Սահմանադրական դատարանը հիշյալ որոշման մեջ նշել է, որ «... օրենսդրի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու պահանջն իրավաչափ է, քանզի այն ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են բողոքարկվող դատական ակտի՝ վկայակոչվող դատական ակտին հակասող մասերը մեջբերելը, բողոքարկվող դատական ակտի և վկայակոչվող դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ



համեմատական վերլուծություն կատարելը: Հիշյալ համատեքստում հիմնավորում ներկայացնելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անհրազորելի պարտականություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի հանգեցնում նաև իրավունքի էության խախտման»:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծության պահանջն ինքնին իրավաչափ է:

Այլ է հարցը, թե որքանով է այդ պահանջն իրավակիրառ պրակտիկայում ընկալվում դրա սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան: Այս առումով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի իրավակարգավորման տրամաբանությունը՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի մասով, համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1322 որոշմամբ հետագոտված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համանման իրավակարգավորման տրամաբանության հետ: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1322 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է.

- «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքնին պետք է գնահատման առարկա դառնա իրավակիրառի կողմից, սակայն այդ գնահատումը պետք է իրացվի միայն հայեցողության իրավաչափության շրջանակներում՝ այնպես, որ այդպիսի գնահատումը հնարավորինս օրինական և արդարացի ընկալվի,

- հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (Case of Hilda Hafsteinsdottir v. Iceland, application no.40905/98, 08.06.2004), ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ,

- «Կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության իրավաչափ ընկալման համար կարևոր է, որ բողոքաբերի կողմից վկայակոչվող՝ վճռաբեկ դատարանի դատական ակտերը վերաբերելի լինեն, այսինքն, բողոքարկվող դատական ակտը և վճռաբեկ դատարանի վկայակոչվող դատական ակտը կամ ակտերն ունենան նույնանման

փաստական հանգամանքներ: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նման պարագայում հակասող մասերի մեջբերում կատարելը և բողոքարկվող դատական ակտի ու նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը՝ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումը, ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Իսկ իրական հակասության առկայությունը պարզելու և գնահատելու իրավական հնարավորությունը տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի բացառիկ իրավասության շրջանակներում է: Ուստի, անընդունելի է իրավակիրառ պրակտիկայում այս դրույթի այնպիսի ընկալումը, որի պարագայում ստացվում է, որ հակասող մասերի մեջբերում կատարելը և առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են: Բողոքի հիմնավորվածության վերաբերյալ դատարանի բացարձակ հայեցողական գնահատականը կարող է իրական խոչընդոտ հանդիսանալ անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման համար: Վեճի առարկա իրավանորմի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթն ինքնին վճռաբեկ բողոքի հիմնավորման պահանջի իրացումն է: Դիմումը քննության ընդունելու փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը»:

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճռաբեկ բողոքը քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը որպես վճռաբեկ բողոքն ընդունելու պայման նշում է առերևույթ դատական սխալ թույլ տրված լինելու հանգամանքը, որ կարող էր ազդել գործի ելքի վրա:

Այս նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ տվյալ հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար նախ անհրաժեշտ է նշել այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է: Իսկ վիճարկվող «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտության սահմանադրաիրավական բովանդակության իրավաչափ ընկալման համար կարևոր է մատնանշել նյութական կամ դատավարական իրավունքի խախտման իրավական համարժեք հիմքը (այդպիսիք, մասնավորապես, նախատեսված են ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածներում), կատարել վերաբերելի հանգամանքների և նշված իրավական հիմքի համադրություն՝ փաստելու այդ հիմքի առկայությունը, ցույց տալ պատճառահետևանքային կապը խախտման և գործի ելքի միջև, որը ենթադրում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլինեք այդպիսի խախտում, ապա կկայացվեր այլ ելքով ակտ:

Հետևաբար, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նման պարագայում **նյութական կամ դատավարական իրավունքի խախտման իրավական համարժեք հիմքը վկայակոչելը, վերաբերելի հանգամանքները և այդ իրավական հիմքը համադրելը՝ նպատակ ունենալով փաստելու այդ հիմքի առկայությունը, նյութական կամ դատավարական իրավունքի խախտման և գործի ելքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը ներկայացնելը (այն ներառում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլինեք այդպիսի խախտում, ապա կկայացվեր այլ ելքով ակտ) ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ խախտվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, և որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Իսկ իրական հակասության առկայությունը պարզելու և գնահատելու իրավական հնարավորությունը տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի բացառիկ իրավասության շրջանակներում է:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքնին պետք է գնահատման առարկա դառնա իրավակիրառի կողմից, սակայն այդ գնահատումը պետք է իրացվի միայն հայեցողության իրավաչափության շրջանակներում՝ այնպես, որ այդպիսի գնահատումը հնարավորինս օրինական և արդարացի ընկալվի: Հակառակ պարագայում, այդ արտահայտության կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ:

12. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R(2004) 6 հանձնարարականի դրույթներին, որոնց համաձայն՝ ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրները պետք է դիտարկել, մասնավորապես, բողոքների ընդունման և քննության ընթացակարգերն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում, ինչպես նաև ներպետական համակարգերում դատական բողոքները պետք է հանգամանալից ու հիմնավոր քննության առարկա դառնան:

Ընդհանրացնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք ապահովման և վճռաբեկ դատարանի մատչելիության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցում խուսափել հայեցողության բացարձակ անսահմանումից ու ավելորդ ձևականությունից և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ

կետի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումները կիրառել վերը շարադրված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի` ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղը և դերը, խնդրի առավել կանոնակարգված և կանխատեսելի լուծումը կարող էր իրականացվել նաև վճռաբեկ դատարանի կողմից` «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթի, «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտության ընկալման չափանիշների վերաբերյալ նախադեպային որոշման շրջանակներում: Նման պարագայում կհստակեցվեին նաև դատարանի հայեցողության սահմանները և դատարանի մատչելիության հարցում կերաշխավորվեր կանխատեսելիությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի` «դատարանի վճռով» եզրույթն այն մասով, որով չի ներառում «վեճը ենթակա չէ դատարանում քննության» հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի` «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի` բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի` «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի` նյութական կամ դատավարական իրա-

վունքի խախտման իրավական համարժեք հիմքը վկայակոչելը, վերաբերելի հանգամանքները և այդ իրավական հիմքը համադրելը՝ նպատակ ունենալով փաստելու այդ հիմքի առկայությունը, նյութական կամ դատավարական իրավունքի խախտման և գործի ելքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը ներկայացնելը (այն ներառում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլինեք այդպիսի խախտում, ապա կկայացվեր այլ ելքով ակտ) ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ խախտվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, և որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «... հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը դիմողների նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 դեկտեմբերի 2016 թվականի  
ՍԴՈ-1334

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՏՐԱՆՍ-ԱԼՅԱՆՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ԿԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ` ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդունել «ՏՐԱՆՍ-ԱԼՅԱՆՍ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու վերաբերյալ գործով զեկուցողի առաջարկությունը՝ նկատի ունենալով, որ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության և կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թ. փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**:

«ՏՐԱՆՍ-ԱԼՅԱՆՍ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի վարույթը կարճել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 նոյեմբերի 2016 թվականի  
ՍԴԱՈ-105

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ	3
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 244-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	43
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 53-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 57-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	53
ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 156-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 160-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	65
«ԻՆՖՈՐՄԱՑԻՍՅՈՒՆ ԱԶՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՐԱԿԱՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 71-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	77
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 102-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	88
ԼԱԼԱ ԱՍԼԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 132-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 136-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	95
ԼՈՒՄԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍԱՔԵՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	106
ԼԻԼԻԹ ՄՈՒՄԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ «Ի ՀԱՅՑ ԳԱՆՈՒՅ ՀԵՏՈ՝ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	118
ԳԵՎՈՐԳ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 87-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	125
ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 207-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 140-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 213-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	134
«ԵՐՖՐԵՁ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	144
ՄԱՐԵՏԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 249-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	156

<p>ՊԱՎԵԼ ԻՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 283-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 288-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	169
<p>ՎԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ԱՄԻՐԲԵԿՅԱՆԻ, ԳԵՂԱՄ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 233.1-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	182
<p>ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	194
<p>ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԵՎ ՎԱՐԴՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽՈՒՍՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 180՝-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 15-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	208
<p>ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 205-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	220
<p>ՀԱՅԿ ՄԱՇՈՒՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 176-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	233
<p>ԿԱՐԻՆԵ ՏԻՏԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՔԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 88-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	244
<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	255
<p>ԷՄՄԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1226-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	265
<p>ԺԱԿԼԻՆ ԱՅԱՆՅԱՆԻ, ԾԱՂԻԿ ԱՅԱՆՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ԱՅԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 158-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	277
<p>ՄԱՐԻԱՄ ԼԱԼԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 41-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 12-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	288
<p>ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 77-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	295
<p>ԱՂԱՍԻ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻ ԵՎ ՆՇԱՆ ԻՍՊԻՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 52-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 231-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 231-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....</p>	305
<p>«ՏՐԱՆՍ-ԱԼՅԱՆՍ» ՍՊՈ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԻՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....</p>	326